

ԱՐԱՄ ՀԱԿՈՒԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏ
2018

ՀՏԴ 1/14(07)
ԳՄԴ 87g7
Ս 259

Հրատարակվում է ՀՊՏՀ
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Ս. Սարգսյան

փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝

Յու. Հովականյան

փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ս. Օհանյան

փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

Սարգսյան Ա. Հ.

Ս 259 Արդիականության գլոբալ հիմնախնդիրները: Ուս. ձեռնարկ
/ Ա. Հ. Սարգսյան. – Եր.: Տնտեսագետ, 2018. – 212 էջ:

Դասընթացում քննարկվում են արդիականության բնապահպանական, ժողովրդագրական, պատերազմի, ահաբեկչության, անվտանգության, ազգային հոգևոր-բարոյական անվտանգության, մշակույթի, զարգացման, քաղաքակրթության, կրթության և գիտելիքի, կրոնի հետ կապված գլոբալ հիմնախնդիրները, դրանց արտացոլումը և դրսևորման առանձնահատկությունները հայ իրականության մեջ: Դասընթացում բանականությունը, բարոյականությունը և հումանիզմը դիտվում են որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ: Առանձնահատուկ տեղ և դեր է հատկացվում փիլիսոփայությանը՝ որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման ուղենիշները ուրվագծող հոգևոր գործունեության մշակութային ձևի: Դասընթացը կարող է օգտակար լինել ուսանողներին, ասպիրանտներին, դասախոսներին, ուսուցիչներին և բոլոր նրանց, ովքեր անտարբեր չեն և սրտացավ վերաբերմունք ունեն բնության և մարդու ապագայի նկատմամբ:

ՀՏԴ 1/14(07)
ԳՄԴ 87g7

ISBN 978-9939-61-182-2

© Տնտեսագետ, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....5

ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ

«Արդիականության գլոբալ հիմնախնդիրները» դասընթացի առարկան, խնդիրները և նշանակությունը

- ա) Դասընթացի ձևավորման ժամանակաշրջանը և պատճառները7
- բ) Գլոբալ հիմնախնդիրների դասակարգման հիմնական սկզբունքները.....12

ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ

Գլոբալացումը որպես հիմնախնդիր

- ա) Ըմբռնումը և առանձնահատկությունները18
- բ) Հայաստանը գլոբալացվող աշխարհում25

ԹԵՄԱ ԵՐՐՈՐԴ

Բնապահպանություն (էկոլոգիա) և գոյապահպանություն

- ա) Բնապահպանական հիմնախնդիրների էությունը և դրսևորման ձևերը.....29
- բ) Գոյապահպանությունը և տնտեսական քաղաքականությունը որպես բնապահպանական հիմնախնդիրների առաջացման պատճառներ40

ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ

Ժողովրդագրական հիմնախնդիրներ

- ա) Ժողովրդագրական իրավիճակի ընդհանուր բնութագիրը48
- բ) Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում55

ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մշակույթը, զարգացումը և քաղաքակրթությունը գլոբալ մարտահրավերների համադրությամբ

- ա) Մշակույթի և քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում.....61
- բ) Գիտությունը և տեխնիկան գլոբալ հիմնախնդիրների համատեքստում74

ԹԵՄԱ ՎԵՑԵՐՈՐԴ

Պատերազմ և ահաբեկչություն: Հայկական ահաբեկչության առանձնահատկությունները

- ա) Պատերազմը և ահաբեկչությունը որպես գլոբալ հիմնախնդիրներ97
- բ) Հայկական ահաբեկչությունը որպես ազգային հարցի լուծման միջոց.....105

ԹԵՄԱ ՅՈՒԹԵՐՈՐԴ

Անվտանգություն: Ազգային հոգևոր-բարոյական անվտանգություն: Կրթությունը և զիտելիքը որպես ազգային անվտանգության բաղադրիչներ

- ա) Պետությունը, ընտանիքը և եկեղեցին ազգային անվտանգության համատեքստում.....116
- բ) Կրթությունը և զիտելիքը որպես ազգային անվտանգության բաղադրիչներ.....132

ԹԵՄԱ ՈՒԹԵՐՈՐԴ

Կրոնը ժամանակակից աշխարհում

- ա) Քրիստոնեությունը ապակրոնացվող աշխարհում.....149
- բ) Իսլամական գործոնը որպես գլոբալ մարտահրավեր159
- գ) Կրոնական նվաճողականությունը և Հայ եկեղեցին165

ԹԵՄԱ ԻՆՆԵՐՈՐԴ

Բանականությունը, բարոյականությունը և հումանիզմը որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ

- ա) Բարոյականությունը և հումանիզմը որպես մարդկության գոյության և զարգացման հիմնական երաշխիքներ180
- բ) Բնապահպանական մշակույթը որպես մարդ-բնություն ներդաշնակ փոխհարաբերության ապահովման կարևորագույն գործոն189

Վերջաբան.....206

Գրականություն207

Հարցաշար210

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլոբալ հիմնախնդիրները թեև ձևավորվել են աստիճանաբար, դարերի ընթացքում, բայց դրսևորման սուր ձևեր են ընդունել և հրատապ դարձել XX դարում, իրենց հորձանուտի մեջ վերցրել ողջ մարդկությունը: Այսօր բոլոր ազգերն են (անկախ զարգացման սոցիալ-տնտեսական մակարդակից և քաղաքակրթական ձևից) զգում դրանց առկայությունը, ազդեցությունը և լուծման անհրաժեշտությունը: Նկատելի է նաև այն, որ գլոբալ հիմնախնդիրները, կարծես, ազգայնանում են, ձեռք բերում ազգային առանձնահատկություններ, դառնում ազգային գլոբալ հիմնախնդիրներ, պահանջում հրատապ ու հիմնարար լուծումներ: Օրինակ, մեզ համար կարևորագույնը Հայաստանի և Արցախի Հանրապետությունների պետական ինքնուրույնության, տարածքային ամբողջականության պահպանումն է և արտագաղթի դադարեցումը: Բայց դրանք իրականացնելու համար պետք է զարգացնել երկրի տնտեսությունը, ապահովել ազգի հոգևոր-բարոյական միասնությունը, ստեղծել արժեքային նոր համակարգ: Դա նշանակում է, որ ոչ միայն աշխարհում, այլև յուրաքանչյուր առանձին վերցրած երկրում գլոբալ հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են և պահանջում են համալիր լուծումներ: Դասընթացում համամարդկային գլոբալ հիմնախնդիրները քննարկելիս կներկայացվեն դրանց դրսևորման ձևերը հայ իրականության մեջ, ինչպես նաև խնդիրներ, որոնք, ճիշտ է, չունեն համամարդկային հնչեղություն, բայց ունեն համահայկական կարևորություն և նշանակություն:

Հիմնախնդիրների ներկայացման նման մոտեցումը հնարավորություն է տալիս դասընթացում կիրառել ամբողջի և մասի, ընդհանուրի և մասնակիի, պատմականի և արդիականի մեթոդաբանական կողմնորոշիչները:

ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ

«ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Դասընթացի ձևավորման ժամանակաշրջանը և պատճառները

Մարդկության պատմության երկարատև ժամանակաշրջանում մարդը գիտելիք ձեռք բերեց, դարձավ խելոք մարդ, բայց կորցրեց իմաստնությունը: Պետք է փոխարկվենք իմաստունի, որպեսզի փրկվենք: Խելքով մեզ համար ստեղծած բազմաթիվ խնդիրները, որոնցից յուրաքանչյուրի գործադրումը կարող է մարդկությունը ոչնչացնել, իմաստնությամբ պետք է հաղթահարենք:

Ընդհանրապես գիտության մեջ հիմնախնդիրը (պրոբլեմը) **իմացություն է չիմացության մասին**, այսինքն՝ փաստը կա, իսկ բացատրությունը՝ ոչ: Արդիականության գլոբալ հիմնախնդիրների պարագայում իրավիճակը փոքր-ինչ այլ է, որովհետև գիտենք դրանք, որոնք, ցավոք, գնալով ավելանում են, դառնում ավելի բարդ, խճճված, կործանարար, գիտենք նաև լուծման հնարավոր ուղիները, բայց շատ մեծ հարց է՝ կկարողանա՞նք արդյոք լուծել: Պարզ է նաև, որ չլուծվելու դեպքում հարցականի տակ է դրվում մարդու և Երկիր մոլորակի գոյությունն ընդհանրապես, որովհետև ոչ մի ժողովուրդ, երկիր, պետություն չի փրկվի ո՛չ ուժով, ո՛չ փողով, ո՛չ հնարամտությամբ: Երկիրը կնմանվի Լուսնի լանդշաֆտի:

«Գլոբալ հիմնախնդիր» հասկացությունը տարածում է ստացել XX դարի 60-70-ական թվականներին: «Գլոբալը» լատինական ծագում ունեցող «globus»-ն է, որը թարգմանաբար նշանակում է երկրագունդ: Հիմնախնդիրներն այդպես են կոչվում, որովհետև վերաբերում են երկիր մոլորակին, ողջ մարդկությանը:

Հասկացության ծագումը հիմք ընդունելով՝ հիմնախնդիրներն անվանում են «գլոբալ», թարգմանաբար՝ «համերկրային», «համամոլորակային», թեև, կարծում եմ, խնդրի էությունը լավագույնս կարող են արտահայտել «աշխարհակուլ», «աշխարհավեր» հասկացությունները, որոնք չեն օգտագործվում «գիտական քաղաքացիություն» չունենալու, շրջանառության մեջ չգտնվելու պատճառով, և նախընտրում ենք «գլոբալ» օտարամուտ բառը:

Գրականության մեջ գլոբալ հիմնախնդիրների դասակարգման երեք մոտեցում է դիտվում.

ա) Անվերջ ավելացնել դրանց քանակը և բոլոր տնտեսական, քաղաքական, սոցիալական, գիտական, տեխնիկական դժվարությունները համարել գլոբալ: Նման մոտեցմամբ հասկացությունը կորցնում է իր որոշակիությունը և ճանաչողական արժեքը:

բ) Շրջանակը սահմանափակել՝ գլոբալի մեջ ներառելով միայն բնապահպանությունը, ժողովրդագրական շարժումները և զարգացումը:

գ) Հիմնախնդիրները դասակարգել ըստ ընդհանրության աստիճանի և ընդգրկման շրջանակների: Այս մոտեցման դեպքում առանձնացվում են **մասնակի, տեղային (լոկալ), տարածքային-տարածաշրջանային և գլոբալ հիմնախնդիրներ**: Վերջինս երբեմն անվանում են համընդհանուր, համապիտանի (ունիվերսալ), մեր ձևակերպմամբ՝ աշխարհակուլ, աշխարհավեր: **Մասնակի** խնդիրները վերաբերում են պետության գործունեության մեկ ոլորտին, մեկ բնակավայրին, մեկ օբյեկտին:

Տեղային (լոկալ) հիմնախնդիրները ներառում են առանձին երկրներ, օրինակ՝ ժողովրդագրական իրավիճակը ՀՀ-ում, ազգային անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում և այլն:

Տարածաշրջանային հիմնախնդիրների շարքն են դասվում երկրաշարժը, ջրհեղեղը, տարաբնույթ պատահողները, փոթորիկները, ատոմակայանների վթարները, խոշոր պետությունների սոցիալ-տնտեսական ցնցումները:

Գլոբալ (աշխարհակուլ) հիմնախնդիրները վերաբերում են ողջ մարդկությանը, նրա լինել-չլինելուն:

Առաջին մարդը, ով ամբողջությամբ գիտակցեց և խոսեց գլոբալ հիմնախնդիրների մասին, իտալացի **Աուրելիո Պեչչեին** էր: Նրա

հրավերով, 1968 թ. ապրիլի 6-ին և 7-ին, Անեյլիի ֆոնդի հովանավորությամբ, ամենատարբեր ոլորտներից և երկրներից երեսուն գիտնականներ մեկնեցին Հռոմ, որպեսզի առանձնացնեն գլոբալ հիմնախնդիրները և առաջադրեն հնարավոր լուծումներ: Քննարկման երկրորդ օրն արդեն ակնհայտ դարձավ, որ նույնիսկ ամենապարզ թվացող հարցերի շուրջ միակարծություն գոյություն չունի:

Պեչչեի տեսակետի կողմնակիցները հավաքվեցին նրա բնակարանում, ստեղծեցին մշտական խորհուրդ, որի հիմքի վրա էլ ձևավորվեց «Հռոմեական ակումբը»՝ դառնալով վերքաղաքական, վերկուսակցական, վերգաղափարախոսական կառույց, և նրա շահը պարզապես մարդկությանը ծառայելն էր: Քննարկումների արդյունքում ձևակերպվեց երկու կարևոր նպատակ, որոնք ակումբը պետք է աստիճանաբար իրագործեր.

1. Նպաստել գլոբալ հիմնախնդիրների կարևորության գիտակցմանը:
2. Բոլոր հնարավոր միջոցներով խթանել այնպիսի հարաբերությունների, քաղաքական ուղղությունների և ինստիտուտների կայացումը, որոնք կնպաստեն գոյություն ունեցող իրավիճակի փոփոխությանը:

Խնդրի լուծման գործում ներգրավվեցին նշանավոր գիտնականներ, մտավորականներ, պետական, քաղաքական գործիչներ, կրթության ոլորտի աշխատողներ, կառավարիչներ ավելի քան երեսուն երկրներից:

«Հռոմեական ակումբի» գործունեության արդյունքում՝

1. Գիտակցվեց գլոբալ հիմնախնդիրների ողջ լրջությունը:
2. Եվ այն, որ միայն մարդկությունն է դրանց առաջացման մեղավորը:

Արձանագրվեց, որ պետք է դնել հստակ նպատակներ և փորձել իրագործել: Թվարկենք դրանցից մի քանիսը.

1. Բնության հնարավորությունների բացահայտում և համապատասխան գործունեության ծավալում: XX դարի բնապահպանական ճգնաժամը պարզ դարձրեց, որ բնության հնարավորությունները սահմանափակ են, որոշակի սահման կա, որից այն կողմ անցնել չի կարելի, որովհետև կոչնչանան և՛ բնությունը, և՛ մարդը: Անհրաժեշտ է էկոլոգիական դաստիարակություն, որպես-

զի մարդն իմանա, թե ինչպես պետք է բնության հետ ապրի ներդաշնակության մեջ:

2. Մարդու հնարավորությունների սահմանափակության գիտակցում. պետք է հաշվի առնել, որ մարդու ֆիզիկական (ֆիզիոլոգիական) և հոգեկան հնարավորությունները նույնպես սահման ունեն: Գիտության և տեխնիկայի նվաճումները թուլացրին մարդու ֆիզիկական ուժերը, կենսական ակտիվությունը, ինչը փորձ է արվում լրացնել արհեստական միջոցներով, որոնց արդյունավետությունը խիստ կասկածելի է: Պետք է բարձրացնել մարդու կենսունակությունը, կենսական ակտիվությունը, որպեսզի նա ազատվի լարվածությունից և սթրեսներից:

3. Ուժեղացնել տարբեր երկրների և ժողովուրդների համագործակցությունը, ժառանգել և զարգացնել մարդկության մշակութային նվաճումները:

4. Լուծել երկրագնդի բնակչության տեղավորման, տեղաբաշխման և սննդի ապահովման խնդիրները և այլն:

Վերջին հարյուր տարում մարդկությունը հազար անգամ մեծացրել է իր էներգապաշարները: Ապրանքների և ծառայությունների ընդհանուր ծավալը զարգացած երկրներում կրկնապատկվում է յուրաքանչյուր տասնհինգ տարին մեկ, գնալով այդ ժամկետներն ավելի են կրճատվում: Դրանց համապատասխան կրկնապատկվում են արտադրական թափոնները, թունավորվում է բնությունը: Կենդանական և բուսական շատ տեսակներ ոչնչացել են, մյուսները կանգնած են ոչնչացման եզրին: Աճում է հիվանդությունների, այդ թվում՝ ժառանգական հիվանդությունների քանակը: Քաղցկեղածին հիվանդությունից ամեն տարի հինգ հարյուր հազար մարդ է մահանում, և անընդհատ աճող մահացություն է գրանցվում բնական միջավայրի աղտոտվածության պատճառով:

XX դարում մարդու ազդեցությունը բնության վրա այնքան ուժգնացավ, որ բնությունը գրեթե սպառեց վերականգնվելու, ինքնամաքրման հնարավորությունը: XX դարի 70-ական թթ. «Հռոմեական ակումբի» ուսումնասիրություններից պարզ դարձավ*, որ

* Ակումբը պատվիրում է թեմաներ, ապահովում դրանց ֆինանսավորումը, բայց չի ազդում ընթացքի կամ արդյունքների վրա, զեկուցման հեղինակները բացարձակապես ազատ են և անկախ: Ստանալով պատրաստի տեքստը՝ ակումբը

երկրի բնակչության աճի այս տեմպերի պահպանման դեպքում XXI դարի կեսերից մարդկությանը կերակրելու բնական ռեսուրսները կարող են սպառվել: Դրան հավելենք հետևյալը. մասնագետների հաշվարկներով 1970–1990 թթ. աշխարհը կորցրեց ևս 200 մլն հեկտար անտառ, անապատն ավելացավ 120 մլն հեկտարով, բնակչությունն աճեց 1,6 միլիարդով, և գիտնականների կանխատեսմամբ՝ 2030 թ. մարդկությունը կհատի 10 միլիարդի սահմանագիծը: Բնակչությանը կերակրելու համար գյուղատնտեսական ապրանքների արտադրությունն ավելացավ 4 անգամ, էներգիայինը՝ 6: Այս դարի կեսերին ջերմաստիճանը կարող է բարձրանալ 2,6-5,8 աստիճանով: Խմելու ջրի համար մղվող «ազգային պատերազմները» կդառնան ավելի կատաղի: Այս ամենը չկանխելու դեպքում բնապահպանական աղետը կարող է իրականություն դառնալ 2–3 սերնդի ընթացքում: Բնության յուրացումն ու օգտագործումը սերտորեն կապված են տնտեսության և քաղաքականության հետ: Սպառողական հոգեբանությունը և տնտեսավարումը տանում են բնության անխնա շահագործմանը՝ ոչնչացվում են անտառները, աղտոտվում են ջրային և օդային ավազանները, մարդու գոյության անմիջական բնական միջավայրը՝ կենսոլորտը: Զարգացած երկրները բնությունը շահագործում են իրենց աճող պահանջումները բավարարելու, իսկ զարգացող և չզարգացած երկրները (Ասիա, Աֆրիկա (անվանում են նաև «երրորդ աշխարհի» երկրներ))՝ բնակչության ֆիզիկական գոյությունն ապահովելու համար: Երկու դեպքում էլ ձևավորվում է նույն գլոբալ հիմնախնդիրը, որն անվանում ենք «բնապահպանական» կամ «էկոլոգիական» և սերտորեն կապում գոյապահպանականի հետ կամ պայմանավորում վերջինով (այդ մասին հանգամանորեն՝ համապատասխան բաժնում):

Այստեղից էլ խնդիրը. նվազեցնել կամ զրոյի հասցնել սպառման աճը զարգացած երկրներում և սահմանափակել ծնելիությունը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: Ոչ մեկն էլ հաջողություն չունեցավ, ինչից էլ ծնվեցին պարենային, ժողովրդագրական և վտանգավոր հիվանդությունների գլոբալ հիմնախնդիրները:

քննարկում և հաստատում է այն ամենատարբեր նստաշրջանների ընթացքում, այնուհետև տարածում է հետազոտության արդյունքները՝ դրանք հրատարակելով և քննարկումներ կազմակերպելով տարբեր երկրներում ու լսարաններում:

Այնուհետև, սոցիալական քաղաքականության, քաղաքակրթությունների միջև ծագած հակասությունների, գիտության և տեխնիկայի նվաճումներն ի վնաս մարդու օգտագործելու հետևանքով գլոբալ հիմնախնդիրներ դարձան գիտությունը և տեխնիկան, տեխնիկական և տեխնոլոգիական նվաճումները իրական դարձրին մարդկության ոչնչացումը զենքի միջոցով, սկզբունքային դարձավ քաղաքակրթության զարգացման ուղեգծի, ուղղվածության (վեկտորի) ճշգրտման հարցը: Այստեղից էլ այն գլոբալ մարտահրավերները, որոնք կապվում են գիտության ու տեխնիկայի, քաղաքակրթության զարգացման հեռանկարների, պատերազմի ու խաղաղության, մարդկության և ազգային անվտանգության խնդիրների լուծման հետ: Առաջանում է կարևորագույն հարց՝ գլոբալ հիմնախնդիրները զարգացման, գիտության և տեխնիկայի առաջընթացի բնակա՞ն, թե՞ դրանց հնարավորությունները ոչ ճիշտ օգտագործելու հետևանքներ են: Սկզբունքային դարձավ նաև զարգացման նկատմամբ մեր վերաբերմունքի ճշգրտման հարցը:

Անցած դարի 70-ական թվականներին, որպես գլոբալ հիմնախնդիր, սկիզբ առավ և զնայով լայն թափ ստացավ միջազգային ահաբեկչությունը, որը քաղաքական խնդիրները լուծում է զենքի, հազարավոր մարդկանց արյան միջոցով: Ահաբեկչության մեջ վերջին շրջանում կարևոր դեր է կատարում նաև կրոնական գործոնը:

Այս ամենը կյանքի պահպանումը համամոլորակային իմաստով դարձրեց կարևորագույն նպատակ և խնդիր:

բ) Գլոբալ հիմնախնդիրների դասակարգման հիմնական սկզբունքները

Այժմ փորձենք գլոբալ հիմնախնդիրները ներկայացնել ըստ առանձին ոլորտների.

ա) Տնտեսական.

- մեծացել է խզումը տնտեսապես զարգացած, քաղաքականապես կայուն և աղքատ ու անկայուն, տնտեսապես չզարգացած և զարգացող երկրների միջև,
- թերսնումը (աշխարհի 7,2 միլիարդ բնակչությունից 1 միլիարդը թերսնվում է կամ կիսաքաղց է), որը ավելի մեծ՝

պարենային հիմնախնդրի (աշխարհի աճող բնակչությանը սնելու) բաղադրիչներից է:

բ) Բնապահպանական.

- շրջակա միջավայրի պահպանում աղտոտումից, թունավորումից,
- համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի խաղաղ նվաճում և օգտագործում,
- էներգետիկ-հումքային խնդիրների լուծում:

գ) Սոցիալ-քաղաքական, մարդասիրական.

- համաշխարհային միջուկային բախումների կանխում և սպառազինությունների մրցավազքի արգելում,
- էթնիկ բախումների և համաշխարհային ահաբեկչության հաղթահարում,
- ժողովրդագրական իրավիճակի կարգավորում (Եվրոպայի էթնիկ բնակչությունը ծերանում է, որովհետև կրճատվում է ծնելիությունը, փոխարենը՝ արագորեն աճում է ԱՖրիկայի և Ասիայի բնակչությունը, որոնք հախուռն ներգաղթում են Եվրոպա՝ փոխելով վերջինիս ժողովրդագրական դեմքը: Եվրոպան «թխանում» է),
- էթնիկական հողի վրա բախումների դադարեցում,
- արդեն տարածված վտանգավոր հիվանդությունների բուժում, նորերի կանխարգելում,
- մարդու, անհատի զանգվածային օտարման, հոգեզրկության հաղթահարում և այլն:

Գլոբալ հիմնախնդիրները դասակարգվում են երեք մեծ խմբի.

1. Գլոբալ հիմնախնդիրներ, որոնք պատկանում են սոցիալական ոլորտին և պայմանավորված են տարբեր հանրությունների միջև գոյություն ունեցող հարաբերություններով: Դրանց մեջ ամենակարևորը պատերազմի ու խաղաղության խնդիրն է, վիճելի հարցերը ոչ բռնի միջոցներով լուծելու ձգտումը, պայքարը միջազգային ահաբեկչության դեմ, տնտեսական հետամնացության հաղթահարումը, ազգային անվտանգության ապահովումը և այլն:

2. Գլոբալ հիմնախնդիրներ, որոնք արտացոլում են հասարակության և բնության փոխհարաբերության ժամանակակից մակար-

դակը: Դրանք բնապահպանական, մարդու և կենսոլորտի ներդաշնակության ապահովման հիմնախնդիրներն են:

3. Գլոբալ հիմնախնդիրներ, որոնք արտացոլում են մարդու (անհատի) և հասարակության փոխհարաբերության առկա վիճակը և զարգացման միտումները: Այդ շարքում են ժողովրդագրական հիմնախնդիրները, մշակույթի և քաղաքակրթության, գիտության և տեխնիկայի, կրթական միասնական տարածքի ստեղծման, կրոնի հետ կապված նոր մարտահրավերների ձևավորումը, հաղթահարումը և այլն:

Գլոբալ հիմնախնդիրների առանձնահատկություններից են.

ա) բնորոշ են բոլոր երկրներին և ժողովուրդներին, տարածաշրջաններին: Դրանց լուծմամբ շահագրգռված է ողջ մարդկությունը, և հնարավոր է միայն համաշխարհային հանրության ջանքերով,

բ) դարձել է քաղաքակրթության զարգացման օբյեկտիվ գործոն, որի անտեսումը հղի է ամենավտանգավոր հետևանքներով, որովհետև կարող է խոչընդոտել մարդկության զարգացումը կամ ողջ մարդկության ոչնչացման պատճառ դառնալ,

գ) բոլոր հիմնախնդիրները կապված են միմյանց հետ և համակողմանի լուծում են պահանջում,

դ) հոգս են բոլոր ժողովուրդների համար:

Գլոբալ հիմնախնդիրների շարժընթացը բազմաբնույթ է, հակասական, ինչը պայմանավորված է մի քանի գործոնով.

1. Հակասությունները հասարակական կյանքում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, քաղաքակրթական, հոգևոր-մշակութային, որոնք փոխում են պատմական գործընթացների բնույթը և մարդ-միջավայր փոխհարաբերությունները:

2. Բնության յուրացման տարերային, չգիտակցված բնույթը, երբեմն էլ՝ գիտակցված, անխնա շահագործումը:

3. Պակաս կարևոր հանգամանք չէ բնության ներքին ակտիվությունը (ագրեսիվությունը). դրսևորվում է բնական աղետներով, որոնց երկու խումբ է առանձնացվում՝ երկրաֆիզիկական (երկրաշարժ, փոթորիկ, լավայի հոսք, եղանակային՝

երաշտ, ջրհեղեղ) և տեխնոլոգիական (շրջակա միջավայրի աղտոտում):

4. Կենսոլորտը և մարդկությունը չեն դառնում մեկ միասնական համակարգ կամ շատ դանդաղ են դառնում:
5. Ժողովրդագրական իրավիճակի և գործընթացների հակասականությունը:

Շատ հետաքրքիր է ժամանակակից ժողովրդագրական իրավիճակի շարժընթացը. զարգացած երկրներում այն բացասական է, բնակչությունը չի աճում, իսկ աղքատ, պատերազմական իրավիճակում գտնվող երկրներում չափից ավելի դրական է, բնակչությունը շատ արագ է բազմանում, որի հետ կապված՝ բնակչությանը կերակրելը դառնում է լրջագույն խնդիր: Այն լուծելու անկարողությունը և բնակչության անապահով վիճակը զարկ են տալիս արտագաղթին, որի հետևանքով այսօր Արևմտյան Եվրոպայի շատ երկրներ կանգնած են ծանրագույն փաստի առջև (ժողովրդագրական հիմնախնդրի մասին մանրամասն՝ տե՛ս հաջորդիվ):

Բնապահպանական և գոյապահպանական խնդիրները տարբեր պահանջներ են առաջադրում չզարգացած, զարգացող և զարգացած երկրներին:

Վերոբերյալը հաշվի առնելով՝ առանձնացնենք գլոբալ հիմնախնդիրը և ներկայացնենք առանձնահատկությունները: Թվարկումը կատարենք ըստ դասավանդվող թեմաների հաջորդականության.

1. Գլոբալացումը որպես արդիականության կարևորագույն հիմնախնդիր:
2. Բնապահպանություն և գոյապահպանություն (էներգետիկ, հումքային, շրջակա միջավայրի պահպանություն, համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի խաղաղ յուրացում, տնտեսավարում, գաղափարախոսություն, սպառողականություն): Բնապահպանական հիմնախնդիրների երկու խումբ է առանձնացվում.
 - բնական գործընթացների հետևանքով առաջացած,
 - մարդածին, որոնք բացասական բնօգտագործման հետևանք են: Քննարկման առարկա կդարձնենք միայն երկրորդը:

3. Ժամանակակից ժողովրդագրական (դեմոգրաֆիական) իրավիճակը: Ժողովրդագրական ճգնաժամի և պայթյունի (բում) պատճառներն ու հետևանքները: Ժողովրդագրական իրավիճակը <<-ում:

4. Մշակույթ, քաղաքակրթություն և զարգացում: Քաղաքակրթության զարգացման հեռանկարները և մարդկության ապագան: Գիտությունը և տեխնիկան գլոբալ մարտահրավերների համատեքստում:
5. Պատերազմը և միջազգային ահաբեկչությունը որպես վիճելի հարցերը բռնի միջոցներով լուծելու ձևեր և մարդկության գոյությանը սպառնացող հիմնախնդիրներ: Հայկական ահաբեկչության առանձնահատկությունները:
6. Անվտանգություն, ազգային անվտանգություն և ազգի հոգևոր-բարոյական անվտանգության ապահովման հիմնախնդիրներ: Այս համատեքստում կքննարկվեն նաև գիտելիքի և կրթական համակարգում տեղ գտած ձևախեղումները, որոնք վերջին տարիներին դիտվում են մեր հանրապետությունում:
7. Կրոնը ժամանակակից աշխարհում: Կրոնը քաղաքակրթական մարտահրավերների համատեքստում:
8. Բանականությունը, հումանիզմը և բարոյականությունը որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ:

Գլոբալ հիմնախնդիրները փոխեցին քաղաքակրթության զարգացման ուղենիշները, արժեքային կանխադրույթները: Դրանք ստիպում են որոնել և ստեղծել նոր աշխարհայացքային կողմնորոշիչներ, որոնց գործադրումից կախված կլինի մարդկության ապագան:

Թվարկված հիմնախնդիրները կարոտ են փիլիսոփայական իմաստավորման, որովհետև փիլիսոփայական առումով դրանց առաջացման պատճառները ոչ միայն և ոչ այնքան սոցիալ-տնտեսական են, որքան հոգևոր-բարոյական կամ արժեքային: Պետք է վերանայել արժեքները, մշակել նորերը կամ առաջին պլան մղել հոգևոր-բարոյական արժեքները՝ սերը, հոգատար վերաբերմունքը բնության, մարդու նկատմամբ: Քաղաքակրթությունը պետք է բարոյական և հումանիստական հիմքի վրա դնել (այդ մասին մանրա-

մասն՝ վերջում), անհրաժեշտ է փոխել մեր պատկերացումները առաջընթացի՝ զարգացման նշանակության մասին:

Փիլիսոփայությունը պետք է օգնի մեզ, որ գատենք անհրաժեշտը պատահականից, չչփոթենք պատճառն ու հետևանքը, էականն ու անէականը, իրականն ու թվացյալը և այլն: Բացի դրանից, ուշադիր ընթերցողը հավանաբար նկատեց, որ թվարկված հիմնախնդիրներն ի վերջո հանգում են փիլիսոփայության հիմնական հարցին՝ մարդուն, որովհետև միայն նրանից է կախված մարդկության ապագան: Այստեղից է բխում «Արդիականության գլոբալ հիմնախնդիրները» դասընթացի կարևորությունն ու արդիականությունը և այն, որ այդ դասընթացը կարդացողը փիլիսոփա է:

Հարցեր կրկնության համար

1. *Ի՞նչ է հիմնախնդիրը, թվարկել գիտական և արդիականության գլոբալ հիմնախնդիրների միջև գոյություն ունեցող տարբերությունները:*
2. *Ե՞րբ է տարածում ստացել «գլոբալ հիմնախնդիր» հասկացությունը և ինչո՞ւ:*
3. *Ի՞նչ դեր է կատարել «Հոմեոկան ակումբը» գլոբալ հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծման անհրաժեշտության գիտակցման հարցում:*
4. *Գլոբալ հիմնախնդիրները առանձնացնել ըստ ոլորտների:*
5. *Ինչո՞վ է կարևորվում գլոբալ հիմնախնդիրների փիլիսոփայական վերլուծությունն ու իմաստավորումը:*

ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ա) Ըմբռնումը և առանձնահատկությունները

«Գլոբալացում» հասկացության հայերեն ստույգ համարժեքը դեռ գտնված չէ, օգտագործվում են «համապարփակեցում», «համաշխարհայնացում», «համերկրայնացում», գուցե նաև՝ «աշխարհատարած», «աշխարհածուփ» և այլ հասկացություններ: Այդ պատճառով նախընտրում եմ չթարգմանված տարբերակը՝ բառերը գործածելով հայերենի քերականական ձևափոխություններով: Հասկացությունը լայն շրջանառության մեջ է դրվել XX դարի 80-ական թվականներին (ըստ **Ի. Բարդեյանի** ձևակերպած պարադոքսի՝ թեև ոչ մեկին հասկանալի չէ, թե ինչ է գլոբալացումը, սակայն ոչ ոք չի կասկածում նրա գոյությանը): Գլոբալացման հիմնական գործոններն (հատկանիշներ) են՝

- ա)** գիտության և տեխնիկայի առաջընթացը,
- բ)** տնտեսության կապիտալիստական եղանակի կամ շուկայական հարաբերությունների զարգացումը,
- գ)** համաշխարհային և տեղային քաղաքակրթությունները տարրալուծելու միտումները,
- դ)** հասարակության անցումը «ագրարային-ինդուստրիալ-հետինդուստրիալ», «ավանդական-մոդեռն-հետմոդեռն», «ավանդական-տեխնածին» փուլերով, որոնցից յուրաքանչյուրը կարելի է համարել գլոբալացման առանձին փուլ:

Ըստ սահմանումներից մեկի՝ **գլոբալացումը բազմագործոն, սիներգետիկ երևույթ (գործընթաց) է, որը ձգտում է ստեղծել գլոբալ տնտեսական, ֆինանսական, հաղորդակցական (կոմունիկացիոն) և տեղեկատվական ցանցեր, որոնք տարածվելով ողջ աշխարհով՝ ձգտում են համաշխարհային հանրությունը**

ներառել մեկ ամբողջական համակարգի մեջ, ստեղծել մեկ միասնական, միաբնույթ քաղաքակրթություն:

Գլոբալացումը, ըստ **Մ. Ֆրիդմանի**, անցել է հետևյալ փուլերով.

ա) Սկսվում է 1492 թվականին և հասնում մինչև 1800-ական թթ., ուղեկցվում է աշխարհագրական հայտնագործություններով, հայտնաբերված տարածքների գաղութացմամբ, տեղաբնիկների և տեղական մշակույթների ոչնչացմամբ: Աշխարհը կարծես փոքրանում է և ընդունում միջին չափեր:

բ) 1800-ական թվականներից մինչև 2000-ական թթ., երբ գիտատեխնիկական, տեղեկատվական հեղափոխությունների, հայտնագործությունների հետևանքով աշխարհն ավելի փոքրացավ:

գ) 2000 թվականից առայսօր, տեխնիկական և տեխնոլոգիական հայտնագործությունների, մեծ արագությունների ուժգնացման, համաշխարհային տնտեսական հզոր կորպորացիաների ընդլայնման, քաղաքակրթությունների միակերպացման, համացանցի ստեղծման հետևանքով աշխարհը դառնում է «հարթ խաղաղաշտ», «տափարակ», «փոքրիկ»¹:

Այլ հեղինակներ գլոբալացման երեք փուլ կամ ավիք են առանձնացնում.

ա) XIX դարի վերջից մինչև XX-ի սկիզբ, երբ առևտրային և կապիտալ ներդրումները տարածվում էին աշխարհի մեծ մասում, բայց երկու համաշխարհային պատերազմները կանխեցին դրանց ընթացքը:

բ) XX դարի 70-90-ական թթ., որի նախադրյալներ դարձան հեղափոխությունը տեղեկատվության և հեռուստատեսության ոլորտներում:

գ) Ժամանակակից փուլ, որը, սկսվելով նախորդ դարի 90-ական թվականներից, շարունակվում է մինչև այսօր: Այս փուլի նախադրյալներ դարձան.

¹ Այդ հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Յու. Հովականյան**, «Տափարակ աշխարհի» հայեցակարգը և ազգային ինքնության հիմնախնդիրները // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2014, թիվ 4, էջ 155-169:

▪ ԽՍՀՄ-ի և առհասարակ սոցիալիստական ճամբարի կործանումը, որն ապահովեց շուկայական տնտեսության հաղթանակը պլանային տնտեսության նկատմամբ,

▪ տեղեկատվական հեղափոխության ծավալումը, որի արդյունքում ձևավորվեցին էլեկտրոնային տնտեսությունը, էլեկտրոնային ֆինանսական կառուցվածքները, էլեկտրոնային փողը: Այդ ամենը թուլացրին ազգային պետությունների դերն ու նշանակությունը,

▪ մոդեռնի նախագծի և Լուսավորականության իդեալների կործանումը, որի ընդհանրական սկզբունքներն էին ռացիոնալիզմը, առաջադիմությունը, գիտական տեխնոլոգիզմը:

Պատմականորեն մոդեռնը² մի ողջ ժամանակաշրջանի բնութագիր է, սկսվելով Նոր ժամանակից (XVII դարից)՝ հասնում է մինչև XX դարի կեսերը: Մոդեռնիզմի առաջին փուլը XVII դարն է. առաջին մոդեռն մտածողներն էին **Ֆ. Բեկոնն** ու **Ռ. Դեկարտը**, որոնք իրենց գիտական էմպիրիզմով (Ֆ. Բեկոն) և իմացաբանական ռացիոնալիզմով (Ռ. Դեկարտ) դարձան ժամանակակից գիտական քաղաքակրթության սկզբնավորողները, իրենց հայացքներով և գաղափարներով նպաստեցին հետագա դարերի եվրոպական իդեալների ու արժեքների ձևավորմանը: Մոդեռնիզմի հաջորդ փուլը կապվում է XVIII դարի լուսավորական գաղափարախոսության և փիլիսոփայության հետ: Լուսավորիչները զարգացրին ու խորացրին իրենց նախորդների գաղափարները, մշակեցին հասարակության նոր հայեցակարգ, որի հիմքում մարդասիրական, համամարդկային արժեքներն էին: Նրանք համոզված էին, որ հասարակական ու ազգային կյանքի ցանկացած խնդիր հնարավոր է լուծել լուսավորության, առաջադեմ դաստիարակության, բանականության և առաջադիմության միջոցով:

Լուսավորիչները համոզված էին, որ.

▪ գիտության միջոցով ճանաչելով բնության օրենքները՝ կարելի է դառնալ բնության տերն ու տիրակալը,

▪ գիտությունը հասկանալի կդարձնի միջմարդկային հարաբերությունները, հնարավորություն կտա ստեղծել այնպիսի հա-

² Մոդեռնը ո՞՞ն է, ուղղություն արվեստում, մոդեռնը նաև ժամանակակիցն է, արհիվանը, որի կրողի հայացքն ուղղված է ապագային, առաջադիմականին:

սարակություն, որում կգործեն ազատության, հավասարության, արդարության, եղբայրության կարգախոսները,

- գիտության միջոցով մարդը կճանաչի իրեն, բանականության միջոցով կհսկի սեփական վարքագիծը:

XIX–XX դարերում փորձեցին իրականացնել Լուսավորականության իդեալները: Բայց դրանք կա՛մ չկիրառվեցին, կա՛մ խեղաթյուրվեցին: Արևմտյան արժեքներն այլ երկրներում տարածվեցին ոչ թե լուսավորության ու դաստիարակության, այլ հարկադրանքի ու բռնության միջոցներով, որոնք երբեմն ուղեկցվում էին տեղաբնիկների ոչնչացմամբ:

XX դարը մարդկությանը «պարզեց» երկու աշխարհամարտ, որոնցում ոչնչացվեցին միլիոնավոր մարդիկ: Կասկածի տակ դրվեց, թերևս, հիմնովին արժեզրկվեց մարդասիրության (հումանիզմի) գաղափարը: Հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր կյանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, որոնք համապատասխան տեղաշարժեր կատարեցին զանգվածային հոգեբանության մեջ և մշակույթում: Դրանցից են՝

1. XX դարի 30-ական թվականներին ողջ աշխարհում բռնկված տնտեսական ճգնաժամը ծնեց ֆաշիզմը և Երկրորդ համաշխարհային պատերազմը: Փոփոխություններ տեղի ունեցան արտադրության նպատակի մեջ. արտադրության անմիջական նպատակ դարձավ ոչ միայն շահը, այլև սպառումը: Դարի 50–60-ական թվականներին ձևավորվեց սպառողական հասարակությունը (ԱՄՆ և Եվրոպա):

2. XX դարի 60-ական թվականներին ձևավորված բնապահպանական ճգնաժամն արժեզրկեց լուսավորիչների այն մեծ գաղափարը, թե հնարավոր է վերափոխել և հպատակեցնել բնությունը: Բնության նկատմամբ մարդու թվացյալ հաղթանակը նմանվեց պյուռոսյան խրախճանքի:

3. Մարդկության գլխին դամոկլյան սրի պես կախվեց ատոմային պատերազմի վտանգը: Դրան ավելացան զանգվածային ոչնչացման ֆիզիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական, հոգեբանական զենքերը, որոնք մարդկանց մեջ պատմական հեռանկարի նկատմամբ անորոշ ապրում ձևավորեցին:

4. Վարակիչ և անբուժելի հիվանդությունների տարածումը զանգվածային մահացությունների պատճառ դարձավ:

Այս ամենի իմաստավորումը ծնեց հետմոդեռնիզմը և նրա փիլիսոփայությունը: Ամենաընդհանուր իմաստով հետմոդեռնիզմը ոչ թե մոդեռնից հետո եկողն է, մոդեռնի շարունակությունը, այլ հակադրությունն ու հիասթափությունն է մոդեռնի նախագծից (մերօրյա արտահայտմամբ՝ տեսլականից)՝ մարդու ու մարդասիրության, բանականության ու առաջընթացի, նախորդ արժեքների և իդեալների նկատմամբ: Մոդեռնի ժամանակաշրջանի մշակույթում, հասարակական կյանքում, գաղափարախոսության մեջ մեծ դեր էին կատարում ինտելեկտուալները (**ժ. Լիոտարի** կարծիքով՝ վերջին ինտելեկտուալը **ժ. Պ. Սարտրը** էր): Հետմոդեռնիզմը դարձավ «ինտելեկտուալի գերեզմանը» (Լիոտարի աշխատություններից մեկի վերնագիրն է), ինտելեկտուալին փոխարինելու եկավ միջին շերտի հաջողակը, որը, ընդունելով ժամանակակից քաղաքակրթության հարմարավետությունները, վայելում է կյանքը, դառնում ծրագրավորված էակ (զոմբի)՝ զուրկ անձնական հատկություններից, ինքնուրույն մտածողությունից:

Ձևավորվեց զանգվածային մարդը՝ «մարդ-զանգվածը», որն ապրում է օրվա կյանքով, որի գործունեությունը շահամիտում են մասնագիտության մեջ հաջողության հասնելու և բարեկեցիկ ապրելու ձգտումները: Հետմոդեռնիզմի մարդը աշխարհայացքային ամուր հիմք չունի: Նախկինում նման հիմք էին դիցաբանությունը, կրոնը, փիլիսոփայությունը, գիտությունը: Հետմոդեռնիզմը, հեղինակագրկելով գիտությունը, փոխարենը ոչինչ չառաջադրեց, որի օգնությամբ մարդը կկարողանար կողմնորոշվել աշխարհում: Հետմոդեռնիզմի մարդը նպատակ չունի. նպատակն այլևս արժեք չէ: Այս ամենը սնեցին նիհիլիզմն ու ցինիզմը: Ըստ հետմոդեռնիստների՝ եթե Կանտն ապրեր, ապա այսօր անպայման կգրեր «Յինիկ բանականության քննադատություն» աշխատությունը:

Շարունակելով այս գիծը՝ հետմոդեռնիստները մարդու և մարդկության առաջադիմության լուսավորական իդեալները համարեցին վերաքննելի, իսկ մարդասիրության ավարտը՝ Օսվենցիումը:

Մարդկությունը, ճակատագրի (բախտի) քմահաճույքին թողնված, դեգերում է անհուն տիեզերքում: Այսօրվա իրավիճակը հի-

շեցնում է մարդու մահը. գուցե, մո՞տ է եվրոպացի մարդու վերջը: Բայց մարդը նպատակ չէ, այլ մի բան, որը պետք է հաղթահարել (Նիցշեից եկող գաղափար):

Գլոբալացման չորս ուղղություն է առանձնացվում՝ տնտեսական, տեղեկատվական, քաղաքական-գաղափարախոսական և սոցիալ-մշակութային:

Տնտեսականի բնութագրիչներ են ազգային տնտեսությունների տարրալուծումը միասնական տնտեսական համակարգի մեջ՝ գլոբալ ֆինանսական շուկաների և վերազգային կորպորացիաների իշխանությունների ներքո:

Տեղեկատվականի բնութագրիչ է համաշխարհային ֆինանսական տեղեկատվական տարածության ձևավորումը՝ համակարգչային տեխնոլոգիաների հիմքի վրա: Ձևավորվում է, այսպես ասած, տեղեկատվական վերնախավ (էլիտա), որը մասնագիտանում է գիտակցության ձևափոխման մեջ:

Քաղաքական-գաղափարախոսական տեսանկյունից գլոբալացումը համարվում է գաղափարախոսական ուսմունք, որը փոխարինելու է եկել նեոլիբերալիզմին:

Սոցիալ-մշակութային առումով գլոբալացումը դիտվում է որպես մշակույթի համընդհանուր արևմտացում: Գլոբալացման այս հարաբերակցությունը հաշվի առնելով՝ այն սահմանվում է որպես ***տնտեսական, քաղաքական, տեղեկատվական, սոցիալ-մշակութային միասնական տարածության ձևավորման գործընթաց:***

Գլոբալացման գործընթացներում առանձնացվում են դրական և բացասական կողմեր: ***Դրական են հետևյալ երևույթները.***

- փոխկապակցված աշխարհի ձևավորում,
- տեղեկատվական հոսքի խտության մեծացում,
- աշխարհի շատ ժողովուրդների կյանքի միջին տևողության ավելացում,
- կենսամակարդակի բարձրացում,
- մեկուսացվածության հաղթահարում, բազմաթիվ երկրների կողմից նորագույն գիտություններին և տեխնոլոգիաներին հաղորդակցման հնարավորության մեծացում:

Մշակութային առումով գլոբալացումը հնարավորություն է տալիս.

- դուրս գալ ազգային ներկայացվածությունից, ազգային մշակույթը դարձնել համաշխարհայինի մաս, իսկ համաշխարհային մշակույթը դարձնել ազգային մշակույթների լավագույն նվաճումների հանրագումարը,
- մեծացնել մշակութային երկխոսության հնարավորությունները,
- ավելի ուշադիր և հոգատար վերաբերմունք ցուցաբերել սեփական մշակույթի նկատմամբ:

Գլոբալացման բացասական կողմերն են.

- մեծացող տնտեսական, սոցիալական, քաղաքական, քաղաքակրթական տարբերությունները զարգացած, զարգացող և չզարգացած երկրների միջև,
- նոր գլոբալ հիմնախնդիրների առաջացումը՝ միջազգային ահաբեկչություն, նոր և դժվարությամբ բուժվող (կամ չբուժվող) հիվանդությունների տարածում, ժողովրդագրական իրավիճակի սրում, աշխարհում բնակչության ծայրահեղ անհավասարաչափ բաշխում, ժողովուրդների զանգվածային տեղափոխություն (միգրացիա) և այլն,
- ազգային մշակույթների հիմնարար արժեքների վերացման վտանգը, մշակույթի միակերպացումը, արևմտյան (եվրոպական-ամերիկյան) զանգվածային մշակույթի ամբողջական գերիշխանությունը,
- ազգային արմատներից, արժեքներից կտրվելու վտանգի մեծացումը,
- ազգային ավանդույթների, ծեսերի, սովորույթների քայքայումը, որը հանգեցնում է էթնիկ ինքնության թուլացմանը, «գլոբալ գյուղի» ձևավորմանը, մտածողության ազգային առանձնահատկությունների փոխակերպմանը՝ անգլոսաքսոնական լեզվի ազդեցության ուժեղացմամբ (որոշ հայ երիտասարդներ այսօր խոսում են այնպես, կարծես՝ անգլիական ծագում ունեն ու նոր-նոր են սկսել յուրացնել հայերենը),
- զանգվածային մշակույթի գերիշխանության հավակնությունը բարձր-մասնագիտացված և ազգային մշակույթների նկատմամբ:

բ) Հայաստանը գլոբալացվող աշխարհում

Խոսելով գլոբալացման տնտեսական առանձնահատկությունների, դրանցում Հայաստանի ունեցած և ունենալիք դերի մասին՝ **Ա. Մարկոսյանը** և **Դ. Հախվերդյանը** նշում են, որ.

1. Գլոբալացումը ոչ միայն շուկաների, այլև արժեքների մրցակցություն է:
 2. Գլոբալացումը նոր բախումների չի հանգեցնում, այլ համարվում է խաղաղության ապահովման միջոց:
 3. Գլոբալ շուկաների մրցակցության մեջ վճռորոշը մարդկային ռեսուրսն է, գիտելիքը և ոչ թե՛ հումքային պաշարները:
 4. Գլոբալ ձեռնարկատիրությունը չի հանգեցնում առանձին երկրների պատասխանատվության նվազեցմանը, այն ամրացնում է կապվածությունը տարածաշրջանների հետ:
- Ըստ հեղինակների՝ գլոբալացման արդյունքում համաշխարհային տնտեսությունում ձևավորվում են տնտեսավարման հինգ մակարդակներ.
- վերազգային ինստիտուտներ,
 - տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներ,
 - ինքնավար տարածքային միավորումներ պետության ներսում,
 - առաջնային տնտեսավարող կառույցներ:
5. Գլոբալացման արդյունքում ամբողջ աշխարհում ստեղծվում են միլիոնավոր աշխատատեղեր, ընդլայնվում է սպառողական ապրանքների տեսականին:
 6. Հարուստ երկրներն ավելի արագ են զարգանում, քան աղքատները, մեծանում է դրանց միջև խզումը: Զարգացած երկրները զարգացողների նկատմամբ վարում են կրկնակի ստանդարտների քաղաքականություն՝ արգելելով ապրանքների և աշխատուժի մուտքն իրենց շուկաներ և չեն վարձատրում այնտեղի աշխատողներին այնպես, ինչպես իրենց երկրներում:
 7. Գլոբալացումը միջազգային ինտեգրման այնպիսի աստիճան է, երբ յուրաքանչյուր երկրի ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականությունը հայտնվում է միջազգային նորմերի ու սկզբունքների աճող ազդեցության տակ:

8. Տնտեսական գլոբալացման հիմնական շարժիչ ուժերն են միջազգային տնտեսական կառույցները, համաշխարհային ֆինանսական կապիտալը և վերազգային ընկերությունները: Տնտեսական գլոբալացման մեջ Հայաստանի տնտեսական անվտանգությունը, ըստ հեղինակների, զարգացման բևեռի ճիշտ ընտրությունն է՝ որպես չափանիշ ունենալով արժեքային ընտրությունը, ինքնության պահպանումը և առաջադիմության հնարավորությունը: 2001 թվականից Հայաստանը ԵԽ-ի լիիրավ անդամ է, 2002 թ. ԵԽ-ին անդամակցության պայմանագիրը վավերացվել է ԵՄ Խորհրդարանական վեհաժողովում և ՀՀ Ազգային ժողովում:

Միջազգային կազմակերպությունների տնտեսական կառույցների հետ Հայաստանի հարաբերությունները դրական են գնահատվում: Միայն Համաշխարհային բանկը Հայաստանում իրականացրել է 70 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ 23 ծրագիր³:

ՀՀ Կառավարությունը 2014 թ. մշակեց հակակոռուպցիայի ռազմավարության ծրագիր, որտեղ որպես գերակա ոլորտներ նշվեցին հանրային առողջապահությունը, կրթությունը, ոստիկանությունն ու պետական եկամուտների հավաքագրումը (ծրագիրը վերանայվեց 2018 թ.): Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի և ԵԽ-ի կողմից՝ Արևելյան գործընկերության երկրների Ծրագրային համագործակցության շրջանակներում: Մշակվեց Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր, որի աշխատանքներն ավարտվեցին 2018 թ. գարնանը:

ՀՀ-ն ընդունել է մահապատժի վերացումը, աղանդներին գրանցման հնարավորություն տալը⁴: 2017 թ. նոյեմբերի 23-ին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև կնքվեց համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, որում ամենայն մանրամասնությամբ, հողվածներով (386 հողված) ներկայացվում են հասարակական

³ Տե՛ս **Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան**, Իրականի և անիրականի միջև, Եր., 2004, էջ 36:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 15-38: Վերջին մի քանի տարիների ընթացքում դիտվում է հակառակ՝ ապագլոբալացման գործընթացը: Գլոբալացման և ապագլոբալացման արդյունավետությունը ապագան ցույց կտա:

կյանքի տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր ոլորտների, պետության և հասարակության փոխհարաբերության, պետության արտաքին և ներքին քաղաքականության բոլոր կողմերը՝ իրենց նրբերանգներով: Ծրագրում առանձնացվում են բաժիններ, որոնք անմիջականորեն վերաբերում են արդիականության գլոբալ հիմնախնդիրների տարբեր կողմերին: Թվարկենք միայն մի քանիսը.

1. Ընդլայնել համագործակցությունը ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում՝ «նպատակ ունենալով ամրապնդելու իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը»:
2. Խթանել միջազգային խաղաղությունը, կայունությունը և անվտանգությունը, հակազդել համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերներին, դրանց հետ կապված սպառնալիքներին:
3. Ամրապնդել համագործակցային ջանքերը զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և մատակարարման համակարգի դեմ պայքարում:
4. Արդյունավետ համագործակցություն ամրապնդել եվրոպական մայրցամաքում խաղաղության, անվտանգության և կայունության հաստատման համար:
5. Համագործակցություն և հետևողականություն ահաբեկչության դեմ մղվող պայքարում:
6. Համագործակցություն շրջակա միջավայրի պահպանության, պաշտպանության, բարելավման, որակի վերականգնման, մարդու առողջության, գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղիներում:
7. Մշակել շրջակա միջավայրին առնչվող ՀՀ ազգային ուսումնականություն:
8. Համագործակցություն մշակույթի ոլորտում, մշակույթների փոխանակում, միջմշակութային երկխոսություն, երկխոսություն մշակութային քաղաքականության շուրջ:
9. Համագործակցություն կրթական միասնական տարածքի, Բոլոնյան համակարգի ամրապնդման ուղղությամբ և այլն:

Հարցեր կրկնության համար

1. *Ի՞նչ է գլոբալացումը:*
2. *Որո՞նք են գլոբալացման հիմնական գործոնները:*
3. *Սահմանել «գլոբալացում» կոչվող երևույթը:*
4. *Առանձնացնել գլոբալացման փուլերը:*
5. *Թվարկել գլոբալացման դրական և բացասական կողմերը:*

ԹԵՄԱ ԵՐՐՈՐԴ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԷԿՈԼՈԳԻԱ) ԵՎ ԳՈՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Բնապահպանական հիմնախնդիրների էությունը և դրսևորման ձևերը

Մարդը բնության մի մասնիկն է (հին հունական պատկերացումներում՝ փոքր տիեզերք՝ մեծ տիեզերքում), կենդանական աշխարհի էվոլյուցիայի (որը տևել է միջինը 22-15 միլիոն տարի) արդյունք, որը բնության հետ ունեցած փոխհարաբերության ընթացքում անցել է երկու փուլ:

Առաջինը հարմարման փուլն է (որը հատուկ է ողջ բուսական և կենդանական աշխարհին), երբ մարդը հարմարվել է բնությանը, իր ֆիզիկական-կենսաբանական գոյության անմիջական միջավայրին, յուրացրել բնության բարիքները՝ առաջնորդվելով փորձի ու սխալի սկզբունքով, ինչն էլ պայմանավորվել է տնտեսավարման քոչվոր ձևով, որն արտահայտվել է վայրից վայր տեղափոխվելու, ձկնորսության, որսորդության, հավաքչության ձևերով: Երկու միլիոն (ըստ վերջին հայտնագործությունների՝ 3 միլիոն) տարի առաջ homo habilis-ը («հմուտ մարդ»), իսկ քիչ ավելի ուշ (1.5 միլիոնից մինչև 200 հազար տարի առաջ) և հիմնավորապես՝ homo erectus-ը («գործիք պատրաստող մարդ») իրենց պատրաստած գործիքներով (որով սկիզբ դրվեց մշակույթին) ավելի դյուրին դարձրին բնության բարիքների յուրացումը:

Նեոլիթյան հեղափոխությամբ (մ.թ.ա. VIII-VI հազարամյակներ) գոյության անապահովությունը մարդուն ստիպեց անցնել տնտեսավարման նստակյաց ձևին, ամուր խրվել հողի մեջ և ստեղծել քաղաքակրթություն: Այս փուլում հիմնական տնտեսական արժեքներ դարձան հողն ու ջուրը, առաջին քաղաքակրթություններն էլ

իրենց բնույթով «գետային» կամ «ջրային» էին: Մինչև նեոլիթյան հեղափոխությունը մարդու ներկայությունը բնության մեջ նկատելի չէր, բնության վրա ունեցած ազդեցությունը՝ աննշան: Մարդը բնությանը հարմարվում էր՝ ոչ թե իր կենսաբանական-ֆիզիոլոգիական կառուցվածքը, կերպը փոխելով, այլ գործիքները կատարելագործելով, որի ընթացքում, շարունակելով մնալ ֆիզիոլոգիական, դառնում էր նաև սոցիալական և մշակութային (մշակութաստեղծ) էակ, ներկայանում որպես կենսաբանականի, սոցիալականի և հոգևոր-բարոյականի (մշակութային) ինքնատիպ եռամիասնություն (եռամիակություն):

Նեոլիթյան հեղափոխությունից հետո մարդ-բնություն փոխհարաբերության մեջ տեղի ունեցավ անցում **երկրորդ**՝ ակտիվ-վերափոխիչ փուլին, որի ընթացքում մարդու ներկայությունը և ազդեցությունը բնության վրա սկզբնապես դարձան **նկատելի**, իսկ աստիճանաբար՝ **ուժգնացող**: Նկատելի փուլը համապատասխանում է ավանդական հասարակությանը (քաղաքակրթությանը՝ IV հազարամյակից մինչև XVII դարը), ուժգնացողը՝ տեխնածին (XVII դարից մինչև մեր օրերը), որը բաժանվում է արդյունաբերական և հետարդյունաբերական ենթափուլերի:

Բնության նպատակաուղղված, գիտակցված ու երբեմն չգիտակցված յուրացումը, բուն նշանակությամբ՝ շահագործումը, ըստ էության, կործանարար ազդեցություն ունեցավ XX դարի կեսերից, երբ Արևմուտքը (մեր օրերում՝ ոչ միայն) մուտք գործեց սպառողական հասարակություն: Ձևավորվեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնց անտեսումը հղի է ամենավտանգավոր և անկանխատեսելի հետևանքներով: Պարզ դարձավ, որ ոչ միայն մարդը բնության, այլև բնությունը մարդու օգնության և պաշտպանության կարիքն ունի:

Մարդ-բնություն փոխհարաբերության ձևերը պայմանավորել են հիմնախնդիրների այն շրջանակը, որը ժամանակակից գրականության մեջ անվանում են «էկոլոգիական»:

«էկոլոգիան» հունական «օյկոս» («ապրելակերպ») և «լոգոս» («գիտություն», «ուսմունք») բառերի կապակցություն է, որը թարգմանվում է «ապրելակերպ», «կացարան», ուստի երբեմն էկոլոգիան սահմանվում է որպես ուսմունք ապրելակերպի մասին: Հաս-

կացությունը շրջանառության մեջ է դրել գերմանացի բնախույզ **Է. Հեկկելը** 1866 թ. հրատարակված «Օրգանիզմների համընդհանուր ձևաբանություն» աշխատության մեջ, որը գրել է **Չ. Դարվինի՝** 1859 թ. հրատարակված «Տեսակների ծագումը» գրքի ազդեցությամբ:

Որպես գիտություն՝ էկոլոգիան անցել է իմաստային փոփոխության երկու փուլ: Սկզբնապես (XIX դարում) այն զուտ կենսաբանական (բնական) գիտություն էր և զբաղվում էր կենդանի օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունների հարցերով: XX դարի 20-ական թվականներից հետո էկոլոգիան դարձավ նաև սոցիալական գիտություն, որովհետև պարզ դարձավ, որ միջավայրի հետ կենդանի օրգանիզմների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը անհնար է, առանց մարդկային գործոնը հաշվի առնելու, որովհետև կենսոլորտում տեղի ունեցող շատ փոփոխություններ մարդկային ազդեցության արդյունք են: Ձևավորվեց սոցիալական էկոլոգիան, որը կարելի է անվանել նաև «մշակութային էկոլոգիա»:

Հաշվի առնելով էկոլոգիայի՝ որպես գիտության ուսումնասիրության օբյեկտի շրջանակների ընդլայնումը, էկոլոգիան, ըստ սահմանման, «... ուսումնասիրում է օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունները, կյանքի վերօրգանիզմային համակարգերի (տեղախումբ, էկոհամակարգ, կենսոլորտ) կառուցվածքն ու գործառույթները, ինչպես նաև բնության և հասարակության դինամիկ հակազդեցությունը պահպանելու հիմնախնդիրները»⁵:

Մինչև բուն վերլուծությանն անցնելը կատարենք մի քանի պարզաբանում:

1. Դասընթացում օգտագործելով «բնապահպանական հիմնախնդիրներ» հասկացությունը՝ նկատի չունենք էկոլոգիայի՝ որպես գիտության խնդիրները, այլ նրանք, որոնք առաջացել են մարդ-բնություն փոխհարաբերության հետևանքով և վերջին 50-80 տարիների ընթացքում դարձել գլոբալ, և որոնք քննության առարկա են ոչ միայն էկոլոգիայի, այլև փիլիսոփայության, մշակութաբանության, բարոյագիտության, հումանիտար ողջ ոլորտի համար:

⁵ **Լ. Մեյրումյան**, էկոլոգիայի հիմունքներ, Եր., 2008, էջ 10:

2. Հենց այդ պատճառով էլ «էկոլոգիական» կամ «բնապահպանական հիմնախնդիրներ» հասկացությունները դիտում ենք որպես հոմանիշներ՝ ի տարբերություն մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների, որոնք բնապահպանությունը համարում են էկոլոգիայի մի բաժին՝ որպես կիրառական էկոլոգիայի բնագավառ⁶:

Մարդ-բնություն փոխհարաբերության առանձնահատկությունները բնութագրելու համար հաճախ օգտագործում են «կենսոլորտ» («բիոսֆերա»), «նոոսֆերա» հասկացությունները:

«Կենսոլորտ» («բիոսֆերա») հասկացությունն առաջին անգամ 1875 թ. օգտագործել է ավստրիացի երկրաբան **Է. Ջյուսը**՝ նկատի ունենալով մարդու գոյության անմիջական բնական միջավայրը:

Կենսոլորտը կենդանի օրգանիզմների (ներառյալ մարդու) ողջ համախմբությունն է՝ իր գոյության պայմաններով՝ ջուր, մթնոլորտի ներքին և երկրի կեղևի վերին շերտեր: Մթնոլորտի ներքին շերտի վրա մարդու ունեցած ազդեցությունը անմիջական հետևանքներ է ունենում վերին շերտի վրա, որն իր հակադարձ ազդեցությունն է ունենում ներքին շերտի, կենդանի օրգանիզմների և մարդու վրա:

«Նոոսֆերա» հասկացությունն առաջին անգամ 1927 թ. շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի փիլիսոփա, մաթեմատիկոս և մարդաբան **Է. Լեռուան** (1870-1954): Գաղափարը հետագայում զարգացրել են կաթոլիկ աստվածաբան **Թ. Շարդենը** (1881-1955) և ռուս գիտնական, բնախույզ և մտածող **Վ. Վերնադսկին** (1863-1945): Որպես հոմանիշներ են դիտվում տեխնոլորտը, մարդոլորտը և սոցիոլորտը: Հասկացությունը հունարեն «բանականություն» և «գունդ» բառերի միավորումն է, որով փորձում են բնություն-հասարակություն փոխհարաբերությունը քննարկել մարդկային բանականության վճռորոշ գործոն դառնալու դիտանկյունից: Ըստ Լեռուայի և Շարդենի՝ նոոսֆերան այն իդեալական, մտածող գաղափարն է, որով պատված է երկրագունդը: Նոոսֆերան երկրի կեղևն է, հասարակությունն՝ իր արդյունաբերությամբ, լեզվով և բանական գործունեության հատկանիշներով: Վերնադսկին նոոսֆերան դիտում է որպես կենսոլորտի (բիոսֆերայի) և հասարակության միասնություն: Մարդկությունը դարձել է հզոր երկրաբանական, հնարավոր է՝ տիեզերական ուժ և ի վիճակի է բնությունը վե-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 14-15:

րափոխել: Մարդն իր գործունեության ոլորտ է ներառել կենսոլորտը, որն աստիճանաբար փոխարինվում է նոոսֆերայի՝ բանականության ոլորտի, որը կենսոլորտի զարգացման առավելագույն աստիճանն է: Նա համոզված էր, որ նոոսֆերան մարդկությանը, ի վերջո, կարող է հասցնել էկոլոգիական հավասարակշռության:

Այժմ անդրադառնանք էկոլոգիական առանձին ոլորտների համառոտ քննարկմանը:

Սկսենք անտառներից: Մինչև նստակյաց կյանքին անցնելը երկիրը պատված էր 6 մլրդ հեկտար անտառով: Այժմ դեռ կանաչ է ցամաքի 40%-ը: Հողերի մշակումը Եվրոպայում լայն թափ ստացավ XVI դարում: Մինչ այդ Ֆրանսիայի տարածքների 80%-ը անտառ էր, 1786 թ. հասավ 14%-ի: 1630 թ. ԱՄՆ-ի տարածքի 385 մլն հեկտարը անտառ էր, 1920 թ. 1/3-ով կրճատվեց:

«Երրորդ աշխարհի» երկրներում յուրաքանչյուր բնակչու 20 հեկտար անտառ է ոչնչացվում: Վերջին տարիներին այդ երկրներում տարեկան անապատացվում է 6-7 մլն հեկտար պտղատու հողատարածք*:

Յուրաքանչյուր տարի խոնավ արևադարձային անտառների մակերեսը կրճատվում է 11-12 մլն հեկտարով: Մնացել է եղածի 1/3 մասը: Լատինական Ամերիկայում վերջին 30 տարում ավելի շատ անտառ է հատվել, քան անցած 400 տարում:

Ըստ մասնագետների՝ այսպես շարունակվելու դեպքում 15-20 տարի հետո անտառը կվերանա: Հայտնի է, որ բույսը թթվածնի միակ աղբյուրն է, տալիս է թթվածին, կլանում թունավոր նյութերը: Մեկ հեկտար կանաչ տարածքը մաքրում է 18 մլն մ³ օդ: Մեկ հեկտար փշատերև անտառը կլանում է 32 տոննա փոշի:

Անտառածածկի ոչնչացումը պայմանավորված է՝

- ազատ տարածքներ ձեռք բերելու, քաղաքներ, գյուղեր, փողոցներ, արտադրական օբյեկտներ կառուցելու, մշակովի հողատարածքներ ստեղծելու պահանջով,

* «Երրորդ աշխարհի» մեջ մտնում են Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Հարավային Ասիայի երկրները, որոնք գտնվում են սոցիալ-տնտեսական զարգացման մոտավորապես նույն աստիճանի (մակարդակի) վրա:

- բարձրորակ շինափայտ ունենալու ձգտմամբ, որով պատրաստվում են շատ անհրաժեշտ իրեր (կահույք, խաղալիք, թուղթ, մատիտ, լուցկի և այլն),
- էժան վառելիք օգտագործելու ցանկությամբ: Որպես հետևանք՝
- մթնոլորտում պակասում է թթվածինը,
- ուժեղանում է ջերմոցային ազդեցությունը,
- փոխվում է եղանակը,
- առաջանում են էկոլոգիական բնույթի հիվանդություններ,
- ձևավորվում է «էկոլոգիական փախստական» կոչվող երևույթը:

Անտառների, բուսականության ոչնչացման հետևանքով ցամաքն անապատացվում է: Յամաքի 40%-ն անապատացվել է, վտանգի մեջ է ևս 30 մլն քմ տարածք՝ ցամաքի 1/5 մասը: Անապատացումը կործանում է քաղաքներ, քաղաքակրթություններ: Այսպես կործանվեցին շումերական քաղաքները, Միջագետքի քաղաքակրթությունները: Սիրիան, որն այժմ ավագի վրա կառուցված երկիր է, ժամանակին Եգիպտոսին անտառանյութ էր մատակարարում: Հաննիբալը փղերը բերում էր Աֆրիկայի այն վայրերից, որոնք այժմ անապատ են: Անապատից բնակչությունը հեռանում է, ձևավորվում է «էկոլոգիական փախստական» կոչվող երևույթը:

Բնակչությունը ճնշվում է տարածքի վրա, որտեղ տնտեսավարել է հազարամյակներ շարունակ. Նեղոսի հարթավայր, Եփրատ և Տիգրիս գետերի միջակայք: Հինդոս, Գանգես, Խուանխե, Յանցզի և այլ գետերի շուրջ ստեղծված քաղաքակրթությունները դրա վկայությունն են: Տևական օգտագործման հետևանքով հողն է հյուծվում, կանաչ հարթավայրային տարածքները անապատի են վերածվում, և, ինչպես նշեցինք, քաղաքակրթություններ են կործանվում:

Վերջին 100 տարիների ընթացքում մարդը բնությունից վերցնում է 100 միավոր նյութ, օգտագործում է 3-4 միավորը, մնացածը արտադրական թափոնների տեսքով վերադարձնում է բնությանը: Զարգացած երկրներում ամեն տարի բնությունից վերցվում է 30 տոննա, որից օգտագործվում է 1-1.5%-ը: Հետևաբար հողը զրկվում է ինքնամաքրման հնարավորությունից, թունավորվում է բնական միջավայրը:

Թերսնման, աղքատության հաղթահարման խնդիրը լուծելու համար նորանոր տարածքներ են յուրացվում: Տևական շահագործումը հողը քայքայում է, դիտվում է անտառածածկի, ջրի պակաս, կլիմայի փոփոխություն: Մինչդեռ, երկրագնդի տարածքի միայն 13%-ն է պիտանի տնտեսական գործունեության համար, յուրաքանչյուր բնակչին բաժին է ընկնում 0.3 հեկտար հողատարածք: Այդ ամենի հետևանքով են մարդիկ հեռանում մշակության համար այլևս ոչ պիտանի հողերից: Զանազան պատճառներով տեղահանվող բնակչությունը հսկայական թիվ է կազմում:

Անցնենք օդին: Այն պահից, երբ հասարակությունը թևակոխեց զարգացման արդյունաբերական փուլ, հազարավոր գործարանների, արդյունաբերական համալիրների՝ օդ նետած թունավոր գազերի, նյութերի միջոցով և այլ ձևերով զարկ տրվեց օդի աղտոտմանը: Ժամանակին ցուցադրվում էին գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր ու տեսանյութեր, որոնցում ներկայացվում էր գործարանների հզոր ծխնելույզներից դուրս եկող, քուլա-քուլա երկինք բարձրացող թունավոր ծուխը, որն, ի դեպ, այդ ժամանակ երկրի զարգացածության նշան էր:

XX դարում գործարաններին ավելացան ավտոմեքենաները՝ օդը թունավորելու իրենց բաժնեմասով: Վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցները մեկ տարում մթնոլորտ են նետում 200 միլիոն տոննա թունավոր գազեր և թափոն, 1,5 մլն միավոր թունաքիմիկատներ: ԱՄՆ-ում 150 մլն ավտոմեքենա, մեկ օրում կատարելով 6 մլրդ կմ վազք, այրում է 800 մլն լիտր բենզին, մթնոլորտ արտանետում 2 մլն տոննա ածխածնի երկօքսիդ: Մեկ ռեակտիվ լայները 8 ժամ թռիչքի ընթացքում ոչնչացնում է 75 տոննա թթվածին, որը վերականգնելու համար անհրաժեշտ է 50 հազար հեկտար անտառ:

Յուրաքանչյուր տարի մթնոլորտ է արտանետվում 200 մլն տոննա ածխածնի օքսիդ (CO), 20 մլրդ տոննա ածխածնի երկօքսիդ (CO₂), 50 մլն տոննա ածխաջրածին, 148 մլն տոննա ծծմբի օքսիդ, 55 մլն տոննա ազոտի օքսիդ, 250-300 մլն տոննա փոշի⁷:

Մեկ թեթև ավտոմեքենան ամեն տարի մթնոլորտից վերցնում է միջինը 4 տոննա թթվածին, արտանետում 800 կգ այրված ջրա-

ծին, 40 կգ այրված ազոտ և շուրջ 200 կգ տարբեր ածխաթթուներ: Դրան ավելացնենք ատոմակայանների և այլ բազմապիսի արտադրական վթարները:

Յուրաքանչյուր տարի միլիոնի հասնող բնակչություն ունեցող քաղաքի շրջակայքում կուտակվում է 3-5 միլիոն տոննա թափոն (հետաքրքիր է, որ 2017 թ. մայիսի 27-ի համաքաղաքային շաբաթօրյակին Երևան քաղաքում հավաքվել և տեղափոխվել է 412 տոննա աղբ), 350 միլիոն տոննա կեղտաջուր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե լուրջ միջոցառումներ չձեռնարկվեն, ապա 2100 թ. մթնոլորտի միջին ջերմաստիճանը կբարձրանա 5,1 C°-ով, օվկիանոսի մակարդակը կբարձրանա 2 և ավելի մետրով: Էկոլոգիական փախստականների թիվը 2050 թ., ըստ կանխատեսումների, կհասնի 1 միլիարդի:

Ջերմոցային էֆեկտի հետևանքով եղանակը տաքանում է, բարձրանում է ջրի մակարդակը: Այս երևույթը բացահայտել է անգլիացի **Ջ. Տարմանը**: Իմաստը հետևյալն է. օզոնը (O₃) մթնոլորտում նման է ջերմոցային ապակու, բաց է թողնում արեգակի էներգիան, բայց կլանում է կյանքի համար վտանգավոր արեգակի կարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթները և դրանով իսկ ստեղծում «ջերմոցային էֆեկտ» կոչվող երևույթը:

Արտադրական թափոնների և թունավոր գազերի արտանետման հետևանքով մթնոլորտում աճում է ածխածնի դիօքսիդի բաղադրությունը, որն ազդում է օզոնային շերտի վրա:

Օզոնի հիմնական զանգվածը գտնվում է 10-50 կմ բարձրության վրա, առավելագույն խտությունը դիտվում է 16-26 կմ բարձրությունում: Մթնոլորտի օզոնը կլանում է ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Ըստ մասնագետների՝ օզոնի քայքայման գործում ակտիվ դեր են կատարում ազոտական թթուները, ծանր մետաղները, ֆտորը, քլորը, բրոմը: Քլորի յուրաքանչյուր ատոմ կարող է ոչնչացնել օզոնի 100 հազար մոլեկուլ: Իսկ ֆերոնները (քլոր, ֆտոր, ածխածին), երկրից բարձրանալով երկինք, կարող են ապրել 100 տարի:

Օդի թունավորման պատճառով օզոնային շերտի էկրանը 50%-ով մեծացել է, որի հետևանքով 10 անգամ մեծացել է երկիր հասնող ուլտրամանուշակագույն ճառագայթների ռադիոակտիվությունը:

⁷ Տե՛ս **Լ.Մելքումյան**, Էկոլոգիայի հիմունքներ, էջ 4:

Ուլտրամանուշակագույն ճառագայթները հասնում են երկիր, ակտիվանում, որի հետ են կապվում ուռուցքային, աչքի հիվանդությունները, գենային փոփոխությունները, որովհետև այդ ճառագայթները քայքայում են ԴՆԹ-ի մոլեկուլները (որն արդեն գենետիկական փոփոխություն է), բացասական ազդեցություն ունենում տարատեսակ բույսերի աճի պայմանների վրա, պակասեցնում ծովերում, ջրերում ապրող օրգանիզմների սննդի արդյունավետությունը: Առաջանում են հիվանդություններ, որոնք անվանում են «էկոլոգիական»:

Այստեղից էլ պետությունների պայքարը օզոնային շերտի պահպանման, ավելի ապահով ու առողջ երկիր ունենալու համար:

1997 թ. Կիոտոյի արձանագրությամբ որոշվեց մասնակից երկրների համար քվոտա սահմանել ջերմոցային գազերի արտանետման վրա: 2016 թ. Գերմանիան առաջարկեց արգելել բենզինով կամ դիզելային վառելիքով աշխատող շարժիչների արտադրությունը:

2015 թ. Փարիզում 195 պետությունների կողմից ստորագրվեց կլիմայի կայունացման ծրագիր: ԱՄՆ ներկայիս նախագահ Դ. Թրամփը 2017 թ. հրաժարվեց այդ ստորագրության վավերացումից՝ հիմնավորելով, որ այն խոչընդոտում է ԱՄՆ տնտեսական զարգացումը:

2016 թ. Բրյուսելում հավաքվեցին շուրջ 170 երկրների ղեկավարներ, որոնք պետք է միասնական քաղաքականություն մշակեին ջերմոցային էֆեկտի դեմ պայքարի հարցում: Պետությունների համառ ջանքերով ջերմոցային էֆեկտի ազդեցությունը կարծես նվազել է, և, ըստ որոշ մասնագետների, այս երևույթն արդեն անցած (հաղթահարված) փուլ է, որի հետ սակայն դժվար է համաձայնել:

- Շարունակական աշխատանքի միջոցով անհարժեշտ է.
- կատարելագործել տեխնիկական միջոցները, որոնք պիտի նվազագույնի հասցնեն թունավոր գազերի արտանետումը,
 - բարձրացնել տեխսպասարկման մակարդակը,
 - կիրառել էներգիայի այլընտրանքային աղբյուրներ (արևային, քամու),
 - ստեղծել էկոլոգիապես մաքուր տրանսպորտ:

Հաջորդ կենսական ոլորտը ջուրն է: Ջրի 96%-ը բաժին է հասնում համաշխարհային օվկիանոսին, ընդերքի ջրերին՝ 2%-ը, սառցաջրերին՝ 2%-ը, և միայն 0.02%-ը՝ մակերեսին՝ գետերին, լճերին, ճահիճներին:

Երկրի տարածքի 71%-ն օվկիանոսն է: Մթնոլորտի թթվածնի կեսը տալիս է օվկիանոսը: Հիդրոոլորտի 95% ծավալը ծովային ջրերինն է, որն էլ կազմում է «եղանակ» կոչվածը:

Օվկիանոսի (ծովերի) ռեսուրսներ են ծուկը, հանքահումքը, էներգետիկ հնարավորությունները, տրանսպորտային նշանակությունը, արտադրական թափոնների պահեստարան լինելը: Օվկիանոսի հիմնական ռեսուրսների պահպանումը մարդկային գլոբալ հիմնախնդիրներից է, որովհետև համաշխարհային օվկիանոսն է կենսոլորտի դեմքը բնորոշում: Ժամանակին, այսօր էլ քաղաքակրթությունների զգալի մասը ջրային են: Մասնագետների հաշվարկով՝ օվկիանոսի ռեսուրսները կարող են կերակրել 30 մլրդ մարդու:

Բայց, ինչպես կյանքն է ցույց տալիս, այդ պաշարների հետ նույնպես խնայողաբար չենք վարվում՝ զանազան թափոնների, թունավոր ավելցուկների պահեստարան դարձնելով, զանազան վթարների, նավաբեկությունների հետևանքով ծովերի, օվկիանոսների ջրերին հազարավոր տոննաներով, բարելներով նավթամթերք խառնելով, որով թունավորվում ու կյանքից զրկվում են ջրերում ապրող բազաբնույթ բուսական և կենդանական տեսակներ:

Ջրի ընդհանուր ծավալի միայն 0.6%-ն է բաժին հասնում խմելու ջրին: Յուրաքանչյուր տարի սպառվում է 3500 կմ³ ջուր: Մարդու մեկ օրվա ֆիզիոլոգիական պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է ընդամենը 2.5 լիտր ջուր, բայց դա էլ բոլոր երկրներն ու ժողովուրդները չունեն:

Երկրի տարածքի 60%-ն այն գոտիներն են, որոնցում բավարար քանակությամբ խմելու ջուր չկա: 500 մլն մարդ տառապում է խմելու որակյալ ջրի պակասից: Շատ երկրներ հարևան երկրներից խմելու ջուր են բերում նույնիսկ ինքնաթիռներով, ինչպես օրինակ՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Հոնկոնգը, Սինգապուրը, Ալժիրը: «Երրորդ աշխարհի» համար կարևորագույն հիմնախնդիրը խմելու

մաքուր ջուրն է, որովհետև ոչ մաքուր ջուրը հիվանդությունների 80%-ի առաջացման պատճառն է:

Տարեցտարի խմելու ջրի պակասն ավելի է զգացվում, որը պայմանավորված է՝

- բնակչության արագ աճով,
- արդյունաբերության մեջ օգտագործմամբ,
- աղտոտմամբ,
- ջրի ինքնամաքման սարքերի պակասով:

Ջրի վիճակը բարելավելու համար մեկ տարում պահանջվում է 30 մլրդ դոլարի ներդրում: Պետք է խնայողության կառուցակարգ ներդնել ամբողջ աշխարհում: Այսինքն.

- հաշվի առնել շրջապատող միջավայրի ցանկացած ազդեցության հետևանքները և կատարել շտկումներ,
- մշակել և ներկայացնել ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ,
- բուժել բնությանը հասցված վերքերը:

Միաժամանակ անհրաժեշտ է՝

- ներդնել բնապահպանական դաստիարակություն, բնության նկատմամբ խնայողական վերաբերմունք (այդ մասին մանրամասն՝ վերջին բաժնում),
- բնապահպանական ստուգումներ և լայն տեղեկատվության ապահովում,
- ռացիոնալ բնօգտագործում,
- զինաթափում և ազատված միջոցների ուղղում բնապահպանական խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ է նաև՝

- ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման քաղաքականություն պետական մակարդակով,
- խնայողություն անհատական մակարդակով,
- մաքրող սարքերի տեղադրում,
- ջրի կրկնական օգտագործում (հիշում են տարիներ առաջ լաճս դասախոսություններից մեկը, որում ասվում էր, թե ԱՄՆ-ի քաղաքացիները խմում են առնվազն մեկ անգամ օգտագործված ջուր, որն այնքան էլ հաճելի տպավորություն չթողեց),

- խորքային ջրերի օգտագործում գիտականորեն հիմնավորված սկզբունքներով,

- օվկիանոսային ջրերի օգտագործում:

1948 թ. ձևավորված Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը 1963 թվականից հրապարակում է «Կարմիր գիրքը», որում գրանցվում են անհետացած կամ անհետացման եզրին հայտնված բուսական և կենդանական տեսակներ: Ժամանակակից հաշվարկներով՝ այժմ առկա է մոտ 1.5-2 մլն կենդանի և 500 հազար բույս: Արդեն ոչնչացել է կենդանական աշխարհի 106, թռչունների 139 տեսակ, ոչնչացման եզրին են 305 տեսակի կաթնասուն, 195 տեսակի ձկներ, 400 տեսակի թռչուններ, բուսական աշխարհի 205 հազար տեսակ: Ստեղծվել է Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ, որի նպատակն է համակարգել բնապահպանությունը: 1971 թ. ստեղծվել է միջազգային ոչ կառավարական կազմակերպություն «Գրինփիս» անվամբ, որի խնդիրը շրջակա միջավայրի պահպանությունն է:

Բնապահպանական որոտին վերաբերող միջազգային պայմանագրերից ՀՀ-ն վավերացրել է «Օզոնային շերտի պահպանման մասին», «Կլիմայի փոփոխության մասին», «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի մասին» կոնվենցիաները:

բ) Գոյապահպանությունը և տնտեսական քաղաքականությունը որպես բնապահպանական հիմնախնդիրների առաջացման պատճառներ

Բնապահպանական խնդիրների առաջացման պատճառներն ունեն գոյապահպանական բնույթ՝ պարենային հիմնախնդրի լուծում, սովի, աղքատության հաղթահարում, իսկ հաղթահարած երկրներում՝ սպառման տեմպերի զսպում:

Երկիր մոլորակը մարդկության ճնշմանը ենթարկվում է երկու ուղղությամբ.

1. հարուստ երկրներում բնության բարիքների շոայլ ծախսման ձևով,
2. զարգացող կամ չզարգացած երկրներում պայքարելով կենսամակարդակի նվազագույնի պահպանման, հնարավորության պարագայում՝ բարձրացման համար: Թեև երկու դեպքում էլ հետևանքը նույնն է. բնության հյուծում կամ շահագործում:

Սովը միշտ ուղեկցել է մարդկությանը: Երբեմն սովից ավելի շատ մարդ է մահացել, քան պատերազմներից ու սոցիալական ցնցումներից: Աշխարհում սոված է մնում գրեթե 1,2 մլրդ մարդ: Սովը ոչ միայն առաջընթացի արգելք է, այլև սոցիալական, քաղաքական անկայունության պատճառ: Գոյապահպանությունը գլոբալ է նաև այն իմաստով, որ խնդիր է բոլոր պետությունների համար: Երկրների մի մասում սով և աղքատություն է, մյուսում՝ առատություն և շվայտություն:

Եթե արդյունաբերական զարգացած երկրներում բնապահպանական խնդիրներն ունեն տեխնածին բնույթ, ապա զարգացող և չզարգացած երկրներում մարդածին են:

Եթե զարգացած երկրներում բնությանը հասցված վնասը գալիս է հարստությունից, ապա մյուսներում՝ աղքատությունից:

Եթե առաջինում պայքարում են հանուն բնապահպանական խնդիրների լուծման, ապա մյուսներում համարում են, որ դրա ժամանակը դեռ չի եկել, այդ խնդիրներով զբաղվելը զարգացած երկրների գործն է:

Պարենային ծրագրի լուծումը կապված է սննդի ապրանքների ավելացման, պաշարների ռացիոնալ օգտագործման, սննդում մարդուն անհրաժեշտ պահանջումների քանակական ու որակական ցուցանիշների բարելավման հետ: Օրգանիզմի համար անհրաժեշտ ապրանքների 6 խումբ է առանձնացվում՝ ջուր, սպիտակուց, ճարպ, ածխաջուր, վիտամիններ և հանքային նյութեր, որոնք գնահատվում են կալորիականությամբ: Կալորիականության պակասը ուղեկցվում է ֆիզիկական և մտավոր թերաճով, օրգանիզմի դիմադրողականության անկմամբ, մահացության տոկոսի աճով, հատկապես՝ երեխաների շրջանում:

Ամեն տարի 60 մլն տոննա տարատեսակ ռեսուրսներ են արտադրվում, 50%-ով ավելի, քան 30 տարի առաջ: Վերջին տասնամյակներում կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ միջին վիճակագրական եվրոպացին ամեն օր օգտագործում է 43 կգ տարատեսակ ռեսուրս (սնունդ), իսկ ամերիկացին՝ 88 կգ: 2006 թ. բարձր եկամուտ ունեցող 65 երկրներին (սպառողականությունը ամենաբարձր մակարդակի վրա է, և կազմում են աշխարհի բնակչության 16%-ը) բաժին էր ընկնում սպառման ծավալի 76%-ը:

Միայն ԱՄՆ-ում սպառողական ծավալի վրա ամեն տարի 9.7 մլրդ դոլար է ծախսվում, ինչը մեկ շնչի հաշվով կազմում է 32.400 դոլար, այսինքն՝ համաշխարհային բոլոր ծավալների 32%-ը բաժին է հասնում բնակչության 5%-ին:

ԱՄՆ-ի բնակչությունը սպառում է համաշխարհային պաշարների 40%-ը և տալիս երկրի աղտոտվածության 50%-ը:

Թվարկված երկրներում սննդամթերքը սպառվում կամ օգտագործվում է ոչ ռացիոնալ ձևով, ինչի հետևանքով գալիք սերունդների համար էկոհամակարգի կայունությունը դրվում է հարցականի տակ:

Այստեղից էլ՝

- մշակովի տարածքների ընդլայնումը,
- մշակվող հողերի արդյունավետության բարձրացման ձգտումը,
- բարեփոխումների անհրաժեշտության գիտակցումը,
- գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական նվաճումների ներդրման քաղաքականությունը:

Գյուղատնտեսության մեջ աճի տեմպերն ապահովելու նախկին մեթոդներն այլևս արդյունք չեն տալիս: Ուստի բնության հոգսը թեթևացնելու համար մարդը լաբորատորիայում արտադրում է սննդամթերք, որի հավաքական անվանումը «տեխնոզանգված» է (բնության արտադրածը՝ կենսազանգված):

Մասնագետների կարծիքով՝ մեկ տարվա ընթացքում արտադրվում է 10^{23} տեխնոզանգված, մինչդեռ, կենսազանգվածը (բնության արտադրածը) 10^{13} - 10^{14} է:

Մարդու արտադրած արհեստական առարկաները 10 անգամ ավելի են, քան բնության արտադրածը: Այդ արտադրությունը կարող է որոշ չափով թեթևացնել բնության հոգսը, բայց լուծել չի կարող, որովհետև **անաջին՝** մարդու արտադրածի մնացորդներն էլ որպես թափոն թունավորում են բնությունը և **երկրորդ՝** դեռևս հարց է, թե այդ տեխնոլոգիաների սննդի հատվածը որքանով է անվտանգ մարդու առողջության, նրա գենետիկական կոդի անփոփոխ պահպանման համար: Ավելացնելով տեխնոլոգիաների արտադրությունը՝ միաժամանակ, կարծում եմ, առաջ ենք բերում թանկարժեք, ծախսատար ռիսկեր: Եվ վերջապես, մեծ է տագնապը, որ սննդի հիմնական տեսակները և միջոցները լաբորատորիաներում արտադրելով, կանտեսենք գյուղատնտեսությունը, որը ցանկացած երկրի արդյունաբերական ապահովման աղբյուրն է:

Նշվածն էլ բավարար է համոզվելու համար, որ բնապահպանությունը սերտորեն կապված է գոյապահպանության հետ, իսկ վերջինս՝ իրականացվող տնտեսական քաղաքականության:

Ակնհայտ է դառնում, որ պետք է միջոցառումների այլ համալիր իրագործվի՝ պայմանավորված ոչ այնքան էկոլոգիայով, որքան աշխարհայացքով, գաղափարախոսությամբ, տնտեսավարման եղանակով, մշակույթով:

Հետազոտողները նշում են, որ ներկայիս հասարակությունը իր բնույթով սպառողական է, որի կարգախոսն է՝ «ինչքան շատ սպառենք (օգտագործենք), այնքան ավելի լավ՝ տնտեսության համար», որովհետև սպառումը ծնում է պահանջարկ, ինչն էլ խթանում է տնտեսության զարգացումը, որը հնարավոր է իրականացնել՝ ավելի շատ ռեսուրսներ օգտագործելով: Բայց տնտեսական այս քաղաքականությունը տանում է շրջակա միջավայրի աղտոտմանը, ի վերջո՝ բնապահպանական աղետի:

Սպառումը դարձել է նաև հոգեբանություն, որն անվանում են «սպառողականություն» («կոնսյումերիզմ»): Սպառողականությունը հոգեբանություն է, աշխարհայացք, գաղափարախոսություն, որը բարեկեցության դրսևորման ձևը համարում է սպառումը: Սպառողական հասարակությունում մարդու արժեքը գնահատվում է նրա վճարունակության և գնողունակության չափով: Այսինքն, մարդու արժեքն այնքան է, որքան կարողանում է գնել կամ սպառել:

Մարդ-աշխարհի փոխհարաբերությունը փոխարինվում է «գնորդ-ապրանք» կամ «ապրանք-սպառող» փոխհարաբերությամբ: Կոնսյումերիզմը դառնում է նաև մշակույթի նորմ, որի համաձայն՝ մարդիկ իրենց կյանքի իմաստը տեսնում են բավարարվածության և կայացածության, ապրանքների և ծառայությունների սպառման մեջ: Սպառման բարձր մակարդակը համարվում է հաջողության ցուցիչ:

Այդ երևույթները խթանող գործոններից են նաև գովազդը և շուկայավարությունը (մարքեթինգ): 2008 թ. գովազդի վրա արվող ծախսերը հասել են 643 միլիարդի: Բացահայտից բացի, գոյություն ունի նաև գաղտնի գովազդ: Օրինակ, ֆիլմերում երեխաները ծխում են, խմում ալկոհոլային խմիչք, գնում հատուկ նշանակության ապրանքներ: Շրջանառվում է նաև բերնեբերան փոխանցվող գովազդը, երբ ապրանքատեսակը գովում են ընկերոջը, բարեկամին, հարևանին, կողքին կանգնածին: Շուկայավարության այդ ձևի վրա 2008 թ. ԱՄՆ-ում ծախսվել է 1.5 մլրդ դոլար:

Գոյություն ունեն նաև գովազդի անբարեխիղճ՝ մոլորեցնող ձևեր, երբ գրվում, ռադիոյով, հեռուստատեսությամբ հայտարարվում է մի բան, բայց իրականացվում է բոլորովին այլ բան: Այս ամենը դիտվում է նաև ՀՀ-ում:

Ամփոփելով բաժինը՝ նշենք հետևյալը. յուրաքանչյուր սերունդ, հասարակություն պետք է լուրջ ուշադրություն դարձնի երկու գործոնի վրա.

1. Բավարարի սեփական պահանջմունքները՝ իրականացնելով ռեսուրսների արտադրություն և վերարտադրություն:
2. Դա իրականացնի այն չափով, որչափով կասկածի տակ չի դրվի ապագա սերունդների բարեկեցության իրավունքը:

Մեր հանրապետության աղքատ լինելն այնքան էլ չի խոչընդոտում սպառողական հոգեբանության ձևավորմանը: Հարսանիքը, Նոր տարին, սգո և բոլոր այլ նշանակալից արարողությունները ճոխ են ու ծախսատար, ցուցադրական, նույնիսկ՝ մրցակցային:

XX դարի 70-90-ական թթ. Հայաստանը հզոր արդյունաբերությամբ հագեցած երկիր էր: Օդի, շրջակա միջավայրի աղտոտման բնագավառում առաջատար էին Երևանի «Նաիրիտ»-ը, «Պոլիվինիլացետատ»-ը, Կիրովականի քիմիական, Ալավերդու և Զանգե-

զուրի լեռնամետալուրգիական կոմբինատները, բենզինով աշխատող տրանսպորտը և այլն: Աղտոտվածության պատճառով Երևան քաղաքի օդն իր թափանցիկությունը կորցրել էր, իսկ օդի բաղադրության մեջ ավելացել էին քիմիական տարրերը, քաղաքի մի մասի օդի բաղադրությունը տարբերվում էր մյուսից, որը զգացվում էր անգամ շնչելիս: Խորհրդային Միության փլուզումից հետո քիմիական հսկաները չէին գործում, որոշ ժամանակով դադարեցվեց Մեծամորի ատոմակայանի աշխատանքը, տրանսպորտի մեծ մասը բենզինից անցավ գազի օգտագործմանը: Հանրապետության օդային ավազանը մի փոքր շունչ քաշեց, օդի բաղադրությունը փոխվեց, բայց արդեն էկոլոգիական բնույթի բազմաթիվ ավերածություններ էին կատարվել և շարունակում են կատարվել:

Հայաստանում գոյություն ունի 22 պոչամբար, որոնց վիճակը մտահոգող է:

Մեր երկրի ընդհանուր տարածքի միայն 11%-ն է անտառածածկ, բնակչությանը մեկ շնչի հաշվով բաժին է հասնում 0,12 հա վարելահող, հողային տարածքի շուրջ 81,5%-ը ենթակա է անապատացման: Հայկական բնաշխարհի աղտոտվածության, մարդկային գործոնի ազդեցության հետևանքով իշխան ձուկը հայտնվել է «Կարմիր գրքում», էականորեն կրճատվել են սիգ ձկան պաշարները: «Կարմիր գրքում» գրանցված է 387 բուսատեսակ, որից 35 տեսակն անհետացել է կամ գտնվում է անմատչելի վայրերում: Կաթնասունների 18 տեսակ է գրանցված «Կարմիր գրքում», թռչունների 57 տեսակ, սողունների 11 տեսակ և այդպես շարունակ⁸: ՀՀ ձևավորման առաջին տարիներին հսկայական քանակությամբ ծառատեսակներ կտրատվեցին, անտառահատումներ կատարվեցին: 2017 թ. ամռանը օրեր շարունակ այրվում էին Խոսրովի արգելոցը, Բյուրականի անտառածածկ տարածքը: Բնապահպանները և հասարակական կազմակերպությունները ահազանգում են Դեբեդ գետի հինգերորդ աստիճանի աղտոտվածության մասին: Վաղուց են հայտնի Սևանի առափնյա տարածքի աղբանոց դառնալը, ջրի աղտոտումը: Թեղուտի և Ամուլսարի շահագործմամբ տարածքներ են աղտոտվում և թունավորվում: Հեռուստատեսությամբ անընդհատ ահազանգում են անօրինական անտառահատումների, պետությա-

⁸ Տե՛ս **L.Մելքումյան**, Էկոլոգիայի հիմունքներ, էջ 266-268:

նը հասցված վնասների մասին, առանց հիշատակելու բնությանը հասցվածը: Օրերս (02.03.2018 թ.) հեռուստատեսությամբ, ի տես բոլորի, ցուցադրվեց և նշվեց Տավուշի մարզում «Կարմիր գրքում» գրանցված եղնիկների որսի մասին: Բացահայտվել են բեզդարյան այծերի ապօրինի որսի դեպքեր: Անտառահատումների, որսագողության, բնության աղտոտման, մեր անմիջական բնական միջավայրին հասցված վնասները ամենուր են և ամեն օր: Այդ ամենը նաև բնության նկատմամբ հայ մարդու անտարբեր, անխնա, ագրեսիվ վերաբերմունքի դրսևորում է, ինչը նշանակում է, որ մենք այնքան էլ չենք սիրում մեր երկիրը:

Պետք է զարկ տալ չափավորությանը, հայացքն ուղղել մեր ազգային մշակույթին, որտեղ երբեք չեն գովազդվել շռայլությունը, վատնողականությունը, ագրեսիվությանը բնության նկատմամբ: Պետք է խոսքի հայրենասիրությունից տեղափոխվել իրական հայրենասիրության դաշտ, որի դրսևորման ձևերից է սերը սեփական բնաշխարհի, հոգատար վերաբերմունքը նրա նկատմամբ (այդ մասին ավելի մանրամասն՝ վերջին գլխում)⁹:

⁹ Հարկ չեմ համարում թվարկել օրենսդրական այն ակտերն ու կառավարության որոշումները, որոնք վերաբերում են բնապահպանության տարբեր կողմերին: Դրանք, ցավոք, կանխարգելիչ դեր չեն կատարում, որի վկայությունն է մեր բնապահպանության ոչ այնքան մխիթարական վիճակը: Օրինակ, ամեն տարի որոշակի ժամանակահատվածում արգելվում է որսն ընդհանրապես և ձկան որսը Սևանա լճում, բայց Երևան քաղաքի փողոցներում հենց այդ օրերին ոստիկանների աչքի առջև (գուցե նրանց հսկողությամբ) սիգ ձկան ազատ առևտուր է կատարվում: Շատ թռչնատեսակների որս մեզանում արգելված է օրենքով, բայց որսը շարունակվում է, մասնակից են դառնում նաև հոգևորականները, իսկ հեռուստախցիկի առջև նստած եկեղեցականը փորձում է արդարացնել՝ ասելով, որ Քրիստոսը կենդանիների սպանությունը չի արգելել:

Հարցեր կրկնության համար

1. Վեր հանել «Էկոլոգիա», «Բիոսֆերա», «Նոոսֆերա» հասկացությունների իմաստները և դրանց կապը բնություն-հասարակություն փոխհարաբերության մեջ:
2. Ո՞րն է «ջերմոցային էֆեկտ» կոչվող երևույթի էությունը, և որո՞նք են առաջացման պատճառները:
3. Թվարկել բնության վրա ազդեցության ծները:
4. Ի՞նչ կապ գոյություն ունի բնապահպանության և գոյապահպանության միջև: Ո՞ր դեպքում է բնապահպանությունը փոխարկվում գոյապահպանության և հակառակը:
5. Ի՞նչ է կոնսյումերիզմը:
6. Ինչպիսի՞ն է բնապահպանական ընդհանուր իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ա) Ժողովրդագրական իրավիճակի ընդհանուր բնութագիրը

XIX դարի վերջում և հատկապես XX դարում երկրի բնակչությունն աճի այնպիսի տեմպեր ընդունեց, որ սարսափեցրեց ժողովրդագրությամբ զբաղվող շատ մասնագետներին: Նրանց կարծիքով՝ եթե ժողովրդագրական խնդիրները չլուծվեն, ապա այլևս ոչ մի խնդիր չի լուծվի: Աշխարհի բնակչության աճի շարժընթացը պատկերացնելու համար էքսկուրս կատարենք հազարամյակների միջով:

16 հազար տարի առաջ մարդկության թիվը 3 միլիոն էր, 100 քառակուսի կիլոմետրի վրա ապրում էր 8-10 մարդ:

5-4 հազար տարի առաջ երկրագնդի բնակչությունը 25 մլն էր, 3 հազար տարի առաջ՝ 50 մլն¹⁰: Մեր թվարկության 19 դարերի ընթացքում երկրագնդի բնակչությունն աճել է 9,6 անգամ, առաջին 15 դարերի ընթացքում՝ 2.5, իսկ հետագա 4 դարերի ընթացքում՝ 3.8 անգամ: Եղել են ժամանակաշրջաններ, երբ բնակչությունն ընդհանրապես չի աճել, օրինակ՝ 200-400 թթ. (բնակչության քանակը մնացել է 190 մլն), 1200-1300 թթ. (360 մլն), 1600-1650 (545 միլիոն): Աշխարհի բնակչությունը 1 միլիարդի հասավ 1820 թ., 2 միլիարդի՝ 1927 թ., 3 միլիարդի՝ 1959 թ., 4-ի՝ 1974 թ., 5-ի՝ 1987 թ., 2016 թ. երկրագնդի բնակչությունը հասավ 7.4 միլիարդի: Գնալով բնակչության աճի տեմպերն արագանում են, 13 տարին մեկ աշխարհի բնակչության թիվը 1 միլիարդով աճում է:

Մինչև XX դարի սկիզբը բնակչության աճի շարժընթացը հետևյալն է՝

¹⁰ Նույն ժամանակաշրջանին վերաբերող թվական այլ տվյալներ են ներկայացնում Վ. Սիտարովը և Վ. Պուստովյոտովը: Տե՛ս *Ситаров В. А., Пуствовайтос В. В., Социальная экология, М., 2000, էջ 41:*

մ.թ. I դարի սկիզբ	170 մլն
1000 թ.	265 մլն
1500 թ.	425 մլն
1600 թ.	545 մլն
1700 թ.	610 մլն
1750 թ.	720 մլն
1800 թ.	905 մլն
1850 թ.	1200 մլն
1900 թ.	1630 մլն

Երկրագնդի վրա բնակչությունը հավասարապես չէ բաշխված: Յամաքի 7%-ում կենտրոնացած է բնակչության 70%-ը, 4/5 մասն ապրում է հարթավայրերում և ոչ բարձր բարձրավանդակներում, ծովի մակերևույթից մոտ 500 մետր բարձրության վրա՝ 27.8% տարածքում:

Շատ են նաև 1000 մետր բարձրության վրա ապրողները, իսկ ավելի բարձր վայրերում տեխնիկան չի աշխատում, կամ ծովից հեռու է: Ծովեզերքի հողը ավելի հարմար է գյուղատնտեսական աշխատանքների համար: Անհավասարաչափ է բաշխված նաև բնակչության խտությունը: Ամենախիտ բնակեցված աշխարհամասը Եվրոպան է, Եվրոպայում՝ Նիդեռլանդները՝ 352 մարդ 1 կմ²-ի վրա (Բելգիայում՝ 323, Մեծ Բրիտանիայում՝ 228):

Նման խտություն դիտվում է նաև Ասիայում, բայց գյուղական միջավայրում: Գյուղացիական բնակչության խտությունն այստեղ 2.5 անգամ ավելի է, քան Եվրոպայում: Ասիայում է կենտրոնացած երկրագնդի գյուղական բնակչության 71%-ը: Բնակչության ամենամեծ խտությունն ունի Բանգլադեշը՝ 657 մարդ 1 կմ²-ի վրա, Ճապոնիան՝ 321, Լիբանանը՝ 253, Շրի Լանկան՝ 235, Հնդկաստանը՝ 218, մինչդեռ, Մոնղոլիան՝ 1.2, Սաուդյան Արաբիան և Օմանը՝ 5 մարդ:

Աստիճանաբար փոխվում է քաղաքային և գյուղական բնակչության շարժընթացը: Քաղաքային բնակչության խտությունը աճում է, գյուղականինը՝ նվազում, բացառությամբ մի քանի երկրների, որոնց թվում են Հնդկաստանը, Բանգլադեշը:

XX դարի սկզբին քաղաքներում ապրում էր բնակչության 10%-ը, 1940 թ.՝ 25%-ը, 1950 թ.՝ 29%-ը, 1983 թ.՝ 40.5%-ը: Ասիական տարածքի քաղաքային բնակչության բաժինն աճել է մոտավորապես

0.4%-ով: 1950-1983 թթ. քաղաքային բնակչությունն աճել է 2.6 անգամ՝ 730 միլիոնից հասնելով 1895 միլիոնի, նույն ժամանակահատվածում գյուղական բնակչությունը 797-ից աճել է 2749 միլիոնի: Որոշ վայրերում նույնիսկ նվազել է: Վերջին 30 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի քաղաքաբնակ է դառնում 50 միլիոն մարդ, իսկ գյուղաբնակների թիվը կազմում է 25 միլիոն:

Բնակչության աճի մեծ բաժինը հասնում է զարգացող և չզարգացած երկրներին: 1950-ական թթ. այդ երկրներն ապահովել են բնակչության աճի 78.8%, 1960 թ.՝ 83.8%, 1970 թ.՝ 87.8%, 1980 թ.՝ 91.8%:

1985 թ. Եվրոպայի և Աֆրիկայի բնակչության ընդհանուր թիվը յուրաքանչյուրում 480 միլիոն էր: Ըստ կանխատեսումների՝ 2025 թ. Աֆրիկայում կապրի 1.5 մլրդ մարդ, մինչդեռ Եվրոպայում՝ 512 մլն: Այստեղից էլ կարևորագույն հարցերից մեկը՝ ինչպե՞ս է զարգացման ցածր մակարդակ ունեցող երկիրը լուծել բնակչության արագ աճի խնդիրը: Ժամանակին այդ հարցի պատասխանը տվել է Թ. Մալթուսը՝ սով, գոյության կոիվ, սոցիալական բախումներ, պատերազմներ, հիվանդություններ, որոնք նվազեցնում են բնակչության քանակը¹¹:

Եվրոպական երկրներում (Ավստրիա, Բելգիա, Շվեդիա, Դանիա) դիտվում է բնակչության բացարձակ նվազում: Այս երկրներում բնակչության աճը պայմանավորված է հիմնականում ներգաղթյալներով: Արևմուտքում ծնելիության տոկոսն ամենացածրն է, այն ցածր է նաև Ռուսաստանում: Անհավասարաչափ ծնելիության պատճառով Արևմուտքը ծերանում է, Արևելքը՝ գերհագեցնում: Ասիայում ժողովրդագրական պայթյուն է: Մինչև XIX դարի 30-ական թթ. Արևմուտքն ավելի արագ է աճել, հետո վիճակը փոխվել է: Չզարգացած երկրներում, չնայած կյանքի վատ պայմաններին, բնակչությունը շարունակում է աճել, որը պայմանավորված է մի շարք գործոններով:

1. Տնտեսական՝ գյուղատնտեսությունը հենված է ձեռքի աշխատանքի վրա, ուստի աշխատող ձեռքի կարիք է զգացվում:

¹¹ Ժամանակակից ժողովրդագրական իրավիճակի մասին տե՛ս նաև *Шинковский М. Ю.*, Глобальные проблемы современности. Владивосток, 2005, էջ 25-55:

2. Համաճարակների և հիվանդությունների հետևանքով մահացության տոկոսը մեծ է: Մտայնություն կա, որ շատ երեխաներ ունենալու դեպքում փրկվողներ էլ կլինեն, ծերության օրերին խնամող կունենան:
3. Ավանդույթը և հարգալից վերաբերմունքը բազմանդամ ընտանիքների նկատմամբ:
4. Ընտանիքի պլանավորման պետական քաղաքականության բացակայությունը կամ թույլ ազդեցությունը:
5. Հասարակական աշխատանքից, կարիերայից կնոջ դուրս մնալը:
6. Բազմամայրության երևույթը¹²:

Այսօր աշխարհում ընտանեկան քաղաքականության երկու իրարամերժ տեսակետ գոյություն ունի.

1. Երկրի գերբնակեցումը կարող է հանգեցնել ռեսուրսների պակասի և գլոբալ բնապահպանական աղետի: Ուստի, պետք է հսկողություն իրականացնել ծնելիության վրա:
2. Ծնելիությունը բնական երևույթ է, որի վրա հսկողություն իրականացնել չի կարելի:

Զարգացած երկրներում պատկերն այլ է: Այստեղ ուշ են ամուսնանում, կանայք ներգրավված են հասարակական աշխատանքում, սոցիալապես ակտիվ են, երեխաներով ավելի շատ են զբաղվում, գնալով նվազում է մանկական մահացությունը, բուժսպասարկումը համեմատաբար բարձր մակարդակի վրա է, դրան ավելացնենք ֆեմինիզմի երևույթը և այլն:

Այստեղից էլ զարգացման ցածր մակարդակում գտնվող կամ զարգացող երկրներից բնակչության արտագաղթը զարգացած երկրներ, հիմնականում՝ Արևմտյան Եվրոպա:

2015 թ. աշխարհում տեղահանվել է 65,3 մլն մարդ (ՄԱԿ-ի տվյալներ):

2016 թ. մի քանի ամիսների ընթացքում 200 հազար փախստական զանազան ճանապարհներով ներգաղթեց Եվրոպա: Արևելքի ներխուժումն Արևմուտք, ժողովրդագրական մեծ տեղաշարժերը բազմաթիվ հիմնախնդիրներ են առաջացնում հենց Արևմուտքի

¹² Որոշ երկրներում տնտեսության շատ թույլ զարգացածության պատճառով ընտանիքում եղբայրները ամուսնանում են մեկ կնոջ հետ:

համար: Ներգաղթյալները չեն հարմարվում եվրոպական արժեքներին, շարունակում են հավատարիմ մնալ իրենց ավանդույթներին, կենցաղին, դառնում են ներծին (էնդոգեն) հասարակություն՝ իրենց վարքուբարքով: Ընթացս աճում են հասարակական լարվածությունը, հանցագործությունների քանակը, ահաբեկչությունը (2016-2017 թթ.՝ Փարիզում, Բրյուսելում, Սանկտ Պետերբուրգում, Բեռլինում, Բարսելոնում և այլուր):

Փոխվում է Եվրոպայի մարդաբանական տիպը, ժողովրդագրական իրավիճակը, դավանանքը: Ներկայացնենք որոշ փաստեր, որոնցում ժողովրդագրական բնույթի հետաքրքիր տվյալներ են:

Բնակչությունը ըստ երկրների (2009 թ. տվյալներ)

1.	Չինաստան	1.345.8
2.	Հնդկաստան	1.198.0
3.	ԱՄՆ	314.7
4.	Ինդոնեզիա	230.0
5.	Բրազիլիա	193.7
6.	Պակիստան	180.8
7.	Բանգլադեշ	162.2
8.	Նիգերիա	154.7
9.	Ռուսաստան	140.9
10.	Ճապոնիա	127.2

Բնակչության ամենաարագ աճ ունեցող երկրները 2005-2010 թթ. (միջին տարեկան աճը %-ով)

1.	Կատար	15.24
2.	Արաբական Միացյալ Էմիրություններ	12.26
3.	Բահրեյն	11.09
4.	Լիբերիա	4.54
5.	Քուվեյթ	3.79
6.	Նիգերիա	3.54
7.	Սինգապուր	3.52
8.	Ուգանդա	3.24
9.	Էրիթրեա	3.16
10.	Մալի	3.08

**Բնակչության ամենանվազ աճ ունեցող երկրները
(միջին տարեկան աճը %-ով)**

1.	Մոլդովա	1.6
2.	Բուլղարիա	0.64
3.	Ուկրաինա	0.64
4.	Վրաստան	0.7
5.	Լիտվա	0.55
6.	Բելառուս	0.47
7.	Լատվիա	0.47
8.	Ռումինիա	0.26
9.	Հունգարիա	0.21
10.	Խորվաթիա	0.18
11.	Պուերտո Ռիկո	0.18
12.	Ռուսաստան	0.12
24.	Հայաստան	0.17

**Ծնելիության պաշտոնական գործակիցը 1000 մարդու
հաշվարկով, 2005–2010 թթ. համար**

առավելագույնը

1.	Նիգերիա	49.5
2.	Մալի	47.6
3.	Ուգանդա	46.3
4.	Չադ	45.9
5.	Աֆղանստան	45.1
6.	Կոնգո	44.9
7.	Ջամբիա	44.5
8.	Սոմալի	44.2
9.	Մալայզիա	44.0
10.	Բուրկինա Ֆասո	43.9
11.	Անգոլա	43.5

նվազագույնը

1.	Հոնդուրաս	8.2
2.	Գերմանիա	8.4
3.	Ճապոնիա	8.6
4.	Բոսնիա – Հերցեգովինա	8.9
5.	Սինգապուր	9.0
6.	Նորմանդական կղզիներ	9.3
7.	Մալթա	9.3
8.	Իտալիա	9.4

**Բնակչության խտությունը 2010 թ. տվյալներով
(1 կմ²-ի վրա ապրողների քանակը)**

առավելագույնը

1.	Սինգապուր	7447.2
2.	Հոնկոնգ	6417.8
3.	Բահրեյն	1818.2
4.	Մալթա	1318.1
5.	Մադիվներ	1060.0
6.	Բանգլադեշ	1032.6
7.	Նորմանդական կղզիներ	786.4

նվազագույնը

1.	Գրենլանդիա	0.0
2.	Մոնղոլիա	1.8
3.	Գվինեա	2.6
4.	Նամիբիա	2.8
5.	Ավստրալիա	2.9
6.	Իսպանիա	3.1
7.	Սուրինամ	3.2
8.	Մավրիտանիա	3.4
9.	Կանադա	3.4
10.	Բոտսվանա	3.5

**Ամենամեծ քանակությամբ ներգաղթյալներ ընդունող
երկրները (միլիոն մարդ, 2010 թ.)**

1.	ԱՄՆ	42.8
2.	Ռուսաստան	12.3
3.	Գերմանիա	10.8
4.	Նիդեռլանդներ	7.3
5.	Կանադա	7.2
6.	Միացյալ Թագավորություն	7.0
7.	Իսպանիա	6.9
8.	Ֆրանսիա	6.7
9.	Ավստրալիա	5.5
10.	Հնդկաստան	5.4

**Ամենաշատ փախստականներ տրված երկրները
(1000 բնակչի հաշվով, 2005 թ.)**

1.	Պակիստան	1740.7
2.	Իրան	1070.5
3.	Սիրիա	1054.5

**Մանկական մահացությունը 1000 նորածնի
համեմատությամբ (2010-2015 թթ.)**

1.	Աֆղանստան	149.9
2.	Անգոլա	105.3
3.	Գվինեա	104.5
4.	Նիգերիա	103.2
5.	Սոմալի	101.2
6.	Մալի	99.6
7.	Սիերա Լեոնե	99.0
8.	Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն	97.0
9.	Ռուանդա	92.4
10.	Բուրունդի	91.0 ¹³

**բ) Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի
Հանրապետությունում**

Ինչպիսի՞ն է ժողովրդագրական իրավիճակը ՀՀ-ում:

Խորհրդային Միության տարիներին (1921-1991) մեր հանրապետության բնակչության թիվն աճեց 5 անգամ, այդ թվում՝ քաղաքային բնակչությունը՝ 14.1 անգամ, գյուղականը՝ 1.5: 1992 թ. տվյալներով Հայաստանի մշտական բնակչության թիվը 3 մլն 633.3 հազար մարդ էր, 2016 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ 2 մլն 998.8 հազար (նվազել է 17.5 %-ով): Ըստ վերլուծաբանների՝ 1992 թվականից սկսած՝ Հայաստանը լքել է 1 մլն 250 հազար մարդ, յուրա-

քանցյուր տարի՝ 30 հազար: Արտագաղթի նման տեմպերը պահպանելու դեպքում 90 տարի հետո Հայաստանում հայ չի մնա: 2001-2011 թթ. մարդահամարների միջև ընկած տասնամյակում Շիրակի և Լոռու մարզերում բնակչության թիվը պակասել է 50.8 հազար մարդով: Քաղաքային բնակչության ծնելիությունը վերջին 25 տարիներին նվազել է 2.5, իսկ ամուսնությունների քանակը՝ 3 անգամ: 1000 մարդու հաշվարկով մահացածների թիվը 1987 թ. 5.3 մարդ էր, 2014 թ.՝ 9.2: Տարեցտարի պակասում է տղամարդկանց քանակը, որը հետևանք է նաև հղիության արհեստական ընդհատումների (սեռով պայմանավորված): Այդ երևույթը տարածված է հատկապես Շիրակի և Գեղարքունիքի մարզերում, որոնցում սեռային տարբերությունները հսկայական են, և տարիներ անց ժողովրդական բնույթի լուրջ խնդիրներ են առաջացնելու: Բնակչության թվի նվազման շուրջ կեսը բաժին է ընկնում ակտիվ վերարտադրության տարիքային խմբին, որի պատճառը արտաքին միգրացիան է: Առաջիկա 5-10 տարիների ընթացքում Հայաստանից կարող է արտագաղթել 300-400 հազար մարդ:

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի տվյալներով՝ 2013 թ. մայիսի 15-25-ն ընկած ժամանակահատվածում Երևանում 1000 հարցվածի 46%-ը նշել է, որ ցանկանում է հեռանալ Հայաստանից: Հեռանալու մտադրության մասին հայտնել է տղամարդկանց 50%-ը, 18-29 տարեկան երիտասարդների 52%-ը: Արտագաղթի դրդապատճառների մեջ առանձնացվել են.

- ա) աշխատանք չկա՝ 31%,
- բ) հեռանկար չկա՝ 29.6%,
- գ) արդարություն չկա՝ 19.3%,
- դ) ապրուստ չկա՝ 17.2%:

Փաստորեն, հարցվածների 48.9%-ի՝ երկրից հեռանալու պատճառը սոցիալ-տնտեսական չէ, այլ հեռանկարի և արդարության բացակայությունը: Իսկ մի՞թե ողբերգություն չէ, որ մարդն արդարություն ու հեռանկար է որոնում հայրենիքից դուրս: Չավեշտն այն է, որ հարցվածների 82.3%-ը իրեն համարում է հայրենասեր, 69.8%-ը՝ երջանիկ: Կարևոր գործոն է նաև ազգային գաղափարի առկայությունը կամ բացակայությունը (Հանուն ինչի՞ մնան, հա-

¹³ Աղյուսակները տե՛ս Мир в цифрах. Карманный справочник. М., 2012: Մինչ այս և հետայսու ներկայացված թվական և վիճակագրական տվյալները վերցված են տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից հրատարակված ուսումնասիրություններից և կարող են այսօրվա ստույգ պատկերը չներկայացնել, ուստի դրանք պետք է ընդունել որպես կողմնորոշիչ տվյալներ:

նուն հայրենիքի՝ այո՛, հանուն բնակավայրի՝ ո՛չ: Դիտվում է իդեալների, արժեքների, գաղափարախոսության պակաս):

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հաշվարկներով՝ 2025-2030 թթ. Հայաստանում կարող է լինել ընդամենը 1.5-2 միլիոն բնակչություն: Հեռացողների տարիքը տատանվում է 18-55-ի միջակայքում, որը երկիրը զարգացնող հիմնական զանգվածն է: Մնացել են հոգատարության կարիք ունեցողները՝ 550.000 թոշակառու, 600.000 տնային տնտեսուհի, 450.000 անչափահաս, որոնցով երկիր չէս զարգացնի: Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ ծնելիությունը երկու անգամ նվազել է, մահացությունը՝ աճել, ժողովուրդը՝ ծերացել¹⁴:

Ամենավերջին տվյալներով՝ թեև արտագաղթողների թվաքանակը 2017 թ. (37 հազար), 2016 թ. համեմատությամբ (55 հազար), մի փոքր նվազել է, այնուամենայնիվ, խնդիրը շարունակում է մնալ չլուծված և հրատապ: Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2017 թ. Հայաստանում գրանցվել է 37 699 ծնունդ, որը 2893-ով պակաս է 2016 թ. ցուցանիշից: Այսօրվա արտագաղթը բազմաթիվ գծերով տարբերվում է մինչև խորհրդային կարգերի հաստատումը դիտված գաղթականությունից և խորհրդային շրջանի «խոպանչիությունից»: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը հայրենիքից հեռացել են օտարի լծից ազատվելու համար, հեռացել են նախարարական տները, մտավորականները և ունևոր խավը: Բնակչության բացարձակ մեծամասնությունն ապրել է հայրենիքում: Պատկերը փոխվել է Եղեռնից հետո: Խորհրդային իշխանության օրոք արտագաղթ, ըստ էության, չկար, հեռանալու ձգտումը տարածված էր հայրենադարձների և այլախոհների շրջանում և նկատելի դարձավ միայն այդ իշխանության վերջին տարիներին: Բուն ԽՍՀՄ-ի ներսում դիտվող երևույթը «խոպանչիությունն» էր, երբ տղամարդիկ գնում էին ժամանակավորապես (գարնանը գնում էին, աշնանը՝ վերադառնում)՝ գումար վաստակելու և կենսական խնդիրներ լուծելու համար (բնակարան կառուցել, ամուսնանալ, առանձին ընտանիք ստեղծել) և այլն: Նրանց նկատմամբ առանձնապես լուրջ վերաբերմունք էլ չկար, որի արտահայտությունը «խոպանչի» անվա-

¹⁴ Տե՛ս // Հայկական ժամանակ, 2013 թ., հուլիսի 4, էջ 4:

նումն էր: Այժմ ձևավորվել է «խոպանչիության» անբարոյական ձևը, երբ կինն է մեկնում արտագնա աշխատանքի և նույնիսկ՝ Թուրքիա: Բացի դրանից, եթե նախկինում, ինչպես նշվեց, տղամարդը արտագնա աշխատանքի էր մեկնում գումար աշխատելու և կենսական հարց լուծելու համար, ապա վերջին 20-25 տարիների ընթացքում հեռանում են ընտանիքներով՝ այլևս չվերադառնալու մտադրությամբ:

Ներկայիս արտագաղթը զանգվածային փախուստ է մեր ստեղծած հայրենիքից, մեր իշխանություններից, հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտից, անօրինականությունից, սոցիալական թշվառ վիճակից*։ Սա բողոքի սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական ձև է, բայց անընդունելի, որովհետև դրանով խնդիրը չենք լուծում, փոխարենը՝ եթե դեմը չառնվի, ինչպես վերևում նշեցինք, կործանելու ենք երկիրը, ինչը սրբապղծություն է հայրենիքի ու հայրենի հողն իրենց արյամբ շահախաճ մարդկանց հիշատակի նկատմամբ:

Այս արտագաղթը կենսական հանգամանքներին չդիմադրելու կամ դիմադրելու ցանկության պակասի հետևանք է, և ոչ մի ժողովուրդ այս ճանապարհով ուժեղ պետություն և ապահով հայրենիք չի ստեղծել:

Շատ հետազոտողներ պնդում են, որ այս երևույթի անվանումը «արտագաղթ» չէ, այլ «փախուստ»: Նույնիսկ մշակվում է «փախուստի» փիլիսոփայություն¹⁵: Թեև ընթացքում արդեն նշվեցին արտագաղթի պատճառները, այնուամենայնիվ, փորձենք առանձնացնել հիմնականները.

1. Սոցիալ-տնտեսական: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը ծաղկուն և հզոր արդյունաբերական երկիր էր, որից հետո արդյունաբերությունը դադարեց գործելուց, զանգվածային դարձավ գործազրկությունը, հանրությունը հայտնվեց խորագույն սոցիալական-տնտեսական ճգնաժամի մեջ, համատարած դարձան սոցիալական թշվառությունը, սովը, մութն ու ցուրտը, որոնք արտագաղթը սնող ամենահիմնական գործոններն էին:

* Խոսքը մինչև 2018 թ. ապրիլ-մայիսի իրադարձությունների մասին է:

¹⁵ Տե՛ս **L. Ամալեկյան**, Արտագաղթ, թե՛ փախուստ // Հայկական ժամանակ, 2013, օգոստոսի 10:

2. Օտարումը իշխանության և ժողովրդի միջև, արդարության պակասը: Հանրապետության ստեղծման առաջին տարիներին տնտեսական փլուզմանը զուգընթաց ընթանում էր ծանրագույն պատերազմը, Արցախի ազատագրումը, Հայաստանի Հանրապետության անկախացումը, որոնք գաղափարական կապերով միավորեցին ժողովրդին. ողջ ազգը միասնական էր՝ երկիրը պաշտպանելու, առկա դժվարությունները հաղթահարելու գործում: Բայց պատերազմի ավարտից հետո իշխանության եկան մարդիկ, ովքեր իրենց կայացածությունը փորձեցին ցուցադրել՝ իշխանական ուժը ժողովրդի վրա կիրառելով: Իշխանության և ժողովրդի միջև անջրպետ առաջացավ: Հանրապետությունում ծաղկեցին կաշառակերությունն ու կոռուպցիան, առաջացավ օտարում ժողովրդի և իշխանության միջև: Այդ ընթացքում էլ ձևավորվեց հայրենի օլիգարխների դասը: Մի քանի ընտանիքների ձեռքին կուտակվեց հանրապետության հարստության մոտ 70%-ը: Ամբողջությամբ ձևախեղվեց արդարադատության համակարգը:

3. Պատերազմական իրավիճակի առկայությունը: Թեև Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքվել է զինադադար, բայց փաստացի պատերազմը շարունակվում է, սահմանում զոհվում են հայ զինվորները: 2016 թ. ապրիլին տեղի ունեցավ քառօրյա պատերազմ, որում 100-ի հասնող զոհեր ունեցանք: Ծնողներն իրենց զավակների կյանքն ապահովելու համար նրանց տեղափոխում են արտերկիր: Ահա և արտագաղթը սնող հաջորդ դրդապատճառը:

4. Արժեքային-աշխարհայացքային, հոգևոր-բարոյական: Կործանվեցին նախկին արժեքները, նորերը դժվարությամբ են ձևավորվում, իսկ ձևավորվածների զգալի մասը հակարժեք է: Իշխանությունների ոչ այնքան գիտակցված քաղաքականության հետևանքով հայրենիքի գաղափարը փոխարինվեց բնակավայրի գաղափարով: Այնուհետև խաբեությունը, կեղծիքը, կաշառքը՝ ընտրությունից ընտրություն և բազմաթիվ այլ բացասական երևույթներ բարոյալքեցին ժողովրդին, ինչն էլ զարկ տվեց արտագաղթին: Մարդիկ սկսեցին հայրենիքը սիրել հեռվից: Հանրապետության նախկին նախագահը պետական քաղաքականության գերակա նպատակ համարեց մինչև 2040 թ. Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը 4 միլիոնի հասցնելը: **Ս. Մուրադյանի**

վերլուծություններից պարզ է դառնում, որ «կարճաժամկետ և միջնաժամկետ (մինչև 10 տարի) հեռանկարում Հայաստանում ժողովրդագրական վիճակի էական բարելավման միակ արդյունավետ քաղաքականությունը ներգաղթի կազմակերպումն ու իրականացումն է»¹⁶:

Պարզ է նաև հետևյալը. որպեսզի արտագաղթը դադարեցվի, իսկ հեռացածները ցանկանան վերադառնալ հայրենիք, հսկայածավալ բարեփոխումներ են անհրաժեշտ տնտեսական, սոցիալական, հոգևոր-բարոյական ոլորտներում, արդարադատության համակարգում, որպեսզի մարդն աշխատելու և արժանապատիվ ապրելու հնարավորություն, ապագայի նկատմամբ վստահություն ունենա, իրեն պաշտպանված զգա, հաղթահարվեն կոռուպցիան, ամենաթողությունը, ապահովվի օրենքի առջև բոլորի հավասարությունը և բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց արդյունքում **երկիրը կդառնա երկիր:**

Վերջում հավելենք՝ լավ է, որ դեռ աշխարհում մոտ 10 մլն հայ կա, բայց վատ է, որ ապրում են Հայաստանից դուրս, և նրանց մեծ մասի օգտակար գործողության գործակիցը հայրենիքի համար զրո է: Հայության ապագան Հայաստանն է, իսկ Հայաստանի ապագան հայրենիքում ապրող հայությունն է:

Հարցեր կրկնության համար

1. Ինչպիսի՞ն է բնակչության վերարտադրության շարժընթացը Եվրոպայում:
2. Որո՞նք են ժողովրդագրական պայթյունի պատճառները «երրորդ աշխարհի» երկրներում:
3. Ինչպիսի՞ միգրացիոն միտումներ են դիտվում ՀՀ-ում:
4. Որո՞նք են արտագաղթի պատճառները ՀՀ-ում:
5. Ձեր կարծիքով՝ ի՞նչ քաղաքականություն պետք է իրականացվի՝ արտագաղթը դադարեցնելու և հեռացածներին երկիր վերադարձնելու համար:

¹⁶ **Ս. Մուրադյան**, Հայաստանում 2017-2020 թթ. ծնունդների թվաքանակի կանխատեսում // 20-րդ դար, 2017, թիվ 5, էջ 9:

ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈՒԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ա) Մշակույթի և քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում

Լատինական ծագում ունեցող «cultura» բառը ժամանակակից և ինքնուրույն իմաստով օգտագործվում է միայն Նոր ժամանակի փիլիսոփայության մեջ, ըստ որի՝ **մշակույթն** այն ամենն է, ինչն ստեղծում է մարդն իր հասարակական գործունեության ընթացքում: Մշակույթը դառնում է լուսավորական գաղափարախոսության և փիլիսոփայության ամենակենտրոնական հասկացություններից մեկը և պայմանավորում լուսավորական իդեալների իրագործումը*:

Սկզբնապես ձևավորվում է մշակույթի արժեքաբանական ըմբռնումը, ըստ որի՝ մշակույթ է համարվում այն դրականն ու արժեքավորը, որ ստեղծել է մարդն իր ողջ գործունեության ընթացքում: Մշակույթով է բնորոշվում մարդու հոգևոր էությունը, բարոյական նկարագիրը, կատարելագործվելու ձգտումը: Մշակութային խնդիրների լուծումը կապվում է լուսավորության, գիտության, բանականության, դաստիարակության հետ:

Այնուհետև ձևավորվում է մշակույթի ավելի լայն՝ մարդաբանական ըմբռնումը, ըստ որի՝ մշակույթ է այն ամենը, ինչ ստեղծում է մարդը, այն, ինչը բնության մեջ գոյություն չունի, բնական տրվածություն չէ:

* Մշակույթի տեսության խնդիրների մանրամասն վերլուծությունը տե՛ս Ա. Մարգարյան, Մշակույթի տեսություն, Եր., 2003, նույն հեղինակի՝ Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016, էջ 468-472:

XX դարում մշակույթի ըմբռնումների (սահմանումների) քանակն արտահայտվում է քառանիշ թվով, մշակույթը դառնում է բազմ-իմաստ և բազմագործառնական հասկացություն: Թվարկենք այդ ըմբռնումներից առավել տարածվածները (դրանց ավելացնենք արդեն նշված արժեքաբանական և մարդաբանական ըմբռնումները).

1. Գործունեական-տեխնոլոգիական, որում մշակույթը ներկայացվում է որպես մարդու գործունեության որոշակի եղանակ, տեխնոլոգիա: Այս ըմբռնման հեղինակը է. Մարգարյանն է: Բոլոր մարդիկ էլ սնվում են, բայց թե ինչ, ինչպես և երբ, որոշվում է մշակութային համակարգով: Թեև մարդու վարքագիծը կենսաբանական, ֆիզիոլոգիական բնույթ ունի, բայց կառավարվում է մշակույթի այն համակարգով, որում ծնվել է:

2. Մշակույթը մարդկային կենսագործունեության վերկենսաբանական ծրագրի բարդ կազմավորումների համակարգ է: Այդ ծրագրի բովանդակությունն են կազմում բազմաբնույթ գիտելիքները, նորմերը, հմտությունները, իդեալները, գործունեության նմուշները, հավատալիքները և այլն: Իրենց համախմբության և պատմական զարգացման մեջ դրանք ձևավորում են կուտակվող և մշտապես զարգացող սոցիալական փորձը: Այս ամենը զանազան նշանային համակարգերի միջոցով արձանագրվում և փոխանցվում է մշակույթ (է. Մարգարյան, Վ. Սյրյուպին):

3. Նորմատիվ-կարգավորիչ, վարքագծային, որով մշակույթը դիտվում է որպես սոցիալական նորմերի, կանոնների, օրենքների, սովորույթների, ավանդույթների համախմբություն, որը կազմակերպում և կարգավորում է մարդկանց կյանքն ու վարքագիծը:

4. Մշակույթն այն ամենն է, ինչը գոյություն ունի մարդու ազատության շնորհիվ և դառնում է ազատության առարկայական, մարմնավորումը: Ազատությունը մշակութային է միայն այն դեպքում, երբ ստանում է գոյության առարկայական-ակնառու ձև: Մշակույթ գոյություն ունի միայն իրեն ազատ գիտակցող մարդու համար, իսկ մշակույթը դառնում է այդ ազատության արտացոլումը առարկաների և իրերի մեջ: Մյուսներն ապրում են մշակույթի մեջ, բայց այն ընկալում են որպես իրենցից դուրս գոյություն ունեցող իրողություն (Վ. Մեծուն):

5. Մշակույթը էթնիկական, կրոնական և սոցիալական խմբերի կողմից ընդունված և սերնդեսերունդ փոխանցվող համոզմունքների, ավանդույթների, սովորույթների, սոցիալական նորմերի, արժեքների և հարաբերությունների ամբողջությունն է:

6. Մշակույթը գործունեության տարբեր ոլորտներում մարդու ստեղծագործական ներուժի իրացման եղանակն է, մարմնավորումը որոշակի խորհրդանիշների, արժեքների, ինստիտուտների, ավանդույթների, սովորույթների միջոցով, որոնցով մարդն ու հասարակությունը տարբերվում են կենդանական աշխարհից:

Այժմ՝ մշակույթ կազմող բաղադրատարրերի մասին:

Որպեսզի մարդու գործունեության արդյունքը դառնա մշակույթ, անհրաժեշտ է, որ՝

ա) Այն ստեղծվի մարդու կողմից: Մարդու ստեղծած առարկաները կոչվում են «արտեֆակտեր» (artefactus, arte-«արհեստական», factus-«ստեղծված»): Մշակույթի աշխարհն արտեֆակտերի աշխարհն է, որը, հանդես գալով որպես երկրորդ բնություն, լցնում է մարդու և արտաքին բնության միջև եղած տարածությունը: Մշակույթի առարկան բնության տրվածությունը չէ, այլ մարդու ստեղծածը կամ բնական նյութի վերամշակումը:

բ) Մարդու կողմից ստեղծված արտեֆակտը պետք է իմաստ ունենա ոչ միայն ստեղծողի, այլև մյուսների համար: Արտեֆակտերն իմաստ են ձեռք բերում միայն մարդկային հարաբերությունների, մշակույթի աշխարհում:

գ) Մշակութային առարկան պետք է բավարարի որոշակի պահանջմունք և դրվի որոշակի ձևի մեջ: Մարդկային ձևն այն է, ինչը տարբերում է մշակութային առարկան բնականից: Մարդու ստեղծած առարկաների մեջ են մարմնավորվում ստեղծողի ջանքերը, փորձը, գիտելիքը, հասարակության զարգացման մակարդակը:

դ) Մարդու ստեղծած և որոշակի ձևի մեջ դրած առարկան պետք է դառնա նշանի և նշանակության միասնություն: Նշանն այն առարկան է, որը հանդես է գալիս որպես մյուս առարկաների մասին տեղեկության կրող և օգտագործվում է տեղեկություններ ձեռք բերելու, պահելու, մշակելու և փոխանցելու համար: Մշակույթը՝ որպես նշանների աշխարհ, հանդես է գալիս նյութականի և

հոգևորի միասնությամբ, ընդ որում՝ նշանը նյութական է, նշանակությունը, իմաստը՝ հոգևոր:

ե) Պետք է տեղեկատվական հոսք իրականանա մշակույթի օբյեկտից սուբյեկտ: Կենդանական աշխարհում տեղեկությունը փոխանցվում է ժառանգաբար՝ գենետիկորեն: Մշակույթն առաջանում է այն ժամանակ, երբ ձևավորվում է բնության մեջ գոյություն չունեցող սոցիալական տեղեկատվությունը:

Ասվածն ի մի բերելով՝ կատարենք որոշ հիմնարար դրույթների ամրագրում.

1. Մշակույթը մարդու էութենական բնութագիրն է, այսինքն՝ միայն մարդն է ստեղծում մշակույթ:
2. Ստեղծելով մշակույթ՝ մարդը ստեղծվում է մշակույթի կողմից: Մշակույթը մարդաստեղծ հատկություն ունի, ուստի ճիշտ չէ մարդ որոնել մշակույթից դուրս:
3. Վերափոխվելով մշակույթի կողմից՝ մարդը ստեղծում է արհեստական առարկաների աշխարհ, որի բաղադրիչներն են արժեքները, գաղափարները, խորհրդանիշները, արտեֆակտերը, որոնք միջնորդ են դառնում մարդու և բնության միջև, կենդանական աշխարհում միջնորդ գոյություն չունի:
4. Մշակույթը կենսաբանորեն չի ժառանգվում, այլ ձեռք է բերվում կրթության ու դաստիարակության միջոցով և դառնում մարդկայինի չափը մարդու մեջ:

Յուրաքանչյուր հասարակական (հասարակության մեջ ապրող) մարդու մեջ դրված է երկու ծրագիր՝ կենսաբանական, որը փոխանցվում է գենետիկորեն՝ ժառանգաբար և սոցիալ-մշակութային, որի գոյության ձևը սոցիալական տեղեկատվությունն է, որը մարդկանց գործունեության ընթացքում ձևավորված և կուտակված սոցիալական փորձն է. այն դաստիարակության, գիտելիքների և ավանդույթների յուրացման միջոցով փոխանցվում է սերնդից սերունդ: Հանդես գալով որպես մարդկային գործունեության վերկենսաբանական համակարգ, մարմնավորվելով սոցիալական ծրագրերի, նորմերի և արժեքային կողմնորոշիչների մեջ՝ մշակույթը հասարակական կյանքում կատարում է այն դերը, ինչ ժառանգական տեղեկատվությունը՝ առանձին մարդկանց կյանքում:

Ցանկացած ժամանակաշրջանի մշակույթի կառուցվածքում կարելի է առանձնացնել երեք շերտ.

1. Անցյալից փոխանցված մշակութային շերտ, որը ավանդույթների, սովորույթների, բարքերի, հավատալիքների միջոցով ազդում է մարդկանց վրա և միջմարդկային հարաբերություններում կատարում կարգավորիչ դեր: Այդ շերտն է անցյալը կապում ներկայի հետ, ներկա սերնդին դարձնում նախորդների ստեղծած սոցիալական փորձի ժառանգորդը, յուրացնողը, կրողը և կիրառողը. իրականանում է մշակութային ժառանգորդման օրինաչափությունը:

2. Վարքագծի, գործունեության, հաղորդակցման շերտը բնութագրում է տվյալ հասարակությունը՝ իր առկա կեցության մեջ: Մարդկանց հասարակական և մշակութային հարաբերությունների արդյունքում ձևավորվում է որոշակի սոցիալ-մշակութային սարդոստայն, որի մեջ հայտնվում է մարդը, որի ազատության աստիճանը երբեմն արտահայտվում է նրանով, թե որքան է թույլ այդ սարդոստայնը:

3. Այս շերտը կապող օղակի դեր է կատարում ներկա և ապագա սերունդների կամ հասարակությունների միջև, որը հասցեագրված է ապագային: Այն ստեղծվում է մտավորականության միջոցով, նրանում գործում է նորարարության օրինաչափությունը, որն իրականացվում է բացասման դիալեկտիկական սկզբունքի միջոցով:

Յուրաքանչյուր հանրային ընդհանրական, իշխող մշակույթի ներսում գործում են ենթամշակույթներ (սուբկուլտուրաներ), որոնք ընդհանուր մշակույթի մասնակի դեպքեր են, ունեն ընդգրկման սահմանափակ բնույթ, որոշ դեպքերում ընդդիմության մեջ են գտնվում իշխող մշակույթի նկատմամբ: Իշխող մշակույթի մեջ են մտնում էլիտար (ֆրանսերեն elite-«ընտրյալ») և զանգվածային ենթամշակույթները: Էլիտար (վերնախավային, ընտրախավային, բարձրաշխարհիկ) մշակույթը կողմնորոշված է մարդկանց որոշակի խմբերի, որոնք առավել օժտվածներն են, ունեն մասնագիտական կրթություն, տվյալ հասարակության, ազգի ինտելեկտուալ սերունդն են: Էլիտար մշակույթը նաև բարձր մշակույթն է, որի բնութագրիչներն են պրոֆեսիոնալիզմը, ուղղվածությունը մասնագիտացված լսարանին: Էլիտար մշակույթը նաև պրոֆեսիոնալ մշա-

կույթն է, որը համապատասխան կրթություն, մասնագիտացում է պահանջում: Այն պատրաստված լսարանի համար է: Այդ մշակույթի մեջ են մտնում դասական արվեստը, գիտությունը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը և այլն:

Չանգվածային մշակույթը սոցիալական մեծ խմբերի մշակույթն է, որին բնորոշ է հոգևոր պահանջմունքների միջինացված, իսկ երբեմն՝ ավելի ցածր մակարդակ, որը ներառում է լայն զանգվածներ ընդգրկող թատերական արարողություններ, ծեսեր, հաղորդակցության զանգվածային միջոցներ (հեռուստատեսություն, կինո, ռադիո, մամուլ, մեծ լսարանների, համալիրների օգտագործում): Այդ մշակույթի օբյեկտը ոչ թե անհատն է, այլ զանգվածը, իսկ նպատակը զանգվածին տվյալ պահին հաճույք պատճառելն է, ուրախացնելը: Պրոֆեսիոնալ առումով ունի գեղագիտական արժեքների ոչ բարձր, երբեմն ցածր մակարդակ, հեշտ ընկալելի է, հասկանալու համար հատուկ ջանքեր չի պահանջում: Նման մշակույթը ձևավորում է զանգվածային աշխարհայացք, անքննադատ վերաբերմունք աշխարհի նկատմամբ:

Չանգվածային մշակույթը պետք է նույնացնել ժողովրդականի և ազգագրականի հետ: Ժողովրդական և ազգագրական մշակույթների շերտերը, թեև նույնպես ներառում են մարդկանց մեծ խմբեր, բայց նույնական չեն զանգվածայինի հետ, որովհետև, ի տարբերություն վերջինի, արտահայտում են տվյալ էթնոսի ոգին, նրա պատմական ճակատագիրը, ժողովրդի իղձերը, ազատության, արդարության, սիրո ու բարության համամարդկային գաղափարները, դրսևորվում բանահյուսության մեջ, սիրո, պանդխտության, աշխատանքային ու հայրենասիրական երգերում, արվեստի տարբեր, բայց հանրամատչելի ձևերում: Ժողովրդական և ազգագրական մշակույթի առանձին տարրեր, մշակվելով և կատարելագործվելով, համալրում են ազգի պրոֆեսիոնալ մշակույթը: Օրինակ, ժողովրդական երգերի կոմիտասյան մշակումները դարձել են մեր երգարվեստի դասական օրինակներ:

Կարծում եմ, որ հայ ազգի մշակութային որակը, դեմքը ներկայացնում է էլիտար մշակույթը, և քանի որ այն ամենաբարձր նվաճումներ Հայաստանում ունեցել է միջնադարում, երբ փայլուն հաջողությունների ենք հասել դատաիրավական մտքում, բժշկության,

բնագիտության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, եկեղեցական ճարտարապետության և այլ ոլորտներում, ապա կարելի է ասել, որ հայ ազգի ինքնությունը հիմնականում ներկայացնում է էլիտար մշակույթի միջնադարյան փուլը: Անշուշտ, հայ ժողովրդի պատմության այլ փուլերում, մասնավորապես՝ XIX դարում, XX դարի առաջին երկու տասնամյակում, խորհրդային շրջանում մշակույթի վերելք դիտվել է, բայց այն տեղավորվել է ընդհանուր մշակույթում, ներկայացվել այլ երկրներում, տարածքներում ձևավորված և իշխող դարձած ոճերի և ուղղությունների շրջանակներում, մինչդեռ միջնադարում հայ մշակույթը ոչ միայն գտնվել է նույն ժամանակաշրջանի եվրոպական մշակույթի մակարդակին, այլև որոշ ոլորտներում առաջ է անցել, տոն տվել, ուղղություն ձևավորել¹⁷:

Ձանգվածային մշակույթի բազմաթիվ դրսևորումներ ազգային դիմագիծ չունեն (կամ գրեթե չունեն), իսկ երբեմն, ինչպես մեր օրերում և մեր դեպքում է, կարող են կատարել հակաազգային դեր: Այդ ցածրաճաշակ դրսևորումները մարդկանց հոծ խմբերի, հատկապես՝ պատանիների ու երիտասարդների գիտակցության և հոգեբանության վրա ազդելու մեծ կարողություն ունեն:

Միապաղաղ, նույն ռիթմով, բառերի կրկնությամբ կամ առանց բառերի ընթացող երաժշտությունը, հարվածային գործիքների խլացուցիչ աղմուկ-աղաղակը, ոգուն և մտքին ոչինչ չտվող ցատկոտուքները, բռնություն ու սեքս, թմրամոլություն և հարբեցողություն քարոզող ֆիլմերը հոգին ամայացնելու, հակամշակույթ քարոզելու «լավագույն» միջոցներն են:

Արևմուտքից եկող, նորության, թարմության անվան տակ գրեթե պարտադրվող զանգվածային մշակույթի լայն տարածումը, որը խոսում է նաև դրանց կրողների, դրանցով ոգևորվողների ցածր ճաշակի, անճաշակության կամ չտեսության մասին, փոքր ազգերի

համար կատարում է քայքայիչ՝ գաղափարախոսական ներթափանցման (դիվերսիայի) դեր, որովհետև պատանիներին, երիտասարդներին կտրում է ազգային արմատներից, ավանդույթներից, մշակույթի լավագույն նվաճումներից և դարձնում զանգվածային մարդ կամ մարդ-զանգված: Դրա ապացույցներից է նաև այն, որ տարբեր հարցումների ժամանակ մեր պատանիներից, երիտասարդներից շատերը ճանաչում են աշխարհի կորած անկյուններից մեկում ծնված երգիչ-երգչուհուն, դերասանին, բայց չեն ճանաչում Կոմիտասին, Թումանյանին, Չարենցին, Սևակին, Խաչատրյանին, Սարյանին և այլոց:

Հակամշակույթի դեմ պայքարելը, աճող սերնդին ազգային և համաշխարհային մշակույթի լավագույն նվաճումներին հաղորդակից դարձնելը, ոգեզրկությունից փրկելն ու արժեքային-աշխարհայացքային որոշակի չափանիշների ուղղորդելը դառնում են ազգային անվտանգության կարևորագույն խնդիրներ:

Մեր զանգվածային մշակույթն այսօր դարձել է ազգային անվտանգության ամենալուրջ սպառնալիքը, որովհետև արևմտյան զանգվածային, «ուղեղներ լվացող (արդուկող)» արվեստը, արաբաթաթարա-թուրքական երաժշտությունը խաթարել են ազգի հոգևոր-բարոյական կերպարը, դիտվում է անճաշակության ամենավայրագ գործընթաց, բարձր արժեքները փոխարինվում են հակաարժեքներով: Կարծես, ծրագրված ձևով, հետևողականորեն փչացնում են մեր գենի դեռևս առողջ ներուժը:

Ցավոք, երբեմն այն կարծիքն է ձևավորվում, որ այդ անճաշակությունը տևականորեն խրախուսվել է իշխանության վերին էշելոնի կողմից, հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ կառավարական բարձր պարզևների, կոչումների էին արժանանում ռաբիսի կարկառուն ներկայացուցիչները:

Հատուկ թեմա է մեր կենցաղային մշակույթը: Ծայրահեղ բևեռներում են գտնվում էլիտար և զանգվածային-կենցաղային մշակույթները: Պետք է ամեն ինչ անել, որ վերջիններս բարձրացնեն որակը, դառնան պատմություն և բարձր մշակույթ ունեցող քաղաքակիրթ ազգին վայել: Այստեղ կարևոր դեր ունեն ՋԼՄ-ները, հատկապես՝ հեռուստատեսությունը: Բացարձակապես անհիմն, նույնիսկ հակազգային է այն պնդումը, թե հեռուստատեսությունը

¹⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ս. Սարգսյան**, Ինքնուրո՞ւյն, թե՞ համադրական քաղաքակրթություն // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2009, թիվ 2, էջ 164-182, **Ս. Չաքարյան**, Հայկական Վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն), Եր., 2006, **Ս. Սարգսյան**, Հայկական Վերածննդի հարցի շուրջ, Հումանիտար գիտության արդի հիմնախնդիրները Հայաստանում // Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 2-րդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2005, էջ 261-273:

ներկայացնում է այսօրվա հասարակության, հատկապես՝ երիտասարդության պահանջարկը: Մենք բռնության, ահաբեկչության, անճաշակության, լկտիության, այլասերվածության ազգային պահանջարկ երբեք չենք ունեցել: Նման տեսակետ ներկայացնողները ցույց են տալիս իրենց անճաշակությունը, անճարակությունը, անկուլտուրականությունը և այդ ամենը մատուցում որպես հասարակության և երիտասարդության պահանջարկ: Իրոք, դաստիարակողները դաստիարակության լուրջ կարիք ունեն:

Ժամանակակից քաղաքակրթության էությունը, ուղղվածությունը հասկանալու համար խիստ ուրվագծային անդրադառնանք զարգացման գաղափարին, որովհետև որոշ դեպքերում (արևմտյան քաղաքակրթության մեջ) զարգացումն ու քաղաքակրթությունը դառնում են փոխլրացնող գործոններ, նույնիսկ հոմանիշներ, որովհետև դրանցից մեկի գոյությունը հնարավոր չէ առանց մյուսի:

Չարգացման հայեցակարգը մշակվել է Նոր ժամանակում, իշխող դարձել Լուսավորական փիլիսոփայության մեջ, վերջնականապես հաստատվել XIX դարում՝ շնորհիվ **Գ. Հեգելի, Կ. Մարքսի, Չ. Դարվինի:**

Գրականության մեջ, **«զարգացում»** հասկացությունից բացի, օգտագործում են նաև **«առաջադիմություն»**, **«պայքմական առաջընթաց»** (պրոգրես) հասկացությունները: Երկար ժամանակ «զարգացում» և «առաջադիմություն» հասկացությունները նույնացվել են: Դա նկատելի է հատկապես Հեգելի փիլիսոփայության մեջ: Վերջին շրջանի փիլիսոփայական գրականության մեջ դիտվում է այդ հասկացությունների զատման երևույթը: Զարգացումը համարվում է ավելի լայն հասկացություն, փոփոխություն ընդհանրապես, որը կարող է ունենալ ինչպես առաջընթաց (պրոգրեսիվ), այնպես էլ հետընթաց (ռեգրեսիվ) բնույթ: Առաջադիմությունը առաջանցիկ զարգացումն է: Գոյություն ունեցող տեսակետներից մեկի համաձայն՝ հասարակական կյանքում տեղի ունեցող վերընթաց փոփոխությունները բնութագրելիս «զարգացում» և «առաջադիմություն» հասկացությունները նույնանում են: Այս հասկացությունները որպես հոմանիշներ են օգտագործվում նաև այստեղ, ուստի հաջորդիվ ներկայացվող զարգացման առանձնահատկությունները և չա-

փանիշները ամբողջությամբ վերաբերում են նաև առաջադիմությանը:

Զարգացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Ժամանակի մեջ զարգացումն ունի ուղղվածություն՝ անցում է անցյալից ներկա և ապագա:
2. Զարգացման գործընթացն անշրջելի է:
3. Զարգացման ընթացքում և արդյունքում առաջանում է նորը, այնպիսի բան, որը նախկինում չի եղել:
4. Զարգացման գործընթացն ունի օրինաչափ բնույթ:
5. Զարգացումն անցում է ստորինից բարձրը, ցածրակարգից բարձրակարգը:

Առանձնացվում են զարգացման չափանիշները, որոնց մեջ առաջնային են համարվում՝

1. Արտադրողական ուժերի, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման մակարդակը:
2. Մարդու կողմից բնության և հասարակության տարերային ուժերի տիրապետման աստիճանը:
3. Մարդկանց ազատության չափը:
4. Հասարակության ներսում մարդասիրական գաղափարների, բարոյական և իրավական կարգավորիչների դերի մեծացումը:
5. Մարդկանց, ազգերի ու ժողովուրդների ներփակվածության թուլացումը, համագործակցության և համերաշխության աստիճանը և այլն:

Առաջադիմությունը նկատելի է նաև մշակույթի բոլոր ոլորտներում:

Առաջադիմության արդյունքում՝

1. Մշակույթում առաջանում են բոլորովին նոր որակներ, երևույթներ, միտումներ, դադարում են գործելուց իրենց սպառաձնները:
2. Մեծանում, խորանում և ընդլայնվում են մարդու գիտելիքները արտաքին աշխարհի և սեփական ներաշխարհի մասին: Զարգանում և կատարելագործվում են մարդու ձեռքն ու միտքը:

3. Մարդիկ, համենայնդեպս նրանց մեծամասնությունը, իրենց կյանքն ու գործը կառուցելիս գրեթե տեղ չեն հատկացնում սնահավատությանը, նախապաշարումներին, ազգակցական-արյունակցական-կաստայական հատկանիշներին:
4. Մեծանում է մարդու իշխանությունը բնության վրա:
5. Ավելի իմաստալից ու նպատակաուղղված է դառնում մարդու կյանքը, մեծանում է նրա ազատ ընտրության հնարավորությունը:

Լուսավորական դարաշրջանից սկսած՝ զարգացման և առաջադիմության հոմանիշ է դառնում քաղաքակրթությունը: Լուսավորիչներն իրենց իդեալների իրականացումը տեսնում էին քաղաքակրթության մեջ, որը հնարավոր էր զարգացման միջոցով: Հետևաբար, ժամանակակից քաղաքակրթության քննադատությունը նաև զարգացման քննադատություն է:

«Քաղաքակրթություն» եզրույթը բազմիմաստ է: Համադրական մոտեցում ցուցաբերելով՝ քաղաքակրթությունը կարելի է դիտել որպես **մեկ կամ մի քանի երկրներ, տարածաշրջաններ, նույնիսկ աշխարհամասեր ընդգրկող հասարակությունների ընդհանրական տիպ, որին բնորոշ են աշխարհային հասարակական բաժանումները, գիտական գիտելիքի, տեխնիկայի և տեխնոլոգիաների, էթնիկական հանրություններ ներառող մշակութային որոշակի մակարդակը, հասարակության, միջմարդկային հարաբերությունների կառավարման, կարգավորման ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ բնութագրական ձևերի գոյությունը և գործառնությունները:**

Վերջին տարիներին առավել տարածված է քաղաքակրթության երեք ըմբռնում.

1. Քաղաքակրթությունը մարդու էվոլյուցիայի ընթացքում ստեղծված առարկայական արդյունք է, որը ներառում է մարդու առանձնացումը կենդանական աշխարհից և առաջընթացը սոցիալական աստիճանակարգով: Այս իմաստով քաղաքակրթական նվաճումներ ասելով նկատի ունենք «երկրորդ բնության» (արտեֆակտերի) ձևավորումը և զարգացումը, տեխնիկատեխնոլոգիական հայտնագործությունները՝ անիվը, գութանը, բրուտագործա-

կան հաստոցը, շոգեմեքենան, ավտոմեքենան, ինքնաթիռը, էլեկտրականությունը, ատոմային էներգիան և այլն:

Նվաճումների հաջորդ խումբը վերաբերում է սոցիալական հարաբերությունները կարգավորող հայտնագործություններին, որոնցից են գրի ստեղծումը, իրավունքի հաստատումը, շուկան, փողը, ժողովրդավարությունը, խղճի, խոսքի, ընտրության և այլ իրավունքները և ազատությունները:

2. Քաղաքակրթությունը հասարակության որոշակի տիպ է, որն առաջանում է մարդկության զարգացման որոշակի փուլում, երբ անցում է կատարվում տնտեսավարման նստակյաց ձևին, երբ ստեղծվում են մշտական բնակավայրեր, քաղաքն ու գյուղը: Այս իմաստով քաղաքակրթությունը հասարակական համակարգի ամբողջական ընկալումն է՝ իրեն բնորոշ սոցիալական հարաբերություններով և ինստիտուտներով, մշակույթով, հիմնարար արժեքներով, անհատի տիպով և ապրելակերպով: Այս ըմբռնմամբ՝ «քաղաքակրթություն», «հասարակություն» և «վերկենսաբանական սոցիալական օրգանիզմ» հասկացությունները նույնանում են: Նման մոտեցման դեպքում քաղաքակրթությունը և մշակույթը ոչ միայն չեն հակադրվում, այլև մշակույթը դառնում է քաղաքակրթության դեմքը, դիմագիծը բնորոշող ամենահիմնական գործոնը: Յուրաքանչյուր քաղաքակրթություն ներկայանում է մշակութային որոշակի ընդհանրական տիպով:

3. Քաղաքակրթությունը տեխնիկական և տեխնոլոգիական են, իսկ մշակույթը՝ հասարակության հիմնարար արժեքները, մարդու ներաշխարհի մարմնավորումները, հոգևոր գործունեության ձևերը (արվեստ, կրոն, բարոյականություն, փիլիսոփայություն և այլն), արժեքները: Այսինքն, քաղաքակրթությունը և մշակույթը վերաբերում են հասարակության և մարդու գործունեության տարբեր ոլորտներին: Այդ պատճառով էլ այս տեսակետի կողմնակիցների կարծիքով՝ քաղաքակրթության զարգացումը մեխանիկորեն չի հանգեցվում բարոյական զարգացմանը, հակառակը՝ քաղաքակրթության զարգացմանը ուղեկցող գործոններ են դառնում բարոյական անկումը, դեգրադացիան: Ըստ այս մոտեցման՝ քաղաքա-

կրթությունը և մշակույթը սոցիալական իրականության տարբեր կողմերն են¹⁸:

Մարդկությունը քաղաքակրթության փուլ է թևակոխում՝ դուրս գալով տոհմացեղային կարգերի ավանդույթային, ծիսական, արյունակցական կապերի վրա ձևավորված հասարակական հարաբերություններից և անցնում սոցիալական կառուցակարգերի վերցեղային, վերարյունակցական, բարոյաիրավական կարգավորմանը, որոնք նախադրյալներ են ստեղծում պետության առաջացման համար: Բացի պետությունից, հասարակության քաղաքակրթության փուլի կայացման համար կարևոր են անցումը յուրացնող տնտեսությունից արտադրող տնտեսությանը, ինչպես նաև հողագործական մշակույթի ձևավորումը, աշխատանքի հասարակական և որակավորում պահանջող բաժանումները, համեմատաբար բարդ տեխնոլոգիաների առկայությունը, քաղաքների, գրավոր լեզվի, փիլիսոփայության և գիտության սաղմերի ձևավորումը և այլն: Նշված գործոնները սկսվում են նեոլիթի (նոր քարի դար) ժամանակաշրջանից (մ. թ. ա. VIII-VI հազարամյակներ):

Չուտ քաղաքակրթական առումով հասարակության պատմությունը բաժանում են երկու խոշոր փուլերի՝ ավանդական և տեխնածին (տեխնոգեն): Վերջինս երբեմն բաժանում են.

ա) արդյունաբերականի, որը սկսվում է XVII դարից, ավարտվում XX դարի 70-ական թթ.,

բ) հետարդյունաբերականի, որը բնորոշ է վերջին 30-40 տարիներին, և երբեմն անվանում են տեղեկատվական, հետմոդեռնիզմի և այլն:

Տեխնածին քաղաքակրթության հիմնական ուղենիշները մշակում է Վերածնությունը, զարգացնում են Ռեֆորմացիան և Լուսավորականությունը: Փոխվում են մարդու, աշխարհի ըմբռնումները: Մարդը դիտվում է որպես ակտիվ էակ, որն իր գործունեությամբ կարող է փոխել աշխարհը, բնությունը ենթարկել իրեն: Նա այս աշխարհում իրականացնում է վերափոխիչ գործունեություն: Մարդը բնության և հասարակության հարաբերությունների ստրուկտուրալ չէ,

¹⁸ Այդ մասին տե՛ս **Степан В.**, Цивилизация и культура. Санкт-Петербург, 2011, էջ 79-80: Քաղաքակրթության ձևավորման նախադրյալների, ըմբռնումների բազմազանության մասին տե՛ս **Ա.Սարգսյան**, Մշակույթի տեսություն, էջ 54-69:

այլ դրանց տիրակալը: Տեխնածին քաղաքակրթության մեջ մարդը հանդես է գալիս որպես ստեղծագործող, ինքնավստահ, ինքնաբավ էակ:

Տեխնածին քաղաքակրթությունն ունեցավ մեծ նվաճումներ. գիտատեխնիկական առաջադիմություն, տնտեսական աճ, կյանքի նոր որակ, բուժսպասարկման և սպառման նոր մակարդակ, կյանքի միջին տևողության երկարացում, մեծ հույսեր ապագայի նկատմամբ: Իշխող դարձավ պատմական հեռանկարի լավատեսական ըմբռնումը: Ահա թե ինչու մինչև XX դարը մարդկությանը թվում էր, թե ինքն անմահ է, սերունդներ կոչնչանան, հազարավոր մարդիկ կսպանվեն, բայց մարդկությունը կմնա: Երկու համաշխարհային պատերազմները, զանգվածային ոչնչացման զենքերի ստեղծումը այդ հավատը կործանեցին: Պարզ դարձավ, որ տեխնածին քաղաքակրթության անքննադատ զարգացումը հղի է ամենավտանգավոր հետևանքներով: Քաղաքակրթությունը կարող է ոչնչացնել իր արարողին՝ մարդուն և մարդկությանը:

բ) Գիտությունը և տեխնիկական գլոբալ հիմնախնդիրների համապեքսություն

Թեման ամբողջական դարձնելու նպատակով համառոտ քննարկենք այն հարցը, թե տեխնածին քաղաքակրթության մեջ ինչ դեր են կատարում գիտությունը և տեխնիկան:

Գիտությունը հոգևոր գործունեության մշակութային ձև է, որի խնդիրը իրականության մասին հավաստի գիտելիքի ձեռք բերումն է ու տեսական համակարգումը: Գիտությունը գիտական գիտելիքների համակարգ է, որը ուսումնասիրվող առարկայի մասին տալիս է հավաստի և անհակասական գիտելիք: Գիտականության չափանիշներ (չափորոշիչներ) են համարվում.

- բանական հիմնավորվածությունը (ոացիոնալությունը), ապացուցելիությունը,
- օբյեկտի ուսումնասիրությունն էության մակարդակում (օրինաչափությունների բացահայտումը),
- գիտելիքի կազմակերպվածությունը, համակարգայնությունը,

- ստուգելիությունը (փորձնական կամ տեսական), հիմնախնդրային բնույթը (պրոբլեմայնությունը),
- ճշմարտագիտությունը, հավաստիությունը (օբյեկտիվությունը), վերանձնայնությունը, անհակասականությունը, վերարտադրելիությունը, լրիվությունը և այլն:

Գիտությունը ներառում է միմյանց լրացնող երեք կարևորագույն բաղադրիչներ.

- գիտությունը՝ որպես գիտելիքի առանձնահատուկ տեսակ,
- գիտությունը՝ որպես գործունեության ինքնատիպ ձև,
- գիտությունը՝ որպես յուրահատուկ սոցիալական հաստատություն (ինստիտուտ):

Իր զարգացման ընթացքում գիտությունը ենթարկվում է մի շարք օրինաչափությունների: Դրանցից են.

I. Գիտական գիտելիքի զարգացման ժառանգականության օրենքը, ըստ որի՝ գիտության մեջ ավելի բարձր աստիճանը ձևավորվում է նախորդի հիմքի վրա՝ պահպանելով այն դրականը, արժեքավորը, որը եղել է նախկինում: Այստեղ գործում է բացասման դիալեկտիկական սկզբունքը: Իր զարգացման յուրաքանչյուր փուլում գիտությունն օգտագործում է այն նյութը, ուսումնասիրության մեթոդները, տեսությունները, վարկածները, օրենքները, հասկացային ապարատը, որոնք հատուկ են եղել գիտության զարգացման նախորդ փուլերին: Գիտության զարգացման յուրաքանչյուր փուլ օրինաչափորեն կապված է նախորդի հետ:

II. Գիտության զարգացման ընթացքում քանակական և որակական փոփոխությունների միասնության օրենքը: Գիտության քանակական փոփոխությունների փուլը նոր փաստերի աստիճանական կուտակումն է գոյություն ունեցող գիտական հայեցակարգերի շրջանակներում: Այդ գործընթացի որոշակի փուլում և որոշակի պահի տեղի է ունենում անընդհատության խզում, գործող հիմնարար օրենքների և օրինաչափությունների արմատական բեկում, որոնց հետևանքով կատարված նոր հայտնագործությունները նախկին տեսություններով այլևս չեն բացատրվում: Տեղի է ունենում գիտական հեղափոխություն: Առանձնացվում է միմյանց սերտորեն կապված գիտական հեղափոխության երեք տեսակ.

- գիտական նոր տեսությունների կառուցում,

- հետազոտական նոր մեթոդների ներդրում,
- «նոր աշխարհների» հայտնագործում:

«Նոր աշխարհների» (բացահայտվում են գիտության ուսումնասիրության առարկայի՝ իրականությանը մինչ այդ անհայտ կողմեր, որոնց ճանաչումը ճշգրտում է աշխարհի գիտական պատկերը) հայտնագործման հետ կապված՝ առանձնացվում է հեղափոխության երկու ձև.

ա) Հեղափոխություն, որը փոխում է աշխարհի առանձին պատկերները՝ առանց հետազոտական իդեալներին և նորմերին դիպչելու:

բ) Հեղափոխություն, որի ընթացքում աշխարհի պատկերի հետ միասին ամբողջությամբ փոխվում են նախկին գիտական տեսությունները, հետազոտական մեթոդներն ու ձևերը: Բնագիտության պատմության մեջ կարելի է առանձնացնել չորս այնպիսի հեղափոխություններ, որոնց ընթացքում փոխվել են տեսությունները, հետազոտության մեթոդներն ու եղանակները, աշխարհի պատկերը.

- գիտական հեղափոխությունը XVII դարում, որի արդյունքում ստեղծվել է դասական բնագիտությունը,
- գիտական հեղափոխությունը XVIII դարում և XIX դարի առաջին կեսին, որի արդյունքում բնագիտությունն անցել է գիտության առարկայական (դիսցիպլինար) կազմակերպման վիճակին, այսինքն՝ բնագիտությունը տրոհվել է բազմաթիվ գիտությունների,
- գիտական հեղափոխությունը XIX դարի վերջին և XX դարի կեսերին, որի արդյունքում ձևավորվել է ոչդասական բնագիտությունը,
- գիտական հեղափոխությունը XX դարի վերջին և XXI դարի սկզբներին, որի արդյունքում ձևավորվում է ժամանակակից հետազոտական բնագիտությունը:

III. Գիտությունների տարանջատում (դիֆերենցում) և միավորում (ինտեգրում): Գիտության զարգացումը բնութագրվում է երկու հակադիր գործընթացներով՝ տարանջատման (դիֆերենցման՝ նոր գիտական դիսցիպլինների առաջացում) և ներթափանցման, միավորման (ինտեգրման՝ գիտելիքների, հատկապես՝ շփման եզ-

րերում գտնվող գիտությունների միավորում): Գիտության զարգացման ընթացքում այդ երկուսը հաճախ իրենց տեղերը փոխում են:

Այսպիսին են (ուրվագծային ներկայացմամբ) գիտության և գիտականության ըմբռնումները, որոնց տեսանկյունից էլ փորձենք պատասխանել այն հարցին, թե երբ է առաջացել գիտությունը, որովհետև այն պատմամշակութային երևույթ է և միշտ գոյություն չի ունեցել, այլ առաջացել է քաղաքակրթության ու մշակույթի զարգացման որոշակի փուլում և դարձել ժամանակակից քաղաքակրթության կարևորագույն արժեքներից մեկը¹⁹:

Եթե գիտություն ասելով հասկանում ենք մարդու պրակտիկ և ճանաչողական գործունեությունը, ապա գիտության պատմությունը հավանաբար պետք է սկսել նախնադարից:

Եթե գիտությունը բնության գիտակցված և նպատակաուղղված ուսումնասիրությունն է, ապա հաշվարկը պետք է կատարել մ.թ.ա. V դարի Հին Հունաստանից, որովհետև այդ ժամանակաշրջանում են առաջանում բնության ճանաչողության (հետևաբար՝ գիտական ճանաչողության) մի քանի հիմնարար սկզբունքներ: Եթե գիտությունը փորձնական հիմնավորում ունեցող գիտելիքն է, ապա գիտության պատմությունը սկսվում է XII-XIV դարերի Արևմտյան Եվրոպայից, այն ժամանակվանից, երբ հետաքրքրություն է առաջանում փորձնական գիտելիքի նկատմամբ:

Եթե գիտությունը նորագույն բնագիտությունն է, ապա այն առաջացել է XVI-XVII դարերում Եվրոպայում: Իշխող է վերջին տեսակետը: Հետևաբար, ժամանակակից գիտությունը ձևավորվել է XVII դարում, իսկ մինչ այդ գոյություն է ունեցել *նախագիտություն*, որն անցել է հետևյալ փուլերը.

1. Նախագիտությունը Հին Արևելքի երկրներում (մինչև հին հունական բնափիլիսոփայական միտք):
2. Հունական բնափիլիսոփայությունից մինչև XVII դար:

Հին Արևելքի երկրներում գիտելիքի ձևավորումը կապվել է ամենօրյա գործնական խնդիրների լուծման հետ, որի հետևանքով

¹⁹ Գիտության էության, բովանդակության, կառուցվածքի ավելի մանրամասն վերլուծությունը տե՛ս **Ա. Սարգսյան**, Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016, էջ 380-410, **Յու. Հովականյան**, Գիտության և տեխնիկայի փիլիսոփայություն և պատմություն, Եր., 2017:

մարդիկ առաջնորդվել են ախտանշան-բուժում սկզբունքով, այսինքն՝ բնության որոշակի երևույթներ (ջրհեղեղ, գետերի վարարում, երաշտ և այլն) անմիջականորեն ազդել են մարդկանց կյանքի պայմանների վրա, և նրանք նման երևույթները կանխելու որոշակի միջոցներ են որոնել, որոնք, ի վերջո, փոխակերպվել են գիտելիքների: Գիտելիքները գաղտնիացվել են, կրոնականացվել, դարձել քրմական կաստայի սեփականությունը, և բոլորը չէ, որ հաղորդակցվել են դրանց: Պատկերը փոխվել է Հին Հունաստանում: Գիտելիքների ստեղծումը կապվել է ոչ թե ամենօրյա գործնական խնդիրների, այլ աշխարհակառույցը հասկանալու ձգտման հետ: Այդ գիտելիքները չեն կրոնականացվել և գաղտնիացվել, այլ փոխանցվել են բոլոր ցանկացողներին: Արիստոտելի մշակած գիտական տեսության սկզբունքներն իրենց ուժը պահպանել են մինչև Գալիլեյ և Նյուտոն:

Ձևավորվելով XVII դարում՝ գիտությունն այնուհետև անցել է երեք փուլ.

1. դասական (XVII-XIX դարեր),
2. ոչդասական (XX դարի առաջին կես),
3. հետոջդասական (XX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը):

Իր գոյության ընթացքում գիտությունն իրականացրել է երեք մեծ գործառույթ:

Առաջինը մշակութաաշխարհայացքայինն է, որը համընկել է գիտության զարգացման դասական շրջանին: Գիտությունը երկինքը մաքրել է արժեքներից և ենթարկել մեխանիկայի օրենքներին, ստեղծել աշխարհի գիտական պատկերը: Դա է պատճառը, որ եկեղեցու և գիտության պայքարն ամենասուր բնույթն ընդունել է XVII-XIX դարերում:

Հաջորդ երկու գործառույթները (գիտությունը՝ որպես արտադրողական ուժ և սոցիալական երևույթ) բնորոշ են XX դարի գիտությանը և մեծապես պայմանավորված են գիտատեխնիկական հեղափոխությամբ (ԳՏՀ):

ԳՏՀ-ն գիտության և տեխնիկայի բուռն զարգացումն է, արտադրողական ուժերի վերափոխումը, գիտության՝ անմիջական արտադրողական ուժ դառնալը: Կապվելով տիեզերքի նվաճման,

հրթիռային տեխնիկայի ստեղծման, ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման, կիբեռնետիկայի և հաշվողական տեխնիկայի արմատավորման հետ՝ գիտատեխնիկական հեղափոխությունը սկիզբ է առել XX դարի 50-ական թվականներին և բուռն կերպով զարգացել հետագայում, որի արդյունքում արմատապես փոխվել է ժամանակակից քաղաքակրթության դեմքը:

Նեղ իմաստով տեխնիկական գործիք է, միջոց, որը ստեղծում և օգտագործում է մարդը՝ բնությունը վերափոխելու համար: Լայն իմաստով տեխնիկական գիտելիք է, քաղաքակրթական նվաճում, մշակութային երևույթ: Որպես որոշակի տիպի մշակութային արժեք՝ տեխնիկական օբյեկտ է (սարքավորում, գործիք, մեքենա), գիտելիք (կարողություն, հմտություն, կանոն, տեսություն), հայտնագործություն և այլն:

Սոցիալ-մշակութային իմաստով տեխնիկական բնութագրում է մարդու և քաղաքակրթության զարգացման աստիճանը: Տեխնիկայի զարգացման պատմական գործընթացը ներառում է երեք փուլ՝ ձեռքի աշխատանքի գործիքներ, մեքենաներ, ավտոմատներ:

Աշխատանքի գործիքների իշխանության ժամանակը սկսվում է նախնադարից և հասնում մինչև XIX դար: Այս ժամանակահատվածում հիմնական արտադրողական ուժը մարդն է, իսկ գործիքները՝ նրա ֆիզիկական հատկությունները լրացնող միջոցները: Տեխնիկական գտնվել է պարզագույն վիճակում, որի հետևանքով աշխատանքային գործիքը՝ որպես մշակութային երևույթ, գործնականում չի նկատվել:

Մեքենաների իշխանության ժամանակաշրջանը կամ մեքենայական արտադրությունը սկսվում է XIX դարում և հասնում մինչև XX դարի երկրորդ կեսը: Այս փուլում դիտվում է գիտության և տեխնիկայի մերձեցման երևույթը, իսկ մարդը դառնում է մեքենայի կցորդը: Տեխնիկական դառնում է մշակութային կարևորագույն տարր:

XX դարի երկրորդ կեսին սկսվում է ավտոմատների կիրառման ժամանակաշրջանը: Մարդը դուրս է գալիս արտադրության գործընթացից և դառնում դրա կազմակերպիչն ու ղեկավարը: Հաղորդակցվելով համակարգիչների հետ՝ մարդը ստեղծում է վիրտուալ (ոչ իրական) միջավայր և ենթարկվում դրա ազդեցությանը: Մշա-

կելով մարդ-մեքենա հաղորդակցության կանոնները՝ մարդը մեքենային տալիս է այդ կանոնները, ինքը ենթարկվում դրանց: Ժամանակակից գլոբալ համակարգչայնացման աշխարհում մարդ-մեքենա փոխհարաբերությունը դառնում է համընդհանուր հիմնախնդիր:

Գիտությունը և տեխնիկական քաղաքակրթության արդյունք են և միաժամանակ քաղաքակրթության զարգացման պայման: Մեծ է գիտության և տեխնիկայի դերը բնության յուրացման, հասարակական հարաբերությունների կարգավորման և հումանիստական ուղղվածության, կենցաղի բարելավման, մարդու առողջության, նրա կյանքի միջին տևողության երկարացման և այլ բնագավառներում: Դեռևս **Ֆ. Բեկոնն** էր նշում, որ գիտական ճանաչողության միջոցով հնարավոր դարձավ անիվի, գութանի, վառոդի և մարդու համար խիստ անհրաժեշտ այլ իրողությունների հայտնագործումը, որոնք մեծ օգուտ տվեցին ողջ մարդկությանը: Գիտությունը, ըստ Բեկոնի, պետք է ամենակարևոր տեղը զբաղեցնի մարդկային բուլոր գործերում, որովհետև գիտությունն է մարդկանց ազատում աղքատությունից, սովից, հիվանդությունից:

XVII-XVIII դարերի լուսավորիչները և XIX դարի պոզիտիվիստներն ավելի համակարգային մոտեցում ցուցաբերեցին գիտության խնդիրներին և լավատեսական այն տեսակետն էին ներկայացնում, որ գիտության միջոցով հնարավոր է հպատակեցնել բնությունը, կարգավորել միջմարդկային հարաբերությունները, ստեղծել բանական և հումանիստական սկզբունքներով կառավարվող և զարգացող հասարակություն: Եվ լուսավորիչները չէին սխալվում գիտության և տեխնիկայի հումանիստական առաքելության հարցում: Գիտությունն ու տեխնիկական իրենց հումանիստական առաքելությունը շարունակում են XX դարում, նաև մեր օրերում: Դրանց շնորհիվ են զարգանում արտադրությունը, կարգավորվում հասարակական հարաբերությունները, սովորում և դաստիարակվում սերունդները, բուժում անբուժելի համարվող բազմաթիվ հիվանդությունները, փոխում ապրելակերպը, բարձրացնում մարդկանց բարեկեցությունը, բարելավում կենցաղը: Գիտությունը և տեխնիկական հասարակական առաջընթացի հզոր ուժ են, հեղափոխական ազդեցություն են ունենում մարդկանց պատկերացումների, աշխար-

հայացքի ձևավորման վրա: Մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներ այսօր հնարավոր չէ պատկերացնել, առանց գիտության և տեխնիկայի: Գիտությունը և տեխնիկան բնությունը, հասարակությունը ավելի ճանաչելի, կառավարելի ու կանխատեսելի են դարձնում, ընդլսնում են մարդու ինքնաճանաչողության, ընդհանուր իմացության հնարավորությունները, նրան ազատ են դարձնում վարքագծում, մտածողության մեջ և աշխարհայացքում: Այս ամենով են գիտությունը և տեխնիկան դառնում մշակութային երևույթներ, քաղաքակրթական գործոններ, իրականացնում մշակութաաշխարհայացքային և հումանիստական գործառույթներ:

Գիտատեխնիկական առաջընթացը փոխում է ժամանակակից եվրոպական քաղաքակրթության դեմքը և ձգտում է փոխել ողջ աշխարհի զարգացման վեկտորը:

Բայց այդ ընթացքում պարզ դարձավ, որ գիտության և տեխնիկայի զարգացումը հակասական ազդեցություն է ունենում քաղաքակրթության ընթացքի վրա՝ բարիքի հետ ծնելով չարիք, մեկ խնդրի լուծմամբ առաջ բերելով մի քանիսը: Չարդարացան լուսավորիչների հույսերը, պարզվեց, որ միայն գիտությունն ու տեխնիկան բավարար չեն մարդկանց երջանիկ դարձնելու համար: Ամենազարգացած գիտության ու տեխնիկայի պայմաններում նույնիսկ մարդկության մեծ մասը շարունակում է մնալ դժբախտ: Ավելին, դրանք դառնում են ամենավճռական գործոնները մարդկության հնարավոր ոչնչացման գործում, նմանվում են Պանդորայի արկղին, որտեղից դուրս են գալիս չարիքի տարբեր ձևեր, տիրում մարդկանց, իսկ արկղում մնում է միայն հույսը՝ երջանկության փոխարեն: Դրանք, հանուն մարդու բարեկեցության պայքարելու փոխարեն (ինչին կոչված են), սկսում են պայքարել մարդու դեմ, հումանիզմի միջոցից փոխարկվում են հակահումանիզմի միջոցի: Այստեղից էլ ժամանակակից քաղաքակրթության այն գլոբալ հիմնախնդիրները, որոնք կապվում են գիտության և տեխնիկայի զարգացման արդի փուլի հետ:

Անսոցիալ մահվան հիմնախնդիրն է համամարդկային (գլոբալ) և զանգվածային իմաստներով, որը կապվում է զանգվածային ոչնչացման զենքերի հնարավոր օգտագործման հետ: Իսկ զանգվածային մահը, բացի զենքի օգտագործումից, տեղի է ունենում

արտադրական վթարների, զանազան տեխնաժին և մարդաժին գործոնների, բնական աղետների հետևանքով: Մահը դադարել է սարսափազդու լինելուց և դարձել սովորական երևույթ: Այսինքն, գլոբալ իմաստով կյանքի պահպանումը առաջին անգամ դարձավ հիմնախնդիր:

Երկրորդ գիտության սոցիալականացումն է, որը կործանարար ազդեցություն է ունենում կյանքի բնական ձևերի, ավանդական արժեքների վրա: Գրավելով նորանոր կենսական տարածքներ՝ գիտությունը և տեխնիկան շարունակում են անտարբեր մնալ մարդու նկատմամբ, անիմաստ դարձնում բարձրագույն բարոյական բազմաթիվ արժեքներ (ազնվություն, առաքինություն, պատիվ, հայրենասիրություն և այլն):

Երրորդ գիտության և տեխնիկայի նվաճումների չարաշահման հետևանքով երկրի գոյապահպանական իրավիճակի վատթարացումն է:

Չորրորդ տեխնիկայի ինքնուրույն սոցիալական գործոն դառնալն է:

Տեխնիկայի զարգացումն առաջացնում է պարադոքսալ իրավիճակ՝ քաղաքակրթությունը ծնեց տեխնիկան, տեխնիկայի ի հայտ գալով և զարգացմամբ քաղաքակրթությունը դարձավ տեխնիկական, բայց վերջինիս լիակատար հաղթանակը կարող է կործանել քաղաքակրթությունը: Տեխնիկայի զարգացումը դուրս է եկել մարդու հսկողությունից և դարձել այն, ինչ ոչ ոք չէր ցանկանում: Մարդը կորցրել է հսկողությունը տեխնիկական առաջընթացի և դրա ծնած հետևանքների նկատմամբ: Տեխնիկական և մշակութային զարգացումների միջև դիտվում է ժամանակային խզվածություն: Մշակութային առաջընթացը հետ է մնում տեխնիկականից:

Հինգերորդ. գենային ինժեներիայի, նանո, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավոր դարձրեց մարդու նյարդային և գենային համակարգի վրա ազդելը, մարդու որոշ բնական օրգաններ արհեստականով փոխարինելը, կյանքը երկարացնելը, իսկ հեռանկարում՝ անմահ դարձնելը: Նման մարդուն անվանում են «գերմարդ» կամ «հետմարդ»: Այս ծրագրերի իրականացումն արդեն ծնել է և կարող է ծնել մի շարք բարոյափիլիսոփայական, արժեքային-աշխարհայացքային, հումա-

նիստական հիմնահարցեր, որոնցից առանձնացնենք միայն մի քանիսը.

ա) տեղի չի՞ ունենա արդյոք մի այնպիսի աղետ, ինչը կատարվեց բնության հետ (բնապահպանական աղետ), երբ փորձեցին տեխնոլոգիապես վերահսկել և վերափոխել այն, և ունեցանք խորագույն բնապահպանական ճգնաժամ,

բ) ձևավորված «հետմարդն» արդյոք չի՞ ոչնչացնի այն մշակութային միջավայրը, որը «երկոտանի անփետուր էակին» մարդ է դարձնում,

գ) եթե «տեխնագիտությանը» (այդ հասկացությունն օգտագործվում է գիտության և տեխնիկայի ներթափանցման ժամանակակից մակարդակը բնութագրելու համար) հաջողվի ստեղծել «հետմարդ», այսինքն՝ անմահ մարդ, ապա դա արդյոք չի՞ ունենա ճակատագրական հետևանքներ, որովհետև անիմաստ կդառնան երեխա ունենալու, դաստիարակելու, երեխաների, մեծերի նկատմամբ հոգսի, հոգատարության, մարդու հանդեպ սիրո, առհասարակ, արիության, հերոսության, երջանկության, կյանքի իմաստի և բազմաթիվ այլ բարոյահումանիստական պատկերացումներ և հիմնարար արժեքներ: Չի՞ փլուզվի արդյոք մշակույթի պատմության ընթացքում ձևավորված արժեքային ողջ համակարգը, որից դուրս մարդ գոյություն չունի, գուցե, կդադարի՞ գործելուց մշակույթն ընդհանրապես²⁰:

Ժամանակակից հասարակությունը ծնել է նաև միջքաղաքակրթական, ներքաղաքակրթական և բուն քաղաքակրթական բնույթի հիմնախնդիրներ: Դրանցից **առաջինը** բախումն է տարբեր քաղաքակրթությունների միջև, բախում, որում հիմնական դերակատարները, ըստ որոշ հեղինակների, հակադիր մշակույթներն ու կրոններն են:

Երկրորդն այն հակասությունն ու հակադրությունն է, որն առաջանում է եվրոպական ժողովրդավարական և ազատական (լիբերալ) քաղաքակրթության (արևմտյան զանգվածային մշակույթի գերիշխանություն, մշակույթների միակերպություն) և լոկալ-ազգային-մշակութային-կրոնական ինքնությունը պայմանավորող

արժեքների (ազգային մշակույթների հիմնարար արժեքների վերացման, ազգային արմատներից կտրվելու վտանգ, ազգային ավանդույթների, ծեսերի, սովորույթների քայքայում, էթնիկ ինքնության թուլացում, մտածողության ազգային առանձնահատկությունների փոփոխություն և այլն) միջև:

Երրորդ. մարդկությունը կարող է ոչնչանալ ոչ միայն զենքի, այլև բնապահպանական, մարդաբանական ճգնաժամերի միջոցով: Վերջինիս մեջ մտնում են.

- գենոֆոնդի փոփոխության վտանգը (պատերազմում սպանվում է միլիոնների հասնող առողջ սերունդ՝ ժառանգ չթողած երիտասարդներ),
- սթրեսային ծանրաբեռնվածության մեծացում,
- մարդու կենսաբանական հիմքերի վերակառուցում (գենի ընթերցումը ոչ միայն հիվանդությունների բուժման, այլև որոշ ունակությունների զարգացման նպատակով, ուղեղում չիպերի տեղադրում, որոնք կարող են վերականգնել առանձին հիվանդությունների հետևանքով կորցրածը կամ ունենալ ցանկալի, կառավարվող մարդ),
- մարդուն գործնականում անմահ դարձնելը, որն, ինչպես նշեցինք, փոխելու է ողջ արժեքային համակարգը,
- ավելի էժան սերնդի աճեցում, որը կարող է ապրել աղտոտված միջավայրում:

Այժմ անցնենք վերը թվարկված հիմնախնդիրների մի մասի բովանդակային վերլուծությանը: Սկսենք գիտության ու տեխնիկայի զարգացման արդյունքում ձևավորված խնդիրներից:

Գիտության ու տեխնիկայի սոցիալական դերի մասին քննարկումները նոր չեն (հիշենք **ժ. ժ. Ռուսոյին**): XIX դարում, երբ տեխնիկան միայն նոր էր անցել զարգացման երկրորդ փուլ, **Ք. Դաուսոնը** գրում է. «Մարդը դառնում է իր ստեղծած մեքենայի ստրուկը: Երբ անտիկ հույները կամ միջնադարի մարդիկ, օգտագործելով իրենց աղքատիկ հնարավորությունները, ստեղծում էին արվեստի մեծ գործեր՝ որպես իրենց սոցիալական և հոգևոր իդեալների նյութական մարմնավորում, XIX դարի մարդիկ, գործադրելով իրենց հզոր ուժը, կառուցում են արդյունաբերական դարա-

²⁰ Տե՛ս **Лекторский В. А.**, *Философия, общественности и перспективы человека // Вопросы философии.* 2010, N 8, էջ 30-34:

շրջանի այլանդակ, անառողջ և անկարգ քաղաքներ, որոնք զուրկ են ձևից և ցանկացած ընդհանրական նպատակից»²¹:

XIX դարի գիտության ու տեխնիկայի խաղաղացած դերի ավելի ընդհանրական բնութագիր է տալիս **Կ. Մարքսը**: Ըստ նրա. «Մեր ժամանակ ամեն ինչ կարծես հղի է իր հակադրությամբ: Մենք տեսնում ենք, որ մարդկային աշխատանքը կրճատելու և ավելի արդյունավետ դարձնելու հրաշագործ ուժով օժտված մեքենաները մարդկանց բերում են սով և հյուծում: Հարստության նոր, մինչև այժմ անհայտ աղբյուրները, շնորհիվ ինչ-որ տարօրինակ, անհասկանալի կախարհանքի, աղքատության աղբյուր են դառնում: Տեխնիկայի հաղթանակները կարծես թե գնված են բարոյական դեգրադացիայի գնով: Թվում է, թե որքան ավելի է մարդկությունն իրեն ենթարկում բնությունը, այնքան ավելի է առանձին մարդը մյուս մարդկանց կամ էլ իր սեփական ստորության ստրուկը դառնում: Ըստ երևույթին, գիտության մաքուր լույսն անգամ չի կարող այլ կերպ փայլել, քան միայն տգիտության մռայլ ֆոնի վրա»²²:

Գիտության և տեխնիկայի սոցիալական հետևանքների մասին հետաքրքիր բանավեճ է տեղի ունեցել XX դարի 20-ական թվականներին **Բ. Ռասելի** և **Ռ. Հոլդենի** միջև: Հոլդենը հավատում է մարդուն, նրա ապագային: Ռասելը հռոչեռես է, նա իր հողվածն անվանում է «Իկարուս կամ ապագա գիտությունները», որտեղ ներկայացնելով Իկարուսի մասին հին հունական լեգենդը (ըստ որի՝ հորից սովորելով թռչելու արվեստը՝ Իկարուսը չի լսում նրա խորհուրդը և զոհվում է սեփական անխելամտության պատճառով)՝ այն մտավախությունն է հայտնում, որ ժողովուրդները, որոնց ժամանակակից գիտությունը սովորեցրել է թռչել, կվարվեն Իկարուսի նման, որովհետև գիտությունը մարդուն չտվեց ո՛չ մեծ ինքնահսկում, ո՛չ մեծ բարություն, ո՛չ մեծ ուժ՝ զսպելու իր կրքերը որոշումներ ընդունելիս, իսկ հասարակական կազմակերպություններին, հակառակը, կոլեկտիվ կրքերի ուժեղացման համար միջոց տվեց, մինչդեռ, այն ամենը, ինչն ուժեղացնում է կոլեկտիվ կրքերը,

²¹ Dawson Ch., Progress and religion. London. 1982. P. 218.

²² Կ. Մարքս, Ճառ, «The people's paper»-ի հոբեյանին, 1856 թվականի ապրիլի 14-ին Լոնդոնում, Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, երեք հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 685:

չարիք է ու աղետ: Մեր քաղաքակրթության համար աղետ է նաև գիտությունը (հետագայում Ռասելն այս հարցի վերաբերյալ ավելի լավատեսական հայացք է ներկայացնում):

XX դարի սկզբին բնագիտությունը դուրս եկավ զարգացման դասական անվրդով վիճակից և անցավ ցնցումների ու հեղափոխական նշանակություն ունեցող հայտնագործությունների փուլ: Նույն ժամանակաշրջանում գիտությունը քաղաքականացվեց, ավելի ստույգ՝ գիտության նվաճումները դարձան գաղափարախոսական ու քաղաքական նենգասպառնալիքների (շանտաժների), սհաբեկման, ճնշումների, սպառնալիքությունների մրցավազքի միջոցներ, որոնք էլ միջուկային ֆիզիկայի զարգացումը հանգեցրին ատոմային, նեյտրոնային, լազերային զենքերի արտադրությանը, քիմիան ստեղծեց զանգվածային ոչնչացման քիմիական ձևեր, երկրաբանությունը՝ երկրաբանական, կենսաբանությունը՝ կենսաբանական, հոգեբանությունը՝ հոգեբանական: Սև հումոր է դարձել հետևյալ արտահայտությունը. «Գիտնականները ինչով էլ զբաղվեն, միևնույն է, վերջում զենք է ստեղծվելու»: Քաղաքակրթությունը մոխրակույտի կարող են վերածել սխալ կամ գուցե նպատակային ծրագրավորում ու հրահանգ ստացած համակարգիչները կամ քաղաքական արկածախնդիրները: «Նման աղետների հեղինակն արդեն Աստված չէ, այլ մարդը», - գրում է **Ա. Քամյուն**: Մարդիկ իրենց դաժանությամբ հավասարվել են Աստծուն: Պետք է ըմբոստանալ, բայց ոչ թե Աստծու, այլ մարդու դեմ²³: Մարդու ամենամեծ թշնամին դարձել է մարդը:

Նոր պատերազմի դեպքում, գրում է **Հ. Մաթևոսյանը**, կզորակոչվի 500 000 000 մարդ, երկրագնդի 500 000 000-անոց բանակը շարժման մեջ կդնեն հաշվիչ մեքենաները, մարշալները կլինեն դրանց կամակատարները ... «Բոլոր ռազմական քարտեզներում ճշգրտից ճշգրիտ նկարված է իմ գյուղը, մեր տունը, իմ խնձորենին, Յամաք ձորը, ռազմական հաշվեմատյաններում նշված է ռազմական գործի իմ հոր կիսապիտանիությունը, իմ պիտանիությունը, տասներկու տարեկան իմ եղբոր պահեստային պիտանիությունը, մեր բահերի քանակը, մեր շան շղթայի երկարությունն ու հաստությունը՝ քաղաքակրթությունն ահա անորոշության մութից

²³ Տե՛ս **Камю А.**, Из записных книжек, М., 2008, էջ 208:

դրանք հայտնաբերել ու տվել է հաշվիչ մեքենաների բերանը,- և կրքոտ ցասում է առաջանում՝ չղջիկի պես խցկվել քաղաքակրթության չլուսավորված մի ծակ ու դուռը փակել: Ես չեմ ցանկանում այս քաղաքակրթության մասը լինել, աղաղակում է Չարլզ Չապլինը»²⁴:

Տեղի է ունենում ոգու, ոգեղենության կորուստ, ավանդական արժեքները՝ սեր, սովորույթ, հույս, խիղճ, իդեալ, բարիք, բարի, պարտք, պատասխանատվություն և այլն, դուրս են մղվում կյանքից: Ինչպես նշում է XX դարի ֆիզիկայի դասականներից **Մ. Բորնը**, խիստ փոխվել է զինվորի ավանդական կերպարը: Սովորական պատերազմներում իդեալական զինվորն աչքի էր ընկնում ուժով, խիզախությամբ, պարտվածի նկատմամբ մեծահոգությամբ, անպաշտպանի նկատմամբ կարեկցանքով: Այս ամենից ոչինչ չի մնացել: Չանգվածային ոչնչացման գեներերը տեղ չեն թողնում բարոյական սահմանափակումների համար, և զինվորն իջնում է մարդասպան-տեխնոլոգի աստիճանի: Հնացել է հերոս զինվորի այն պատկերացումը, թե նա մարտադաշտում կռվում և զոհվում է հանուն հայրենիքի, կնոջ և երեխաների, որովհետև շատ հավանական է, որ նրա կինն ու երեխաներն ավելի շուտ դառնան ատոմային ռումբի զոհեր, քան ինքը, իսկ նրա հայրենիքը նմանվի լուսնի լանդշաֆտի²⁵:

Համակարգիչների միջոցով ստեղծված համացանցը (ինտերնետ) մշակել է ցանցային պատերազմի ծրագիր, որի նպատակն է համաշխարհային ընդգրկմամբ բացարձակ վերահսկողություն սահմանել պատմական գործընթացների բոլոր մասնակիցների վրա: Այս պատերազմում տարածքների գրավում, մեծաքանակ զորք պետք չէ: Ցանցն ավելի զորեղ ու ճկուն է, որում հիմնական արդյունքները ձեռք են բերվում գործարքների, ֆինանսական, տեղեկատվական, սոցիալական և այլ ճնշումների միջոցով:

Ողջ աշխարհը ծառայում է արևմտյան տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնոլոգիական և տեղեկատվական ծածկագրի (կողի) զարգացմանը, որը դարձել է գաղութացման նոր ձև,

²⁴ Հ. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին // Սպիտակ թղթի առջև, Երկեր, 2004, էջ 41:

²⁵ Տե՛ս **Մ. Բորն**, Իմ կյանքն ու հայացքները, Եր., 1978, էջ 46, 99:

որի հետևանքով շատ ժողովուրդներ և երկրներ, կորցնելով անկախության վերջին մնացորդները, մտնում են գլոբալացման սարդոստայնի մեջ, հակառակ դեպքում հռչակվում են «մերժյալ» երկիր, «չարիքի աղբյուր», որոնց վրա էլ բռնության ամենատարբեր միջոցներով փորձում են տարածել և արմատավորել արևմտյան ժողովրդավարության «նվաճումները»: Մարդկությունը երբեք այսքան չի հեռացել Լուսավորականության իդեալներից ու արժեքներից: Ակնհայտ է, որ հասարակության առաջընթացի բնույթը որոշողը ոչ թե բանականության առաջընթացն է, այլ նրա պտուղներ հանդիսացող գիտության ու տեխնիկայի նվաճումները մարդու դեմ օգտագործելը: Մ. Բորնը ցավով է գրում. «Ներկա քաղաքական և ռազմական սարսափները, էթիկայի լրիվ անկումը. այս բոլորին ինքս եմ վկա եղել իմ կյանքի ընթացքում: Այս սարսափները կարելի է բացատրել ոչ թե որպես վաղանցիկ սոցիալական թուլության հատկանիշ, այլ որպես գիտության վերելքի անհրաժեշտ հետևանք, գիտություն, որն ինքնին մարդկային մտքի բարձրագույն նվաճումներից մեկն է: Եթե դա այդպես է, ապա մարդը՝ որպես ազատ ու իր գործողությունների համար պատասխանատու ընդունակ էակ, պետք է ոչնչանա: Եթե նույնիսկ մարդկային ցեղը չբնաջնջվի միջուկային պատերազմի պատճառով, այն կարող է վերածվել դիկտատորների բռնապետության տակ ապրող և մեքենաների ու էլեկտրոնային համակարգիչների միջոցով աշխատացվող անմիտ ու անլեզու էակների ինչ-որ տարատեսակների»²⁶:

Այս ամենը կարող է մի գեղեցիկ օր ստիպել մեզ հարց տալ, արդյո՞ք շատ թանկ չենք վճարում զարգացման (առաջադիմության) համար: Գուցե, այդ առաջադիմությունը բնավ էլ մեր գրպանի բանը չէ, ուստի ինչքան շուտ հրաժարվենք դրանից, այնքան լավ:

Այս մտահոգությունները ծնեցին սցիենտիֆմի (գիտապաշտության) և հակասցիենտիֆմի (հակագիտապաշտության) բանավեճը: Սցիենտիստները, ըստ էության, XVII-XVIII դարերի լուսավորական գաղափարախոսության կրողներն ու շարունակողներն են, ովքեր բնության ուժերի վրա հսկողությունը, հասարակության բանական կազմակերպումն ու զարգացումը, մարդու երջանկությունը տես-

²⁶ **Մ. Բորն**, Իմ կյանքն ու հայացքները, էջ 51-52:

նում են գիտության վերջնական հաղթանակի մեջ: Հակասցիենտիստները, հակառակը, խիստ կասկածով են վերաբերվում գիտության զարգացմանը: Այնուհետև.

1. Սցիենտիստները, գիտությունը համարելով բարձրագույն արժեք, ոգևորությամբ ու լավատեսությամբ են ընդունում նրա նվաճումներն և մարդկության առաջընթացը: Հակասցիենտիստները, հաշվի առնելով գիտության ու տեխնիկայի զարգացմամբ ստեղծված վտանգավոր իրավիճակը, հոռետեսությամբ են համակվում գիտության զարգացման ու մարդկության ապագայի նկատմամբ:

2. Սցիենտիստները գիտությունը համարում են ամենամեծ մշակութային արժեքը, հակասցիենտիստները՝ ոչ:

3. Սցիենտիստների կարծիքով՝ մարդկությունը գիտության շնորհիվ դուրս եկավ միջնադարյան խավարից, դարձավ նոր արժեքների կրողն ու արմատավորողը, իսկ հակասցիենտիստները կարծում են, որ մարդկության երջանկությունը գիտության զարգացման մեջ չէ, ավելին՝ գիտության զարգացումը մարդկությանը հասցրել է կործանման եզրին:

4. Սցիենտիստների կարծիքով՝ գիտությունը կարգավորում է հասարակական կյանքը, դարձնում կազմակերպված ու կառավարելի, հարստացնում է մարդու միտքը, բանականությունը: Հակասցիենտիստների կարծիքով՝ գիտությունն ու տեխնիկան մարդուն դարձնում են հոգեզուրկ, նրանից խլում երջանկության ճշմարիտ ապրումը, ռոմանտիզմը²⁷:

Իսկ որտեղի՞ց սկսվեց այդ ամենը, կամ **ո՞վ է մեղավորը**: Պատասխանները տարբեր են.

Առաջին՝ մեղավորը Եվրոպայում Նոր ժամանակից սկիզբ առած գիտական ռացիոնալության պաշտամունքն է: Փորձելով տալ այն հարցի պատասխանը, թե երբ սկսվեց այս համընդհանուր անկումը՝ **Ս. Բովուարը** գրում է. «Այն օրը, երբ գիտությունը գերադասեցին իմաստությունից, օգտակարը՝ գեղեցկությունից: Պատճառը Վերածնությունն է, ռացիոնալիզմը, կապիտալիզմը, գիտականությունը...»²⁸:

²⁷ Տե՛ս *Лешкевич Т. Г.*, Философия науки: традиции и новации. М. 2001, էջ 44-53:

²⁸ **Ս. Բովուար**, Գեղեցիկ պատկերներ, Եր., 1983, էջ 72:

Նորից, որպես հիմնական մեղավորներից մեկը, հիշատակվում է XVIII դարի Լուսավորականությունը: Ժամանակակից հակալուսավորականության ներկայացուցիչները կարծում են, որ այդ ամենի մեղավորը Լուսավորականության փիլիսոփայությունից ժառանգած և եվրոպական քաղաքակրթության մեջ միս ու արյուն ստացած բանապաշտությունը, գիտապաշտությունը և գիտական ռացիոնալությունն են: Արևմտյան քաղաքակրթությունը կառուցելով բանականության և գիտականության սկզբունքներով՝ մարդկությանը ենթարկեցին սարսափելի փորձության՝ կանգնեցնելով ոչնչացման եզրին, կարծում են հակալուսավորականության գաղափարախոսները: Ըստ **Պ. Բյուքենենի**^{*}՝ մարդկությունն ապրում է հինգ դար առաջ սկսված ողբերգության վերջին արարը, Ռեֆորմացիան ձգտեց նվաճել ողջ աշխարհը, XVIII դարում լուրջ մարտահրավեր դարձավ Լուսավորականությունն իր աթեիստական կողմնորոշվածությամբ, Ֆրանսիան ականջալուր եղավ «թուլթ մրոտողների» կոչերին, բանականությունը հաղթեց հավատին, որը հանգեցրեց կոտորածների, ահաբեկչության ու բռնապետության: Հետո եկավ Դարվինը՝ հայտարարելով, որ մարդն էվոլյուցիայի և ոչ թե աստվածային արարչագործության արդյունք է: Մարքսը կրոնը հայտարարեց «հաշիշ», իսկ Նիցշեն հռչակեց «Աստծո մահը»: Արմատախիլ անելով քրիստոնեությունը՝ մենք գնացինք բանականության ու գիտության հետևից՝ հավատալով, որ կկատարելագործենք երկիրն ու լավ կապրենք, բայց ամեն ինչ հակառակը եղավ: Մինչդեռ, հավատին ոչինչ չի փոխարինի, շարունակում է Բյուքենենը, եթե հավատը մեռնում է, ապա մեռնում են նաև մշակույթն ու քաղաքակրթությունը: Արևմուտքի ժամանակը սպառվել է, նրա վախճանը մոտ է: Արևմուտքի մարդը չի անհետանա, բայց նրա ներկայությունը կդադարեն նկատել: Գուցե, ճիշտ էր Ս. Քոնոլին, երբ կես դար առաջ գրում էր. «Նաև արևմտյան այգիներում են արդեն հանգչում լապտերները»²⁹:

^{*} Պատրիկ Բյուքենենն ԱՄՆ նախագահներ Ռ. Նիքսոնի և Ռ. Ռեյգանի խորհրդականն էր 1992 և 1996 թթ., Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ նախագահի թեկնածու: 2002 թ. հրատարակել է «Արևմուտքի վախճանը» գիրքը:

²⁹ **Պ. Բյուքենեն**, Արևմուտքի վախճանը // Գլոբալացվող աշխարհ, երկրորդ լրացված հրատարակություն, Եր., 2009, էջ 19-22, նույն հեղինակի՝ Արևմուտքը մահանում է ներսից // Գլոբալացվող աշխարհ, էջ 173-174:

Երկրորդ՝ մեղավորը տարբեր քաղաքակրթությունների բախումն է: Այդպես է կարծում Ս. Հանթինգտոնը, որովհետև ըստ նրա.

ա) Քաղաքակրթությունները տարբեր են պատմությամբ, լեզվով, մշակույթով, ավանդույթներով և հատկապես կրոնով: Այդ տարբերություններն ավելի հիմնարար են, քան տարբերությունները քաղաքական, գաղափարախոսական ռեժիմների միջև:

բ) Տարբեր մշակույթների պատկանող ժողովուրդների փոխազդեցությունը հանգեցնում է քաղաքակրթական ինքնագիտակցության աճին, քաղաքակրթությունների տարբերության գիտակցման խորացմանը:

գ) Տնտեսության արդիականացումը և դրան ուղեկցող սոցիալական փոփոխությունները քայքայում են արժեքների տեսական համակարգը և կյանքի դրվածքը, թուլացնում ազգային պետությունը՝ որպես ինքնության արտահայտման ձև: Առաջացած արժեքային վակուումը մեծավ մասամբ լցվում է արմատական, կրոնական շարժումներով: Կրոնի վերածնունդը կամ «Աստծու ռևանշը» XX դարի վերջի բնութագրերն են:

դ) Արևմուտքի չափից ավելի ուժեղացումն առաջացնում է ոչ արևմտյան քաղաքակրթությունների հակազդեցությունը, որոնք ձգտում են աշխարհը կառուցել իրենց պատկերացումներին համապատասխան:

ե) Մշակութային առանձնահատկությունները և տարբերություններն ավելի քիչ են ենթակա փոփոխությունների, քան տնտեսականն ու քաղաքականը, այդ պատճառով դրանք դժվար համատեղելի են:

զ) Արևմտյան ծագում ունեցող այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են անհատապաշտությունը, ազատականությունը, սահմանադրականությունը, մարդու իրավունքները, հավասարությունը, ազատությունը, օրենքի գերակայությունը, ժողովրդավարությունը, ազատ շուկան, եկեղեցու անջատումը պետությունից և այլն, գրեթե արձագանք չեն ստանում մյուս մշակույթներում: Հակառակը, ուժեղանում են այլ քաղաքակրթությունների արմատական ուղղությունները, որոնք ընդգծում են իրենց ինքնատիպ մշակույթների անանց արժեքները: Ապագայի համաշխարհային քաղաքակրթության ա-

ռանցքը հավանաբար կլինի բախումն Արևմուտքի և մնացած աշխարհի միջև³⁰:

է) Մակրոմակարդակում ապագայում ամենավտանգավորը տեղի կունենա Արևմուտքի և այլ քաղաքակրթությունների միջև՝ Արևմուտքի ամբարտավանության, իսլամի անհանդուրժակաՆության և չինական ինքնավստահության պատճառով: Արևմուտքի քաղաքակրթական արժեքներն են.

- լիբերալ դեմոկրատիան (ժողովրդավարությունը),
- իշխանության ապակենտրոնացումը,
- ազատ ձեռներեցությունը,
- մասնավոր սեփականությունը,
- անհատի իրավունքները ու ազատությունները,
- գենդերային հավասարությունը,
- հակվածությունը Արևմուտքում արտադրված ապրանքների և արդյունքների նկատմամբ:

Արևմուտքը միակ քաղաքակրթությունն է, որը հսկայական, իսկ ժամանակ առ ժամանակ ավերիչ ազդեցություն է ունեցել մյուս քաղաքակրթությունների վրա: Արևմուտքը ձգտում է.

- պահպանել ռազմական գերազանցությունը,
- տարածել արևմտյան արժեքներն ու ինստիտուտները, հաստատել ժողովրդավարության արևմտյան մոդելը,
- պահպանել արևմտյան երկրների մշակութային, հասարակական և էթնիկական ամբողջականությունը:

Հակադրվելով այս տեսակետին՝ արևելյան քաղաքակրթության կրողները կարծում են, որ գլոբալացման և տնտեսական զարգացման միջոցով հնարավոր է կուշտ կյանք ապահովել ժողովրդին և պահպանել սեփական մշակույթը: Արևմուտքին հակադրվելու համար կարելի է ստեղծել Օսմանյան տիպի լիբերալ կայսրություն՝ երկու տարատեսակով.

- լիբերալ կոսմոպոլիտական,
- լիբերալ հայրենասիրական:

³⁰ Տե՛ս *Хантингтон С.*, Столкновение цивилизаций. М., 1993, էջ 24, 80, 133, 281, 284, 500, ինչպես նաև Сравнительное изучение цивилизаций // Хрестоматия, составитель *Б. С. Ерасов*. М. 1998, էջ 515-517:

Միկրոմակարդակում բախումների երկու ձև է առաջարկում **Ե. Հայդինգան**.

ա) տեղային, երբ բեկումնային գծերում բախվում են հարևան պետությունները, որոնք պատկանում են տարբեր քաղաքակրթությունների,

բ) բախումը իսլամի և Արևմուտքի միջև, որտեղ պայքարը իշխանության և մշակույթի համար է:

Արևմուտքի խնդիրը ոչ թե իսլամական արմատականությունն է, այլ իսլամը, որն այլ քաղաքակրթություն է: Իսլամի համար էլ Արևմուտքն է այլ քաղաքակրթություն:

Ամփոփելով՝ նշենք հետևյալը. կարելի՞ է արդյոք դուրս գալ քաղաքակրթական ճգնաժամից՝ չփոխելով տեխնածին մշակույթի հիմնարար արժեքները: Մասնագետների մի մասը համոզված է, որ պետք է փոխել, պետք է անցնել քաղաքակրթության զարգացման նոր տիպի: Քաղաքակրթության ցանկացած նոր տիպ պահանջում է նոր արժեքների, աշխարհայացքային նոր կողմնորոշիչների մշակում: Պետք է փոխել բնության նկատմամբ նախկին՝ իշխելու և տիրելու վերաբերմունքը, մարդկային գործունեության, մարդու նոր ըմբռնում մշակել: Բացի դրանից, փոփոխությունները պետք է իրականացնել՝ ոչ թե հրաժարվելով գիտությունից և տեխնիկայից, այլ դրանց զարգացումը դնելով հումանիստական հիմքերի վրա, որի մասին կխոսենք վերջին բաժնում:

Այժմ, առիթից օգտվելով, փորձենք տալ հետևյալ հարցերի պատասխանը.

1. Հայ ժողովուրդը քաղաքակրթորթ ազգ է, թե՞ ոչ:
2. Քաղաքակրթության ո՞ր տիպն ենք ներկայացնում:
3. Իր բնույթով ինչպիսի՞ն է հայկական քաղաքակրթությունը:

Հայ ժողովուրդը բավարարել է քաղաքակրթությանն առաջադրվող բոլոր հիմնական պահանջները և հանդես եկել որպես քաղաքակրթ երկիր, իսկ որոշ օտար և հայազգի հետազոտողների կարծիքով՝ որպես քաղաքակրթության օրրան դարեր շարունակ ոչ միայն գտնվել է ժամանակաշրջանի առաջատար մշակույթների մակարդակին, այլև որոշ բաղադրիչներով նախորդել դրանց:

Մինչև Հելլենիզմը Հայաստանում ձևավորվել և իշխել է քաղաքակրթության այն տիպը, որն անվանում ենք «հնդիրանական»:

Հելլենիզմի ժամանակաշրջանում ներկայացրել ենք հնդիրանական քաղաքակրթության հելլենիստական տիպը՝ որոշ էթնիկ առանձնահատկություններով:

Քաղաքական իրադարձությունների, քրիստոնեության պաշտոնականացման, միաբնակ դավանության ընդունմամբ և հետագա քաղաքականության արդյունքում Հայաստանը ընտրել է քաղաքակրթության արևմտյան տիպը և, Լեոյի բնութագրմամբ, դարձել «եվրոպական քաղաքակրթության առաջավոր պահակ Ասիայի խորքերում»³¹:

Արևմտյան քաղաքակրթության որդեգրումն ունեցավ իր դրական նշանակությունը, որովհետև.

1. Մեզ փրկեց «ասիական լճացած ու յետադեմ վիճակէն»³²:
2. Հնարավորություն տվեց հաղորդակցվել եվրոպական մշակույթին:
3. Հայկական մշակույթը ծավալվեց արևմտյան քաղաքակրթությանը հատուկ մշակութային բոլոր ձևերի մեջ և այլն:

Բայց հայ ժողովուրդը «աղքատ տնվորի» կարգավիճակով չգնաց Եվրոպա: Հայաստանը պահպանեց Անտիկ մշակույթը և իրականացրեց նրա սինթեզը քրիստոնեության հետ, որը Եվրոպայի համար բնորոշ դարձավ դարեր հետո: Ն.Մառի կարծիքով՝ հայ ազգը հունարենից իր թարգմանություններով անփոխարինելի դեր կատարեց եվրոպական քաղաքակրթության համար:

Բայց, դրանով հանդերձ, մշակութային, քաղաքական և քաղաքակրթական առումներով եվրոպական կողմնորոշումն ունեցավ նաև բացասական հետևանքներ: Եվրոպայի հետ կապված հայ ժողովրդի ազգային-քաղաքական որևէ ակնկալիք չիրականացավ, փոխարենը՝ հարևան ժողովուրդների կողմից Հայաստանը և Կիլիկյան Հայաստանը դիտվեցին որպես օտար շահերի պաշտպաններ, ենթարկվեցին հալածանքների և հարձակումների: Հիշենք, թե ինչ աղետալի հետևանք ունեցան Կիլիկիայի հայոց թագավորների օգնության դիմումները եվրոպական երկրներին:

Հրաժարվելով հնդիրանական քաղաքակրթությունից և կողմնորոշվելով եվրոպականին՝ յուրայինների միջավայրում դարձանք

³¹ Լեո, Անցյալից, Եր., 2009, էջ 136:

³² Ե. Քասունի, Հայ մշակույթի պատմություն, Պեյրուֆ, 1954, էջ 312-313:

օտար, օտարների միջավայրում չդարձանք յուրային: Չժառանգեցինք և չգարգացրեցինք մեր տոհմիկ մշակույթը և չստեղծեցինք մեր պատմությանը վայել, միայն մեզ բնորոշ քաղաքակրթություն:

Մեր բարձրաշխարհիկ մշակույթով եղել և շարունակում ենք մնալ եվրոպական (արևմտյան): Բայց, այնուամենայնիվ, ամբողջությամբ չկտրվեցինք Արևելքից, մեր կենցաղային, ժողովրդական, ազգագրական առանձին շերտերի մշակութային տարրերով մնացինք արևելցի և դարձանք կամրջող օղակ Արևելքի և Արևմուտքի միջև: Այդ պատճառով էլ շատ մտածողների կարծիքով՝ հայ ժողովրդի կոչումը Արևելքի համար Արևմուտքի միջնորդ լինելն է: Հետևաբար կարող ենք փաստել, որ մեր ստեղծածը ոչ թե ինքնուրույն, այլ համադրական քաղաքակրթություն է³³, որն իր ցայտուն արտահայտությունն է ստանում նաև մեր պետական այրերի, իշխանությունների բազմավեկտոր գործունեության ու քաղաքականության մեջ: Որպես արևմտյան քաղաքակրթության, մշակույթի և արժեհամակարգի կրող՝ ձգտում ենք ինտեգրվել (որոշ հարցերում արդեն ինտեգրվել ենք) եվրոպական կառույցներին, շարունակում ենք մեզ շրջապատող մահմեդական աշխարհում մնալ եվրոպական ազատական արժեքների կրող, բայց միաժամանակ ձգտում ենք պահպանել, խորացնել մեր հարաբերությունները բարեկամ Վրաստանի, հարևան իսլամական Իրանի հետ, խուսափել Թուրքիայի հետ առճակատման խորացումից:

Ավելացնենք նաև, որ բոլոր այն գլոբալ հիմնախնդիրները, որոնք բնորոշ են քաղաքակիրթ եվրոպային, որոշակի ուժգնությամբ հատուկ են նաև Հայաստանին:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է մշակույթը:
2. Թվարկել ժամանակակից զանգվածային մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում:
3. Ջարգացում և քաղաքակրթություն: Թվարկել փոխհարաբերության հնարավոր ոլորտները:
4. Ի՞նչ է քաղաքակրթությունը:
5. Ի՞նչ դեր են կատարում գիտությունն ու տեխնիկական ժամանակակից քաղաքակրթության մեջ:
6. Որո՞նք են ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները:
7. Ո՞րն է հայ ժողովրդի քաղաքակրթական ընտրանքը:

³³ Այս հարցերի մանրամասն վերլուծությունը տե՛ս **Ա.Սարգսյան**, Ինքնուրո՞ւյն, թ՞ե համադրական քաղաքակրթություն // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, թիվ 2, էջ 164-181:

**ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆ:
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ա) Պատերազմը և ահաբեկչությունը որպես գլոբալ
հիմնախնդիրներ**

Ժամանակակից պատերազմների գլոբալ արհավիրքների մասին նախորդ գլխում մասամբ նշվեց, այժմ համառոտ անդրադառնանք այդ երևույթի քաղաքական և ռազմական կողմերին:

Կ. Կլաուզվիցի կարծիքով՝ պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով: Պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը երբեմն դիտվում է որպես «արկի և զրահի» դիալեկտիկա, այսինքն՝ հարձակողական զենքից (արկից) պաշտպանվելու համար հնարել են զրահը, և հակառակը՝ պաշտպանական լավագույն միջոցների (զրահի) հայտնագործումը խթանել է հարձակման լավագույն միջոցների (արկի) ստեղծումը:

Պատերազմները տարբեր խնդիրներ են լուծում՝ տնտեսական, քաղաքական, աշխարհաքաղաքական: Այդ նպատակով գիտատեխնիկական մտքի լավագույն նվաճումները ուղղվում են ռազմական ոլորտ, որն իր զարգացման տեմպերով հաճախ շատ առաջ է ընկնում կյանքի այլ ոլորտներից: Սպառազինությունների մրցավազքը, զենքի կատարելագործման ձգտումը ստեղծեց ատոմային ռումբը, որը փորձարկվեց և կիրառվեց: Այսօր ստեղծվել են այնպիսի զենքեր, որոնք ոչ մեկին առավելություն չեն տալիս, այլ փոխադարձ օգտագործման դեպքում կարող են ոչնչացնել ողջ մարդկությունը: Աշխարհում ստեղծվել է «երաշխավորված փոխադարձ ոչնչացման» իրավիճակ, որը զսպող գործոն է դարձել հզոր տերությունների համար:

1945–1960-ական թթ. ԱՄՆ-ը միջուկային զենքի զինվածությամբ գերազանցություն ուներ ԽՍՀՄ-ի նկատմամբ: 1970–1980-ական թթ. ԽՍՀՄ-ը կարողացավ հասնել ԱՄՆ-ին, և դրանից հետո աշխարհում ռազմավարական հավասարակշռությունը պահպանվում է: 1990-ական թվականներից միջուկային լարվածությունն աստիճանաբար թուլանում է:

Այդ ընթացքում խոշոր տերությունները փորձեցին բանակցել միջուկային զենքի տարածումը արգելելու, սպառազինությունների մրցավազքը զսպելու, հնարավորության դեպքում դադարեցնելու համար: 1968 թ. հուլիսի 1-ին Մոսկվայում ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան կնքեցին միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիր:

Աշխարհում ձևավորվեց միջուկային զենք չտարածելու պայմանակարգ (ռեժիմ), որը մեծ դժվարություններով պահպանվում է առ այսօր:

2003 թ. տվյալներով՝ միջուկային զենքի չտարածման պայմանագրին միացել է 189 երկիր:

Ռազմավարական բազմաթիվ պայմանագրեր են կնքվել ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև, որոնք նախատեսում են միասնական պատասխանատվություն, միջազգային անվտանգության հարցերում նախապատվություն քաղաքական միջոցներին, այլ ոչ ռազմատեխնիկական:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԱՄՆ-ը որոշ պայմանագրեր և պայմանավորվածություններ չխախտեց: ԱՄՆ-ի համար թուլացած Ռուսաստանը դադարեց ռազմավարական գործընկեր լինելուց, ԱՄՆ-ը դարձավ աշխարհի ամենահզոր տերությունը: Պուտինյան Ռուսաստանը փորձում է հաղթահարել նկատված դժվարությունները և նորից դառնալ ԱՄՆ-ին հավասարազոր, ռազմականապես գուցե ավելի հզոր տերություն:

Աշխարհը, կարծես, սահուն տեղափոխվում է սառը պատերազմի ժամանակաշրջան: ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի երկրները, տնտեսական պատժամիջոցներով, ՆԱՏՕ-ի զորքերը Ռուսաստանի սահմաններին մոտեցնելով, աշխարհի տարբեր վայրերում Ռուսաստանի շահերի շրջանակներում բախման նոր կենտրոններ ստեղծելով, փորձում են Ռուսաստանին ստիպել վարել իրենց հա-

ճո քաղաքականություն: Ի պատասխան՝ Ռուսաստանը մեծացնում և արդիականացնում է իր զինատեսակները: 2018 թ. մարտի 1-ի ելույթում Վ. Պուտինը խոսեց (ընթացքում ցուցադրվեց) գերժամանակակից զենքի (սպառազինության) վեց համալիրի, այդ թվում՝ միջուկային համակարգերի և նոր բալիստիկ հրթիռների արտադրության մասին:

Վերջին մի քանի տարում ավերիչ բնույթի զենքերի, բալիստիկ հրթիռների փորձարկումներով, ուժի ցուցադրման քաղաքականությամբ, ԱՄՆ-ին ուղղված սպառնալիքներով միջազգային լարվածության օջախ է դարձել Հյուսիսային Կորեան:

Այնուամենայնիվ, բարեբախտաբար, միջուկային զենք չի կիրառվում (թեև գերտերությունների ղեկավարների վերջին ելույթներում նման զենքի օգտագործման հնարավորության մասին խոսվում է), բայց պատերազմները չեն դադարում, հակառակը՝ գնալով ավելի ավերիչ են դառնում, նույնիսկ սովորական սպառազինության պայմաններում:

Մասնագետները նշում են 6-րդ սերնդի պատերազմների մասին, որտեղ կարող են գործածվել բարձր ճշգրտության զենքեր, որոնց խնդիրը ոչ միայն հակառակորդի կենդանի ուժի կամ օբյեկտների ոչնչացումն է, այլև կապն ու կառավարման համակարգը շարքից հանելը: Ռազմական տեխնոլոգիաների զարգացումը տանում է նրան, որ այլևս անհրաժեշտ չեն լինելու զորք, տանկ, ինքնաթիռ, հետևակ, բոլորին կփոխարինեն համակարգիչները, որոնց հսկողությամբ որոշ տեսակի հրթիռներ մեկ մայրցամաքից մեկ այլ մայրցամաքի նպատակակետին կհարվածեն 10 մետրի ճշգրտությամբ, ինչպես օրինակ՝ ռուսական հրթիռները Կասպից ծովից հրթիռակոծեցին Իսլամական պետության օբյեկտները Սիրիայում և Իրաքում (2016 թ): Ակուստիկ զենքը կարող է անգործունակ դարձնել հակառակորդի սպասարկող անձնակազմը, էլեկտրամագնիսականը՝ շարքից հանել թշնամու էլեկտրոնիկան, ռադիոակտիվ զենքը, սպանելով մարդկանց, անվթար է թողնում օբյեկտները, երկրաբանական զենքը ի վիճակի է իրականացնել երաշտ, ջրհեղեղ, փոթորիկ, երկրաշարժ (մինչև օրս էլ հայ ժողովրդի մեջ առօրյա մակարդակում չի փարատվում այն կասկածը, որ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ուներ արհեստական ծագում), հո-

գերանականը փոխում է մարդու հոգեվիճակն ու վարքագիծը, իսկ տիեզերական զենքը երկրին հարվածներ կհասցնի տիեզերքից:

XX դարի 2-րդ կեսից և XXI-րդ դարի սկզբներին մարդկությունն ականատես եղավ պատերազմի նոր տեսակի՝ «պատերազմ հանուն ժողովրդավարության», որն իրականացվում է ԱՄՆ-ի կողմից, այլ երկրներ ներխուժելու միջոցով: Այդ երևույթն անվանում են «ռազմական ժողովրդավարական ներխուժում», ինչպես ԱՄՆ-ը իրականացրեց Իրաքում: Այդ նույն «ժողովրդավարացման» անվան տակ միջամտում են տարբեր երկրների ներքին գործերին, այդ երկրներում հրահրում ներքին խժժություններ, որոնց հետևանքով իշխանություններ են փոխվում, կառավարման նոր համակարգ է ներդրվում: Եվրոպայում տրոհվեցին Չեխոսլովակիան, Հարավսլավիան, և դրանց տարածքում ստեղծվեցին մի քանի երկրներ և պետություններ³⁴:

Այսպիսի ալիք 2010-ական թթ. անցավ արաբական աշխարհում, որն անվանեցին «Արաբական գարուն», և որից հետո Եգիպտոսում, Լիբիայում, Իրաքում փոխվեցին պետությունների ղեկավարները, ստեղծվեցին «ժողովրդավարական պետություններ»: Իրականում այդ երկրներում ո՛չ ժողովրդավարություն հաստատվեց, ո՛չ կայունություն, փոխարենը՝ օգտագործվեց նաև կրոնական գործոնը, և Արևելքը ապաքրիստոնեացվեց: Արդեն մի քանի տարի է՝ նույնը փորձում են կիրառել Սիրիայում, և եթե չլիներ Ռուսաստանի և Իրանի միջամտությունը, ապա Իրաքի բախտին կարժանանար նաև Սիրիան:

Մեր հանրապետությունն Ադրբեջանի հետ գտնվում է պատերազմական իրավիճակում, հարաբերությունները բարեկամական չեն Թուրքիայի հետ: 1991–1994 թթ. մղած պատերազմի ընթացքում մենք կարողացանք ազատագրել Արցախը և ձևավորել ու պահպանել մեր հանրապետության անկախությունը: Պատերազմի ընթացքում հազարավոր հայեր զոհվեցին, որոնց զգալի մասը

³⁴Պատերազմի և խաղաղության, միջազգային հարաբերություններում ուժի գործոնի դերի մասին տե՛ս նաև **L. Հովհաննիսյան**, Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները (թեմատիկ դասախոսություններ), Եր., 2016, էջ 53-86, **Шинковский М. Ю.**, Глобальные проблемы современности, Владивосток, 2005, էջ 55-87:

թաղված է Երևանի «Եռաբլուր» զինվորական պանթեոնում, հանրապետության յուրաքանչյուր քաղաք ու գյուղ իր Եռաբլուրն ունի: Թեև 1994 թ. կնքվեց զինադադար, բայց ռազմական գործողությունները, սահրանքները շարունակվում են, որոնց ընթացքում զոհվում են մեր երիտասարդները: 2016 թ. ապրիլի 1-4-ը տեղի ունեցած քառօրյա պատերազմում ունեցանք 100-ից ավելի զոհ: Այդ ամենը ստիպում է մեզ մեծ ուշադրություն դարձնել պաշտպանունակության բարձրացմանը, սպառազինության արդիականացմանը, որը պետության աղքատիկ բյուջեից հսկայական գումարներ է խլում, բայց խաղաղության գինը պատերազմին պատրաստ լինելն է:

1972 թ. Մյունխենի օլիմպիական խաղերում «Սև սեպտեմբեր» գաղտնի կազմակերպությունը գերի վերցրեց Իսրայելի օլիմպիական թիմին, որտեղից էլ շրջանառության մեջ դրվեց ահաբեկչություն (տեռորիզմ) բառերը: Չնայած շուրջ կեսդարյա պատմությանը՝ հասկացությունն այսօր էլ միանշանակ սահմանում չունի:

Հաճախակի է հնչում հետևյալ ձևակերպումը՝ **ահաբեկչություն է քաղաքացիական հասարակության նկատմամբ ցանկացած արարք (բռնարարք), որի նպատակը խուճապի, վախի և հասարակության անպաշտպանվածության զգացողություն առաջացնելն է, հասարակական ինստիտուտների բնականոն գործունեությունը խաթարելը:**

Մեկ այլ սահմանմամբ՝ **ահաբեկչությունը նախօրոք պլանավորված, որոշակի հաշվարկների հիման վրա բռնության գործադրում է կամ բռնության սպառնալիք, որի նպատակն է վախ ներշնչելու միջոցով իշխանություններին ստիպել իրականացնել բռնություն գործադրողի նպատակը:** Իսկ նպատակները բազմազան են՝ սոցիալական, ազգային, քաղաքական, քրեական, միջազգային, ներքին, կոլեկտիվ, անհատական, պետական, կրոնական, գաղափարախոսական և այլն: Ահաբեկչությունը բռնարարքների միջոցով հասարակության մեջ վախի ու սարսափի մթնոլորտ արմատավորելու քաղաքականություն է:

Ահաբեկչության բնութագրման վերաբերյալ դիտվում է երկու իրարամերժ տեսակետ:

1. Հիմք ընդունելով այն, որ ահաբեկիչները կատարում են սպանություններ, հասարակական, քաղաքական, ռազմա-

կան օբյեկտներ գրավում, ինքնաթիռներ առևանգում, որոնք միջազգային և ներքին օրենքներով համարվում են հանցագործություն, առաջարկվում է ահաբեկչությունը համարել սովորական հանցագործություն:

2. Հաշվի առնելով ահաբեկիչների զինվածությունը, զենքով հագեցվածությունը, զինված հարձակումները՝ առաջարկվում է ահաբեկչությունը դիտել ռազմական գործողություն, պատերազմի տարատեսակ:

Քննարկենք այդ տեսակետները.

ա. Իհարկե, ահաբեկչական արարքների ժամանակ կատարվում են նաև քրեական հանցագործություններ: Բայց, ի տարբերություն ահաբեկչության, քրեական հանցագործությունը գործնականում միշտ եսակենտրոն է, հանցագործը կամ հանցագործները անձնական կամ պատվիրովի հարցեր են լուծում:

բ. Ահաբեկիչները չեն թաքցնում իրենց հանցագործությունը, տալիս են հրապարակային բնույթ, հնչեղություն, իրազեկ են դարձնում բոլոր միջոցներով, իսկ հանցագործները՝ ոչ:

գ. Ահաբեկչության նպատակը քաղաքական է, ազգային, հանցագործության նպատակը՝ տնտեսական, կենցաղային, անձնական:

դ. Ահաբեկչությունը կանխամտածված, նախօրոք պլանավորված և ոչ թե ինքնաբուխ (իմպուլսիվ) արարք է, գործողություն:

ե. Ահաբեկչությունը ոչ թե քրեական, այլ քաղաքական բռնություն է, որի նպատակը համակարգը կամ դրա կարևոր տարրերը փոխելն է:

զ. Ահաբեկչությունը նպատակաուղղված է քաղաքացիներին, նրանց վրա հոգեբանական ճնշում գործադրելուն:

է. Ահաբեկչությունն իրականացվում է ոչ թե բանակի, այլ անհատների կամ խմբավորումների կողմից:

ը. Ռազմական գործողության սուբյեկտները բանակներն են և ոչ թե քաղաքացիական հասարակության հաստատությունները:

Ահաբեկչության մեջ առկա է հակամարտության երեք կողմ՝

**ա) իրականացնողը,
բ) գոհը,**

գ) ազդեցության օբյեկտը (ում ցանկանում են վախեցնել և ստիպել բավարարել իրենց պահանջները):

Ըստ ահաբեկչություն իրականացնողների սոցիալական, քաղաքական, ազգային, կրոնական պատկանելության՝ ահաբեկչությունը կարող է հանդես գալ որպես՝

ա) սոցիալական շարժում, որը զանգվածների միջավայրում համընդհանուր պաշտպանություն չունի, ուստի նպատակը հասարակական լայն արձագանք առաջացնելն է,

բ) ազգային ազատագրական շարժում, որն իրականացվում է ազգային փոքրամասնությունների կամ շահագործվող ժողովուրդների կողմից, որի նպատակը ազատություն և անկախություն ստանալն է,

գ) կրոնական կամ ծայրահեղ գաղափարախոսական շարժում, որի նպատակը ստիպելն է, որ իրենց գործերին չմիջամտեն կամ մյուսների վրա իրենց ազդեցությունը մեծացնելն է,

դ) պետական քաղաքականություն, որը վախ ու սարսափ տարածելու և ամրագրելու միջոցով հնազանդության մեջ է պահում իր հպատակներին:

Ահաբեկչության օբյեկտներ են՝

- անհատները, խմբերը, որոնք որոշակի մասնագիտություն, պաշտոն ունեն,
- դասակարգերը, հասարակական շերտերը, որոնք կապված են սեփականության հետ,
- ժողովուրդը,
- ազգերը (օրինակ՝ ֆաշիստների կողմից հրեաների բնաջնջումը Եվրոպայում),
- հասարակական համակարգերը, դրանց մշակութային, նյութական արժեքները, էներգառեսուրսները:

Ահաբեկչության սուբյեկտներ են՝

- պետություններն իրենց հատուկ ծառայություններով,
- առանձին անհատներն ու խմբերը: Ակտիվ սուբյեկտները ահաբեկչությունն իրականացնողներն են, պասիվը՝ չեզոքություն պահպանողները,

▪ այն կազմակերպությունները, որոնց մի մասը միջազգայնորեն հայտնի են որպես ահաբեկչական:
Ժամանակակից ահաբեկչությունն ունի մի շարք առանձնահատկություններ, այն.

- ավելի ընդգրկուն է և լայնամասշտաբ,
- ավելի լավ է կազմակերպված, մասնակիցներն ավելի լավ են զինված,
- ավելի վտանգավոր է, ավելի դաժան ու արյունալի:

Յուրաքանչյուր տարի մոտ 10.000 բռնարարք է կատարվում:

XX դարի 60-ական թվականներից ահաբեկչությունը դարձավ սառը պատերազմի գործիք:

Վերջին տարիների ահաբեկչական ամենամեծ կազմակերպությունը Համաշխարհային իսլամական խալիֆայությունն է, որը 2014 թ. ներխուժեց Սիրիա և Իրաք, գրավել տարածքներում ստեղծեց Իրաքի և Լևանտի իսլամական պետություն, որին զոհ դարձան հարյուրհազարավոր անմեղ մարդիկ: Այդ կազմակերպությունն ահաբեկչություններ է իրականացնում եվրոպական երկրներում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում՝ խլելով հարյուրավոր մարդկանց կյանք: Ստեղծված միասնական սուննիական (իսլամի տարատեսակ) պետությունը ձգտում է զբաղեցնել Իրաքի և Լևանտի (Սիրիա, Լիբանան, Իսրայել, Պաղեստին, Հորդանան, Թուրքիա, Կիպրոս, Եգիպտոս) տարածքները, իսկ հաջողության դեպքում՝ ողջ աշխարհը³⁵:

Միջազգային ուժերի հարվածներից Իսլամական պետությունը, չնայած տարածքային և մարդկային լուրջ կորուստներին, շարունակում է գոյատևել, հարվածել սիրիական բնակավայրերին, ահաբեկչական գործողություններ իրականացնել աշխարհի տարբեր վայրերում:

Միջազգային ահաբեկչությունը կարող է քաղաքակրթական պատերազմների պատճառ դառնալ:

³⁵Ահաբեկչության մասին մանրամասն տե՛ս *Ռ. Եգորյան, Ս. Քոչարյան*, Գլոբալ ահաբեկչություն, Եր., 2003, *Шинковский М. Ю.*, Глобальные проблемы современности, էջ 87-126:

բ) Հայկական ահաբեկչությունը որպես ազգային հարցի լուծման միջոց

Այժմ համառոտ անդրադառնանք հայկական ահաբեկչության առանձնահատկություններին:

Կարելի է առանձնացնել հայկական ահաբեկչության 3 փուլ.

1. Որպես XIX դարի 90-ական թվականներին սկիզբ առած և մինչև XX դարի 20-ական թվականները շարունակված հայ ազատագրական պայքարի բաղադրիչ: Այդ ընթացքում ահաբեկվել են հայ ժողովրդի նկատմամբ առանձնակի դաժանությամբ հանդես եկած օտար պետության գործիչները կամ հարձակումներ են կատարվել օտար պետությունների կառույցների վրա՝ ազգային հարցի լուծման ընթացք տալու համար: Դրանցից են 1896 թ. օգոստոսի 14-ին Կ.Պոլսում Օսմանյան դրամատան (Օտոման բանկի) գրավումը, 1903 թ. հոկտեմբերի 14-ին Կովկասի փոխարքա Գոլիցինի նկատմամբ մահափորձը, 1905 թ. հուլիսի 21-ին սուլթանի ահաբեկումը և այլն: Բռնարարքներ են կատարվել նաև հայ մատնիչների նկատմամբ³⁶:

2. «Նեմեսիս» ծրագրի իրականացումն է, որի ձևավորման դրդապատճառները հետևյալն էին: Մուդրոսի զինադադարից հետո (կնքվել է 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անգլիայի և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև, Մուդրոս նավահանգստում)՝ 1919 թ., գումարվեց Թուրքիայի զինվորական դատարանի նիստը, որտեղ մահվան դատապարտվեցին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչները, բայց ոչ մեկը չպատժվեց, որովհետև նրանք արդեն հեռացել էին Թուրքիայից:

Գործին լծվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, որը 1919 թ. Երևանում հրավիրված IX ընդհանուր ժողովում որոշում ընդունեց իրականացնել Թուրքիայի դատարանի կայացրած դատավճիռը: Նշվեց ցեղասպանության հանցագործների 650 անուն, որից առանձնացվեցին 41 գլխավոր հանցագործներ, ինչ-

պես նաև 300-ի հասնող հայ դավաճաններ, որոնք նույնպես պետք է ահաբեկվեին: Գործողությունն անվանվեց «Նեմեսիս» (վրիժառության հույն աստվածուհու անվամբ), ստեղծվեց պատասխանատու մարմին (ղեկավարը ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ Արմեն Գարոն էր) և հատուկ ֆոնդ: Գործողության օպերատիվ ղեկավարումը և նյութական ապահովումը իրագործում էին Շահան Նաթալին և Գրիգոր Մերջանֆը:

1920 թ. հունիսի 19-ին Թիֆլիսում Արամ Երկանյանը գնդակահարեց Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆաթալի Խան Խոյսկուն, ահաբեկվեց նաև Շուշիի ու Բաքվի հայերի ջարդերի հիմնական պատասխանատուներից Հասան Բեկ Ազանը:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեխլերյանը գնդակահարեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար և մեծ վեզիր Թալեաթ փաշային:

1921 թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսում Միսակ Թոռլաքյանը սպանեց Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբութ Ջիվանշիր խանին:

1921 թ. դեկտեմբերի 5-ին Հոռոմու Արշավիր Շիրակյանը սպանեց Օսմանյան կայսրության նախկին մեծ վեզիր Սաիդ Հալիմին:

1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արշավիր Շիրակյանը և Արամ Երկանյանը սպանեցին Տրապիզոն նահանգի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիրին: Նույն զույգը 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում սպանեց Բեհաեդդին Շաքիրին:

1922 թ. հուլիսի 22-ին Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը սպանեցին Թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին նախարար Ջեմալին: Այդ գործողությանը մասնակցել են նաև Ստեփան Ծաղիկյանը և Զարեհ Մելիք-Շահնազարյանը: Սողոմոն Թեխլերյանը և Արշավիր Շիրակյանը գնդակահարեցին նաև երկու հայ դավաճանի:

1922 թ. Հակոբ Մելքումովը Տաջիկստանում սպանեց Էնվեր Փաշային: Նազիմին մահապատժի ենթարկեցին թուրքերը՝ Քեմալ Աթաթուրքի դեմ մահափորձ կատարելու համար:

Խորհրդային իշխանությունները «Նեմեսիսի» ծրագրով չզբաղվեցին: Իսկ ՀՅԴ-ն 1924 թ. վերջերին-1925 թ. հունվարին հրավիրած X համագումարում որոշեց փոխել մարտավարությունը և մեղ-

³⁶ Տե՛ս Հ. Գրիգորյան, Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ) // Հայոց ցեղասպանություն, Եր., 2001, էջ 77-110, **Սյր. Պողոսյան**, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներին հավերժություն, Եր., 2005, էջ 5:

մել հարաբերությունները Թուրքիայի հետ, դադարեցնել ահաբեկչությունը: Շահան Նաթալին չհամաձայնեց:

Իսկ ի՞նչ քայլեր ձեռնարկեցին հաղթող տերությունները Հայկական հարցը լուծելու համար: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի համաձայն՝ ստեղծվելու էր Միացյալ Անկախ Հայաստան, որի մեջ մտնելու էին Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգների մի մասը՝ 90 հազար կմ², և Արևելյան Հայաստանը ընդհանուր՝ 160 հազար կմ² տարածքով: Բայց քեմալականները չընդունեցին Օսմանյան կայսրության կողմից կնքված պայմանագիրը, և Սևրում ընդունված որոշումները չիրականացվեցին: Սկսվեց պատերազմը Թուրքիայի դեմ, որում հայերը պարտվեցին: Հայաստանի առաջին հանրապետությանը փոխարինեց Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը՝ 29 հազար կմ² տարածքով:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում հրավիրվեց միջազգային դիվանագիտական կոնֆերանս: Հույս կար, որ Արևմտյան Հայաստանում կամ Կիլիկիայում կստեղծվեր հայկական օջախ: 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիս ամիսներին տեղի ունեցավ Լոզանի միջազգային կոնֆերանսը, որի արդյունքում 1923 թ. հուլիսի 24-ին Թուրքիայի հետ կնքվեց վերջնական պայմանագիր: Թուրքական պատվիրակությունը մերժեց «հայկական օջախի» գաղափարը: 1924 թ. գարնանը թուրքական մեջլիսն ընդունեց «Լքյալ գույքի» մասին օրենքը, որով հայերի թողած գույքը, շինությունները հանձնվեցին «տուժած» թուրքերին: Թուրքերը հայտարարեցին, որ Լոզանը հայերին երկու իրավունք տվեց՝ աղոթել աստծուն և թաղել իրենց մեռելներին: Դրանով էլ Արևմուտքը իր համար փակեց Հայկական հարցը, և 50 տարի չխոսվեց այդ մասին:

Իրավական ճանապարհով, միջազգային իրավունքով սահմանված նորմերով հայրենիք վերադառնալու և ավերված օջախներին տեր կանգնելու հայերի պայքարը հաջողություն չունեցավ: Բայց դրանով չավարտվեց հեղինակներից մեկի բնութագրմամբ՝ **հողը կորցրած ժողովրդի պայքարը ժողովուրդը կորցրած հողի համար:**

Ստ. Պողոսյանի վկայությամբ՝ հայկական ցեղասպանության վերաբերյալ մի խումբ մասնագետների կողմից եվրոպական խորհրդարան ներկայացված տեղեկագրում ասվում է. «Մերժելով 1915 թ. հայկական ցեղասպանությունը, թուրքական կառավարությունը հայերին գրկում է իրենց պատմությունից, և այս վիճակն էլ առիթ է տալիս բռնության դեպքերի և ահաբեկչության»³⁷:

Հայ ժողովուրդը իր դժբախտության և հույսերի հետ մեն-մենակ մնաց մինչև 1973 թ. հունվարի 27-ը: Այդ օրը 78-ամյա Գուրգեն Յանիկյանը Կալիֆոռնիայի նահանգի Սանտա Բարբարա քաղաքի Բալթիմոր հյուրանոցում գնդակահարեց Լոս Անջելեսում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Մեհմեդ Բայդարին ու փոխհյուպատոս Բահադր Դեմիրին, որով արևմտահայության ազատագրական պայքարի նոր փուլի սկիզբը դրվեց: 1974 թ. վերջերին, ըստ այլ հեղինակների՝ 1975 թ., մի խումբ լիբանանահայեր որոշեցին հիմնել գաղտնի կազմակերպություն, որը զինված գործողությունների միջոցով Հայկական հարցը մտցնելու էր միջազգային իրավական, քաղաքական հարթություն: Կազմակերպությունը սկզբում անվանվեց «Գերի Գուրգեն Յանիկյանի խմբակ», իսկ 1975 թ. փետրվարի 20-ից՝ Հայ գաղտնի բանակ, ավելի ուշ՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ: Այսպես հիմնվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը, համառոտ՝ ՀԱՀԲ (ԱՍԱԼԱ-Armenian Secret Army for the Liberation of Armenia-ASALA): Գաղտնի բանակը իր առաջին գործողությունը կատարեց 1975 թ. հունվարի 20-ին: Թիրախը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բեյրութի գրասենյակն էր, որը կազմակերպում էր Միջին Արևելքի հայերի արտագաղթը Ամերիկա: ԱՍԱԼԱ-ն պայքարում էր բոլոր նրանց դեմ, ովքեր հայ ժողովրդին հեռացնում էին Արարատից:

ՀԱՀԲ առաջին ղեկավարը իրանահայ Հարություն Թագուշյանն էր (առավել հայտնի էր «Հակոբ Հակոբյան» ծածկանունով: Պաղեստինյան ազատագրական շարժման հետ կապ ունենալու համար պաղեստինցիները նրան անվանել են «Մուջահեդ ալ Արմանի»՝ հայ մահապարտ):

³⁷Սպ. Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, Եր., 2005, էջ 288:

1981 թ. սեպտեմբերի 24-ին Փարիզի թուրքական հյուպատոսության վրա հարձակվեց 4 հոգուց բաղկացած խումբը (Վազգեն Սիսյան (հրամանատար), Հակոբ Ջուլֆայան, Գևորգ Գյուլբեյան, Արամ Բասմաջյան):

Թուրքական հյուպատոսությունը հայ մարտիկների ձեռքին մնաց 16 ժամ, որից հետո նրանք հանձնվեցին ֆրանսիական իշխանություններին: 1984 թ. հունվարի 24-ին տեղի ունեցավ նրանց դատավարությունը, որը երկրորդ քաղաքական դատավարությունն էր Թուրքիայի դեմ (առաջինը 1921 թ. Սողոմոն Թեհլերյանի դատավարությունն էր Բեռլինում): Ֆրանսահայ համայնքը կանգնեց տղաների կողքին, դատարանին ուղղված կոչով հանդես եկան Շառլ Ազնավուրը, Անրի Վերնոյը, իսկ ֆրանսիայի ազգային հերոս Միսակ Մանուշյանի այրին՝ Մելինե Մանուշյանը դատարանում համբուրեց հայ հերոսների ճակատները, հանդես եկավ ճառով, իսկ երբ դատավորը հրահանգեց՝ «Մեղավորներ, ոտքի՛», ամբողջ դահլիճը ոտքի կանգնեց³⁸: Նրանց դատապարտեցին 7 տարվա ազատազրկման: 1985 թ. ապրիլի 12-ին Արամ Բասմաջյանը բանտում ինքնասպան եղավ, մյուսներն ազատ արձակվեցին 1986 թ. օգոստոսին: Վազգեն Սիսյանը և Հակոբ Ջուլֆայանը մշտական բնակություն հաստատեցին Հայաստանում, 2015 թ. մարտի 17-ին Վազգեն Սիսյանի հետ հանդիպում տեղի ունեցավ մեր (Հայաստանի պետական տնտեսագիտական) համալսարանում: Իսկ գործողությունը պատմության մեջ մտավ «Վան» անվամբ:

1982 թ. օգոստոսի 7-ին Անկարայի «Էսենբողա» («Էսենպողա») օդանավակայանում տեղի ունեցավ «Կարին» օպերացիան՝ Զոհրաբ Սարգսյանի և Լևոն Էքմեքժյանի մասնակցությամբ:

Փոխհրաձգության ընթացքում զոհվեց օդանավակայանի անվտանգության ծառայության 9 աշխատակից, 13 զինվորական, 12 անցորդ, 113-ը վիրավորվեց: Զոհրաբը ինքնասպան եղավ, Լևոնը վիրավորվեց և գերի ընկավ: Թուրքական իշխանությունները նրան դատապարտեցին մահվան՝ կախաղանի միջոցով, որն իրականացրին 1983 թ. հունիսի 29-ին: 2015 թ. դեկտեմբերի 23-ին աճյու-

³⁸ Մանրամասն տե՛ս **4. Վարդանյան**, Պայթյուններ Թուրքիայում և ոչ միայն, Եր., 2017, էջ 77:

նը տեղափոխվեց Ֆրանսիա և հանգրվանեց հոր գերեզմանի կողքին:

1983 թ. հունիսի 16-ին Ստամբուլի ծածկած շուկայում Մկրտիչ Մատարյանն իրականացրեց «Հակոբ Հակոբյան» գործողությունը, ինքը ինքնասպան եղավ, սպանվեցին 3-ը, վիրավորվեցին 22-ը:

1983 թ. հունիսի 15-ին Փարիզի «Օրի» միջազգային օդանավակայանի «Թուրքական ավիատուրիներ» ընկերության գրասենյակի առջև ռումբի պայթյունից սպանվեցին երկու թուրք, չորս ֆրանսիացի, մեկ մեքսիկացի, մեկ շվեդ, վիրավորվեց 63 մարդ, որից 28-ը՝ թուրք:

ԱՍԱԼԱ-ի վերջին գործողությունը տեղի ունեցավ 1997 թ. հունիսի 21-ին Բոյոսեյի թուրքական դեսպանատանը: Բայց ՀԱՀԳԲ-ի ներկայացուցիչների կարծիքով՝ բանակը դեռ անելիք ունի, նրա պայքարն ավարտված չէ: 2015 թ. հունվարի 20-ին լրացավ ԱՍԱԼԱ-ի գործունեության 40 տարին: Այդ ընթացքում կազմակերպությունն իրականացրեց մոտ 200 գործողություն (նշվում է նաև 256 թիվը), զոհվեց 36 թուրք (այլ տվյալների համաձայն՝ 42):

Հայերից զոհվել է 39 մարտիկ: 2014 թ. հունվարի 20-ին Եռաբլուրում կառուցվեց զոհված ազատամարտիկների 39 շիրիմներից բաղկացած (որոնցում մարմին չկա) պանթեոն:

1983 թ. կեսերին ԱՍԱԼԱ-ում տեղի ունեցավ պառակտում, որի պատճառը նպատակին հասնելու միջոցների ընտրության շուրջ տարաձայնություններն էին: Մասնակիցների մի մասն այն կարծիքին էր, որ ահաբեկչությունները պետք է իրականացվեն մարդաշատ վայրերում (ինչքան շատ զոհ, այնքան աղմուկն ու արձագանքը՝ շատ), որը կստիպի միջազգային հանրությանը լրջորեն զբաղվել Հայկական հարցով: Մյուս խումբը կարծում էր, որ նման միջոցառումները վարկաբեկում են նպատակը, ստվեր զցում շարժման վրա, ստիպում օտարներին՝ հայ ազատագրական շարժումը դիտել որպես սովորական ահաբեկչություն³⁹:

³⁹Տե՛ս **Ս. Գալբանյան-Մելքոնյան և Մոնթե Մելքոնյան**, Իրականությունը, ՀԱՀԳԲ-Հեղափոխական շարժման փաստաթղթերը, 1992 թ.: Այս գրքում Մոնթե Մելքոնյանը Հարություն Թագուշյանին մեղադրում է ավազակաբարո գործողություններ կատարելու, բռնակալության, որևէ գաղափարախոսություն, ծրագիր չունենալու, ԱՍԱԼԱ-ն սեփական փառասիրությանը ծառայող կազմակերպություն դարձնելու մեջ: Իր հերթին Թագուշյանը Մոնթեին մեղադրում է օտար երկրի գաղտնի ծա-

Բուն մասնակիցներից մեկի պնդմամբ՝ գաղտնի կազմակերպության նպատակը ո՛չ վրեժխնդրությունն էր, ո՛չ էլ ցեղասպանության ճանաչումը, այլ գերված հայրենիքի վերադարձը: Տասնամյակներ շարունակ խաղաղ ցույցեր են տեղի ունեցել, գրքեր գրվել, միջազգային ատյաններում բարձրաձայնվել, բայց Եվրոպան Հայկական հարցի մասին խոսեց միայն Գուրգեն Յանիկյանի և ԱՍԱԼԱ-ի գործողություններից հետո⁴⁰:

ԱՍԱԼԱ-ի ստեղծման նպատակը, ըստ հիմնադիրների, զինված պայքարի միջոցով Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Ալեք Ենիգոմյանի պնդմամբ՝ հայ ժողովուրդը հասկացավ (խոսքը սփյուռքահայության մասին է, որովհետև Խորհրդային Հայաստանի բնակչության մեծ մասը այդ շարժման մասին կամ գաղափար չունեին, կամ պատկերացումներն ամբողջական չէին - Ա.Ս.), որ իր օրինական պահանջներն իրականացնելու համար արյուն պետք է տա:

Գաղտնի բանակի հռչակագրի կետերից էին.

- Հայ ժողովրդի թշնամին թուրքական պետությունն է, այդ պատճառով հայկական հողերը վերադարձվելու են զինված պայքարի միջոցով,
- Գաղտնի բանակը թշնամի է բոլոր նրանց, ովքեր բարեկամ են Թուրքիային,
- Բարեկամ են բոլոր այն երկրները, որոնք պայքարում են Թուրքիայի և ԱՄՆ-ի դեմ,
- Խորհրդային Հայաստանը հայկական ինքնուրույն երկիր է, Խորհրդային Միությունը բարեկամ երկիր է, բայց ոչ դաշնակից, որովհետև չի գործակցում ՀԱՀԳԲ-ի հետ:

նայության գործակալ լինելու, ԱՍԱԼԱ-ն ներսից քանդելու մեջ և վկայակոչում մի քանի դեպք, երբ ահաբեկչությունը ամբողջությամբ կամ մասամբ տապալվել է Մոնթեի մասնակցության պատճառով: Մոնթեին մեղադրում է երեսպաշտության, ԱՍԱԼԱ-ի դեմ դավադրություն կազմակերպելու, ռազմակայաններից մեկը ոչնչացնելու, կազմակերպությունը թուլացնելու մեջ հենց այն պահին, երբ գտնվում էր հաջողության գագաթնակետին, զենքն ու սնունդը թուրքերին հանձնելու և այլնի մեջ (տե՛ս **Կ. Վարդանյան**, Պայթյուններ Թուրքիայում և ... ոչ միայն, էջ 112-156):

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 18:

Քանի որ Բանակի նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր զինված պայքարի միջոցով, հետևաբար, ճիշտ չէ այն քաղաքական նպատակներ հետապնդող շարժման կամ կուսակցության հետ համեմատելը: Այն իր ժողովրդին և հայրենիքին նվիրված կազմակերպություն էր, որը հայրենիքից դուրս ազգային ազատագրական պայքար էր մղում: Բանակը մերժում էր վրեժխնդրությունը, որովհետև այն անձնական ոխի, քենի դրսևորում է, իսկ արևմտահայությունը պայքարում է իր հարցի արդարացի լուծման համար՝ վերադարձ դեպի հայրենիք: Այդ պայքարը հատուցում է և ոչ թե վրեժխնդրություն:

Ըստ Ստ. Պողոսյանի՝ ԱՍԱԼԱ-ի պայքարի շնորհիվ.

- Թուրքիան ստիպված ընդունեց Հայկական շարժման ազգային-ազատագրական բնույթը և միջոցներ ձեռնարկեց դրա դեմ,
- հայկական շարժումը միջազգային ճանաչում ստացավ,
- հայկական գաղթօջախները տոգորվեցին ազատագրական պայքարի պարտականությամբ,
- ձևավորվեց նոր հոգեբանություն՝ Հայկական հարցի լուծումը պահանջում է զոհաբերություն, մարտնչելու կամք,
- միջազգային ասպարեզում պարզ դարձավ, թե ով է հայ ժողովրդի բարեկամը, ով՝ թշնամին,
- զինված պայքարը դիտվեց հաջողության հասնելու գլխավոր միջոց,
- սփյուռքում ծավալվեց «Վերադարձ Հայաստան» հոգեբանությունը⁴¹:

Այժմ՝ ՀԱՀԳԲ-ի կատարած գործողությունների համառոտ ցանկը:

22-ը հոկտեմբերի 1975 թ. - Վիեննայում հարձակում Ավստրիայում Թուրքիայի դեսպանի վրա:

2-ը հունիսի 1978 թ. - Մադրիդում հարձակում Իսպանիայում Թուրքիայի դեսպանի վրա:

1980 թ. դեկտեմբերի 29-ին Մադրիդի ամերիկյան և շվեյցարական օդանավակայանային ընկերությունների շրջակայքում իրա-

⁴¹Տե՛ս **Ստ. Պողոսյան**, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներին հավերժություն, էջ 288:

կանացրած պայթյուններից վիրավորված և հրաշքով փրկված իսպանացի լրագրող Խոսե Անտոնիո Գուրիարան (այլ գրությամբ՝ Կուրիարա), իմանալով պայթյունն իրականացնողների ազգային պատկանելության և հետապնդած նպատակների մասին, ուսումնասիրում է Հայոց պատմությունը, Հայ դատը, կապեր հաստատում ԱՍԱԼԱ-ի հետ, լինում վերջինիս ռազմականներից մեկում, ծանոթանում հայ մարդկանց հետ ու այդ ամենի արդյունքում գրում «Ռումբը» («Լա Պոմպա») գիրքը, որը լայն տարածում է ստանում իսպանախոս աշխարհում, թարգմանվում այլ լեզուներով: 2012 թ. մի քանի հայեր Մադրիդում գիրքը թարգմանեցին հայերեն և հրատարակեցին շատ քիչ տպաքանակով: Ի դեպ, Գուրիարան այնքան էր խորացել հայ ժողովրդի պատմության մեջ, որ աշխարհի տարբեր վայրերում հանդես էր գալիս դասախոսություններով Հայոց ցեղասպանության մասին՝ նույնիսկ հայկական միջավայրում⁴²:

2-ը փետրվարի 1980 թ. - երկու պայթյուն Բրյուսելում խորհրդային «Աերոֆլոտ» և «Թուրքական ավիաուղիներ» ընկերությունների գրասենյակներում:

2-ը փետրվարի 1980 թ. - պայթյուն Փարիզի խորհրդային դեսպանատան մեջ:

17-ը ապրիլի 1980 թ. - հարձակում Վատիկանում Թուրքիայի դեսպանատան ավտոմեքենայի վրա:

8-ը հոկտեմբերի 1980 թ. - երեք պայթյուն Բեյրութում Շվեյցարիայի դեսպանատան մեջ:

12-ը մարտի 1981 թ. - գրոհ Թեհրանում Թուրքիայի դեսպանատան վրա:

9-ը հունիսի 1981 թ. - ժնկում Թուրքիայի հյուպատոսության քարտուղարի սպանությունը: Սպանողը Մարտիրոս Ժամկոչյանն էր, որը 1991 թ. հունիսի 12-ին դարձավ ՀՀ քաղաքացի:

26-ը հուլիսի 1982 թ. - պայթյուն Փարիզի «Սեն Ժերմեն» սրճարանում:

15-ը հուլիսի 1983 թ. - ռումբի պայթյուն Փարիզի «Օրլի» օդանավակայանում: Մասնակիցներից Սիմոն Նայիբյանը և Վարուժան Կարապետյանը բանտից ազատվելուց հետո մշտական բնակություն են հաստատել ՀՀ-ում:

⁴² Տե՛ս Կ. Վարդանյան, Պայթյուններ Թուրքիայում և ... ոչ միայն, էջ 92-103:

29-ը հոկտեմբերի 1983 թ. - հարձակում Լիբանանում Թուրքիայի դեսպանատան վրա:

27-ը մարտի 1984 թ. - հարձակում Թեհրանում Թուրքիայի դեսպանության մշտական կցորդի բնակարանի վրա:

19-ը դեկտեմբերի 1991 թ. - մահափորձ Հունգարիայում Թուրքիայի դեսպանի նկատմամբ:

21-ը հունիսի 1997 թ. - պայթյուն Բրյուսելում Թուրքիայի դեսպանատան դիմաց:

Հայկական ահաբեկչական շարժումը դարձավ բողոքի ծայրահեղ դրսևորում, որովհետև, երբ ՀԱՀԳԲ-ն սկսեց իր գործունեությունը, «Եվրոպայում Հայկական հարցի մասին ո՛չ լսել էին, ո՛չ մտածել»⁴³:

Վերջում ներկայացնենք ՀԱՀԳԲ-ի հերոս նահատակների և մահացած նվիրյալների անուն-ազգանունները՝ Գևորգ Աճեմյան, Վիգեն Այվազյան, Զավեն Ավետյան, Արամ Բասմաճյան, Մովսես Բեքարյան, Հովհաննես Գազանճյան, Սարգիս Գյուլխանջյան, Հարութ Գյուլուզյան, Պիեռ Գյուլումյան, Սուրիկ Գրիգորյան, Սարգիս Դերձակյան, Լևոն Երկաթ, Լևոն Էքմեքչյան, Հարություն Թագուշյան, Հրաչ Թրթոյան, Հրաչ Լուսինյան, Հարության Խաչերյան, Ժան Խոզյան, Խաչատուր Խուրշուդյան, Զավեն Հովհաննիսյան, Մկրտիչ Մատարյան, Նուբար Յալըմյան, Գուրգեն Յանիկյան, Վարդան Շիրվանյան, Սիլվա Չիլինկիրյան, Անդրանիկ Պաթուզյան, Րաֆֆի Պալյան, Անդրանիկ Սասունյան, Զոհրապ Սարգիսյան, Մինաս Սիմոնյան, Գառնիկ Վահրատյան, Հարություն Վարդանյան, Զորջ Վարդանյան, Վաչե Տաղյան, Հակոբ Տարազյան, Արշակ Տեր-Սահակյան, Կարապետ Փաշապետյան, Եղիա Քեչիշյան, Արամայիս Օհանյան:

Ահաբեկչությունը գնահատելիս պետք է մոտենալ երկու՝ **բարոյամարդասիրական** և **փոքր ազգերի մղած ազատագրական պայքարի** դիտանկյունից: Բարոյամարդասիրական առումով դատապարտելի է ցանկացած բռնություն, ոտնձգություն մարդու, նրա կյանքի, ապրելու իրավունքի նկատմամբ: Այլ է փոքր ազգերի ահաբեկչության խնդիրը, մասնավորապես՝ հայերիս պարագա-

⁴³ Սփ. Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներին հավերժություն, էջ 51:

յում: Ի՞նչ պետք է անեին հայերը, երբ ցեղասպանության համար Թուրքիային պատժող չկար, երբ հայ ժողովրդի դահիճները հեռացել էին Եվրոպական երկրներ և առոք-փառոք իրենց կյանքն էին վայելում: Ի՞նչ պետք է անեին Եվրոպայի զոհը դարձած հայերը, երբ այն ոչինչ չէր անում հայերի արդար դատը լուծելու համար: Պետք է բողոքի ձայն բարձրացնեին: Այդպես էլ վարվեցին, բայց տարիներ շարունակ մղվող պայքարի քաղաքակիրթ ձևերը որևէ արդյունք չունեցան: Ուրիշ ի՞նչ էր մնում, բացի ահաբեկչությունից: Այս դիտանկյունից, կարծում եմ, հավանաբար արդարացված էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ ահաբեկչական տարրի օգտագործումը:

ՀԱՀԳԲ-ի պայքարն արդյունք տվե՞ց: Անշուշտ: Աշխարհը լսեց հայերին, և դիտվեց Հայոց ցեղասպանության ընդունման շքերթ, որն այս պահի դրությամբ Հայոց մեծ ողբերգության բարոյական գնահատականն է՝ առանց իրական հետևանքների:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է պատերազմը:
2. Ի՞նչ է նշանակում «Պատերազմ հանուն ժողովրդավարության»:
3. Ի՞նչ է ահաբեկչությունը:
4. Ի՞նչ տարբերություն կա ահաբեկչության, պատերազմի և հանցագործության միջև:
5. Որո՞նք են հայկական ահաբեկչության առանձնահատկությունները:
6. Հայկական ահաբեկչության քանի՞ փուլ կարող էր առանձնացնել:
7. Ի՞նչ դեր կատարեց ՀԱՀԳԲ-ն Հայկական հարցի բարձրացման, Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

ԹԵՄԱ ՅՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ: ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

ա) Պեպոությունը, ընտանիքը և եկեղեցին ազգային անվտանգության համապետքստում

Սկսենք սահմանումներից:

Անվտանգությունը սպառնալիքից զերծ լինելու վիճակն է: Անվտանգությունը օբյեկտի գոյությանը և բնականոն կենսագործունեությանն ուղղված վտանգների չեզոքացումն է:

Անվտանգությունը անհատներին, կոլեկտիվներին, հասարակությանը, պետությանը, ողջ համաշխարհային հանրությանն ուղղված վտանգների և սպառնալիքների բացահայտումն ու կանխարգելումն է:

Անվտանգությունը երկրի, հասարակության, ազգի հիմնարար արժեքներին ուղղված սպառնալիքների չեզոքացումն է ու պաշտպանությունը: Անվտանգությունը ներառում է երկու կարևոր բաղադրիչ.

ա) անվտանգության դեմ ուղղված վտանգներ և սպառնալիքներ,

բ) դրանցից պաշտպանվելու մեխանիզմներ և ինստիտուտներ: Անվտանգության մասնակի դեպքը ազգային անվտանգությունն է՝ ազգի կենսական շահերի պաշտպանությանը և գոյությանն ուղղված սպառնալիքների չեզոքացումը:

Ազգային անվտանգությունը ազգի կենսունակությանն ու զարգացմանը, երկրի ինքնությանն ու հզորությանը միտված

ծրագրերի իրականացումն է և դրանք խոչընդոտող գործոնների չեզոքացումը:

Ազգային անվտանգության խնդիրներն են.

- ա)** ազգային ինքնության պահպանումը,
- բ)** ազգային պետության տարածքային ամբողջականության ապահովումը,
- գ)** քաղաքացիների պաշտպանվածության կառուցակարգերի ստեղծումը:

Գոյություն ունեն ազգային անվտանգության **«օբյեկտ»** և **«սուբյեկտ»** հասկացությունները: Անվտանգության օբյեկտ է այն ամենը, ինչին ուղղված են սպառնալիքները: Դրանք են անձը (նրա գոյությունը, ազատություններն ու իրավունքները), հասարակությունը (նրա նյութական և հոգևոր արժեքները), պետությունը (սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը), որոնք ենթակա են վտանգների, սպառնալիքների, մարտահրավերների:

Անվտանգության սուբյեկտը պետությունն է, որն իր ինստիտուտների միջոցով պարտավոր է պաշտպանել հասարակությունը, ապահովել երկրի ինքնիշխանությունն ու ինքնուրույնությունը:

Պետությունը տարածքային, լեզայ, իրավասուբյեկտ, ինքն-իշխան, համընդհանուր ու համատարած քաղաքական բարձրագույն կազմակերպություն է, որն իրականացնում է իր քաղաքացիների անվտանգության ապահովման, հասարակության կառավարման նպատակամիտ զործունեություն և գործառույթներ: Պետության հիմնական հատկանիշներն են հրապարակային իշխանությունը, որոշակի տարածքը, որի վրա գործում է նրա իշխանությունը, իրավունքը, ինքնիշխանությունը (ինքնօրենությունը): Պետությունն իրականացնում է արտաքին ու ներքին գործառույթներ: Արտաքին գործառույթներ են սեփական տարածքի պաշտպանությունը, երկրի անվտանգության ապահովումը, այլ պետությունների և միջպետական կազմակերպությունների հետ կապերի հաստատումն ու համագործակցությունը: Ներքին գործառույթներն են տնտեսական-կազմակերպչականը, բռնության կանխարգելումը (հանցագործության դեմ պայքար), հասարակության մեջ կայունու-

թյան (կարգուկանոնի, իրավունքի հաստատում) ապահովումը և այլն:

Ազգային պետությունները Եվրոպայում պատմական ասպարեզ դուրս եկան XVII դարի կեսերին՝ երեսունամյա պատերազմից և Վեստֆալյան խաղաղության պայմանագրից (1648 թ.) հետո (Իսպանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում՝ նոր միապետությունների տեսքով): Նորաստեղծ պետությունների ծախսերը փակելու նպատակով ստեղծվեցին բանկեր, գանձապետարան, հաստատվեցին բյուջեներ, ազգային դրամը փոխարինվեց միջազգայինով և այլն: Անվտանգության նկատառումներով իրականացվեցին ռազմական և դիվանագիտական միջոցառումներ՝ ստեղծվեցին մշտական բանակ, նավատորմ, իսկ վարած պատերազմները արթնացրին և ամրապնդեցին ազգային գիտակցությունն ու միասնությունը:

XX դարը դարձավ ազգային պետությունների հաղթարշավի ժամանակաշրջան: Աշխարհը XX դար մուտք գործեց 50 պետությամբ, դուրս եկավ 210-ով. դրանց թիվն ավելանալու միտում ունի, որովհետև էթնոսների թիվը հինգ հազար է:

Արդարացված չէ այն մոտեցումը, թե գլոբալացման պայմաններում ազգային պետությունները այլևս անելիք չունեն և վաղ թե ուշ հեռանալու են պատմական ասպարեզից: Հակառակը՝ աշխարհում ընթացող իրադարձությունները վկայում են, որ նույնիսկ փոքր ազգերն են ցանկանում պետություն ունենալ: Գլոբալացումը պետություններին չի ազատում ազգային և մշակույթային ինքնության պահպանման, քաղաքացիների անվտանգության ապահովման, ներքին և արտաքին քաղաքականության իրականացման ուղղությամբ նախկինում ունեցած բազում գործառույթներից: Մրցակցային պայմաններում, առանց պետական ուժի, գլոբալացման գործընթացներին ընդդիմանալ հնարավոր չէ:

Ազգային անվտանգության ամենամեծ երաշխավորը, անշուշտ, պետությունն է: Ցավոք, մեր պետությունը միշտ չէ, որ կարողացել է ազգի անվտանգության գործառույթ իրականացնել, որովհետև տևական ժամանակ պետականություն գոյություն չի ունեցել:

Հիմա, բարեբախտաբար, ունենք պետություն, իսկ պետականաստեղծման առաջին տարիներին կար նաև համոզվածություն, թե ազգային պետությունը կստեղծի կառավարման այնպիսի հա-

մակարգ, որը երկրում կապահովի արժանավայել ապրելու և աշխատելու բոլոր իրավական և բարոյահոգեբանական պայմանները և, որպես ազգային անվտանգության սուբյեկտ, կկատարի իր գործառույթները նաև հոգևոր-բարոյական ասպարեզում:

Ազգային պետության հոգևոր-բարոյական գործառույթների մեջ առանձնացնում են.

- ա) ինքնիշխանությունն ու ազատությունը,
- բ) ազգի բոլոր անդամների համար հավասար պայմանների ապահովումը, հասարակական տարբեր շերտերի միջև խտրականության վերացումը,
- գ) կառավարման մեջ ժողովուրդ-իշխանություն անջրպետի վերացումը,
- դ) օրենսդրական հատուկ դաշտի ստեղծման և գործադրման միջոցով սոցիալական արդարության ապահովումը,
- ե) օրենքի առջև բոլորի հավասարության և հավասար պատասխանատվության սկզբունքի կիրառումը և այլն⁴⁴:

«Հ-ում փաստաթղթերով (իրավական ակտերով) ամեն ինչ, կարծեք, այդպես է՝ Սահմանադրությամբ ամրագրված: Արտաքին հատկանիշները նույնպես կան՝ տնտեսության ազատականացում, դատաիրավական համակարգի ստեղծում և այլն: Բայց թվարկված գործառույթների մի մասն իրականացվում է առերևույթ և թերի կամ ընդհանրապես չի իրականացվում: Մասնավորապես.

Առաջին՝ անցած քսան տարիների ընթացքում մեր առանձին իշխանավորներ այդպես էլ չբարձրացան պետականության վեհ գաղափարի գիտակցման մակարդակին, չարդարացրին ժողովրդի բազում հույսերը: Անշուշտ, անկախությունը, պետականությունը, դրանց խորհրդանիշները վեհ արժեքներ են, եթե կրող անհատ իշխանավորներն իրականացնում են ժողովրդի հոգսը հոգալու, կարիքները բավարարելու, անկախության իդեալներն ու գաղափարները, թափած արյունը իմաստավորելու քաղաքականություն, իրենց պարտքն ու պատասխանատվությունը գիտակցելու և կա-

⁴⁴Այդ մասին տե՛ս նաև **Մ. Գաբրիելյան, Ա. Դաբաղյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան**, Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, էջ 57:

տարելու նվիրվածություն: Հակառակ դեպքում՝ «անկախություն», «ազատություն», «պետականություն» արժեքները իմաստազրկվում են: Հին չին փիլիսոփա **Կոնֆուցիոսը** (մ.թ.ա. 551–479) իշխանությունների և ժողովրդի փոխհարաբերության օրինակելի մոդել էր առաջադրում: Իշխանությունները պարտավոր են.

- իմաստնորեն կառավարել ժողովրդին,
 - իրենց վարքուբարքով առաքինության օրինակ հանդիսանալ ժողովրդի համար,
 - բեռ չդառնալ ժողովրդի գլխին:
- Ժողովուրդը պարտավոր է.
- պատկառանք ունենալ իշխանությունների նկատմամբ,
 - աշխատել,
 - հպատակվել:

Թվարկվածներից որևէ մեկը մեզանում չի գործում:

Երկրորդ՝ հասարակության ներսում խորանում է սոցիալական բևեռացումը: Մեծ դժվարությամբ ու շատ դանդաղ են ձևավորվում իշխանություն-ընդդիմություն քաղաքակիրթ հարաբերությունները:

Երրորդ՝ բարեփոխումներով հանդերձ՝ մեր արդարադատության համակարգում դեռևս դիտվում են բազմաթիվ թերություններ:

Չորրորդ՝ գործազրկության, աշխատատեղերի պակասի պատճառով մարդը ստրկական կախման մեջ է ընկել իր աշխատանքից և գործատուից, կատարում է բոլոր այն հանձնարարությունները, որ տալիս է աշխատատեղը: Ի դեպ, «աշխատանք» ասելով արդեն քսանյոթ տարի է՝ հասկանում ենք ոչ թե մասնագիտական կարողությունների իրացում, այլ ցանկացած վճարովի գործ: Ապրելը վերածվել է գոյատևման: Այս ամենի հետևանքով ձևավորվել է հայի մի տեսակ, որին կարելի է անվանել «իրավիճակային»:

Թվարկվածները նաև բարոյական անկման, այլասերման պատճառ դարձան: Աշխատանքը կորցնելու վախը, ընտանիքը պահելու հոգսը մարդուն ստիպեցին գործարքի մեջ մտնել պատվի, սեփական խղճի հետ, իջնել արժանապատվության շեմից ներքև: Այստեղից էլ՝ համընդհանուր հոգևոր-բարոյական անկումը: Արտագաղթը նաև այդ ամենի հետևանքն է, և պետք է դիտել որպես սոցիալական բողոքի ազգակործան ձև:

Քանի որ այդ ամենում իրենց մեղքի բաժինն ունեն մեր նախկին իշխանավորները, ուստի անդրադառնանք իշխանություններին ուղղված **Գարեգին Նժդեհի** մտքերին, որոնցից ամեն մեկը, կարծեք, ասված է մեր օրերի համար: Եվ այսպես. «Միայն պարտականություններն ու դժբախտությունները չեն, որ ընդհանուր պետք է լինեն, այլև իրաւունքներն եւ ուրախութիւնները», որովհետև, ըստ Նժդեհի:

- ա)** Ամուր չէ այն պետության հիմքը, որտեղ առատության մեջ գտնվողների ուրախ քրքիջների հետ լսվում է և աղքատի ողբը:
- բ)** Ապագա չունի այն պետությունը, որտեղ արևը չի ծագում բուրի համար, որտեղ, առանց ամոթի ու խղճի խայթի, մարդիկ անցնում են թշվառների մոտով:
- գ)** Անիծված է այն իշխանությունը, որն արդարացնում է որոշ տարրերի ընչազրկությունը, չի ապահովում հասարակական արդարություն, ասել է թե՛ կա այն ամենը, ինչն արագացնում է պետության անփառունակ անկումը:
- դ)** Եթե հայ մարդը խեղճ և անարի պիտի մնար նաև իր անկախ հայրենիքում, էլ ինչի էր պետք անկախությունը: Եթե դարերով օտարի լծի տակ ապրած հայության մի մասը թշվառ պիտի մնար նաև իր ազատ հայրենիքում, էլ ինչի էր պետք ազատությունը:
- ե)** Երբ մի ժողովրդի գործիչները եսապաշտ են, անհաշտ, ոչ ընկերական, այլևս կարիք չկա ժողովրդին ավելի մեծ դժբախտություն ցանկանալ:
- զ)** Ժողովուրդները տառապել և տառապում են իրենց առաջնորդների անմիաբանության և հոգևոր անզորության պատճառով: Եվ միշտ էլ ժողովուրդն է քավում իր ղեկավարների մեղքը⁴⁵:

Ավելին, հենց իշխանությունը պետք է մշակի ազգային-հասարակական կյանքի բարոյականացման ծրագիր, որոշակի քայլեր ձեռնարկի՝ այն իրականացնելու և գործնական դարձնելու համար: Այդ պատճառով պետք է կիրառելի դարձնել սահմանադրական

⁴⁵ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Յիշի՛ր պատերազմը // Բ հրատարակություն, Եր., 2013, էջ 78-90:

նորմերը, դեմքով շրջվել դեպի ժողովուրդը, գործով և ոչ թե խոսքով նեցուկ կանգնել նրան: Եվ պետք է սկսեն իրենցից, որովհետև. «Ով չի կարող իր կրքերը ենթարկել կամ ծառայեցնել իր կամքին, իր բանականությանը, չի կարող նաեւ արդիւնաւոր կերպով ծառայել իր ազգին»⁴⁶:

Սկսելով իրենցից, մաքրելով իրենց վարքուբարքը, հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ սիրո, հարգանքի, դրական վերաբերմունքի օրինակ դառնալով՝ իշխանությունները կարող են փոխել իրենց հանդեպ ժողովրդի վերաբերմունքը: Դարձյալ իրավացի է Նժդեհը՝ նշելով. «Ոչինչ այնքան կրթիչ, ազնուացուցիչ չէ անհատի եւ զանգուածների համար, որքան ղեկավարների յարաբերութեանց վեհութիւնը»⁴⁷:

Ոչ թե արտագաղթել, այլ ստիպել իշխանություններին՝ լուծել խնդիրների այս համախումբը: Արտագաղթով ոչ միայն հարց չեն լուծում (եթե, իհարկե, արտագաղթն այս արագությամբ շարունակվի, ապա «կլուծվեն» ազգային բոլոր խնդիրները, որովհետև ո՛չ հայրենիք կմնա և ո՛չ էլ այնտեղ ապրող ազգ), այլև քանդում են պետության պահպանման, դրանով իսկ ազգի անվտանգության ու գոյության հիմքերի հիմքը: Այդ ամենի հետևանքով, կարծում եմ, պետությունը ազգային անվտանգության սուբյեկտից փոխարկվում է օբյեկտի:

Ընտանիքը որոշակի կայուն կառույց է, որը ձևավորվում է ամուսինների և նրանց զավակների փոխհարաբերության հիմքի վրա: Ընտանիքի ձևավորումը պայմանավորված է ամուսին-կողմերի առկայությամբ, իսկ կողմերն ամուսին են դառնում ամուսնությամբ, որը տղամարդու և կնոջ հարաբերության իրավական կարգավորումն է (որոշ երկրներում ամուսնություն է համարվում նաև նույնասեռ կողմերի հարաբերության իրավական կարգավորումը):

Դարեր շարունակ ընտանիքը եղել է մեր ազգային անվտանգության միջնաբերդը: Պետության բացակայության երկարատև ընթացքում ազգը պահպանվել և վերարտադրվել է ընտանիքի ամրությամբ և կայունությամբ: Ընտանիքը համարվել է փոքր հայրե-

⁴⁶ Նույն տեղը, էջ 91:

⁴⁷ Նույն տեղը, էջ 89:

նիք: Ահա թե ինչու, Նալբանդյանի կարծիքով, եթե այնտեղ հայրենասեր չի ծնվում, ապա զուր են մեծ հայրենիքի երազանքները:

Ընտանիքում առանձնացվում է փոխհարաբերությունների չորս ոլորտ.

ա) ընտանեկան պարտականությունների կատարում,

բ) երեխաների դաստիարակություն,

գ) որոշումների ընդունում,

դ) ազատ ժամանակի կազմակերպում:

Ընտանիքի գործառույթներն են.

1. սերնդի վերարտադրությունը,

2. սերնդի սոցիալականացումը:

Հայ ընտանիքում երեխաների դաստիարակությամբ զբաղվել է մայրը, այդ պատճառով, Նժդեհի կարծիքով, մոր մասին կարելի է դատել երեխայի հայրենասիրության աստիճանով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո պատկերը փոխվում է: Կինն ակտիվորեն ներգրավվում է հանրային աշխատանքի մեջ, և երեխայի դաստիարակության համար ծնողները պատասխանատու են դառնում հավասարապես: Իրավիճակը նույնն է նաև այսօր, ավելին՝ շատ ընտանիքներում միակ աշխատողը և երեխաների հոգսը հոգացողը կինն է՝ մայրը: Այս պայմաններում հայրը զավակների դաստիարակության անմիջական պարտականություն է ձեռք բերում և դառնում պատասխանատու: Ուստի, վերաիմաստավորելով Նժդեհի խոսքը, կարող ենք նշել, որ ծնողների մասին կարելի է դատել՝ ըստ երեխաների հայրենասիրության աստիճանի:

Երեխայի սոցիալականացման, որպես հասարակական և ոգեղեն էակի ձևավորման ու դաստիարակության առաջին և անփոխարինելի վայրը ընտանիքն է: Ծնողների վարքագիծը, գրույցները, խրատներն ու խորհուրդները միմյանց, ընտանիքի մյուս անդամների, հյուրերի, հարազատների, մտերիմների, անձանոթների հանդեպ վերաբերմունքը տեսնելով, լսելով՝ երեխան յուրացնում է համակեցության որոշ նորմեր, արժեքների որոշակի պաշար, որոնք ձևավորում են նրան որպես անհատ, անձնավորություն: Այսինքն, ընտանիքն այն առաջին քուրան է, որտեղ ձուլվում ու կադապարվում է մարդ-անհատի ամենասկզբնական, համեմատաբար կայուն կերպը, կերպարը (համեմատաբար, որովհետև կեր-

պարի ամբողջականացման գործում իրենց դերն են կատարում միջավայրը և դպրոցը): Նաև ընտանեկան դաստիարակության (լայն իմաստով) միջոցով է երեխան, պատանին, երիտասարդը արտահայտում իր վերաբերմունքը (եթե, իհարկե, ինքնադաստիարակության, միջավայրի ազդեցությունն ավելի ուժեղ չէ) շրջապատի, հայրենիքի և աշխարհի հանդեպ:

Այժմ անդրադառնանք ժամանակակից հայ ընտանիքին բնորոշ մի քանի խնդրի.

1. Ծնելիության խնդիրը: Լավ է, երբ ընտանիքը բաղկացած է մեկից ավելի երեխաներից. նրանք մեծանում են՝ միմյանց նկատմամբ ուշադիր, հոգատար, նվիրված, պատրաստ փոխադարձ օգնության: Ծնելիությամբ է պայմանավորված բնակչության վերարտադրությունը, ազգային անվտանգությունը, մինչդեռ, նվազումը վիճակագրական փաստից փոխարկվում և վերածվում է սոցիալազգային աղետալի հիմնախնդրի: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ մեզանում ծնելիության արագորեն նվազումը առաջացնում է առնվազն երկու խնդիր.

ա) ազգի թվաքանակի նվազում, որը դառնում է ազգային անվտանգության, ազգի գոյության ապահովման լրջագույն խնդիր,

բ) հասարակության ծերացում:

2. XX դարի 90-ական թթ. մեր հանրապետությունում տեղի ունեցած տնտեսական, սոցիալական, քաղաքական խորը ցնցումները (երկրաշարժի հետևանքներ, ԽՍՀՄ-ի փլուզում, տնտեսության անկում, արտագաղթ, զանգվածային գործազրկություն ու աղքատություն) լուրջ խնդիրներ առաջացրին հայկական ընտանիքների կազմում, կառուցվածքում, արժեհամակարգում: Տղամարդուց բացի, արտագնա աշխատանքի սկսեց մեկնել նաև կինը, ցավոք, զանգվածային դարձան ոչ լրիվ կազմով ընտանիքներ՝ իրենց բոլոր բացասական հետևանքներով: Ոչ լրիվ կազմով ընտանիքներ, խեղված հոգիներ, թերի արժեհամակարգով երեխաներ. ահա ժամանակակից հայ ընտանիքների մի զգալի մասի ընդհանուր պատկերը: Ընտանիքն այսօր չի ապահովում ազգի նույնիսկ պարզ վերարտադրությունը:

3. Ձևավորվում է գործարար կանանց խավ (մեզանում՝ գուցե ուշացումով), որի ներկայացուցիչները գործարարությունը, հաջողությունը հասարակական արտադրության և ծառայությունների ոլորտում, սեփական «ես»-ի կայացումը գերադասում են ամուսնությունից, ընտանիք ստեղծելուց, երեխա ունենալուց: Կանանց այդ խավը աշխատանքում սեփական տեղն ամրագրելուց, ֆինանսական անկախություն ձեռք բերելուց հետո է մտածում ամուսնության և ընտանիք ստեղծելու մասին: Շատ երիտասարդներ ամուսնանում, ընտանիք են կազմում 30 տարեկանից հետո: Այդ տարիքում երկրորդ, առավել ևս երրորդ երեխան ունենալն ու մեծացնելը դառնում են խնդիր ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև հոգեբանական առումով:

4. Աշխատանքի պակասը և ցածր աշխատավարձը: Ըստ միջազգային կազմակերպություններից մեկի հրապարակած տվյալների՝ հետխորհրդային տարածքում 25-ից բարձր տարիք ունեցող կանանց գործազրկության ամենաբարձր մակարդակը Հայաստանում է (17,3%), մինչդեռ, երկրորդ տեղը զբաղեցնող Լատվիայում պակաս է կրկնակի անգամ: Ավելացնենք նաև այն, որ ամուսնացած կանանց դժվարությամբ են աշխատանքի ընդունում, իսկ աշխատողներին, տղամարդկանց համեմատությամբ, ցածր են վճարում: Այդ բոլորը երեխաներ ունենալու (մեկից ավելի) լրացուցիչ խոչընդոտներ են:

Թվարկված (և չթվարկված) գործոնները ցույց են տալիս, որ հայ ընտանիքին վերաբերող արժեքային շատ պատկերացումներ փոխվել կամ իմաստազրկվել են: Եթե նախկինում ընտանիքը ազգի անվտանգության ապահովման ամենահուսալի հենարանն էր, ապա այսօր դարձել է ամենամտահոգողներից մեկը: Եթե ընտանիքը չապահովի իրեն բնորոշ գործառույթները, ապա ազգը զրկվելու է վերարտադրվելու, հետևաբար, գոյատևելու հեռանկարից:

Անդրադառնանք ազգային անվտանգության (նաև հոգևոր-բարոյական) բնագավառում Հայ եկեղեցու ունեցած դերի մի քանի հանգրվանային հարցերի:

Ըստ ընդունված տեսակետի՝ պետականացնելով քրիստոնեությունը՝ հայոց արքունիքը հույս ուներ, որ ձեռք է բերում գաղափարական

հզոր զենք, կարող է կենտրոնախույս նախարարական ուժերին համախմբել թագավորի շուրջ և ստեղծել ուժեղ կենտրոնաձիգ իշխանություն, որը հնարավորություն կտար դիմագրավելու հռոմեա-պարսկական նվաճողական քաղաքականությանը և հպատակեցնելու կենտրոնախույս նախարարական տները: Արդարացրե՞ց այդ հույսերը քրիստոնեությունը: Դատելով հետևանքներից՝ ո՛չ. որովհետև նույն դարում Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմի միջև, իսկ 428 թ. կորցրեց պետական անկախությունն ընդհանրապես, որում, ըստ որոշ հետազոտողների, քիչ չէր նաև եկեղեցու դերը⁴⁸:

Պետականության կորստից հետո Հայաստանում, իսկ հետագայում նաև գաղթօջախներում ժողովրդի միակ տեր ու տնօրեն ուժը դարձավ համազգային կառույցի դեր կատարող (որն ընդունվում էր իշխող և օտար տերությունների կողմից) Հայ եկեղեցին:

Երկրում ստեղծվեց ինքնատիպ կրոնապետություն, որը պահպանվեց մինչև Հայաստանում առաջին հանրապետության, այնուհետև խորհրդային կարգերի հաստատումը: Ինչո՞ւ ինքնատիպ, որովհետև Հայաստանում իշխում էին օտար տերերը, որոնք Հայ եկեղեցուն ժողովրդի ներքին կյանքի կարգավորման արտոնություն էին տվել: Եկեղեցին ոչ միայն իրականացնում էր գաղափարական, այլև վարչատնտեսական, հասարակական վարքի կարգավորման և հսկողության, ծիսապաշտամունքային պրակտիկայի միջոցով ժողովրդին ներքին ու արտաքին տիրողների (որոնց մեջ էր նաև ինքը) հպատակության մեջ պահելու գործառույթները:

Հայ եկեղեցին դարձավ յուրահատուկ միջնորդ իշխող տերության և հայ ժողովրդի միջև: Փաստորեն, թուրքական, պարսկական, նվազ չափով՝ ռուսական տերությունները հայ ժողովրդի վերահսկողությունը, հպատակության մեջ պահելը իրականացնում էին եկեղեցու միջոցով: Հայ եկեղեցին այդ խնդիրը հաջողությամբ լուծելու համար գործադրեց քրիստոնեության գաղափարական ողջ գինանոցը, մասնավորապես՝ «չարին չհակառակվելու», «թշնամուն

⁴⁸Տե՛ս Հ. Դավթյան, Մեզ անձանթ Վարդանանց պատերազմը (Հայաստանյայց առաքելական եկեղեցին և մեր պատմության ընթացքը), Եր., 2007, էջ 277-278, Գ. Հովհաննիսյան, Հայոց տերերը, Եր., 2012, էջ 18, 289:

սիրելու», մարմնավոր և հոգևոր տերերին հպատակվելու պատվիրաններն ու պահանջները:

Փոխարենը՝ բոլորովին անտեսել կամ մոռացել էր դրանք սեփական շահերը պաշտպանելիս. այստեղ եկեղեցին հարձակվող էր, անխնա, Քրիստոսի որևէ պատվիրանի հետ հաշվի չնստող: Նա Հայաստանում հիմքից բնաջնջեց պավլիկյան և թոնդրակյան շարժումները, հալածեց և բանադրեց բողոքական հայերին, ըմբոստացավ, ժողովրդին անհնազանդության մղեց ցարի՝ 1903 թ. եկեղեցական ունեցվածքը բռնագրավելու հրամանի դեմ: Հիմա էլ չի հիշում, երբ պայքարում է այլադավանների, ազատախոհների, աղանդավորների և բոլոր նրանց դեմ, ովքեր հայ եկեղեցու հետևորդ ու հավատացյալ չեն:

Եթե այդպես է, ապա պետք է ընդունենք, որ հայ եկեղեցու դերն ազգի անվտանգության ապահովման ոլորտում եղել է հակասական. **մի կողմից՝** գաղափարական կապերով, ծիսապաշտամունքային գործունեությամբ համախմբել է ազգին՝ նպաստել է միությանն ու հակազդել ճուլմանը, այսինքն՝ ապահովել է ազգի գոյությունը և պահպանությունը: Եկեղեցին ազգի անվտանգության պահպանման գործառույթը իրականացրել է՝ նաև մշակութապահպան, ուսումնակրթական գործունեություն ծավալելով, տիրոջ մոտ ազգին հավատարիմ հպատակ ներկայացնելու միջոցով ճնշումը թուլացնելով, ժողովրդի կյանքը տանելի և համեմատաբար ապահով դարձնելու քաղաքականությամբ: Իսկ **մյուս կողմից՝** քարոզած գաղափարախոսությամբ և անհանդուրժողականությամբ թուլացրել է ազգի դիմադրողական ոգին, նրան դատապարտել կրավորական գոյության (Նժդեհի բնութագրմամբ):

Այսօր ազգային պետության առկայությունը էապես փոխել է եկեղեցու գործառույթները երկրի ներսում և սփյուռքում: Երկրի ներսում եկեղեցու հիմնական խնդիրը հավատացյալների կրոնական պահանջմունքների բավարարումն է, հոգևոր-բարոյական վիճակի բարոյականացմանը նպաստելը, բայց որպեսզի այդ խնդիրն իրականացնի, եկեղեցին պետք է.

1. լուծի իր ներքին կյանքը բարոյականացնելու խնդիրը,
2. ազգայնացնի արժեհամակարգը,

3. քարոզչության մեջ հիմնավորի, որ մարդու փրկության ուղին անցնում է ազգին ծառայելու մայրուղիով,
4. հուղայաքրիստոնեություն քարոզելու փոխարեն ազգային քրիստոնեություն քարոզի,
5. ազգին ծառայելը ոչ թե բեռ, այլ հաճելի պարտականություն դիտի:

Փոքր-ինչ այլ են Հայ եկեղեցու գործառույթները սփյուռքում: Այստեղ, հավատացյալ ժողովրդի կրոնական պահանջմունքները բավարարելուց բացի, եկեղեցին իրականացնում է նաև տվյալ երկրում ապրող հայերի գաղափարական միավորման, եկեղեցու (միջնորդավորված՝ հայրենիքի) շուրջ համախմբման, հայապահպանության, հետևաբար՝ ազգային անվտանգության խնդիրները⁴⁹:

Բացի Հայ եկեղեցուց, Հայաստանում գործում են նաև ավանդական այլ եկեղեցիներ (կաթոլիկ, ուղղափառ, ասորի), բազմաթիվ կրոնական ուղղություններ (վաղ բողոքական) և աղանդավորական խմբեր: Վերջին 30-40 տարիների ընթացքում և հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո հայ ազգային հասարակական կյանքը վրդովող երևույթներից մեկը օտարամուտ ու կասկածելի ծագման կրոնական ուղղությունների՝ տարեցտարի ուժգնացող թափանցումն է Հայաստան՝ իրենց աղմկահարույց գործունեությամբ: Այդ ուղղությունները ժողովուրդն անվանում է «աղանդ», իսկ գիտական գրականության մեջ՝ նաև «ոչ ավանդական պաշտամունքներ», «նոր դարի կրոններ», «պարականոն (եկեղեցու կողմից չկանոնականացված, չօրինականացված) հավատալիքներ», «այլընտրանքային կրոններ» և այլն: Դրանց զգալի մասն իր բնույթով քրիստոնեական է (համեմատաբար մոտ կամ հեռու (մարզինայ) են ավանդական քրիստոնեական եկեղեցիներին), մյուսներն արևելյան բնույթի են, երրորդները՝ սինկրետիկ, համապիտանի (ունիվերսալ) միավորումներ, գաղտնագիտական (օկուլտիստական) ուսմունքներ և այլն:

Հայաստանում աղանդավորության ծավալած գործունեությունը խիստ վտանգավոր է ոչ միայն հոգևոր-բարոյական, այլև ազգային անվտանգության տեսանկյունից, որովհետև այդ կառույցները.

⁴⁹Հայ եկեղեցու դերի գնահատման հարցի մանրամասն քննությունը տե՛ս Ա. Սարգսյան, Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999, էջ 127-141:

1. Իրենց ապագային քարոզչությամբ թուլացնում են հայի էթնիկ ինքնագիտակցությունը: Որոշ աղանդներ ազգային պատկանելությունը համարում են պարզ պատահականություն և զուտ ֆիզիոլոգիական երևույթ: Այդ քարոզչությունը և դրան համապատասխան գործունեությունը թուլացնում են հայի ոգին, ազգային «էգոն», դիմադրողական ուժը, ճանապարհ բացում ապագային գործունեության, իսկ ազգային խնդիրների լուծման մեջ՝ անտարբերության: Աղանդավորական գաղափարախոսության մեջ մարդն ազգի ու հայրենիքի կրողն ու ներկայացուցիչը չէ, այլ դարի ու ժամանակի:
 2. Պառակտում են ազգն իրենց պահանջներով, կաշուն գաղափարախոսությամբ, ծեսերով:
 3. Պայքարում են եկեղեցական այնպիսի տոների և արարողությունների դեմ, որոնցով մարդն ընդգծում է իր պատկանելությունը տվյալ էթնոմշակութային հանրության (մոմավառություն, մատաղ, կնունք, պսակադրություն):
 4. Որոշ աղանդների երիտասարդներ հրաժարվում են բանակում ծառայելուց, ազգային պետական խորհրդանիշներն ընդունելուց:
 5. Ղեկավարվում են արտասահմանյան կենտրոններից, որոնք այստեղ կրոնական քարոզչությունից բացի, կարող են ունենալ նաև այլ շահեր, հետաքրքրություններ, հետապնդել քաղաքական նպատակներ:
- Հենց այդ պատճառով էլ այդ կառույցների գործունեությունը և քարոզչությունը ՀՀ-ում դարձել է ոչ միայն հայոց հոգևոր-բարոյական միասնությունը խարխլող, այլև բուն իմաստով ազգային անվտանգության սպառնալիք:
- Այստեղից էլ՝ առաջարկվող այն միջոցառումները, որոնցով հնարավոր է դիմակայել աղանդավորության քարոզչությանը և գործունեությանը: Դրանց մեջ առանձնացնենք **կրոնական** և **ազգային-քաղաքական** կողմերը: Կրոնական տեսակետից խնդիրը Հայ եկեղեցունն է: Եկեղեցին պետք է այնպիսի գործունեություն ծավալի (այդ մասին՝ քիչ հետո), այնպիսի նկարագիր և հեղինակություն ունենա, որ կրոնական պահանջներ ունեցողները նախապատվությունը չտան աղանդին:

Բայց աղանդների գործունեության հետևանքները նաև ազգային-քաղաքական են, և, այս առումով, ճիշտ չէ աղանդների ազդեցության հաղթահարումը միայն եկեղեցու պարտականություն դիտելը: Անշուշտ, եթե անհատը, իր կրոնական պահանջումները բավարարելուն զուգահեռ, շարունակի մնալ լավ հայ, քաղաքացի, կատարի ազգային-քաղաքացիական պարտականությունները, ապա որևէ մեկը նրան մեղադրելու իրավունք չի ունենա, բայց փորձը ցույց է տալիս, որ աղանդավորները դադարում են գործուն քաղաքացի լինելուց, երբեմն դառնում են կրոնախն, հրաժարվում են ազգային սովորույթներից ու պարտականություններից, զինապարտությունից: Ճիշտ է, ապրում են երկրի վրա, բայց, կարծեք, երկնքի քաղաքացի են, խոսում են հայերեն, բայց գիտակցությամբ, վարքագծով, կարծեք, և՛ հայ են, և՛ ոչ: Այս ամենով էլ դառնում են ազգի պառակտման, ազգի ներսում լարվածության պատճառ:

Ահա թե ինչու, նրանց գործունեությանը և գաղափարախոսությանը հակազդեցությունը, կրոնականից բացի, ձեռք է բերում ազգային-քաղաքական նշանակություն, դառնում ազգային անվտանգության խնդիր:

Այժմ համառոտ՝ առաջարկվող համալիր ծրագրի մի քանի դրույթի մասին:

1. Ազգային իշխանությունների գործունեությունը: Իշխանությունների դերը պետք է լինի հստակ քաղաքականությունը՝ երեք ուղղությամբ.

ա) Օրենսդրական կատարյալ դաշտի ստեղծում՝ ներառյալ ոչ միայն խղճի ազատության ապահովումը, այլև կրոնական կազմակերպությունների գրանցման, հոգեորության արգելման իրավական-իրավաբանական ավելի հստակ, որևէ սողանք չթողնող ձևակերպումները:

բ) Իշխանությունները, միաժամանակ, պետք է իրականացնեն ուղղորդված սոցիալական քաղաքականություն, հրապարակային ու հասկանալի դարձնեն այն ջանքները, որոնք ուղղված են սոցիալական արդարության հաստատմանը, մարդու իրավական պաշտպանվածությանը, աղքատության հաղթահարմանը:

գ) Պետությունը նաև պետք է առաջադրի համազգային այն-

պիսի գաղափարներ, որոնք ի գորու լինեն միավորելու մարդկանց, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի սեփականությունը՝ անկախ դավանանքից, դրանց իրականացումը դիտեն որպես ազգի գոյության նպատակ և իմաստ: Նման համազգային գաղափարների մշակման և ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում ակտիվորեն պետք է մասնակցեն մեր մտավորականները:

2. Եկեղեցու գործունեությունը: Որպեսզի կրոնական պահանջումներ ունեցող մարդը եկեղեցին նախընտրի աղանդից, մեր հոգևորականները պետք է իրենց քարոզչության և գործունեության մեջ էական շտկումներ կատարեն: Ոչ թե հեռուստախցիկի առջև նստած մարդկանց նախատեն եկեղեցի չհաճախելու, ծեսերին չմասնակցելու համար, այլ գնան դեպի ժողովուրդը: Հոգևորականները պետք է ազատվեն այն թյուր մտայնությունից, թե անցյալում կատարած ծառայությունների համար ողջ ազգով պարտք ենք եկեղեցուն, և դրա գինը ազգովի եկեղեցու հպատակ դառնալն է: Հայ եկեղեցին, հոգևորականությունն իր գործունեությամբ պետք է արժանի դառնան հայ ժողովրդին: Նրանք պետք է առաջնորդվեն այն համոզմունքով, որ իրենք են ժողովրդի համար և ոչ թե՝ հակառակը:

3. Մասնագետների գործունեությունը: Այս բնագավառում լուրջ դժվարություններ կան: Ակնհայտ է մասնագետ կրոնագետների պակասը: Թեև մեկ տասնամյակից ավելի է, ինչ Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը շրջանավարտներ է պատրաստում, բայց նրանք դառնում են ոչ թե կրոնագետ մասնագետներ, այլ, փաստորեն, հայ եկեղեցու աշխարհիկ ջատագովներ, ինքնատիպ աշխարհիկ հոգևորականներ: Նրանք իրենց քարոզչության մեջ անաչառ չեն և պարզապես ձգտում են, Րաֆֆու խոսքով, «հայրենի եկեղեցուց բաժանված եղբայրներին կրկին դարձնել Լուսավորչի փարախը...»: Մինչդեռ, աղանդավորության խնդրում կարևորը մարդկանց մեջ ազգայնության գաղափարի արմատավորումն է, ազգային ինքնագիտակցության, հայ լինելու հպարտության զգացման ձևավորումը, հանուն ազգային ու հասարակական իդեալների ապրելով ու գործելով մեր կյանքն իմաստավորելը. գաղափարներ, որոնց յուրացման և իրականացման աստիճանով պետք է պայմանավորվի յուրաքանչյուրիս վերաբերմունքը ամեն մի դավանության նկատմամբ: Ավելին, աղանդի

մեջ հայի որոնումը պետք է ուղեկցվի մարդու որոնմամբ: Պահանջվում է համառ, հետևողական, համբերատար, հասցեական աշխատանք: Հայիոյելով և միմյանց մեղադրելով խնդիր չի լուծվում:

Հայաստանի Հանրապետությունում, կրոնական ուղղությունների բազմազանությամբ հանդերձ, հասարակության մի հատվածի կրոնական պահանջումների բավարարումը թերատ է. այդ մարդիկ եկեղեցուց հիասթափված են, իսկ աղանդները վախեցնող և վանող են:

բ) Կրթությունը և գիտելիքը որպես ազգային անվտանգության բաղադրիչներ

Տեխնածին քաղաքակրթության կարևոր բաղադրիչներ են գիտելիքը, մտավոր կարողությունը, որովհետև ողջ տնտեսությունը դառնում է գիտատար, գիտելիքահենք, գիտությունն է զարգացնում տնտեսությունը: Բիզնեսը, շուկայական հարաբերությունները ձևավորել են գիտելիքի նոր հայեցակարգ, որն իր հերթին փոխում է կրթության բնույթը: Եթե նախկինում գիտելիքը, գիտությունը հենվում էին աշխարհի լուսավորական* պատկերի վրա և ընկալվում որպես բացարձակ արժեք, ապա այսօր իշխող է դառնում պրագմատիկ հայեցակարգը, առաջին պլան է մղվում «օգտակար գիտելիքը», այսինքն՝ այն գիտելիքը, որն անմիջական տնտեսական օգուտ է տալիս: Այս հայեցակարգը վերածվում է գիտնականի, դասախոսի կերպարը: Բուհը գիտության տաճարից վերածվում է բիզնես կազմակերպության: Դարեր շարունակ համալսարանական կրթությունը դիտվել է որպես սուրբ գործ: Այսօր Եվրոպայում համալսարանները ստիպված հրաժարվում են իրենց նախկին կարգավիճակից, տալիս են ամենակիրառելի, շուկայում պահանջարկ ունեցող և արագ վաճառվող գիտելիք:

* Ընթերցողին նորից հիշեցնենք, որ Լուսավորականությունը, որպես գաղափարական և մշակութային շարժում և հայեցակարգ, ձևավորվել է Եվրոպայում, XVII դարում՝ Անգլիայում, XVIII դարում՝ Ֆրանսիայում, որի հիմնական պահանջը բանականության արմատավորման, լուսավորության, գիտության և առաջադեմ կրթության ու դաստիարակության ներդրման ու տարածման միջոցով բոլոր հասարակական-քաղաքական խնդիրների լուծումն էր:

Բուհի սոցիալական առաքելությունը նախկինում պետության համար ինստիտուցիոնալ զենք լինելն էր, հիմա սա վիճարկվում է: Բուհը ազգային մշակույթի կենտրոն համարելը այլևս մոդայիկ չէ: Միավորված Եվրոպային այլևս պետք չեն նեղ ազգային համալսարաններ:

Համալսարանը դառնում է ձեռնարկատիրություն, կողմնորոշվում է դեպի կորպորացիան և անհատական սպառողը:

Բարձրագույն հաստատությունները, ըստ շուկայական հարաբերությունների պահանջների, պետք է արտադրեն ապրանքներ, ծառայություններ և վաճառեն դրանք: Շրջանառվում են «ակադեմիական կորպորացիա», «ուսանող-հաճախորդ» հասկացությունները: Գոյատևում են այն համալսարանները, դասախոսները, որոնք ոչ միայն գիտելիք են տալիս, այլև կարողանում են ստացված արդյունքը վաճառել շուկայում: Յուրաքանչյուր դասախոս պետք է իր տված գիտելիքներով և վարքագծով ուսանող հրապուրի: «Գնորդը միշտ իրավացի է» կարգախոսը մտնում է համալսարան: Գնորդը ուսանողն է:

Այս բոլորի հետևանքով.

1. Տեղի է ունենում հիմնարար գիտելիքի կորուստ, որովհետև շուկայում պահանջարկ չունի:
2. Ինչպես բիզնես կազմակերպությունները, կորպորացիաները, համալսարանները նույնպես, որպեսզի դառնան հրապուրիչ, իրենց տարածքներում փորձում են իրականացնել սոցիալական ծրագրեր, սոցիալական խնդիրներ լուծել՝ դրանք անվանելով «ծառայել ժողովրդին», մեծ տեղ են հատկացնում համացանցին, համակարգչին:

Այս ամենը փոխում է ուսանողների և նրանց ծնողների վերաբերմունքը համալսարանական կրթության նկատմամբ: Այն դառնում է սպառողական: Բուհի ընտրության հարցում հաշվի են առնում այնպիսի արտաքին հատկանիշներ, ինչպիսիք են վարկանիշը, թողարկման որակը (բրենդը, օրինակելի նմուշը), գեղեցիկ և համոզող կատալոգը, լավ գովազդը, ժամանակակից կայքի առկայությունը: «Գին-որակ» սկզբունքը դառնում է առաջատար: Համալսարանը կարծես դառնում է գիտելիքի սպառման հզոր շուկա:

Ուսանողական կրթությունը դադարում է երիտասարդի հիմնական նպատակը, պարտականությունը լինելուց, կատարում է այլ գործերին՝ անձնական կյանք, աշխատանք, զուգահեռ: Համալսարանական ողջ կրթությունը ընդգրկվում է վիրտուալ համակարգի մեջ՝ հեռավար կրթություն, համացանց, մինչդեռ, պրոֆեսորը, դասախոսը պետք է մատչելի և հասանելի լինեն: Ակադեմիական դասախոսություններին փոխարինելու է գալիս «թոք-շուն»։ Ամեն ինչ արվում է նոր հաճախորդ-ուսանող ձեռք բերելու համար:

Մերձենում են զբոսաշրջությունն ու ուսուցումը, համալսարանն իր ներկայացուցիչները պետք է ունենա ողջ աշխարհում, իր ուսումնական կենտրոնները՝ տարբեր երկրներում: Համալսարանները պետք է հարմարվեն շուկային և դառնան մրցունակ:

1999 թ. իտալական Բոլոնիա քաղաքում եվրոպական 29 երկրների ներկայացուցիչներ ստորագրեցին «Բոլոնյան կոնվենցիան», որով որոշեցին ստեղծել միասնական կրթական տարածք, որը կհենվի կրթական նույն սկզբունքների և կանոնների վրա և կընդունվի կոնվենցիայի մասնակից բոլոր երկրների կողմից: Բոլոնյան գործընթացի նպատակն է ստեղծել կրթության եվրոպական մոդել և տարածել ողջ աշխարհում: Ամրագրվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի համակարգերը, հետո ավելացավ դոկտորական մակարդակը՝ որպես երրորդ աստիճան: Ներմուծվեց կրեդիտների համակարգը, դիպլոմի հավելվածը:

Հայաստանի Հանրապետության բուհական համակարգը, այդ թվում և՛ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ներառված են Բոլոնյան կրթական համակարգում: Մեզանում նույնպես ամրագրված են կրթության եռաստիճան համակարգը, քննությունների հանձնման միջոցով կրեդիտների կուտակումը, զգալի քայլեր են կատարվում դեպի շուկա կողմնորոշվելու, պահանջարկ ունեցող մասնագիտությունների բացման, մրցունակ ուսանող պատրաստելու ուղղությամբ: Կարծես, ամեն ինչ արվում է ուսանողին հիմնարար կրթություն և գիտելիք տալու, ուսանողի մեջ կրթությունն ու գիտելիքը որպես արժեքներ ամրակայելու ուղղությամբ: Բայց վերջին տարիների դիտարկումները ցույց են տալիս, որ ուսանողական միջավայրում կրթությունից ու հիմնարար գիտելիքից սահուն անցում է կատարվում գիտելիքով չամրագրված դիպլոմի ձեռք բերմանը:

Մենք միշտ ենք հպարտացել մեր ժողովրդի ներուժով, նրա մտավոր կարողությամբ: Հայ մարդը նման կարողությունների միջոցով է դիմակայել դժվարություններին, հաղթահարել դրանք և պահպանվել որպես ազգ ու տեսակ: Այդ պատճառով էլ կրթվածության, մտավորականության, գիտելիքի՝ որպես արժեքների նկատմամբ հակվածության, հարգանքի պակասը կամ անտեսումը դառնում են ազգային անվտանգության լրջագույն խնդիրներ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ մանրամասն անդրադառնանք կրթության և գիտելիքի՝ որպես արժեքների (նաև հանրային, ժողովրդական ընկալման մակարդակներում) և այն պատճառների վերհանմանը, որոնք ձևավորեցին այսօրվա աննպաստ հոգեբանական մթնոլորտը, վերաբերմունքը կրթության և գիտելիքի նկատմամբ:

Մեր ժողովուրդը միշտ էլ մեծ հարգանք է ունեցել կրթության, ուսյալ մարդու, գիտելիքի նկատմամբ: Հայ ծնողն իրեն հազար ու մի գրկանքի է ենթարկել՝ զավակին կրթության տալու համար: Այդ պահանջին համապատասխան էլ ստեղծել ենք ցածր ու բարձր կարգի դպրոցներ: Դպրոցներում, վարժարաններում հայ մանուկը, պատանին, երիտասարդը ձեռք են բերել ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներ: Նույնիսկ պետության բացակայությունը խոչընդոտ չի հանդիսացել, որպեսզի ժողովուրդն ամենուր ստեղծի դպրոցներ: Մշակութաբանական գրականության մեջ գիտելիքի՝ որպես արժեքի խնդիրն քիչ է ուշադրություն դարձվել, որովհետև գիտելիքը նույնացվել է ճշմարտության հետ, իսկ ճշմարտությունն իր գոյաբանական (այն, ինչը գոյություն ունի) և իմացաբանական (մտքի համապատասխանությունը իրականությանը) կարգավիճակներում արժեք չէ կամ արժեքաբանորեն չեզոք է: Դրանով հանդերձ, որոշակի սոցիալ-մշակութային, գաղափարախոսական (կրոնական, դասակարգային, կուսակցական և այլն) միջավայրում և իրավիճակներում կարող է դառնալ արժեք կամ զրոհաբերվել արժեքներին: Եթե Արիստոտելը առաջնորդվում էր «Թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է» կարգախոսով, ապա շատերս ենք ապրում «Թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է» սկզբունքով:

Լայն ըմբռնմամբ արժեքը աշխարհի անհատականորեն գունավորված ընկալումն է, որն առաջանում է տեղեկատվության,

գիտելիքի կամ կենսափորձի հիման վրա: Նման մոտեցման դեպքում արժեքի կարևորագույն բաղադրատարր, նույնիսկ կազմիչ տարր է դառնում գիտելիքը: **Նեղ ըմբռնմամբ արժեքը կենսականորեն կարևորն է, նշանակալիցը, թանկն ու հարազատը, որը հոգեմտավոր իմաստավորման է ենթարկվում մշակութային սուբյեկտի կողմից և ուղղորդում նրա վարքը որոշակի չափորոշիչների (իդեալ, նպատակ) տեսանկյունից:** Այս ըմբռնմամբ արժեքը այն ամենն է, ինչը դրական նշանակություն ունի մարդու համար: Ուստի «բացասական արժեք» արտահայտությունը սխալ է և նման է «բարի-չար», «գեղեցիկ-տգեղ» բառազույգերին: Արժեքի հակառակ կողմը հակարժեքն է:

Եթե արժեքը մարդու համար դրական նշանակություն ունեցողն է, ապա հակարժեքը՝ բացասական նշանակություն ունեցողը: Օրինակ, գեղեցիկը արժեք է, տգեղը՝ հակարժեք, բարին արժեք է, չարը՝ հակարժեք, գիտելիքը արժեք է, տգիտությունը՝ հակարժեք, դաստիարակվածությունը արժեք է, անդաստիարակությունը՝ հակարժեք, և այդպես շարունակ:

Արժեքների հիմքի վրա է ձևավորվում արժեհամակարգը, որը **անհատի կամ հանրության արժեքային պարկերացումների (արժեքների) ընդհանրական գումարն է, որը ձևավորում է անհատի կամ հանրության հոգեկերպվածքը և դառնում նրանց գործունեության կերպը պայմանավորող ամենավճռական գործոնը:**

Գիտելիքի երկու ըմբռնում գոյություն ունի՝ լայն և նեղ:

Լայն իմաստով ըմբռնված գիտելիքը տեղեկատվությունն է շրջապատի, բնության, մարդկային հարաբերությունների, առհասարակ՝ իմացության օբյեկտի մասին, որը հոգևոր գործունեության ձևերում (գիտություն, փիլիսոփայություն, արվեստ և այլն) կարող է դառնալ ուսումնասիրության առարկա:

Նեղ իմաստով ըմբռնված գիտելիքը հիմնավորված, հավաստի և անսխալ կարծիքն է, որը համապատասխանում է իրերի իրական վիճակին և ունի հիմնավորվածություն: Այս սահմանման մեջ առանձնացվում է երեք կողմ.

- ա) ճշմարտություն (համարժեքություն, համապատասխանություն),
- բ) համոզվածություն,

գ) հիմնավորվածություն:

Գիտելիքը բարձրանում է այս երեք սյունների վրա: Թվարկվածները հաշվի առնելով՝ **գիտելիքը կարելի է սահմանել որպես համարժեք (աղեկվապ) և հիմնավորված համոզվածություն կամ հավաստի և անսխալ համոզվածություն:** Առանձնացվում է գիտելիքի երկու ընդհանրական մակարդակ.

ա) ողջախոհության (ամենօրյա-առօրյա), որը մարդկանց պատկերացումների ամբողջությունն է բնության, հասարակության, շրջապատի, իր մասին, որոնք ձևավորվում են ամենօրյա կենսափորձի և շփումների ընթացքում,

բ) գիտական, որը ուսումնասիրվող առարկայի, օբյեկտի մասին հավաստի և անսխալ գիտելիքն է:

Լայն իմաստով ըմբռնված գիտելիքը իրագեկվածությունն է, տեղեկացվածությունը, որը կարող է լինել գիտական և արտագիտական (գիտականից դուրս, ոչ գիտական, բայց նաև հակագիտական): Նման գիտելիքներ գոյություն ունեն բարոյականության, արվեստի, գաղափարախոսության, ողջախոհության մեջ, կրոնում, գաղտնագիտական ուսմունքներում և այլն⁵⁰:

Այդ գիտելիքների ձևավորման աղբյուրն ընթերցանությունն է, շփումը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, նախորդ սերունդների կողմից կուտակված սոցիալական փորձի յուրացումը, կենսափորձի իմաստավորումը, արդյունքում՝ ինքնահասունացումը, ինքնահաստատումը, ինքնահայեցողությունը՝ ռեֆլեքսիան:

Սովորական ողջախոհության, կենսափորձի կուտակման, իմաստավորման արդյունքում ձևավորվում են ժողովրդական իմաստության կրողներ, իմաստուններ, որոնք կարող են նույնիսկ դպրոցական կրթություն չունենալ: Օրինակ, հայ գյուղացին դարեր շարունակ հող է մշակել, ակոս բացել (առանց ակոսի բանաձևն իմանալու), առատ բերք ստացել, հրաշալի հասկացել բնության «լեզուն»:

⁵⁰Կանտը գիտականից դուրս գտնվող գիտելիքները տեղափոխեց հավատի ոլորտ: Բայց կանտյան այս հավատը որևէ կրոնական տարր չունի, որովհետև դրանց գոյությունը պայմանավորված չէ գերբնականով, այնկողմնային աշխարհով, այլ պարզապես կարծիքներ են, որոնք գիտական հիմնավորվածություն չունեն (ինչպես օրինակ՝ անտիոնոմիաները): Ուստի ճիշտ չէ կանտյան իմացության տեսության մեջ ֆիդեիզմ տեսնելը կամ որոնելը:

Ավելի դժվար է գիտական գիտելիքի ձեռք բերման ուղին, ուստի ավելի ընդգծված է եղել ժողովրդի հարգանքը նմանատիպ գիտելիք կրողների նկատմամբ, որոնք դիտվել են նաև արժեքների կրողներ:

Ժողովրդական լայն միջավայրում դարեր շարունակ իշխել է այն մտայնությունը, թե գիտության մարդն ավելին է հասկանում, ավելի խորն ու հեռուն է տեսնում, քան սովորական մահկանացուն: Նա իր համար բացահայտել է աշխարհի ու մարդկային կեցության գաղտնիքը և սեփական գոյության խորհուրդը, այսինքն՝ գիտելիքը նույնացվել է իմաստնության և արժեքի հետ:

Շատ են դեպքերը, երբ իրադարձությունների, իրավիճակների ոչ հստակությունը, ոչ կանխատեսելիությունը ստիպել են սովորական մարդուն դիմել գիտուն, գիտնական մարդուն՝ «Դու խելոք մարդ ես, կիմանաս՝ սրա վերջն ի՞նչ է լինելու» հարցմամբ:

Տեսության մեջ գիտելիքի՝ որպես արժեքի ըմբռնումը գալիս է **Սոկրատեսից**: Սոկրատեսի կարծիքով՝ ճշմարիտ գիտելիքը բարոյական կատարելության աղբյուր է, բարիք, որին հետևող մարդը ձեռք կբերի հոգու անխռով վիճակ, այսինքն՝ կդառնա երջանիկ:

Գիտելիքը բարձրագույն առաքինություն է, բարիք, իսկ տգիտությունը՝ չարիք: Առաքինությունները մարդը ձեռք է բերում ճանաչողության և ինքնաճանաչողության միջոցով, համոզված էր Սոկրատեսը:

«Գիտելիքը բարիք է» կարգախոսը Եվրոպայում պահպանվեց մինչև XVII դարը, երբ անգլիացի փիլիսոփա **Ֆ. Բեկոնը** հռչակեց «Գիտելիքը ուժ է» կարգախոսը:

Վաղ միջնադարի հայ նշանավոր փիլիսոփա **Դավիթ Անհաղթը**, հետևելով **Արիստոտելին**, փիլիսոփայական գիտելիքի մեջ առանձնացրեց տեսական և գործնական բաժիններ (ըստ Արիստոտելի՝ երրորդը գեղարվեստականն էր):

Գործնական գիտելիքն է (բարոյագիտություն, տնտեսագիտություն, քաղաքականություն), ըստ Անհաղթի, մարդուն և հասարակությունը ազատում արատներից և առաքինության ուղին ցույց տալիս, օգնում հասնել բարուն և գեղեցիկին, ընտրել բարին, մերժել չարը և ապրել առաքինի կյանքով, որովհետև առաքինությունը երջանկություն է, իմաստնության մայրը, երջանիկ է նա, ով ապ-

րում է առաքինությանը համապատասխան, չի տրտմում ո՛չ փորձությունների, ո՛չ արտաքին պարտադրանքների, ո՛չ հարստության, ո՛չ ունեցվածքի, ո՛չ էլ դրանց կորստի դեպքում:

Հայ ժողովուրդը թե՛ հայրենիքում, թե՛ ամենուր առաջին հնարավորության դեպքում կառուցել է եկեղեցի, հիմնել դպրոց, որովհետև հարգանք, նույնիսկ ակնածանք է ունեցել ճշմարիտ հոգևորականի և ուսուցչի նկատմամբ, որովհետև այն համոզմանն է եղել, որ հավատն ու գիտելիքն են մարդու կարևորագույն առաքինությունները, երկիրը փրկող ու շեն պահող գործոնները: Ժողովրդական ընկալումներում գիտելիքը կապվել է ոչ միայն գիտություն, իմաստության, այլև համեմատաբար հանգիստ ապրելու, երաշխավորված ապագայի, ընդհանրացված՝ «մարդ դառնալու» հետ:

Այս գործոններով էին պայմանավորված դպրոցաշինության լայն տարածումը և համեմատաբար բարձր կարգավիճակը մեզանում:

Աշխարհին են հայտնի միջնադարյան կրթության նշանավոր կենտրոններ Անիի, Կարսի, Հաղպատի, Սանահինի, Կեչառիսի, Այրիվանքի, Նարեկավանքի, Մշո Ս. Կարապետ վանքի, Գլաձորի, Տաթևի վարդապետարաններն ու համալսարանները, Կիլիկիայի բժշկանոցները և այլն, որոնցում դասավանդում էին ոչ միայն յոթ ազատ արվեստները՝ տրիվիում (եռյակ արվեստ՝ քերականություն, հռետորություն, դիալեկտիկա), քվատորիում (քառյակ արվեստ՝ թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն, աստղաբաշխություն), այլև բազմաթիվ այլ բնական գիտություններ, իսկ բժշկանոցներում կատարում էին դիահերձում, որը Եվրոպայում արգելված մնաց մինչև Նոր ժամանակները: Այդ բժշկանոցներում սովորել են նաև մարդակազմություն (անատոմիա), նորմալ բնախոսություն (ֆիզիոլոգիա), որոնք Եվրոպայում, որպես ուսումնասիրության առարկաներ, գոյություն չեն ունեցել:

Ճիշտ է, մի որոշակի շրջան ունեցել ենք նաև խալիֆայական տիպի տարրական դպրոցներ, որոնցում որպես ուսուցման միջոց իշխել է ծեծը (այդ կրթության մասին գրում են Րաֆֆին և Հովհաննես Թումանյանը), և, հավանաբար, դրանով կարելի է պայմանավորել այն արտահայտությունը, որ արտաբերում էին ծնողները իրենց զավակներին ուսուցչին հանձնելիս՝ «Միսը քեզ, ոսկորն ինձ»:

Բայց XIX դարից նման դպրոցներն աստիճանաբար վերանում են, ստեղծվում են կրթության և ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնող դպրոցներ:

XIX դարի երկրորդ կեսից մշակվում է ազգային կրթության ու դաստիարակության նոր հայեցակարգը (բաց ենք թողնում կրթության «գրաբար-աշխարհաբար» և «կրոնական-աշխարհիկ» բանավեճերը), որում մեծ ուշադրություն է դարձվում գիտելիքի արժեքային կողմին: Մասնավորապես, այդ ժամանակահատվածի հայ մտածողները համոզված էին, որ չկա հասարակական կյանքի որևէ բնագավառ, որը հնարավոր չլինի փոխել և կատարելագործել առաջադեմ կրթության ու դաստիարակության միջոցով, նույնիսկ ազգի ապագան էին պայմանավորում կրթությամբ և դաստիարակությամբ:

Սյր. Պալասանյանի համոզմամբ. «Այն օրը, երբ կրթութունը վերջին գիղի խրճիթը մուտք կը գտանէ, ազգերի տնտեսական բարօրութիւնը և քաղաքական ազատութիւնը ավահոված կը լինի»⁵¹, որովհետև մարդկությունը դաստիարակությամբ փրկվեց վայրենությունից, տգիտությունից, թշվառությունից, նախապաշարումներից⁵²:

Ծերենցը համոզված էր, որ ազգային դաստիարակության համար աշխատողը ազգի փրկության համար է աշխատում, «... ով որ ուսմանց ծավալման կաշխատի... Ժողովրդյան բարոյականին համար կաշխատի և անոնք կրնան ըլլալ երկրի մը երջանկության, հարստության և անդորրության աղբյուրները»⁵³:

Հայ մտածողները կրթությամբ ու դաստիարակությամբ էին պայմանավորում նաև մարդու ոգու բնույթը՝ ազատ ապրելու ձգտումը կամ ստրուկի հոգեբանությունը: Ըստ **Մ. Մամուրյանի**՝ կրթությունը «... կրնա՝ ըստ տեսակին, զայն կնամարդի ու ստրուկ ընել, կամ արի ու ազատ»⁵⁴:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանը դարձավ ամենակրթված երկրներից մեկը աշխարհում:

⁵¹Սյր. Պալասանյան, Ազգային կրթութիւն, Եր., 1991, էջ 13:

⁵²Տե՛ս Մ. Չերազ, Ազգային դաստիարակութիւն, Կ. Պոլիս, 1871, էջ 81:

⁵³Մեջբերումը տե՛ս Ռ. Նանումյան, Ծերենց, Եր., 1986, էջ 69-70:

⁵⁴Մ. Մամուրյան, Երկեր, Եր., 1966, էջ 175:

1976-1977 ուստարում մեզ մոտ յուրաքանչյուր 10 հազար բնակչին բաժին էր ընկնում 191 սովորող, մինչդեռ Իրանում՝ 37, Թուրքիայում՝ 49, ԳՖՀ-ում՝ 70, Անգլիայում՝ 90, Իտալիայում՝ 120: Աշխարհում գրավել ենք առաջին տեղերից մեկը:

1977-1978 ուստարում գործել է 1522 հանրակրթական դպրոց, որտեղ սովորել է 631 հազար աշակերտ, 65 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ սովորել է 54,8 հազար մարդ: 43 հազար պատանիներ և աղջիկներ սովորել են պրոֆտեխնիկական ուսումնարաններում: Նույն ժամանակահատվածում աշխատել է 40.8 հազար ուսուցիչ:

Հանրապետության բուհերում նույն ուստարում սովորել է 56.4 հազար ուսանող: Հազարների է հասնում այն հայ ուսանողների թիվը, ովքեր սովորել են այլ բուհերում: Հետպատերազմյան տարիներին միայն Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանն ավարտել է 2000 հայ:

1978 թ. հանրապետությունում գործել է 100 գիտահետազոտական ինստիտուտ: 1977 թ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան ուներ 43 իսկական անդամ, 54 թղթակից անդամ, 3 օտարերկրյա և 4 պատվավոր անդամ⁵⁵:

Ինչպիսի՞ն են տվյալները մեր նորանկախ հանրապետության վերջին շրջանում:

Ըստ ուսումնասիրությունների՝ Հայաստանի Հանրապետությունը ընդհանուր կրթական ցուցանիշներով 118 երկրների մեջ 2013 թ. զբաղեցրել է 74-րդ տեղը, 2015-16 ուստարում՝ 102-րդ տեղը:

Բարձրագույն կրթության դիպլոմ ունեցողների քանակով աշխարհում երրորդն ենք, համալսարանների քանակով՝ 76-րդը, բարձրագույն կրթությանը հատկացված գումարով՝ 98-րդը, գիտական ինստիտուտների որակով՝ 96-րդը: Մենք առաջ ենք միայն Բուրկինա Ֆասոյից, Մադագասկարից, Մոզամբիկից, Զիմբաբվեից, Բանգլադեշից, Ալժիրից, Ուրուգվայից, Եթովպիայից, Պակիստանից⁵⁶:

⁵⁵Թվական տվյալները տե՛ս Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն (1801-1978), Եր., 1979, էջ 589, 721, 722, 724:

⁵⁶Տվյալները վերցված են սոցիալական ցանցերից, որոնց հավաստիության նկատմամբ որևէ երաշխիք չունենք:

Եվ այսպես, նորից ներկայացնենք հիմնական ասելիքը. դարեր շարունակ հայ ժողովուրդը գիտելիքն ընդունել է որպես արժեք և մեծ հարգանք տածել գիտելիքը կրողի ու սովորեցնողի նկատմամբ, ուստի առաջին հնարավորության դեպքում ստեղծել է գիտելիքի ձևավորման, պահպանման և տարածման կենտրոններ (դպրոց, բուհ և այլն):

Ժողովրդի բացարձակ մեծամասնության պատկերացումներում գիտելիքը բարիք էր, ուժ, գիտելիքի կրողը ապրում էր համեմատաբար հեշտ (ժողովուրդը, բնականաբար, կողքից էր տեսնում, նրա համար տեսանելի չէր այն մտավոր, երբեմն տառապալից աշխատանքը, որ կատարում էին ուսուցիչը, դասախոսը, գիտնականը, մտավորականը), ապահով և հանգիստ կյանքով: Ժողովրդական լայն զանգվածների համար գիտելիք ունեցողը գիտակ, շրջահայաց, կնճռոտ հարցերի պատասխանն իմացող, վարքուբարքի մեջ չափավոր, բարեկիրթ, կոկիկ հագնված, ազնիվ մարդն էր, որը տարբերվում էր շրջապատից:

Մեծ էր հարգանքը ուսուցչի նկատմամբ, իսկ վերաբերմունքը գիտնականի, դասախոսի նկատմամբ ակնածանքի էր հասնում: Գիտությամբ զբաղվելը համարվում էր սուրբ գործ, իսկ գիտնականի կերպարը ժողովրդի համար համարժեք էր սրբի, ճգնավորի կերպարին: Այս ամենը կամ գրեթե ամենը վերջին 30 տարիների ընթացքում անցավ-գնաց: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ կորավ հարգանքը գիտելիքի՝ որպես արժեքի նկատմամբ: Այդ ո՞ր երկրում է, որ հսկայական գումար են վճարում, հետն էլ ամեն ինչ անում, որպեսզի առանց գիտելիքի դիպլոմ ձեռք բերեն:

Ինչո՞ւ աշակերտը կորցրեց պատկառանքը ուսուցչի, ուսանողը՝ դասախոսի նկատմամբ: Ինչո՞ւ են աշակերտն ու ուսանողը ուսուցչի ու դասախոսի նկատմամբ իրենց պահում այնպես, կարծես սոցիալականացման գործընթաց չեն անցել: Ինչո՞ւ ուսուցիչն ու դասախոսը կորցրին իրենց սրբի լուսապսակը: Ինչո՞ւ գիտելիքի յուրացման ու տիրապետման գործընթացը փոխարինվեց դրամի դիմաց (որպես ուսման վարձ) դիպլոմ ձեռք բերելով:

Թվարկենք այն գործոնները, որոնք, մեր կարծիքով, արժեզրկեցին գիտելիքը և այն կրողին (առաջնային և երկրորդային պատճառների առանձնացումը թողնում ենք ընթերցողին):

Առաջին՝ փլուզվեց ԽՍՀՄ-ը՝ իր հետ տանելով այն արժեհամակարգը, որով ապրել էր խորհրդային հասարակությունը:

Նախկին արժեքները դադարեցին գործելուց, նորերը դեռ չէին ձևավորվել: Հասարակությունը հայտնվեց արժեքային ճգնաժամի մեջ: Արժեքներով ապրելու ժամանակ ու տրամադրություն չկար էլ, որովհետև հասարակությունը հայտնվեց բազմաբնույթ ճգնաժամերի մեջ: Գոյատևման խնդիրը մարդուն ստրկական կախվածության մեջ դրեց աշխատանքից, գործատուից: Նա փակեց իր «սրտի դավթարը», արեց այն, ինչ պահանջում էին իրենից՝ անտեսելով մասնագիտությունը, պատիվը, կոչումն ու արժանապատվությունը:

Այս հորձանուտի մեջ հայտնվեցին նաև ուսուցիչն ու դասախոսը, գիտնականն ու մտավորականը: Ովքեր չհամակերպվեցին՝ հեռացան: Բազմաթիվ փորձառու ուսուցիչներ դուրս մնացին դպրոցներում իրականացվող բարեփոխումների (ռեֆորմների) պատճառով, փոխարենը՝ դպրոց թափանցեցին փորձ, նվիրում, երբեմն անհրաժեշտ գիտելիք չունեցողները, որոնց համար դպրոցը, մանկավարժությունը ոչ թե կոչում էին, այլ պարզապես վճարովի աշխատանք:

Յաճախ աշխատավարձը ստիպեց ուսուցչին մտնել աշակերտի (նրա ծնողների) գրպանը, զբաղվել մասնավոր գործունեությամբ, աշակերտին տանել իր տուն, նրան տեսանելի դարձնել իր կենցաղավարությունը, գործոններ, որոնք ուսուցչին դարձրին «հողեղեն»: Պարզ դարձավ, որ գնահատական ստանալը միայն գիտելիքով չէ պայմանավորված: Այս արատավոր երևույթը աշակերտն իր հետ բերեց բուհ և, որպես ուսանող, նույնկերպ վարվեց դասախոսի հետ: Կրակին յուղ լցրին մեր որոշ կոռումպացված դասախոսներ: Ահա թե ինչու առաջինից երկրորդ կուրսերում դասախոսների մի զգալի մասը զբաղվում է ոչ այնքան իր բուն գործով, որքան դպրոցի բացթողումները շտկելով:

Երկրորդ՝ տարեցտարի ահագնացող արտագաղթը նվազեցրեց աշակերտների թիվը դպրոցում, ուսանողներինը՝ բուհում: Շատ բուհեր ուսանողների մեծ պակաս ունեն: Բուհն ուսանողով ապա-

հովելու համար թուլացվեցին ընդունելության քննության պահանջները. որոշ բուհերում ուսանող են ընդունում՝ ըստ ատեստատի գնահատականի, իսկ ոչ պետական բուհերում՝ հարցազրույցով: Արդյունքում սովորելու ձգտում ունեցող ուսանողների կողքին հայտնվեցին վճարունակ երիտասարդներ: Այստեղից էլ՝ տարեցտարի թուլացող պահանջները գիտելիքի գնահատման հարցում: Գաղտնիք չէ, որ բուհում են հայտնվում երիտասարդներ, որոնք ոչ միայն գիտելիք չունեն, այլև վարվեցողության տարրական նորմերին չեն տիրապետում: Նրանց համար գիտելիքը ոչ միայն արժեք չէ, այլև, մեծ հաշվով, գլխացավանք է:

Երրորդ՝ բուհում հայտնվածների մի մասի համար գլխավորը սովորելը չէ, այլ ժամանակ անցկացնելը, որովհետև տղաների մի խմբի համար բուհը զինվորական ծառայությունից խուսափելու միջոց էր (2017 թ. Ազգային ժողովում ընդունված որոշումներում գինապարտության, մասնավորապես՝ տարկետման իրավունքի սահմանափակման հետ կապված որոշակի փոփոխություններ կատարվեցին), իսկ աղջիկների համար դիպլոմը՝ օժիտի բաղադրիչ: Թվարկված խմբերին պատկանողները դասապրոցեսի անմիջական մասնակիցներ չեն, այլ բջջային հեռախոսների վրա իրենց հմտությունները կատարելագործողներ (վերջին մի քանի տարվա ընթացքում «բջջացավը» կարծես դառնում է համատարած) կամ դիմահարդարներ:

Չորրորդ՝ համակարգիչը, համացանցն ու բջջային հեռախոսը պատանիներին, երիտասարդներին կտրեցին գրքից, ընթերցասիրությունից, համակողմանի ու հիմնարար գիտելիք ձեռք բերելուց: Ուսանողների ձեռքին մեծավ մասամբ հեռախոս է, ոչ թե դասագիրք ու գիրք: Շատ ուսանողներ քննությունների ընթացքում զբաղված են ոչ թե գրականություն կարդալով, գիտելիք ձեռք բերելով, այլ թեստեր սերտելով և ծածկաթերթիկներից օգտվելով:

Հինգերորդ՝ խիստ հակասական դեր կատարեցին ոչ պետական բուհերը: Դրանց դերն, անշուշտ, դրական էր պետական բուհեր չընդունվածներին կամ չդիմաձեններին սովորելու հնարավորություն տալու գործում: Այդ բուհերում սովորողների մեջ քիչ չէին և չեն խելացի, սովորելու ձգտում ունեցողները, ովքեր ավարտելուց հետո հաջողությամբ աշխատում են պետական և ոչ պետական

հատվածներում, երբեմն զբաղեցնում բարձր պաշտոններ: Բացի դրանից, շատ երիտասարդներ, ովքեր պետական բուհերում սովորելու հակում կամ համապատասխան պատրաստվածություն չունենին, բայց վճարունակ էին, փողոցից կտրվեցին, մտան լսարան: Եվ վերջինը, այդ բուհերում աշխատող շատ դասախոսներ կարողացան սոցիալական հարցեր լուծել, բայց վատն այն էր, որ այդ հաստատություններում (աննշան բացառություններով) հայտնվեցին բազմաթիվ անգրագետ ու անկիրթ երիտասարդներ: Նրանք ինչպես թերուս ընդունվում, նույնկերպ էլ ավարտում էին/են (դարձյալ՝ աննշան բացառություններով), ձեռք բերում դիպլոմ, որը երբեմն օգտագործում էին/են որպես մուրճ:

Վեցերորդ՝ նախկինում դպրոցից բուհ տանող ճանապարհը երկար էր: Մինչև բուհ հասնելը շրջանավարտները գնում էին գանազան պրոֆտեխնիկական ուսումնարաններ, տեխնիկումներ, մասնագիտանում որոշակի ոլորտներում և ընդունվում աշխատանքի: Այդ բոլորը վերացել է, դպրոց-բուհ ճանապարհը շատ է կարճացել, շրջանավարտը, դպրոցից դուրս գալով, բախում է բուհի դուռը: Գիտելիք, մասնագիտություն ձեռք բերելու հիմնական վայրը դարձել է բուհը. բոլորը դիմում են՝ անկախ ունակություններից և հնարավորություններից:

Յոթերորդ՝ բիզնեսի պահանջների և հոգեբանության մուտքը ուսումնական հաստատություններ, որոնց մասին արդեն նշվեց:

Բուհական կրթությունը համարելով իրենց ընդհանուր գործունեության միայն մի կողմը՝ ուսանողների գերակշիռ մասը դասերի գրեթե չի հաճախում, վատ է սովորում, նրան հետաքրքրողը ոչ այնքան գիտելիքն է, որքան դիպլոմը: Իսկ դպրոցի վերջին դասարանում սովորող աշակերտների մեծ մասը դպրոցի փոխարեն հաճախում է կրկնուսույցների մոտ՝ ընդունելության քննություններին նախապատրաստվելու նպատակով:

Այսօր մեր շատ ուսանողներ չգիտեն բաներ, որոնք գիտեին խորհրդային դպրոցի միջին դասարանների աշակերտները:

Ութերորդ՝ գիտելիքի և այն կրողի նկատմամբ արժեքի կորստում փոքր դեր չկատարեցին հայրենի հեռուստաընկերությունները, որոնցում գրեթե բացակայում են ուսումնական, գիտահանրամատչելի հաղորդումները (բացի կրոնականից, որոնցում «հաջո-

ղությամբ» հուդայաքրիստոնեություն է քարոզվում): Փոխարենը՝ հեռուստացույցից բնակարան է առատորեն ներթափանցում փողոցի լեզուն, բռնության, մարդատյացության քարոզչությունը, ամենակուլ ուռիսը, անհարգալից վերաբերմունքը գիտելիքի և դրա կրողի նկատմամբ, որոնք իդեալազրկում, հոգեզրկում են պատանուն, երիտասարդին, դարձնում ազգային արմատներից և ակունքներից կտրված անմակարդակ էակ (առանձին հեռուստաընկերությունների խիստ սահմանափակ հայագիտական, ուսումնագիտական հաղորդումները որակ չեն կազմում): Բոլորովին հիմնազուրկ և անճարակության դրսևորում են երբեմն հնչող այն արդարացունները, թե հեռուստատեսությունը ժողովրդի պահանջներն է բավարարում: Ոչ մի ժողովուրդ, ազգ չի ցանկանա կամովին այլասերվել, դառնալ հոգեմտավոր տհաս, մանկուրտ, բիրտ, մարդասպան: Էլիտար մշակույթով աշխարհի հետ չափի մեջ մտնող ազգը արաբաթաթարա-թրքական մլվոցի, բռնության, անբարոյականության, «քարե դարդի», անիմաստ, աննպատակ սերիալների պահանջ հաստատ չունի: Ազգն իր ակունքների մեջ շարունակում է մնալ բարձր բարոյականության, մարդասիրության կրող, գիտելիքը, բարձրաճաշակ արվեստը (նաև իր ժողովրդական, ազգային-ազգագրական, կենցաղային դրսևորումներում) գնահատող: Տվե՛ք այդպիսի մշակույթ, և արդյունքները չեն սպասեցնի: Չեն համոզում այն պնդումները, թե հեռուստաընկերությունները մասնավոր են, և իշխանությունները նրանց վրա ազդեցություն չունեն: Բարձր մակարդակի խորհրդակցություններում հեռուստաընկերությունների իրականացրած քաղաքականության, քարոզչության վերլուծությունը, նոր ուղիների համատեղ ուրվագծումը մասնավոր հեռուստաընկերությունների իրավունքների խախտում չեն: Հաստատ է մի բան՝ հեռուստատեսության այսօրվա քարոզչությունն իր բնույթով, էությամբ հակազգային է, եթե չասենք՝ սադրանք ազգի նկատմամբ, որը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն խնդիր:

Այս ամենի հետևանքով ընկավ հասարակության ոչ միայն բարոյական մակարդակը, այլև գրագիտության աստիճանը: Զանգվածային լրատվամիջոցներում բազմաթիվ են ոչ գրագետ, ոչ հայեցի խոսքն ու զրույցը, նախադասություններ՝ բազում տառասխալ-

ներով: Հեռուստասերիալներում հնչող լեզուն շատ հեռավոր նմանություն ունի հայերենի նույնիսկ խոսակցական մակարդակի հետ, իսկը՝ «անգրագիտության տոնավաճառ»⁵⁷:

Ամփոփենք: Հավանաբար, խտացրի գույները: Ամեն ինչ չէ, որ այդքան վատ է ու ամենակարևորը՝ անդարձ կորած: Բարեբախտաբար, դեռ քիչ չեն այն պատանիներն ու երիտասարդները (երբեմն նույնիսկ կուրսերն ու լսարանները), որոնց համար գիտելիքը և՛ ուժ է, և՛ արժեք: Նրանք գիտելիքի տիրապետման ու գործնականում ներդրման մեջ են տեսնում իրենց կյանքն ու կոչումը: Ունենք հրաշալի ուսանողներ, ովքեր տիրապետում են մի քանի լեզուների, կողմնորոշվում են համացանցում, մրցանակներ են շահում, աշխատում, ապահովում իրենց մասնագիտական առաջընթացը: Բարեբախտաբար, դեռ կան ուսուցիչներ ու դասախոսներ, ովքեր սիրում են իրենց գործը, ում համար աշխատանքը ոչ միայն գոյությունը պահպանելու միջոց է, այլև կոչում, կյանքի իմաստ:

Եվ վերջինը. երբ ճապոնիայի վարչապետին հարցրել են, թե որն էր իր երկրի աննախադեպ հաջողության գաղտնիքը, նա պատասխանել է. «Մենք ուսուցչին տվել ենք նախարարի չափ աշխատավարձ, պատգամավորի չափ կարգավիճակ և կայսեր չափ պաշտամունք»:

Մեր ուսուցիչն այդքան արտոնություն երբեք չի ունեցնել, նրան պետք է վերադարձնել այն կարգավիճակը, որն ունեցել է նախկինում, նաև խորհրդային տարիներին՝ թեև համեստ աշխատավարձ, բայց ուսուցչի արժանապատվություն, սեփական առաքելության գիտակցում: 1956 թ. ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերը կրթության ոլորտի աշխատողների հետ խորհրդակցության ժամանակ նրանց խորհուրդ տվեց ուշադրություն դարձնել խորհրդային Միության ունեցած փորձին, նվաճումներին, կրթական ծրագրերին և ոչ թե երեխաներին բթացնել՝ ստիպելով նրանց լուծել թեստեր: Մենք գնացինք հակառակ ուղղությամբ. կազմալուծեցինք խորհրդային դպրոցն ու բուհը, որոնք այդ հասարակության և համակարգի

⁵⁷Ազգային հոգևոր-բարոյական անվտանգության հարցերի վերլուծությունը տե՛ս **Ա. Սարգսյան, Ա. Սարգսյան, Յու. Հովականյան, Մ. Նիկողոսյան, Ա. Օհանյան, Ա. Մաթթյան**, ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները, Եր., 2014:

ամենակայացած կառույցներն էին: Պետք էր պարզապես փոխել գաղափարախոսությունը և համապատասխանեցնել ժամանակի պահանջներին, այլ ոչ թե կրթական ծրագրերի ուղեցույցի հիմքում դնել 1956 թվականից շրջանառող Բ. Բլումի տաքսոնոմիան («Բլումի տաքսոնոմիա») և այլ պահանջներ ու առաջադրանքներ, որոնք որևէ կերպ չեն առնչվում մեր կրթական համակարգի պատմությանը, ավանդույթներին և լավագույն նվաճումներին ու չեն բխում դրանցից, այլ նմանակումներ են: Պատմական փորձը ցույց է տալիս, որ Եվրոպայից եկող ամեն ինչ չէ, որ լավ է: Հիշենք XIX դարի հայ ազգային գործիչներից մեկի խոսքերը. «... Եվրոպայի ոչ թե քուրջերը, այլ ճշմարիտ լուսաւորականութիւնը ունենալ կ'ուզենք նէ»⁵⁸:

ՀՀ Կառավարությունը մշակել է կրթության մասին նոր օրենք, որը դեռևս նախնական քննարկումների փուլում է, արծագանքները հակասական են: Ի՞նչ կունենանք արդյունքում, ինչքանո՞վ այն կնպաստի կրթական գործի բարելավմանը, ապագան ցույց կտա:

Հարցեր կրկնության համար

1. Սահմանել «անվտանգություն», «ազգային անվտանգություն» և «հոգևոր-բարոյական անվտանգություն» հասկացությունները:
2. Պեպոթությունը ազգային անվտանգության օբյեկտ է, թե՞ սուբյեկտ:
3. Քննարկել ժամանակակից հայ ընտանիքի հիմնախնդիրները: Ներկայացնել սեփական տեսակետները հայկական ընտանիքը ամրապնդելու և ապագան ավելի ապահով դարձնելու վերաբերյալ:
4. Քննարկել Հայ եկեղեցու և Հայաստանում գործող այլ կրոնական ուղղությունների և խմբերի գործունեությունը ազգային անվտանգության տեսանկյունից:
5. Կրթության համակարգում ազգային անվտանգության հետ կապված ի՞նչ խնդիրներ եք տեսնում:
6. Ինչո՞ւ է ուսանողը ձգտում դիպլոմ ձեռք բերել՝ առանց հիմնարար գիտելիք ստանալու:

⁵⁸ **Գր. Չիլինկիրեան**, Յառաջաբան // Ծաղիկ, 1861, համար 1, էջ 1:

ԿՐՈՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ա) Քրիստոնեությունը ապակրոնացվող աշխարհում

Ըստ **Կանյոի**¹ բնությունը մարդկանց տարբերելու երկու միջոց է ստեղծել՝ **լեզուն և կրոնը**, որոնք փոխադարձ թշնամանք և պայքար ծնելու միտում ունեն:

Անդրադառնանք ժամանակակից աշխարհում քրիստոնեության և իսլամի գործունեություններին:

Քրիստոնեական եկեղեցիները XX դար մուտք գործեցին հյուժված և հեղինակագրված: Վերածնության ժամանակաշրջանից սկսված և Լուսավորականության դարաշրջանից լայն թափ առած ապակրոնացման (սեկուլյարիզացում) գործընթացները Եվրոպայում կաթոլիկ եկեղեցին զրկեցին բազմաթիվ հողային տիրույթներից (սեկուլյարիզացման առաջին իմաստ)², քաղաքական իշխանությունից, որն ի դերն հանեց աշխարհում հոգևոր-քաղաքական մենիշխանություն հաստատելու Հռոմի եկեղեցու (պապերի) նկրտումները:

Ապակրոնացումն իր երկրորդ իմաստով գործընթաց է, որը կրոնի և եկեղեցու վերահսկողությունից ազատագրում է անհատական և հասարակական գիտակցությունը, հոգևոր գործունեության մշակութային ձևերը, հասարակական հոգեբանությունը և գաղա-

¹ XVI դարից սկսած՝ ապակրոնացումը նշանակել է պետության կողմից եկեղեցական ունեցվածքի բռնագրավում: Այդ գործընթացը շարունակվել է նաև XX դարում, երբ ԽՍՀՄ-ում և սոցիալիստական ճամբարի շատ երկրներում պետությունների կողմից բռնագրավվել են եկեղեցական հողերը, ունեցվածքը, շարժական և անշարժ կայքը: Նույն երևույթը դիտվել է նաև մեզանում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր իշխանությունները բռնագրավված տարածքների, անշարժ գույքի մի մասը վերադարձրին եկեղեցուն:

փարախոսությունը, ողջ հոգևոր մշակույթը, սոցիալական, քաղաքական հարաբերությունները, ինստիտուտներն ու հաստատությունները, ընտանիքը: Այս իմաստով ըմբռնված ապակրոնացումը հանդես է գալիս որպես սոցիալական առաջադիմության կամ քաղաքակրթության զարգացման բնութագիր, կարևորագույն բաղադրիչ: Ապակրոնացման գործընթացին նպաստել են.

1. Վերածնության դարաշրջանից սկսած՝ Եվրոպայում ազգային գիտակցության զարթոնքն ու ազգային պետությունների ստեղծումը:

2. Ժամանակակից գիտության առաջացումը: Ձևավորվելով XVII դարում՝ ժամանակակից բնագիտությունը Աստվածաշունչը զրկեց ինտելեկտուալ մենաշնորհից, որովհետև մարդիկ իրենց հուզող հարցերի պատասխանը (տիեզերքի և մարդու առաջացում, կյանքի ծագում և այլն) սկսեցին որոնել ոչ թե Աստվածաշնչում, այլ գիտության մեջ: Գիտությունը մարդկանց աշխարհայացքային պատկերացումների վրա ազդում է անմիջականորեն և միջնորդավորված: Անմիջականի դեպքում գիտական հայտնագործությունները, տեսությունները, գիտատեխնիկական նորարարությունները հաստատում կամ հերքում են ավանդական, աշխարհայացքային նշանակություն ունեցող պատկերացումները և մեծ դեր կատարում կրոնական պատկերացումների խարխլման գործում (ինչպես օրինակ՝ Ն. Կոպեռնիկոսի, Ջ. Բրունոյի, Գ. Գալիլեյի, Ի. Նյուտոնի, Չ. Դարվինի գիտական տեսությունները): Այդ տեսությունների միջոցով է գիտությունն իրականացրել իր մշակութաաշխարհայացքային գործառույթները: Պատահական չէ, որ կրոնի (եկեղեցու) և գիտության միջև ամենասուր պայքարն ընթացել է XVII-XIX դարերում: Այդ ժամանակաշրջանում գիտությունը հանդես է գալիս որպես հոգևոր մշակույթի ամենաակտիվ, ամենազարգացող և աշխարհայացքային ամենամեծ գործառույթն իրականացնող ձև: Գիտության դեմ կրոնը պայքարում է նաև միջնորդավորված: Այս դեպքում գիտական գիտելիքները մարմնավորվում են արտադրության մեջ, դառնում նոր տեխնիկա, տեխնոլոգիա, թափանցում կենցաղ, բուժապասարկման ոլորտ: Գիտությունը պլանավորում, կազմակերպում է արտադրությունը, կարգավորում հասարակական հարաբերությունները և այդ ոլորտից դուրս մղում կրոնական

պատկերացումները և նախապաշարումները: Արդյունքում գիտությունը դառնում է սոցիալական երևույթ, որը էական ազդեցություն է ունենում մարդկանց աշխարհայացքի և մտածողության ապակրոնացման վրա:

3. XVIII դարից զանգվածային գիտակցության ձև և աշխարհայացքային իրողություն դարձան ազատախոհությունն ու աթեիզմը: Կրոնը տեղափոխվեց մարդու հոգևոր ոլորտ, դարձավ առանձին անհատի մասնավոր գործը, խղճի հարցը:

4. Աշխարհիկ մտավորականության դասի ձևավորումը, որը դարձավ եվրոպական հասարակության ինտելեկտուալ խիղճը, շարժիչ ուժը և ղեկավարը: Նոր ձևավորված մտավորականության աշխարհայացքը հիմնականում ապակրոնական էր, ազատական ու ազատամտական:

5. Գրատպության հայտնագործումը, գրագիտության տարածումը և մշակութային համընդհանուր իրողություն դառնալը: Աշխարհաճանաչողության ձգտումը, գիտական գիտելիքների տիրապետումը, առաջադեմ կրթությունն ու դաստիարակությունը Եվրոպայում գրագիտությունը դարձրին համընդհանուր մշակութային երևույթ:

6. Նոր ժամանակից սկսած՝ գիտելիքի հեղինակության աճը, մշակույթի ուճի ունակումը, գիտության և լուսավորության միջոցով ազգային-քաղաքական, սոցիալական հարցերը լուծելու ձգտումը մշակույթը դարձրին հասարակական և քաղաքական կյանքը վերափոխող գործոն:

Աստվածաբանների խոստովանությամբ՝ փլվում են հոգու մինարեթները, աթեիզմն ու կրոնական անտարբերությունը դառնում են իշխող, եվրոպական բազմաթիվ երկրներում զանգվածային երևույթ է դառնում կրոնականության անկումը, որը դրսևորվում է նաև եկեղեցի հաճախողների թվաքանակի կտրուկ նվազմամբ, եկեղեցիների փակմամբ: Օրինակ, Գերմանիայում վերջին շրջանում փակվել է 340 եկեղեցի, ավերվել 200 գյուղական եկեղեցի, առաջիկայում նախատեսվում է հրաժարվել 1000 եկեղեցական շինությունից: Անցած տասնամյակների ընթացքում փակվել ու վաճառվել է 515 կաթոլիկ եկեղեցի, առաջարկվում է ազատվել ևս 700-ից: Շաբաթ օրերին եկեղեցի է հաճախում բնակչության 13%-ը:

Լոնդոնում 2001 թվականից սկսած՝ փակվել է տարբեր դասնությունների 500 քրիստոնեական եկեղեցի: Մինչև 2020 թ. Անգլիայում կփակվի ևս 4000 եկեղեցի:

Առաջիկա 4 տարում Նիդեռլանդներում կփակվի 700 բողոքական եկեղեցի, միայն Բրյուսելում կփակվի 108-ը: Քաղաքի կենտրոնում գտնվող Ս. Կատերինա եկեղեցին կդառնա բանջարեղենի շուկա: Նիդեռլանդներում եկեղեցի հաճախում է բնակչության 12%-ը: Շվեդիայում ավետարանական-յուրթերական 3384 եկեղեցուց գործում է միայն 500-ը: Որոշ եկեղեցիներ վաճառվում են մեկ կրոնով: Նորվեգիայում 3000 եկեղեցուց գործում է 1200-ը: Ֆրանսիայում շատ եկեղեցիներ, այցելու չունենալու պատճառով, փակման եզրին են: Դրանք պահպանվում են միայն պետական միջոցներով և պետության օգնությամբ:

Ապակրոնացման գործընթացները եկեղեցուն ստիպեցին հարմարվել և համագործակցել կրոնի հսկողությունից ազատ գոյատևվող աշխարհի հետ, որը կրոնագիտական գրականության մեջ անվանում են «կրոնի և եկեղեցու էվոլյուցիա», «կրոնի և եկեղեցու հարմարում», «կրոնական մոդեռնիզմ», «երկխոսություն» և այլն:

Ժամանակակից աշխարհի հետ երկխոսություն ձևավորելու համար քրիստոնեական եկեղեցիները ձգտում են արդիականացվել երեք ուղղությամբ.

1. Արտաեկեղեցական ուղղություն կամ եկեղեցի-ապակրոնացվող աշխարհի փոխհարաբերության ոլորտ, որը վերաբերում է կրոնական գաղափարախոսության փոփոխություններին և ճշգրտումներին, մասնավորապես՝ եկեղեցու սոցիալական դոկտրինայի, քաղաքական կողմնորոշման, պատերազմի և խաղաղության, սոցիալական արդարության, մարդու իրավունքների, բնապահպանական, ֆեմինիզմի, միասեռականների ամուսնության և բազմաթիվ այլ հիմնախնդիրների նկատմամբ տեսակետների վերանայմանը:

2. Ներեկեղեցական ուղղություն, որը կարևորում է դավանաբանության, պաշտամունքի, հոգևորականության կրթության, կուսակրոնության պատկերացումների, ծիսապաշտամունքային որոշ կանոնների վերանայման հարցերը: Գարեգին Բ կաթողիկոսը կարծում էր, որ հայ եկեղեցու առջև «հառնած են ներեկեղեցական

չլուծված բազում հարցեր»⁵⁹, «...ծիսաարարողական ոլորտի բարեփոխումներ...», «...արդիական մտածողությամբ մեր եկեղեցու վարդապետությանը հարազատ աստվածաբանական նոր աշխատությունների հրապարակումը»⁶⁰ և այլն: Արամ Ա կաթողիկոսը կարծում է, որ եկեղեցու բարեփոխումը և վերափոխումը պետք է սկսել ծեսից, որովհետև եկեղեցում այն կենտրոնական տեղ է գրավում⁶¹:

3. Արժեհամակարգի վերաիմաստավորման ուղղություն, որը ներառում է աշխարհի, մարդու տեղի ու դերի, կյանքի իմաստի, մահվան, երջանկության, մարդու ոգեղեն էության, գիտության նկատմամբ նոր վերաբերմունքի մշակման և բազմաթիվ այլ հարցեր⁶²:

Այս ուղղություններով արդիականացումը քրիստոնեական եկեղեցիների ծրագրային քաղաքականություն է դառնում XX դարի 60-ական թվականներին:

Կաթոլիկ եկեղեցին արդիականացման խնդիրները լուծելու համար հրավիրեց հատուկ տիեզերաժողով՝ 1962–1965 թթ. (թվով XXI կամ Վատիկանի 2-րդ), բայց դավանաբանության մոդեռնացման որևէ էական փոփոխություն չկատարվեց: Պաշտամունքի ոլորտում դարձյալ որևէ տեղաշարժ տեղի չունեցավ, պարզապես որոշ դեպքերում տեղական, ազգային լեզուներ, երգ-երաժշտություն, պարեր թույլատրվեցին ժամերգության և այլ եկեղեցական արարողությունների ժամանակ: Կուսակրոնության հարցի լուծման համար 1962 թ. գաղտնի ժողով հրավիրվեց Հռոմում (որն իր աշխատանքները շարունակեց մինչև 1967 թ.): Ավարտվեց անարդյունք, որովհետև Պողոս VI պապի հատուկ էնցիկլիկով կուսակրոնությունը համարվեց եկեղեցու անխախտ հիմք, և այդ ուղղությամբ արվող ցանկացած փոփոխություն՝ անթույլատրելի:

Շեռտաբար, կաթոլիկ եկեղեցու փոփոխությունները վերաբերում են հիմնականում արտաեկեղեցական հարաբերություններին

⁵⁹ // Էջմիածին, 2013, Թ, էջ 64:

⁶⁰ Նույն տեղում, էջ 60:

⁶¹ Տե՛ս նույն տեղը, էջ 64:

⁶² Արդիականացման եկեղեցաստվածաբանական ձգտումների և արդյունքների մասին տե՛ս **Ա. Սարգսյան**, Կրոնական մոդեռնիզմը փակուղում, Եր., 1987, նույն հեղինակի՝ Կրոնի տեսություն և պատմություն, Եր., 2016, էջ 291-303:

և կենսիմաստային հարցերին, որոնցում Հռոմի եկեղեցին ակտիվ է, պայքարում է արդար և խաղաղ աշխարհի համար, դեմ է էվթանազիային, հղիության արհեստական ընդհատումներին, թույլատրում է ազգային լեզուների, երգ ու երաժշտության օգտագործում ծիսակատարությունների ժամանակ: Բայց դավանաբանական հարցերում կաթոլիկ եկեղեցին շարունակում է անհանդուրժողականությունը մյուս եկեղեցիների նկատմամբ: Կուսակրոնության պահպանումն ուղղակի փորձանք է դարձել այդ եկեղեցու համար, որովհետև այսօր էլ հարյուր հազարների հասնող հոգևորականի կարիք ունի ու չի կարողանում համալրել, մինչդեռ եղածների մի զգալի մասի տարիքն անցնում է 80-ից: Հավանաբար, մանկապղծության պարբերաբար կրկնվող դեպքերն ու հարուցած աղմուկը պետք է կուսակրոնության հետ կապել:

Արդիականացման թույլ փորձեր է կատարում ռուս ուղղափառ եկեղեցին, որի քարոզչության մեջ շեշտադրումներ են փոխվել գաղափարախոսության ոլորտում. առաջատար են դարձել հոգևոր մշակույթի, սոցիալական բարոյականության, հասարակական-քաղաքական հիմնախնդիրները:

Ավելի արմատականորեն են տրամադրված բողոքական որոշ աստվածաբաններ, այսպես կոչված, «սեկուլյար աստվածաբանություն», «անկրոն քրիստոնեություն», «Աստծու մահվան աստվածաբանություն», «հետթեիստական աստվածաբանություն», «գործընթացի աստվածաբանություն» ուղղությունների ներկայացուցիչներ Դիտրիխ Բոնհոֆերը, Գաբրիել Վահանյանը, Ուիլյամ Համիլթոնը, Թոմաս Ալտիցերը, Հարվի Քոկսը, Դորոթի Ջյորը, Ջոն Քոբը և ուրիշներ: Նրանք այն տեսակետն են հայտնում, որ իրավիճակը պահանջում է քրիստոնեության անհետաձգելի վերակառուցում կամ մշակույթի ազատագրում նրանից: Ըստ **Գ. Վահանյանի՝** քրիստոնեական աշխարհայացքը փոխարինվում է գիտական աշխարհայացքով, որում Աստված այլևս անելիք չունի: Դիտվում է Աստծու մշակութային մահ: Վերջինիս կարծիքով՝ Աստված մեռած չէ, մեռած է նրա մասին կրոնամշակութային պատկերացումը, քանի որ ժամանակակից մարդը կորցրել է տրանսցենդենտալ Աստծու ներկայությունը:

Աստվածաբանության մեջ պետք է իրականացնել «կոպեռնիկոսյան հեղափոխություն» և ազատվել աշխարհից դուրս կանգնած և աշխարհին հակադրվող Աստծու գաղափարից: Ըստ բողոքական աստվածաբանների՝ Աստծուն պետք է որոնել ոչ թե երկնքում, այլ մարդու նկատմամբ ունեցած սիրո մեջ, հետևաբար՝ լինել քրիստոնյա, նշանակում է լինել մարդ⁶³:

Մոդեռն բողոքականության այս խիստ ուրվագծային վերլուծությունը ցույց է տալիս, որ արմատականորեն տրամադրված աստվածաբանների հայացքներում ավանդական աստվածաբանությունից ոչինչ չի մնում: Դա է պատճառը, որ նման մտակառուցումներն ու հորինումները հավատացյալների միջավայրում լայն տարածում չեն ստանում, հակառակը՝ բողոքականները և աղանդավորները շարունակում են Աստծուն պատկերացնել գոյաբանական կարգավիճակով՝ որպես աշխարհի արարիչ և ահեղ դատավոր: Ավելին, այդ պատկերացումների մեջ նրանք ավելի մոլեռանդ են, քան ավանդական եկեղեցիների շարքային հավատացյալները:

Հայ եկեղեցու եկեղեցական ժողովները արդիականացման հարցերով չեն զբաղվել: Միայն 1968 թ. հրավիրված եպիսկոպոսական ժողովը փորձեց որոշ քայլեր կատարել: Բայց էական որևէ փոփոխություն չկատարվեց: 2013 թ. եպիսկոպոսական ժողովը զբաղվեց մկրտության ծեսի և սրբադասման կանոնի վերանայման հարցերով:

Քրիստոնեական եկեղեցիների արդիականացման այս համառոտ շարադրանքը ցույց է տալիս, որ եկեղեցին չի կարող հրաժարվել իր դավանաբանությունից և պաշտամունքից: Բայց աշխարհի հետ քրիստոնեական եկեղեցիների երկխոսության ձգտումը վկայում է նաև այն, որ մեծանում է քրիստոնեական աշխարհայացքը ազատականացնելու, թարմացնելու ձգտումը, որի դրսևորումներից մեկը սոցիալական իրավիճակին, գիտության ու մշակույթի ժամանակակից նվաճումներին հարմարվելն է ու դրանց հետ երկխոսության մեջ մտնելը, ինչը յուրաքանչյուր եկեղեցու հաջողվում է առավել կամ պակաս: Այս ձգտման մեջ համեմատաբար ազատամիտ ու ազատական (լիբերալ) հայացքներ ունեցող աստվածաբաններն

⁶³ Բողոքական մոդեռն աստվածաբանության, Գաբրիել Վահանյանի հայացքների վերլուծությունը տե՛ս **Ս. Սրբեկանյան**, Աստծո մահվան ուսմունքը, Եր., 2017:

ու եկեղեցական գործիչները ստիպված են հաղթահարել երկու խումբ դժվարություններ: **Առաջինը** շփման եզրեր գտնելն է կրոնական պատկերացումների և ժամանակակից գիտատեխնիկական քաղաքակրթության միջև, **երկրորդը՝** հաղթահարել արմատականորեն տրամադրված հոգևորականության և մոլեռանդ հավատացյալների դիմադրությունը:

Երկխոսությունն այսօր ձեռք է բերել երկու նոր իմաստ ևս: Այն ոչ միայն ժամանակակից ապակրոն աշխարհին համահունչ դառնալու, նրան համընթաց քայլելու, նրան հասկանալու ձգտում է, այլև պառակտված եկեղեցիների և ուղղությունների միջև փոխըմբռնման, համագործակցության և միավորման ձգտում, որը կրոնագիտության մեջ անվանում են «էկումենական» (էկումենիկ) շարժում: Աստվածաբանների համար եկեղեցիների միավորումը և միասնական դիրքորոշումը կարևոր են ոչ միայն զուտ աստվածաբանական, կրոնական խնդիրներ լուծելու, այլև ապակրոնացվող աշխարհի դեմ միասնական ճակատ կազմելու և հաջողության հասնելու համար:

Հենց այդ պատճառով XX դարի սկզբին բողոքական աստվածաբանները հանդես եկան քրիստոնեությունը վերամիավորելու նախաձեռնությամբ (հիշենք, որ քրիստոնեական ընդհանրական եկեղեցին միասնական է եղել ընդամենը 150 տարի (պաշտոնականացումից մինչև 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովը), որից հետո V, XI և XVI դարերում պառակտվել է թշնամի ու պայքարող բազմաթիվ մանր ու մեծ ուղղությունների), որը պաշտպանեցին բազմաթիվ ուղղություններ, այդ թվում և՛ Հայ եկեղեցին:

Շարժումը վերելք ապրեց XX դարի 40-70-ական թվականներին: 1948 թ. ստեղծվեց եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, որին անդամակցող եկեղեցիների թիվն անցնում է 300-ից: Հայ եկեղեցին ԵՀԽ-ի անդամ է 1962 թվականից:

Էկումենիկ շարժումը առայժմ շոշափելի արդյունք չի տալիս, որովհետև եկեղեցիները համաձայնության են եկել միայն ապակրոնացման դեմ միասնական պայքարի անհրաժեշտության և փոխադարձ հանդիպումների կարևորության հարցերում: Ֆրանցիսկոս պապը հանդիպել է Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքի հետ, փոխադարձ այցելություններ և հանդիպումներ են տեղի

ունեցել **Գարեգին Բ-ի** և պապի միջև: Հայաստան է այցելել Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքը: 2017 թ. մարտին Գարեգին Բ-ն միջեկեղեցական այց կատարեց Ֆինլանդիա և հանդիպեց յուրեքական-ավետարանական և օրթոդոքս եկեղեցիների նվիրապետերին: Կաթոլիկ եկեղեցին մինչև այսօր ԵՀԽ-ի անդամ չէ և պնդում է, որ վերամիավորումը պետք է տեղի ունենա միայն իր հովանու ներքո: Հավակնոտ են նաև ուղղափառ եկեղեցիները: Հայ եկեղեցու գործիչները, առաջնորդվելով էկումենիկ շարժման ոգով, հաճախ են հիշում Խրիմյան Հայրիկի այն պատկերավոր համեմատությունը, թե քրիստոնեական եկեղեցիները նման են ծաղկեփնջի, որտեղ ամեն ծաղիկ իր գույնն ունի, իր ուրույն բույրն ու երանգը՝ բոլորը մեկտեղված Քրիստոսի սիրո կապերով: Անդրադառնալով միավորման հարցին՝ Վազգեն Ա կաթողիկոսը կարծում էր, որ Հայ եկեղեցին «դաւանաբանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձևումներով թեև կը մնայ անշեղ ու հաստատ իր ասանդական ուղղափառ դիրքերուն վրայ, սակայն, ինչպէս անցեալի մէջ, այսօր ալ կ'առաջնորդուի «միութին ի կարևորս և ազատութիւն յերկբայականս» հին ու բարերար սկզբունքով»⁶⁴:

էկումենիկ շարժման ուղղությամբ ավելի ակտիվ գործունեություն էր ծավալել **Գարեգին Ա** կաթողիկոսը:

Որպես էկումենիկ շարժման նախանձախնդիր՝ Գարեգին Ա կաթողիկոսն այնպիսի համարձակ քայլեր կատարեց, այնպիսի զիջումների գնաց, որոնք չէր գնացել իր նախորդներից և ոչ մեկը: Զիջումներ են կատարվում մասնավորապես քրիստոսաբանական հարցերում, որոնք դարեր շարունակ Հայ և կաթոլիկ եկեղեցիների փոխադարձ թշնամանքի պատճառ են եղել: Գարեգին Ա կաթողիկոսը զիջումներ էր պահանջում նաև այլ եկեղեցիներից, որպեսզի միասնաբար հանդես գան աշխարհի հետ ունեցած իրենց երկխոսությունում, հակառակ դեպքում՝ «Ո՛վ է ուշադրություն դարձնելու մեր ձայնին, եթե մեր բերանները աններդաշնակ ու հաճախ իրարամերժ լեզուներ են խոսում»⁶⁵:

Բայց վերջին շրջանի իրադարձությունները ցույց են տալիս, որ Գարեգին Ա-ի պահանջած միասնությունը ոչ միայն գոյություն

⁶⁴ **Վազգեն Ա Հայրապետ** Հայոց, Գիրք երկրորդ, Ս. Էջմիածին, 1968, էջ 35:

⁶⁵ // Էջմիածին, 1997, Զ-Է, էջ 45:

չունի, այլև ԵՀԽ-ում ճգնաժամային լուրջ երևույթներ են դիտվում, որոնք վտանգում են էկումենիկ շարժման ընդհանրապես: 1997 թ. մայիսին ԵՀԽ-ից դուրս եկավ Վրաց ուղղափառ եկեղեցին, նրան հետևելու մտադրություն ունեն Սերբ, Բուլղար և Ռուս եկեղեցիները⁶⁶:

Կատարված քայլերի և աշխարհում տեղի ունեցած գործընթացների արդյունքում կրոնն ու եկեղեցին աստիճանաբար հաղթահարեցին ճգնաժամը, իսկ XX դարի վերջին քառորդից սկսած՝ քրիստոնեությունը վերածնունդ է ապրում Արևելյան Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Նախադրյալները հետևյալն էին՝

1. Հակազդեցությունը խորհրդային պարտադրված աթեիզմին, հետխորհրդային շրջանի բարոյական անկմանը, նյութապաշտությանը, սպառողական հոգեբանությանը, ապագայի նկատմամբ անորոշությանը, ժողովրդի սոցիալական և իրավական անպաշտպանվածությանը, հոգևոր ճգնաժամին: ՀՀ 27 տարվա պատմությունը վկայում է, որ թեև homo soveticus-ը աթեիստ էր, եկեղեցի չէր հաճախում (քչերն էին հաճախում), կրոնական ծեսեր չէր կատարում (քչերն էին կատարում, իսկ որոշ ծեսերի կատարումը վերածվում էր քեֆ-ուրախության), այնուհանդերձ, հոգևոր արժեքների կրող էր՝ ի տարբերություն այսօրվա homo economicus-ի (կամ homo religious-ի), որը հաճախում է եկեղեցի ու կատարում ծեսեր:

2. Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված ազգային պետություններում ապրող ժողովուրդները ինտերնացիոնալիստական, կոմունիստական գաղափարախոսությանը, աթեիզմին, homo soveticus-ին փորձեցին հակադրել զուտ ազգայինը, դարերով պահպանված-փոխանցված կրոնն ու եկեղեցին, որոնք երբեմն ներկայացվում են որպես ազգային ինքնության կրողներ և պահապաններ:

3. Քրիստոնեության վերազարթոնքը հակազդեցություն է արևմտյան քաղաքակրթությանը, որն իր ռացիոնալիզմով կարծես մոռացել է իրական անհատին, թույլ հակազդեցություն է հենց Արևմուտքում զարթոնք ապրող իսլամին:

⁶⁶ Տե՛ս // Էջմիածին, 1998, Ե, էջ 157:

Չնայած վայրիվերումներին՝ քրիստոնեությունը շարունակում է հզոր ուժ լինել ժամանակակից աշխարհում: 2016 թ. տվյալներով՝ աշխարհի բնակչության 33,9%-ը կամ 2 411 610 000-ը քրիստոնյա է: Շատ պետություններ իրենց արտաքին և ներքին քաղաքականությունը չեն կարող հաջողությամբ իրականացնել, առանց քրիստոնյա հավատացյալների կարծիքը հաշվի առնելու: Կաթոլիկ եկեղեցին ունի 405 հազար հոգևորական, 14 649 եպիսկոպոս, 29 204 սարկավազ, 139 078 միաբան: Վատիկանը դիվանագիտական կապերի մեջ է 177 երկրի հետ: Վատիկանի կապիտալ ներդրումները մի քանի տասնամյակ առաջ 900 մլրդ լիրա էին, արժութային ֆոնդը՝ 11 մլրդ դոլար, որը զիջում էր միայն ԱՄՆ-ին: Նույն ժամանակահատվածում Իտալիայի առկա արժութային պաշարները կազմել են 700 մլն, Անգլիայինը՝ 5 մլրդ:

Քրիստոնեությունը սերտաճել է ժամանակակից աշխարհին, դարձել արևմտյան ավանդական արժեքների կրողն ու պահպանող, երբեմն հակադրվում է գիտատեխնիկական քաղաքակրթությանն ու սցիենտիզմին, պայքարում է հոգեզրկության, պատերազմի, ահաբեկչության դեմ, աշխարհում արդար հասարակության հաստատման, ընտանիքների կայունության, բարոյականության պահպանման համար և այլն:

Երկխոսության երրորդ իմաստը տարբեր դավանությունների հանդիպումներն են, վիճելի հարցերի շուրջ փոխըմբռնման ձգտումը (որի մասին՝ հաջորդիվ):

բ) Իսլամական գործոնը որպես գլոբալ մարտահրավեր

Իրավիճակն ավելի բարդ ու խորքային է ժամանակակից իսլամական վերածննդի խնդրում:

XX դարի երկրորդ կեսից ողջ աշխարհում դիտվում է իսլամական գործոնի աշխուժացում: Իրանում կրոնական հեղափոխության հետևանքով իշխանության եկան հոգևորականները, աշխարհը պարբերաբար ցնցվում է ծայրահեղ մահմեդականների ահաբեկչական գործողություններից: Իսլամը մարտահրավեր է նետել ողջ արևմտյան քաղաքակրթությանն ու նրա արժեքներին:

Որո՞նք են իսլամական գործոնի աշխուժացման («պայթյունի», «բումի») պատճառները.

Առաջինը պայմանավորված է պատմական գործոններով: Իսլամը մահմեդական շատ ժողովուրդների համար ազգային անկախության խորհրդանիշ է, հատկապես՝ իր ջիհադով (հանուն հավատի մղած պատերազմներով): Իսլամը ոչ միայն կրոն է, այլև ապրելակերպ: Այն թափանցել է կենցաղ, տնտեսություն, ազգային ու անհատական հոգեբանություն: Այստեղից էլ այն հսկայական տարբերությունը, որ գոյություն ունի իսլամի և քրիստոնեության միջև: Թեև քրիստոնեական եկեղեցին նույնպես դարեր շարունակ եղել է պետական, բայց ոչ մի երկրում ամբողջությամբ դուրս չի մղել աշխարհիկ իրավական կողեքսը: Իսլամական աշխարհը տասնչորս դար շարունակ, շարիաթից բացի, այլ իրավական կողեքս չի իմացել: Կրոնական և պետական գործերը նույն ձեռքում են կենտրոնացվել: Արևմտաքրիստոնեական աշխարհն անցել է ստրկություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, Արևելյան Եվրոպան՝ նաև սոցիալիզմ (մարքսիստական դասակարգմամբ) կամ ավանդական և տեխնիկական քաղաքակրթությունների փոկեր՝ մի քանի ենթափուլերով, ունեցել բազմաթիվ ցնցումներ, մինչդեռ, իսլամական աշխարհը տասնչորս դար շարունակ ապրել է նույն կացությամբ (հավանաբար՝ ասիական կամ ֆեոդալիզմի, ավանդական) և առանց ցնցումների:

Երկրորդ պատճառը պետք է որոնել դավանաբանության և պաշտամունքի առանձնահատկությունների մեջ: Հատկապես կարևոր դեր է կատարել հնգապատիկ աղոթքը՝ իր ծիսական մաքրմամբ, որը որևէ այլ կրոնական ուղղություն չունի: Ծեսը թատերականացված արարողություն է քրիստոնեության մեջ, որը պատրաստության շրջան անցած հոգևորականները կատարում են, հավատացյալները՝ նայում, պարբերաբար խաչակնքում: Այդպես չէ իսլամում, իմամի հետ շարքային հավատացյալը նույն ծեսն է կատարում: Արարողության պարզությունը հնարավորություն է տալիս ցանկացած հավատացյալի կատարել ծեսը՝ իմամի կամ մոլլայի բացակայության դեպքում: Քրիստոնեական եկեղեցիները եկեղեցու, դավանանքի հարցերում մեղանչածին վտարում են եկեղեցուց, իսլամում մզկիթից վոնդվածը ենթակա է մահապատժի:

Ուխտագնացության դեպքում մինչև 2 միլիոն մահմեդական է հավաքվում նույն վայրում, տեղի են ունենում նստաշրջաններ, քննարկումներ, ընդգծվում է բոլոր մահմեդականների հոգևոր եղբայրակցության սկզբունքը: Այդ ամենը արթուն ու ներգործուն է պահում իսլամը:

Երրորդ գործոնը սոցիալ-քաղաքական և տնտեսական բնույթ ունի: Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերություններում աճում է Մերձավոր և Միջին Արևելքի դերը: XX դարի 70-80-ական թթ. նավթի 70%-ը արևմտյան երկրները ստանում էին այդ տարածքներից: Նավթ արտադրող երկրների ֆինանսական միջոցները գտնվում են եվրոպական երկրների բանկերում և այդ երկրների տնտեսական զարգացման կարևոր աղբյուրն են: Եթե նավթ արտադրող երկրները որոշեն իրենց դրամական միջոցները միաժամանակ հանել եվրոպական բանկերից, ապա Եվրոպան կկործանվի: Բացի դրանից, իսլամական հարուստ երկրները առանց տոկոսների օգնում են աղքատ երկրներին, փոխարենը՝ ստանում իսլամ տարածելու ազատ հնարավորություն: Այդ նպատակով են ստեղծվել Միջազգային իսլամական արժույթային ֆոնդը, Իսլամական կոնֆերանսը, զանազան այլ կազմակերպություններ, որոնք քարոզում և տարածում են իսլամական արժեքներ:

Չորրորդ գործոնը քաղաքակրթական է: Շատ իսլամական երկրներում ապակրոնացումը հաջողություն չի ունենում, որովհետև ժողովուրդը մոլեռանդ է: Իսլամական երկրների ներսում ծագած խնդիրները աշխարհիկ պետությունները փորձեցին լուծել օրենքներով, բայց հաջողության չհասան, որովհետև բնակիչների հավանությանը չարժանացան: Լավագույն օրինակը Իրանն է, որտեղ վերջին երկու շափերը սահմանափակեցին հոգևորականների դերը, իրականացրին դատական բարեփոխումներ, մտցրին աշխարհիկ կրթություն, վերացրին չադրան, արգելեցին ինքնախոշտանգող ծեսերը, ֆեոդալական վակուֆային հողերի մի մասը վաճառեցին հող չունեցող գյուղացիներին: Բայց այդ ամենը չարմատավորվեց, տեղի ունեցավ իսլամական հեղափոխություն, և 1979 թ. իշխանության եկան այաթոլաները: Իրանում ստեղծվեց աստվածապետություն, որը շարունակվում է առ այսօր: Երկրի տերն ու տնօրենը հոգևորականներն են՝ իրենց շարիաթով:

2010–2011 թթ. իսլամական մի շարք երկրներում (արտաքին ուժերի խրախուսմամբ) ծայր առան խռովություններ, ըմբոստություններ՝ իրենց երկրներում իշխող վարչակարգերի դեմ, որը պատմության մեջ մտավ «Արաբական գարուն» անվամբ: Դրա հետևանքով Թունիսում, Լիբիայում, Եգիպտոսում, Եմենում փոխվեցին իշխանությունները, շարունակվում է քաղաքացիական պատերազմը Սիրիայում: Ամերիկյան զորքերի ներխուժմամբ վարչակարգեր փոխվեցին Աֆղանստանում (որտեղ իշխում էր իսլամի վայրագ դրսևորումներից մեկը՝ թալիբան շարժումը), Իրաքում: Այսօր աշխարհի ուշադրության կենտրոնում է «Իսլամական պետություն» կոչված ծայրահեղ ահաբեկչական կազմակերպությունը: Բայց այդ երկրներից որևէ մեկում առայժմ կայունություն և խաղաղություն չի հաստատվում: Ամենուր հուզումներ են, ըմբոստություն, ցույցեր ու ահաբեկչություն, որից տուժում է խաղաղ բնակչությունը: Բնակչության բացարձակ մեծամասնությունը մերժում է արևմտյան արժեքները, համարում ոչ հարիր իսլամ հավատացյալի հոգետիպին: Նրանք իրենց ավելի լավ են զգում սեփական «հագուստի» մեջ՝ իսլամական արժեհամակարգում:

Նշվածներից բացի, իսլամական գործոնի աշխուժացումը պայմանավորված է նաև Արևմտյան Եվրոպայում (Բելգիա, Հոլանդիա, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա) իսլամ դավանող երկրներից ներգաղթյալների հսկայական հոսքով, որոնք Եվրոպայում իրենց բնակության վայրերում ստեղծել են էնդոգամ (փակ էթնոկենտրոն) համայնքներ ու չեն հարմարվում, չեն յուրացնում, ավելի ստույգ՝ չեն ցանկանում հարմարվել, յուրացնել եվրոպական արժեքներն ու քաղաքակրթությունը:

Փակ համայնքի գաղափարական, էթնիկ, ծիսական-դավանաբանական հիմքը դառնում է իսլամը: Բացի դրանից, իսլամը հասարակական, սոցիալական և նյութական օգնության կարիք ունեցողների համար դառնում է հենարան:

Ներգաղթյալների մեծ մասը դեմ չէ ժամանակակից լինելուն, զարգացմանը, բայց դեմ է Արևմուտքին, արևմտականացմանը: Նշեցինք, որ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում քրիստոնեական եկեղեցիներ են փակվում, շատ քիչ մարդ է հաճախում եկեղեցի: Նշված երևույթներից որևէ մեկը չի դիտվում իսլամական

աշխարհում, նաև Արևմտյան Եվրոպայի այն երկրներում, որոնցում մահմեդական հոծ խմբեր են ձևավորվել: Բելգիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում կառուցված մզկիթներում հավատացյալների պակաս չի զգացվում: Այդ երկրներում փակվում են քրիստոնեական եկեղեցիները, բայց կառուցվում են մզկիթներ: Եկեղեցիները հավատացյալների հաճախելիության խնդիր ունեն, մզկիթները՝ ոչ: Եվրոպան իսլամացվում է:

Մահմեդական գաղափարախոսների կարծիքով՝ ժամանակակից դառնալը Արևմուտքի մեջ չէ, այլ դարերով փորձված իսլամի, դրա օրենքների, իսլամական մշակույթի մեջ: Այստեղից էլ Եվրոպայում իսլամական ահաբեկչությունների ալիքը՝ ընդդեմ Արևմուտքի, որն իր քաղաքական համակարգով իրեն համարում է ամենաժամանակակիցն ու հեռանկարայինը, փորձում է իր արժեքները պարտադրել որջ աշխարհին և դառնալ միակը:

Պետք է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք ևս: Զուտ կրոնական գաղափարներից բացի, քաղաքականության մեջ գոյություն ունի նաև կրոնական գործոն, որն օգտագործվում է քաղաքական նպատակներով:

Հետաքրքիրն այն է, որ իսլամական գործոնը շատ հաճախ օգտագործում են քրիստոնեական երկրները, որոնք, արաբական աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրները հաշվի առնելով, հրահրում են ներազգային ցնցումներ՝ իրենց քաղաքական, աշխարհաքաղաքական խնդիրները լուծելու համար: Այստեղ իսլամը մեծ տերությունների համար իրենց քաղաքական, գաղափարական խնդիրները լուծելու քող է պարզապես:

Համանման մի երևույթ է դիտվում նաև «Իսլամական պետություն» կոչված գործունեության և քաղաքականության մեջ: Այդ պետության զինված ուժերում կոչվում են նաև Եվրոպայում ծնված, մեծացած, կրթություն ստացած հազարավոր երիտասարդներ, որոնք, հավանաբար, գաղափար էլ չունեն իսլամի մասին:

Կրոնական նվաճողականությունը դառնում է քաղաքականի տարատեսակ:

Այսօր աշխարհն իսլամը հիմնականում ճանաչում է իր ազդեցիկ, անհանդուրժող և անմարդկային դրսևորումներով, երբ այն

հանդես է գալիս քաղաքական-քաղաքակրթական, երբեմն ազգայնական դիմագծով, այլադավանների և այլազգիների նկատմամբ մերժողականությամբ: Բայց իսլամը չպետք է նույնացնել նրա քաղաքականացված, ազգայնականացված դրսևորումների հետ և բոլոր իսլամ դավանող երկրներին գնահատել այդ չափանիշներով: Դրա լավագույն ապացույցը Սիրիայի, Իրանի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի և իսլամական աշխարհի այլ երկրների իշխանություններն ու ժողովուրդներն են, որոնք Մեծ եղեռնից փրկված տասնյակ հազարավոր հայերի ապաստան տվեցին, օգնեցին ոտքի կանգնել և ակտիվ մասնակցություն ունենալ թվարկված երկրների զարգացման և բարգավաճման գործում: Այսօր էլ մահմեդական շատ երկրներում կողք կողքի հաշտ ու համերաշխ ապրում են քրիստոնյա հայն ու մահմեդական լիբանանցին, սիրիացին, եգիպտացին և այլն: Այս առումով միանգամայն իրավացի է Գարեգին Բ կաթողիկոսը՝ նշելով. «...դատապարտելի են քրիստոնեական ու իսլամական կրոնների դարավոր խաղաղ համակեցությունը վտանգող քաղաքականացված ծայրահեղ իսլամական ռազմական խմբավորումների ու միավորումների գործողությունները Մերձավոր Արևելքում, որոնք սպառնում են իսպառ ոչնչացնել թե՛ քրիստոնյա-իսլամ համայնքների համակեցության դարավոր ավանդույթը և թե՛ քրիստոնեական պատմական ներկայությունը տարածաշրջանում»⁶⁷:

Միջկրոնական երկխոսությունների դիտանկյունից հետաքրքիր են «Իսլամի ընկալման համայնապատկերի մեջ...» Գարեգին Բ կաթողիկոսի առաջադրած մոտեցումները.

1. Քրիստոնեության և իսլամի միջև առողջ և կառուցողական երկխոսության հիմքում պետք է դնել կրոնական-բարեպաշտական ճշմարիտ ապրումը:

2. Իսլամի վերաբերյալ ծայրահեղ մեկնությունների հիմքում իսլամական կրոնական մշակույթի և սկզբունքների կեղծ և քաղաքականացված մոտեցումներն են:

3. Իսլամական և քրիստոնեական աշխարհների համակեցության արդի խնդիրների տեսանկյունից Մերձավոր Արևելքում ապրող քրիստոնեական եկեղեցիների՝ իսլամի հետ ունեցած հա-

⁶⁷ Էջմիածին, 2017, թիվ Գ, էջ 17:

մակեցության և երկխոսության պատմության մանրամասն ուսումնասիրություն:

4. Ներհասարակական երկխոսություն արևմտաեվրոպական ժողովուրդների և եվրոպական առանձին երկրներում ձևավորված մահմեդական համայնքների միջև՝ համերաշխ համակեցությունը, օրինահպատակությունը և օրինապահությունը ապահովելու նպատակով, որոնք հենված են լինելու խղճի ազատության և քաղաքացիական իրավունքի սկզբունքների վրա:

5. Ժամանակակից տեղեկատվության և լրատվության պայմաններում անհրաժեշտ է իսլամի մասին ունենալ իրական, մասնագիտական ու ճշգրիտ պատկերացում՝ խուսափելու համար մակերեսային կարծրատիպերից ու գնահատականներից⁶⁸:

գ) *Կրոնական նվաճողականությունը և Հայ եկեղեցին*

Կրոնական նվաճողականության երևույթը դիտվել է նաև մեզանում և խորապես ցավագին դրսևորումներ ունեցել՝ պառակտելով ազգը կրոնական հատկանիշով, հայության տարբեր հատվածների տրամադրելով միմյանց դեմ: Այդպես եղավ, երբ հայ իրականություն ներթափանցեցին կաթոլիկությունը, բողոքականությունը:

Համառոտ անդրադառնանք հայ իրականություն կաթոլիկության, բողոքականության, աղանդավորականության ներթափանցման փորձերին, որոնց ցավագին ազդեցությունները չեն թուլացել նաև այսօր, որոնք կարևոր են նաև ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հայաստանում կաթոլիկության տարածման փորձերը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: **Առաջին փուլը** սկսվում է խաչակրաց արշավանքներով և Կիլիկիայում հայկական պետականության ստեղծմամբ: Հայ և կաթոլիկ եկեղեցիների միության խնդիրը որոշակիորեն դրվեց Լևոն Բ թագավորի օրոք (1187–1219): Նա օգնության խնդրագիր ուղարկեց Ղուկիոս Գ պապին, իսկ վերջինս պահանջեց, որ հայերը հաղորդության բաժակի մեջ ջուր լցնեն, Քրիստոսի ծնունդը նշեն դեկտեմբերի 25-ին, մյու-

⁶⁸ Տե՛ս // Էջմիածին, 2017, թիվ Գ, էջ 18-19:

ռոնը օրհնեն ամեն տարի ավագ հինգշաբթի օրը և այլն: Մնացածը սկսվում է այստեղից: Պետության համար օրհասական ժամանակներում հայ թագավորները օգնության խնդրանքով դիմել են պապերին, իսկ նրանք օգնության փոխարեն ուղարկել են կրոնավորներ՝ որոշակի դավանական և ծիսական պահանջներով: 1307 թ. Սիսի և 1316 թ. Ադանայի ժողովներում քննարկվեցին կաթոլիկ եկեղեցուն միանալու հարցերը: Թագավորի ճնշմամբ Ադանայի ժողովը համաձայնեց Հայ եկեղեցին միացնել կաթոլիկ եկեղեցուն և ենթարկվել պապին, բայց որոշումը մնաց թղթի վրա: Բենեդիկտոս ԺԲ պապը Հայ եկեղեցուն մեղադրեց 117 մոլորության մեջ: 1343 թ. Սիսի ժողովը հերքեց բոլոր մեղադրանքները⁶⁹:

Թեև հունական (ուղղափառ) ու կաթոլիկ որոշ ծեսեր այնուամենայնիվ մտան Հայ եկեղեցի, բայց Եվրոպան ոչ միայն չօգնեց, այլև ավելի հավակնոտ դարձավ: Եվրոպայի բռնած դիրքից զայրացած՝ 1361 թ. Սիսի 8-րդ ժողովը որոշեց Հայ եկեղեցու ծիսակարգից հանել բոլոր նորամուծությունները⁷⁰:

Կրոնական երկպառակությունները, կիլիկյան թագավորների եվրոպական կողմնորոշումը ի վերջո Կիլիկյան Հայաստանի կործանման պատճառը դարձան:

Հայաստանում կաթոլիկության տարածման **երկրորդ փուլը** սկսվում է XVII դարից: Կաթոլիկ քարոզիչներ Պողոս Պիրամուլու, Կղեմես Գալանոսի, Հակոբ Վիլոտի և այլոց գործունեությամբ ձևավորվեց հայ կաթոլիկների առաջին սերունդը, որոնց համատեղ ջանքերով կաթոլիկացվեցին Լեհաստանի և Հունգարիայի հայկական գաղթօջախները, որոնք, կտրված լինելով մայր հայրենիքից, ծուլվեցին:

XVIII դարից սկսվում է կաթոլիկության տարածման **երրորդ փուլը**: Հայկական միջավայրում դրա տարածողներ են դառնում հայ կաթոլիկները: Դարի կեսերին Աբրահամ Արծիվյան եպիսկո-

⁶⁹ Այդ ժամանակաշրջանի հայ-կաթոլիկ հարաբերությունների մասին տե՛ս **Անապարական**, Համառոտ պատմություն հայ-լատինական յարաբերությանց սկիզբէն մինչև 1382 թ., Անթիլիաս-Լիբանան, 1973:

⁷⁰ Հայ-բյուզանդական և հայ-կաթոլիկ հարաբերությունները Գարեգին Ա կաթողիկոսը քննարկում է Էկումենիկ շարժման տեսանկյունից /Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Էկումենիկ հոսանքները հայ եկեղեցուն, // Էջմիածին, 1998, թիվ Բ-Գ/:

պոսը ստեղծեց կաթողիկոսություն, որը գոյություն ունի նաև այսօր: 1830 թ. Բարձրագույն դուռը հայ կաթոլիկ համայնքին ինքնուրույն գոյության իրավունք տվեց՝ այն առանձին համայնք (միլլեթ) ճանաչելով:

XIX դարի 30-ական թվականներից հայ առաքելականների և կաթոլիկ հայերի հարաբերությունները սրվեցին, նույնիսկ դարձան թշնամական: Վիճակն ավելի վատացավ, երբ 1846 թ. հայ կաթոլիկների համայնքապետ դարձավ Անտոն Հասունյանը, ով իր լատինամոլությամբ, պառակտիչ գործունեությամբ, կրոնական անհանդուրժողականությամբ, Հռոմի դրածոյի որդեգրած քաղաքականությամբ կատարյալ պատուհաս դարձավ արևմտահայերի և Մխիթարյան միաբանության համար: Կրոնական վեճերը մեղմացան միայն XIX դարի վերջին:

Մխիթարյան միաբանությունը ստեղծվել է 1701 թ., Վենետիկի սուրբ Ղազար կղզում հաստատվել 1717 թ., այնտեղ էլ գտնվում է մինչ օրս: Նրանք առաջինն էին մեզանում, որ փորձեցին իրենց գործունեությամբ ապացուցել կրոնի և ազգի «ջուկ-ջուկ» լինելու խնդիրը, այսինքն՝ դավանանքն ու ազգը տարանջատել: Առաջնորդվելով «իր ազգը կամ իր հայրենիքը ամենեն առաջ և ամենեն ավելի սիրել» սկզբունքով՝ Մխիթարյանների առաջին մի քանի սերունդը դավանաբանական հարցերին առանձնապես լուրջ ուշադրություն չէր դարձնում, նրանք կրթված և լայնախոհ հոգևորականներ էին: Գաղտնիք չէ, որ մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը հայագիտության կենտրոնը եղել է Մխիթարյան միաբանությունը, թեև նրանց գործի նկատմամբ վերապահ մոտեցումը շարունակվում է մինչև այսօր և արտահայտվում «Ազգին ձու տվին, ձի տարան» գնահատականով:

1970 թ. պատմության մեջ առաջին անգամ հանդիպեցին Հայ եկեղեցու կաթողիկոսն ու Հռոմի պապը: Առաջին անգամ էր, որ Հայ եկեղեցու առաջնորդը Հռոմ էր գնում ոչ թե «վասն քաղաքական ակնկալութանց», այլ հավասարի իրավունքով: Բայց կաթոլիկ եկեղեցին շարունակեց մնալ իրեն հավատարիմ: 1988 թ. երկրաշարժից հետո, և հատկապես վերջին շրջանում, երբ փուլովեց ԽՍՀՄ-ը և քանդվեց պատնեշը, կաթոլիկ եկեղեցին դարձյալ իր հայացքն ուղղեց Հայաստանին, իսկ հայ կաթոլիկների առաջ-

նորդը հանդես եկավ «Վերադարձ դեպի Երկիր» շրջաբերականով, որը Հայ եկեղեցու կողմից դիտվեց որպես իր իրավունքների և անկախության ոտնահարում:

1996 թ. Հռոմում (Վատիկանում) հանդիպեցին Գարեգին Ա կաթողիկոսը և Հովհաննես Պողոս Բ պապը: Նրանք հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով ընդունեցին, որ «Կատարյալ Աստված ըստ Իր աստվածության, կատարյալ մարդ ըստ Իր մարդության, Իր աստվածությունը միացել է Իր մարդությանը Աստծո Միածին Որդու անձի մեջ մի (այնպիսի) միավորմամբ, որն իրական է, կատարյալ, անխառն, անշփոթ, առանց որևէ տեսակի բաժանման»: Նրանք միաժամանակ ողջունեցին այն մեծ առաջընթացը, որ իրենց եկեղեցիները գրանցել են «Քրիստոսի՝ մարմնացյալ Բանին Աստծո մեջ միության իրենց ընդհանուր որոնման մեջ»: Եվ արձանագրեցին, որ «...այս ընդհանուր հավատքի իրականությունը երբեմն մթազնել է կամ անտեսվել: Լեզվական, մշակութային և քաղաքական գործոնները մեծապես նպաստել են աստվածաբանական անհամաձայնություններին, որոնք արտահայտություն են գտել իրենց վարդապետությունները բանաձևելու իրենց եզրաբանության մեջ»:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների շարք կազմակերպվեց Վատիկանում. Հռոմի պապի, Ամենայն հայոց կաթողիկոսի, ՀՀ Նախագահի մասնակցությամբ տրվեց պատարագ, որպես բարի կամքի դրսևորում Հայ եկեղեցուն փոխանցվեցին Գրիգոր Լուսավորչի մասունքները, իսկ Գրիգոր Նարեկացուն շնորհվեց «Տիեզերական եկեղեցու դոկտորի» տիտղոս, որը երկրորդն է Արևելքում, 36-րդը՝ աշխարհում:

Հայ եկեղեցին ավելի անողոք դիրք գրավեց բողոքական ուղղությունների նկատմամբ, որոնք Հայաստան թափանցեցին XIX դարի 30-ական թվականներին: Շվեյցարացի և գերմանացի քարոզիչները գործել են Կովկասի հայաշատ վայրերում և Արևելյան Հայաստանում, իսկ ամերիկացի և անգլիացի քարոզիչները՝ Կ. Պոլսում, Ջմյունիայում, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության այլ հայաշատ վայրերում: 1846 թ. Հայ եկեղեցին բանադրեց հայ բողոքականներին (բանադրանքը հանվեց 125 տարի հետո՝ 1971 թ.), իսկ Թուրքական կառավարությունը

1847 թ. վավերացրեց հայ բողոքական համայնքի ինքնուրույն գոյության իրավունքը: Բողոքականությունը հաջողության հասնելու նպատակով օգտագործեց նույնիսկ մարդկանց հայրենասիրական զգացմունքները*։ Բայց բողոքականները Հայաստանում հաջողություն չունեցան, փոխարենը՝ ազգը պառակտեցին հիմնովին: XIX դարում Հայ եկեղեցու անհանդուրժողականությունը, կաթոլիկ և բողոքական հայերի մի մասի ազգուրաց քաղաքականությունը ստեղծեցին խառնակ իրավիճակ հայ իրականության մեջ և մեծ վնաս հասցրին ազգային միասնության ձևավորման, համազգային խնդիրների լուծման գործին:

Բողոքական և աղանդավորական ուղղությունների քարոզչությունը նոր թափ ստացավ XX դարի վերջին տասնամյակում: Օտար քարոզիչների ծավալած գործունեությունը երբեք ինքնանպատակ չի եղել և չէ, այլ ունեցել է և ունի ինչպես կրոնազափարական, այնպես էլ քաղաքական դրդապատճառներ: Նրանք քարոզչական գործունեության միջոցով աշխատել և աշխատում են իրականացնել իրենց կրոնանվաճողական ձգտումները, նորանոր երկրներ ու ժողովուրդներ ներառել իրենց գաղափարական ու քաղաքական ազդեցության ոլորտներ: Ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում, ժողովրդին ցույց տրվող որոշ նյութական օգնության, անվճար բուժման և այլ միջոցների գործադրմամբ փորձել և փորձում են հայերին հրապուրել և դավանափոխել:

Անշուշտ, կարելի է լավ հայ մնալ ցանկացած դավանանքի դեպքում, և անկախ կրոնական դավանանքից, ազգությունը կրոնի հետ չպետք է նույնացնել: Բայց այսօր էլ բնակչության մեծամասնությունը և մտավորականության մի մասը ազգի հիմնական հատկանիշներից մեկը Հայ եկեղեցու դավանանքն է համարում (հիշենք «Մենք հայ քրիստոնյա ենք» արտահայտությունը), թեև ակնհայտ է նաև այն, որ աղանդավորության տարածումը մեր օրերում ևս մնում է որպես միջոց որոշակի քաղաքականության իրականացման համար:

* 1856 թ. հայկական պարբերական մամուլում տպագրվում է մի ուշագրավ հաղորդում, ըստ որի՝ «... անանուն տետրակ մը կը շրջաբերի ազգին մէջ ... որով անկախ իշխանութիւն մը խօսք կը տրուի Հայոց Կիլիկիոյ մէջ, եթէ ազգը անգղիական կամ բողոքական կրօնը ընդունելու ըլլայ» / «Մասիս», 1856, թիվ 216, էջ 2/:

Հայաստանում գործում են բազմաթիվ գրանցված և չգրանցված կրոնական կազմակերպություններ և խմբեր, որոնց թիկունքում կանգնած են արևմտյան ազատական կոչված տերությունները, որոնք նաև այս կերպ են ցանկանում պառակտել ազգը, նրա էթնիկ և հոգևոր միասնությունը և լուծել իրենց հեռահար նպատակները: Այս պայմաններում կրոնի հարցը դառնում է ազգային անվտանգության հարց, որի դիտանկյունից էլ կարևորվում է ազգդավանանք փոխհարաբերության խնդրի պարզաբանումը. հիշենք այն մեծ բանավեճը, որը տեղի ունեցավ XIX դարի կեսերին հայ հասարակական մտքի ազգային դեմոկրատական և ազգային պահպանողական հոսանքների միջև, իսկ մինչ այդ ներկայացնենք կրոնական այն իրավիճակը, որը հայ իրականության մեջ ձևավորվել էր XIX դարում⁷¹:

Առանց այդ պատմությանը և բանավեճին ծանոթանալու, մենք հստակ պատկերացում չենք ունենա, թե որտեղից է գալիս «կրոնազգ» փոխհարաբերության խնդիրը, և ինչ տեսքով է այն մեզ հասել:

Իսկ այդ խնդիրը հասկանալու համար համառոտ ներկայացնենք պատմական իրադարձությունների այն ընթացքն ու արդյունքները, ավանդական հոգեբանությունը, որը ձևավորվել է մեզանում դարերի ընթացքում և հասել XIX դար:

Տարածվելով ժողովրդի մեջ և սերտորեն կապվելով նրա պատմությանն ու ավանդույթներին՝ քրիստոնեական եկեղեցին տեղայնացավ և ազգային եկեղեցու համարում ձեռք բերեց: Դրան նպաստեցին Պապ թագավորի բարեփոխումը (ռեֆորմը), որով Հայ եկեղեցին ինքնուրույնություն և անկախություն ձեռք բերեց, ինչպես նաև Գրերի գյուտն ու 449–451 թթ. ժողովրդաազատագրական շարժումներին Հայ եկեղեցու ակտիվ մասնակցությունը: Երբ պատմական ու քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը, եկեղեցին դարձավ նաև ազգային-պետական և քաղաքական գործառույթներ իրականացնող հաստատություն: Հայ ժողովրդի պատմության մեջ ստեղծ-

⁷¹ Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Սարգսյան**, XIX դարի կեսերի հայ լուսավորական միտքը՝ ընդդեմ կրոնական գաղափարախոսության և արդիականությունը, Եր., 1991, նույն հեղինակի՝ Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Եր., 2001:

ված յուրահատուկ պայմանների բերումով եկեղեցին, բացի զուտ կրոնական գործառույթներից, իրականացրեց նաև ազգի գաղափարական ամբողջության պահպանմանը և մշակույթի զարգացմանը նպաստող գործունեություն:

Վերջին հինգ դարերի ընթացքում, քաղաքականապես ենթարկվելով մահմեդական տերություններին, հայերը ավելի սերտորեն կապվեցին եկեղեցուն, նրա շուրջը համախմբվեցին, որովհետև ժողովրդի ներքին կյանքին վերաբերող շատ հարցեր միայն եկեղեցու միջոցով էին կարգավորվում (ծնունդ, կնունք, պսակադրություն, հուղարկավորություն), եկեղեցուն կից գործող դպրոցներում էին հայ երեխաները ազգային գիր և գրականություն սովորում: Եվ վերջապես, Հայ եկեղեցիով էին դրսում հայերին ճանաչում, ազգը ընդունում որպես առանձին կրոնական միավոր: Եվ ոչ միայն օտարները, այլև հայերն էին իրենց համարում կրոնական ազգ:

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ եկեղեցին և նրա շուրջ համախմբված մտավորականները տարածում էին այն գաղափարները, թե կրոնով է ազգը պահպանվում, ազգի ամենահիմնական հատկանիշը նրա դավանած կրոնն է, կրոնն է ազգի ձևավորման ու գոյության հիմքը: Այս հանգամանքը հատկապես ցայտուն էր դրսևորվում միջեկեղեցական հարաբերություններում: Երբ հայ ժողովրդի հավատափոխության հարցում ակտիվ դիրք էին գրավում իսլամադավանները, եկեղեցին մահմեդականությանը հակադրում էր քրիստոնեությունն ընդհանրապես և քրիստոնեության դավանաբանությունն ու պաշտամունքը ներկայացնում որպես ազգային տարբերակման հատկանիշ, իսկ երբ ակտիվանում էր ուղղափառ (հունաբյուզանդական), կաթոլիկ, բողոքական քարոզչությունը, ազգի գոյության պատվար էր ներկայացվում քրիստոնեության հայ եկեղեցու կողմից ընդունված տարատեսակը՝ միաբանությունը: Այս բոլորի հետևանքով ձևավորվում է այն մտայնությունը, թե ազգային ու կրոնական հատկանիշները նույնն են: Ահա թե ինչու դավանափոխությունը հայ իրականության մեջ հիմնականում նույնացվում է ազգափոխության հետ և երկպառակությունների պատճառ դառնում:

Ժողովրդի բացարձակ մեծամասնությունը, մտավորականության մի զգալի մասը, Հայ եկեղեցու դավանությունը ազգային

տարբերակման հատկանիշ համարելով, կաթոլիկություն և բողոքականություն ընդունած հայերին այլևս հայ չէին համարում, որի հետևանքով ազգը պառակտվում էր, զրկվում համատեղ գործելու, համազգային հարցեր լուծելու հնարավորությունից, ավելին՝ առաջանում էր ներազգային թշնամանք, հաճախ էլ՝ բախումներ⁷²: Այս իրադարձությունների անմիջական ազդեցությամբ **Սյր. Նազարյանցը** գրեց, որ «ազգ ու կրոն ջուկ-ջուկ խնդիրներ են», և հայերը ինչպիսի դավանության էլ պատկանեն, «մնում են միշտ արենակից եղբայրք, մի ազգի որդիք, մի լեզուի կցորդք, մի ազգային պատմութեան ... ժառանգներ»⁷³: Հետևաբար, «Ազգը միապէս պատկանում է և Լուսաւորչականին և Կաթոլիկին և Պրօտեստանտին... ուրեմն թող այդ երեք ազգային բաժինները իւրանց դրոշի վերայ արձանագրեն միապէս այս երեք բառս որպէս նոցա կեանքի թանկագին առածք, որպէս նոցա աչքի բիբք. Եղբայրասիրութիւն, Հայրենասիրութիւն, միաբան անձնագոհութիւն հասարակաց հայրենիքի համար...»⁷⁴: Ստ. Նազարյանցից բացի, այդ տեսակետին էին ազգային-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչներ **Մ. Նալբանդյանը** (գործունեության ուշ շրջանում), **Րաֆֆին**, **Գր. Արծրունին**, **Ա. Հայկունին**, **Հ. Սվաճյանը**, **Մ. Մամուրյանը** և **ուրիշներ**:

Քննադատելով Ստ. Նազարյանցին՝ «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսի խմբագիր Մ. Աղաբեկյանը գրում է. «Այն հայերը, որոնք ժամանակ առ ժամանակ իրեանց եկեղեցուց բաժանուել են, ոչ թե եղբայրասիրութեան, հայրենասիրութեան և միաբան անձնագոհութեան դրօշակ են բռնել իրեանց ձեռքին, այլ ատելութեան, հալածանց, հայիոյութեան և թշնամութեան: Հայերի հանար կրօ-

⁷² 1860 թ. Կ.Պոլսում մահացած հայ բողոքականի ազգականները ցանկանում են նրան թաղել հայ առաքելականների գերեզմանոցում: Առաջանում է բախում երկու հայ համայնքների միջև, որը տևում է մի քանի օր: Գործին միջամտում են օտար պետությունների դիվանագետները: Հայկական մամուլը շատ բնական համարեց այդ իրադարձությունները, նույնիսկ դիտեց որպես հայերի ազգային ինքնագիտակցության դրսևորում: Միայն «Հյուսիսափայլը» քննադատեց օտար քարոզիչների գործունեությունը, բայց միաժամանակ առաջ քաշեց ազգի և կրոնի՝ «ջուկ-ջուկ» լինելու խնդիրը:

⁷³ **Սյր. Նազարեանց**, Մեղեմյազն, Լեսսինգ եւ Լուսատեր, Յաւելուած, // Հիւսիսափայլ, 1860, թիվ 10, էջ 309:

⁷⁴ Նույն տեղում, էջ 310:

նական և ազգային հանդեսները մի են եղել և ոչ թե տարբեր: Եկեղեցին նրանց ազգայնության կենտրոնն է եղել, ուր ցուցվել են միաբանության և հայրենասիրության բոցափայլ ճառագայթներն. խոյս տալով եկեղեցուց, խոյս են տուել ազգայնության ամենանուիրական զգացմունքներից: Երկպառակուելով հայրենի դասանալից և նախնական ծեսերից՝ երկպառակուել են և հայրենասիրութիւնից և դատարկ ու ամայի են թողել իրենց հայրենիքը...»⁷⁵: Այդ տեսակետն էին ներկայացնում ազգային-պահպանողական հոսանքի գրեթե բոլոր ներկայացուցիչները:

Հակադրվելով այս տեսակետին՝ Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Ռաֆֆին այն միտքն էին առաջ քաշում, որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի գոյությունը ոչ այնքան դրական, որքան բացասական հիմքերի վրա է, որովհետև, նրանց համոզմամբ, ոչ թե Ավետարանն է փրկել հայությանը կորստից, այլ նրա հակոտնյա Ղուրանը, ոչ թե անհատական բարոյական կամ հոգեկան զորությունն է պահել հայերի ընտանեկան կյանքն ու եկեղեցական պաշտամունքը, այլ թուրքի տգիտությունն ու անքաղաքավարությունը: Չարգացնելով այս մտքերը՝ Մ. Նալբանդյանը գրում է. «Ազգը որչափ ևս թաղված լիներ խավար տգիտության մեջ, այնուամենայնիվ, եթե մի մասը գիտությամբ, մյուս և ավելի մեծ մասը, ֆանատիկոսությամբ հեռի մնալով մահմեդականությունից, պահեց յուր կրոնը, հետևաբար և ազգությունը»⁷⁶: Մ. Նալբանդյանը նույնիսկ այն տեսակետին էր, որ եթե հայ ժողովուրդը իր թագավորության կործանման շրջանում ենթարկվեր որևէ առաջադեմ քրիստոնեական պետության, ապա, ամենայն հավանականությամբ, կծուվեր: Իսկ ինչ վերաբերում էր Եվրոպայում հայերի ծուլմանը, ապա դա ոչ թե դավանափոխության, այլ Եվրոպական ազգերի բարձր քաղաքակրթության հետևանք էր: Հայերը Եվրոպայում ծուլվել են նաև առանց դավանափոխվելու, որի պատճառը այն ընդհանուր օրինաչափությունն է, որ Արևմուտքում, հանդիպե-

⁷⁵ Մ. Աղաբեկեան, Նկատմունք Մ. Նազարեանցի մի ամենամեծ խնդրի պատճառաւ հրատարակած ամենաթողի հատուածի վրայ, // Կռունկ Հայոց աշխարհին, 1860, թիվ 10, էջ 839:

⁷⁶ Մ. Նալբանդյան, Երկու տող, ԵԼԺ վեց հատորով, հ. 4, Եր., 1983, էջ 21, ինչպես նաև Մ. Մամուրյան, Երկեր, էջ 172-173, Ռաֆֆի, Ինչո՞վ ենք մխիթարվում, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Եր. 1991, էջ 314:

լով մշակութապես ավելի բարձր մակարդակ ունեցող ազգերի, հայ գաղթականները, չդիմանալով մրցակցությանը, գոյության կոլում պարտվել են և կուլ գնացել ավելի զորեղներին: Ահա թե ինչու, ըստ Ռաֆֆու, չի կարելի ասել, թե հայ ժողովուրդին քրիստոնեությունն է պահել: Ազգի մի մասը ծուլվեց, ինչո՞ւ կրոնը չպահեց նրան: Եթե հայ ժողովուրդը փառավոր անցյալ է ունեցել, ապա դա եղել է մինչև քրիստոնեությունը, որից հետո տկարացել է, բաժանվել տարբեր բռնակալությունների միջև⁷⁷:

Եվ այսպես, ազգային-դեմոկրատական հոսանքը ներկայացնող մտածողների մի մասը փորձում էր ապացուցել, որ կրոնական և ազգային հատկանիշները չեն նույնանում, որ կրոնը համոզմունքի հարց է, իսկ ազգը՝ բնապատմական ու մշակութային երևույթ է և կապված է աշխարհագրական միջավայրի, կլիմայի, արյան, մարմնի կառուցվածքի, լեզվի, պատմության և այլնի հետ, որոնք անփոփոխ են մնում համոզմունքի ցանկացած փոփոխության պայմաններում: Իհարկե, իրավացի էր «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսը՝ գրելով, որ Եվրոպական երկրներում համատեղ ապրող տարբեր դավանության մարդկանց հարաբերությունները կարգավորվում են պետության կողմից, օրենքներով, մինչդեռ, հայերը ցիրուցան եղած, առանց սեփական պետության ժողովուրդ են, որոնց միավորողը հաճախ միայն եկեղեցին է: Բայց, ազգային-դեմոկրատական թեև ներկայացուցիչների կարծիքով, կրոնական ու ազգային հատկանիշները զատելու դեպքում, ազգի քաղաքական զարթոնքի, ազգային գիտակցության ու ինքնագիտակցության պայմաններում դավանաբանական տարբերությունները ազգային երկպառակությունների տեղիք չեն տա, իսկ ազգի ցիրուցան անդամներին գաղափարական կապերով միավորողը կլինի ոչ թե եկեղեցին, այլ ազգային ոգին, ազգայնությունը, հայրենասիրությունը:

Հայության գործը Թուրքիայում միայն այն ժամանակ կարելի է հաջողված համարել, երբ ազգի անջատված մասերը միանան, ամբողջություն կազմեն ոչ թե կրոնական կապերով, այլ ազգայնությամբ⁷⁸: Ռաֆֆու կարծիքով. «Կաթոլիկությունը, բողոքականու-

⁷⁷ Տե՛ս Ռաֆֆի, Ինչո՞վ ենք մխիթարվում, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, էջ 314:

⁷⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 316::

թյունը և մինչև անգամ մահմեդականությունը չեն զրկում հային հայ լինելուց, և ոչ էլ լուսավորչականությունը մեզ իրավունք է տալիս հայ կոչվել: Մենք հայ էինք, երբ հեթանոս էինք, և հայ կմնանք, երբ հազար անգամ կփոխենք մեր կրոնը»⁷⁹:

Հայ ազգային-պահպանողական մտավորականությունը առարկում է այս տեսակետին՝ ասելով. «Մեր հայերիս համար, որոնք ներկայումս աշխարհիս ամեն ծայրերը ցրուած են, լեզուով իրար մեծ մասամբ խորթ են կամ բոլորովին օտարալեզու և քաղաքականապէս էլ, բոլորովին օտարներին ենթարկված, միակ հարստութիւն մնացել է հայ եկեղեցին և Հայաստանի մէջ եղած սրբութիւնք, որոնք հայ ազգի բաժանեալ մասերը, որ ամենատեսակ քաղաքական, տնտեսական, մտաւոր և բարոյական օտար ազդեցութեանց ենթարկված են, կազմում են ի միազգութիւն: Ամեն կողմից կլանող զորեղ տարրերը ճնշում են հայ ազգի մասերը և օրից օր նրանց նուազեցնում և այս շատ բնական է: Միայն եկեղեցին է մնացել պահպանող և դիմադրող ուժ»⁸⁰:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ նրանք ազգի հատկանիշների մեջ հայրենիքի և քաղաքական իշխանության կողքին դնում էին կրոնը: Քաղաքական իշխանություն չունենք, իրենց դատողություններն են շարունակում այս ուղղության ներկայացուցիչները, կիսով չափ զրկվել ենք հայրենիքից (հավանաբար նկատի ունեն տարածքից), մնացել է միայն կրոնը, որի շնորհիվ ունենք ազգային եկեղեցի, որում միանում ենք հոգով և զգացմունքով: Ազգային տոները նշելով՝ պահում ենք մեր հին հիշատակները, իսկ քրիստոնեական բարոյական սկզբունքների հետ ներշնչում ենք ազգային միության գաղափարը: Եթե հեռանանք հայ եկեղեցուց, ապա ազգային գոյության շատ խախտու հիմք կունենանք, որովհետև բողոքականները նման ծեսեր չեն կատարում, հունական (ուղղափառ) և կաթոլիկ եկեղեցիները այդ տոների մեջ բոլորովին այլ իմաստ են դնում: Հետևաբար, «...միակ բարոյական կապը ազգային եկեղեցին է, որի հետ ազգի մեծամասնութեան համոզմուն-

քով և հասկացողութեամբ, ինչպէս և նորա պատմական կեանքով, ծովվել է հայ ազգայնութեան գաղափարը...»⁸¹:

Կրոնը ազգի հատկանիշ համարելու, դավանափոխությունը ազգափոխություն ներկայացնելու համար ազգային-պահպանողականները այլ փաստարկներ էլ էին բերում: Դավանափոխությունը քաղաքական անկախություն, բարձր քաղաքակրթություն ու մտային կարողություն ունեցող ազգերի համար կարող է կորստաբեր հետևանքներ չունենալ, հատկապէս այն դեպքում, երբ դավանափոխությունից հետո անհատը շարունակում է իրեն տվյալ ազգի ներկայացուցիչ համարել և պայքարել համազգային իղծերի իրականացման համար: Բայց Ասիայում, որտեղ ազգությունը կրոնով է չափվում, Թուրքիան կառուցված է ոչ թե ազգության, այլ դավանանքի սկզբունքի վրա, դավանությունից դուրս մնալով՝ ազգությունից ես դուրս մնում, կրոնը անհրաժեշտորեն դառնում է ազգի հատկանիշ: Հետևաբար, «...տուր հային ազատ հայրենիք և լեզու ու խլիր կրօնն իբրև ազգութեան պահպանիչ...»⁸²:

«Ազգ-դավանանք» բանավեճը, երբեմն բորբոքվելով, երբեմն մեղմվելով, պահպանվեց մինչ մեր օրերը, նորից բորբոքվեց քրիստոնեական այլ դավանությունների և զանազան հարանվանությունների Հայաստան մուտք գործելու հետևանքով (խորհրդային տարիներին աթեիստական և ազգագիտական գրականության մեջ ազգ կազմող հատկանիշների մեջ կրոնի տեղի և դերի հարցերը առավել ակտիվորեն քննարկվել են XX դարի 80-ական թվականներին):

Այսօր ստեղծվել են ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչների մատնանշած գործոնները՝ ազգային պետություն, Սահմանադրություն, դրանով ամրագրված՝ Հայ եկեղեցու իրավունքներ և արտոնություններ, ազգային դպրոցների, կրթության ու լուսավորության լայն համակարգ: Այսօր Հայ եկեղեցին այնքան է սերտաճել իշխանությանը, ներթափանցել ազգային-հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներ, որ թվում է, թե մենք ստեղծել ենք ոչ թե աշխարհիկ պետություն, այլ եկեղեցապետություն: Եկեղեցին պարբերաբար ասպարեզ է նետում «մեկ ազգ, մեկ պետու-

⁷⁹ Բաֆֆի, Մինչև ե՞րբ, էջ 332:

⁸⁰ Կրօնի նշանակությունը. Մեր վիճաբանութիւնը «Մշակի» հետ, // Մեղու Հայաստանի, 1880, թիվ 55, էջ 1:

⁸¹ Ազգութիւն և կրօն, // Մեղու Հայաստանի, 1880, թիվ 88, էջ 1:

⁸² Կրօնի ազատութիւնը մեր մէջ, // Մեղու Հայաստանի, 1880, թիվ 49, էջ 2:

թյուն, մեկ եկեղեցի», «ազգ-դավանանք» նույնականության, հայ եկեղեցու ազգային բնույթի և նկարագրի շարունակ չարչրկված գաղափարները⁸³:

Չխորանալով բանավեճի մեջ՝ պարզապես նշենք, որ ազգայնա-նում է ոչ թե քրիստոնեությունը, կրոնն ընդհանրապես (խոսքը համաշխարհային կրոնների մասին է), այլ նրա մատուցման ձևը, կեղևը, որովհետև ցանկացած կրոն երկու կողմ ունի: **Առաջինը** նրա միջուկն է, էությունը, որը հանդես է գալիս գերբնական ուժերի (Աստված, հրեշտակներ, սրբեր, հոգու անմահություն, հանդերձյալ կյանք և այլն) իրական գոյության նկատմամբ հավատի ձևով, որն իր համապատասխան ձևակերպումն է ստանում դոգմաների ու խորհրդածեսերի մեջ (երրորդություն, մարդեղություն, մկրտություն, օծում, հաղորդություն և այլն): **Երկրորդը** այդ միջուկի (գերբնականի) պաճուճանքն է, զարդարանքը, կեղևը, այն, ինչը հազցվում է այդ գերբնականին: Գերբնականը և նրա կողմից իրերի բնական ընթացքի վրա ազդելու (հրաշք) հավատը նույնն են ամենուր և միշտ: Այդ հավատը ազգային կերպարանք չունի: Օրինակ, քրիստոնյա բոլոր ազգերն էլ ընդունում են Աստծու գոյությունը, երրորդությունը և այլն, իսկ այն, թե սուրբ հոգին միայն Հայր աստծուց է բխում, թե նաև Որդի աստծուց, մարմնացյալ Աստված միայն մեկ բնույթ ունի, թե երկու և նման այլ վիճահարույց հարցեր, ազգային նկարագիր չունեն: Այլ բան է, որ դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը կարող է ազգային-քաղաքական պայմանավորվածություն ունենալ: Բոլոր քրիստոնյա ազգերն էլ կատարում են մկրտության ու հաղորդության ծեսեր, ամենուր նրանց իմաստը նույնն է: Այն, թե մկրտությունը կկատարվի մկրտվողին ջրում ընկղմելով, թե նրա վրա ջուր ցողելով, ոչ մի ազգային նշանակություն չունի: Դրա փոխարեն ազգերն ու ժամանակը փոխում են պաճուճանքը, զարդարանքը, որովհետև, թափանցելով որոշակի էթնիկական միջավայր, կրոնը հանդես է գալիս հավատի դրսևորման ազգային ձևերի միջոցով՝ կրոնականացնելով ազգային ծե-

սերն ու ավանդույթները և, ընդհակառակը, ազգայնացնելով դրանք:

Պաճուճանքի ազգային կերպարանք ստանալուն նպաստել է նաև այն հանգամանքը, որ եկեղեցու գործիչները նույն ազգի զավակներն են, նույն լեզվով են խոսում, աղոթքներն ու ծեսերը կատարում, նույն ազգային հոգսերով են ապրում, իսկ եկեղեցին կիսում է տվյալ ազգի պատմական ճակատագիրը: Այսպես է եղել մեզանում: Բայց այս բոլորը չփոխեցին և չէին էլ կարող փոխել Հայ եկեղեցու դավանած քրիստոնեության էությունը, որովհետև վերաբերում են արտահայտման ձևերին, պաճուճանքին: Հայ եկեղեցու դավանանքը եղել և մնում է ապազգային (վերազգային), համաքրիստոնեական: Ուստի Հայ եկեղեցին ոչ թե հայադավան է, ինչպես փորձում են ներկայացնել, այլ Քրիստոսադավան, որովհետև դավանանքի ու պաշտամունքի հիմքում ոչ թե հայ ցեղն է, ազգը կամ նրան բնորոշ որևէ հատկանիշ, այլ Աստված, Քրիստոսը, նրա հետ կապված մարդիկ և իրադարձություններ: Հետևաբար, Հայ եկեղեցին քրիստոնեական է իր բովանդակությամբ և ազգային՝ դրսևորման ձևով:

Այստեղից էլ ընդհանուր հետևությունը: Ազգային անվտանգության հոգևոր-բարոյական միասնականության խնդիրները լուծելիս պետք է առաջնորդվել ոչ թե կրոնական, այլ ազգային շահերով, որոնց մեջ առաջնային պետք է համարվեն ազգայնականությունը, հայապահպանությունը, Հայկական հարցի լուծումը, Արցախի պետության հաստատումը, մեր պետականության հզորացումը, մեր՝ որպես պետականություն և մշակույթ ունեցող ազգի տեղի և դերի ճշգրտումը, ազգի հոգևոր-բարոյական միասնության ապահովումը:

Իսկ քրիստոնեության զանազան ուղղություններին պատկանող հայ հավատացյալները միմյանց հետ շփվելիս ոչ թե հավատքային տարբերությունները պետք է հիմք ընդունեն (բոլորն էլ քրիստոնյա են, նույն ժողովուրդն են, նույն պատմության ժառանգորդը, նույն ճակատագրի կրողը), այլ միասնական ծագման ըմբռնումը, դառնան կրողը ազգային գիտակցության, հոգեկերտվածքի և մշակույթի, առաջնորդվեն «միություն ի կարևորս...» քրիստոնեական հնավանդ կարգախոսով: Պետք է արմատավորվի այն գիտակցու-

⁸³ Շարադրվածի և այդ գաղափարների մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Սարգսյան**, Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999, էջ 109-141, **նույն հեղինակի՝** Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Եր., 2001, էջ 105-123, **նույն հեղինակի՝** Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016, էջ 422-424:

թյունը, որ բոլորս էլ առաջին հերթին հայ ենք, հետո միայն առաքելական, կաթոլիկ, ուղղափառ, բողոքական, ազատախոհ, աթեիստ և այլն:

Հատուկ վերաբերմունքի են արժանի իսլամացած հայերը. նրանք օտար են իսլամական աշխարհում, որովհետև հայ են, օտար են հայկական աշխարհում, որովհետև մահմեդական են:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ են նշանակում «արդիականացում», «երկխոսություն» հասկացությունները քրիստոնեության մեջ: Որո՞նք են քրիստոնեության արդիականացման պատճառները:
2. Ի՞նչ հաջողությամբ են իրականացվում արդիականացման փորձերը կաթոլիկ, ուղղափառ, բողոքական ուղղություններում և Հայ եկեղեցում:
3. Որո՞նք են իսլամական գործոնի և ահաբեկչության ակտիվացման պատճառները ժամանակակից աշխարհում:
4. Որո՞նք են կրոնական նվաճողականության առանձնահատկությունները հայ իրականության մեջ:
5. Որո՞նք են «ազգ-դավանանք» նույնականացման պատճառները հայ իրականության մեջ:
6. Ներկայացնել ազգայինը և համաքրիստոնեականը Հայ եկեղեցու գործունեության և գաղափարախոսության մեջ:

ԹԵՄԱ ԻՆՆԵՐՈՐԴ

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԳԼՈՒԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ա) Բարոյականությունը և հումանիզմը որպես մարդկության գոյության և զարգացման հիմնական երաշխիքներ

Այժմ համառոտ ներկայացնենք գլոբալ հիմնախնդիրների լուծմանը միտված առավել հայեցակարգային նշանակություն ունեցող տեսակետները, այնուհետև անցնենք դրանց վերլուծությանը և գնահատականին:

Առաջինը բնապաշտական (նատուրալիստական) տեսակետն է, ըստ որի պետք է համատեղել ժամանակակից քաղաքակրթությունը ժամանակակից գյուղի՝ բնության, արատավորվածը՝ անարատի հետ, վերադառնալ դեպի բնություն: Այս ուղղությունը երբեմն անվանում են «նորոգության կարգադրություն», որի ներկայացուցիչների կարծիքով՝ երկրագնդի ողբերգական ճակատագիրը շտկելու միակ միջոցը բնապաշտությունն է: Բնապաշտների իդեալի մոտավոր ներկայացուցիչը այսօրվա գյուղացին է, որի կյանքի խորը հանգիստը հիացնում է նրանց իր վեհացնող ճշմարտությամբ: Նորոգության կարգադրության (բնապաշտության) կարծիքով՝ մարդն իրեն մեծ փորձության ենթարկեց՝ անջատվելով բնությունից և գործելով նրա դեմ: Որպեսզի մարդը նորից գտնի իր կորցրած երջանկությունը, պետք է վերադառնա բնություն և ապրի վերջինիս հետ ներդաշնակության մեջ:

Այս առնչությամբ բավական հետաքրքիր են **Սյր. Ջորյանի** հուշերը Թումանյանի մասին: Նա նշում է, որ **Թումանյանը** դեմ էր երկաթուղու շինարարությանը, երկաթուղին Լոռու ձորերով տանե-

լուն, որովհետև անտառ ու գեղեցկություն էր փչացնելու, կուսական բնություն էր արատավորելու:

«– Ճիշտն ասած՝ էս բոլորից հետո գալիս ես էն տխուր եզրակացության, որ բնությունից հեռացողը դժբախտանում է:

– Բայց բնության մեջ ապրողներն էլ երջանիկ չեն,– նկատեցի ես:

– Այնուամենայնիվ, բնությունը հանգստացնում է: Բնության մեջ դու էլ նրա մի մասն ես դառնում, իսկ քաղաքում ...»⁸⁴:

Հրանտ Մաթևոսյանը իր ստեղծած բնապաշտական աշխարհն անվանեց «Ծմակուտ», որի մեջ էլ որոնեց մարդկության փրկությունը: Ծմակուտի մեջ են փրկություն որոնում նաև ազգային-մշակութային-կրոնական ինքնատիպությունը պահպանելու և ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերներից հեռու մնալու կողմնակիցները:

Պետք է փակվել ազգային-մշակութային պատյանի մեջ, պաշտպանվել արտաքին աշխարհի օտար և ապականող ազդեցություններից, պահպանել ազգային ինքնատիպությունը և ինքնուրույնությունը:

Բնապաշտների ծայրահեղ թևի ներկայացուցիչների կարծիքով՝ մարդկության փրկությունը վերադարձի մեջ է, վերադարձ դեպի նախնադար՝ մարդկության ոսկեդար, վաղ դարաշրջաններ, որոնցից ինչքան հեռանում, այնքան կասկածելի ենք դարձնում մեր ապագան: Ահա այնտեղ՝ «...հեռու, նախքան մեր թվագրություններում, Բաբելոն մեծ աշխարհի երիտասարդ զորավար-առաջնորդը էշահեծյալ գնդեր գումարեց, գնդեր շարժեց Ասորեստան մեծ աշխարհ, մեծ ճակատամարտ տվեց և գերեվարեց հիսուն զինվոր, ավանակների մի երամակ, հիսուն կով և յոթ պարկ խաղողի գինի և հաղթանակն արձանագրեց վիմագիր արձանագրությամբ»⁸⁵:

Երկրորդը կրոնականն է, ավելի ստույգ՝ քրիստոնեականը, որի ներկայացուցիչների կարծիքով՝ քաղաքակրթության փրկությունը կրոնի մեջ է, գիտության և տեխնիկայի զարգացումը կրոնով ներ-

⁸⁴ **Սյր. Ջորյան**, Թումանյան, Երկերի ժողովածու տասներկու հատորով, հ. 11, Եր., 1985, էջ 46:

⁸⁵ **Հ. Մաթևոսյան**, Այսպես կոչված գյուղագրության մասին // Սպիտակ թղթի առջև, հոդվածներ, էջ 41:

դաշնակելու մեջ: Աստվածաբանների պնդմամբ՝ գիտությունը և տեխնիկան օրհնությունից կարող են վերածվել անեծքի, եթե ընկնեն բարոյագուրկ մարդկանց ձեռքը: Այսօր մարդկանց դժբախտություն բերողը ոչ թե տգիտությունն է, այլ գիտության նվաճումների չարաշահումը: Միայն գիտությամբ մարդուն երջանիկ չես դարձնի: Եթե գիտությունը չլրացվի կրոնով, ապա քաղաքակրթությունը կնմանվի ավազի վրա կառուցած շենքի: **Վազգեն Ա կաթողիկոսի** կարծիքով. «Հոգիներու և աշխարհի մեջ խաղաղություն չկա: Վերջապես երբ և ինչպես մարդիկ պիտի կարողանան պեղել և կյանքի կոչել բարոյական ճշմարիտ ուժերը մարդկային հոգեկան տիեզերքին: Մենք կհավատանք, թե բարոյական այդ ուժերը որոնելու և հայտնաբերելու փրկարար ճանապարհի վրա վճռական առաքելություն ունին նաև կրոնները բոլոր, հատկապես քրիստոնեական եկեղեցիները»⁸⁶: Գիտությունը պետք է լրացնել կրոնով, անկրոն գիտությունն ու քաղաքակրթությունը պատուհաս են մարդկության համար: Ապագա քաղաքակրթության բախտը մեծապես պայմանավորված է Քրիստոսի պատգամների կատարման աստիճանով: Առանց ավետարանական անսահման և անպայմանավոր սիրո և գուրթի, առանց Աստծու պատվիրանների, մարդկությանը փրկություն չկա, կարծում են աստվածաբանները:

Գարեգին Բ կաթողիկոսը ժողովրդին ուղղված պատգամում ասում է. «Միայն նյութական առաջընթացը չի ապահովելու ճգնաժամային իրավիճակներից խուսափումը, կանխումը գժտությունների ու բախումների, վերացումը աղետների ու աղքատության: Հոգևորի անտեսումը, աշխարհայնացման ընթացքները միանշանակորեն խաթարում են նվիրագործված ավանդույթները, աղճատում բարոյական պատկերացումները ու հասկացությունները, նաև մարդու ներաշխարհը՝ պատճառ դառնալով Աստծուց, իր անձից ու աշխարհից մարդու օտարացման և անտարբերության: Աստված է սնուցում մարդկային կյանքը, որպեսզի չվերանան սահմանները մարդասիրության և եսասիրության, չխառնվեն արդարն ու անարդարը, ճշմարիտն ու կեղծը, և չչփոթվեն բարին և չարը»⁸⁷:

⁸⁶ **Վազգեն Ա**. Հայրապետ հայոց, Գիրք երրորդ, Ս. Էջմիածին, 1976, էջ 250:

⁸⁷ // Էջմիածին հանդես, 2009, թիվ Ա, էջ 4: Նման մտքեր կաթողիկոսը հայտնել է նաև 2007 թ. ժողովրդին ուղղված պատգամում. «Գիտական մտքի զարգացումը

2017 թ. մարտի 21-ին Ֆինլանդիայում ունեցած ելույթում Գարեգին Բ կաթողիկոսը նշում է. «Այսօր...աշխարհը կանգնած է տնտեսական, մարդասիրական ու բնապահպանական ճգնաժամերի, ազգային-կրոնական հակամարտությունների և օրեցօր ավելացող անհանդուրժողականության, ահաբեկչությունների, եղեռնական ոճիրների ցավալի փաստերի առջև... նահանջ են ապրում հոգևոր-բարոյական արժեքները... Մենք ամենքս, իբրև քրիստոնյաներ, կոչված ենք մեկ հույսի, որ է Քրիստոսի բերած փրկությունը...»⁸⁸:

Երրորդ և ամենահիմնական մոտեցումը **բարոյականն է** (կրոնական տեսակետում էլ առավել կամ պակաս ընդգծված բարոյական շեշտադրումներ գոյություն ունեն, բայց ենթարկված են Աստուծո զորության ու ամենակարողության նկատմամբ հավատին: Այստեղ առաջատար, իշխող կողմը կրոնականն է, այն համոզվածությունը, որ մարդու և մարդկության փրկությունն Աստուծու պատվիրաններով առաջնորդվելն է), ըստ որի՝ զարգացումը, գիտատեխնիկական քաղաքակրթությունը պետք է ներդաշնակել բարոյականով:

Գիտությունը և տեխնիկան եղել և մնում են միջոցներ, որոնց օգնությամբ մարդը ձգտում է ընդլայնել իշխանությունը բնության վրա և ապրել բարեկեցիկ ու ապահով կյանքով: Եթե գիտությունն ու տեխնիկան աղավաղում են իրենց էությունը, հանուն մարդու պայքարելու փոխարեն պայքարում են մարդու դեմ, ապա դրա մեղավորը գիտությունն ու տեխնիկան չեն, այլ քաղաքակրթության բնույթը, որովհետև քաղաքակրթական առաջընթացը չի լրացվում բարոյականով:

V դարի հայ աստվածաբան փիլիսոփա **Եզնիկ Կողբացին** գրում է. «Երկաթը մերթ ծառայում է բարի բաների համար, մերթ՝

նպաստել է կեանքի բարօրությանը, բայց որքան կատարելագործել է նաև պատերազմի գեները: Արդարև, գիտատեխնիկական արդի նուաճումները, ժողովրդավարությունը, անհատի եւ ազգի իրաւունքներն ու ազատութիւնները գերակա արժեքներ հռչակած գաղափարախօսութիւնները անբաւարար եղան պատասխաններ տալու մարդկութեան առջեւ ծառայող խնդիրներին ու մարտահրաւիրներին եւ անբաւարար պիտի լինեն, եթէ Աստուած չի բնակում մեր մէջ, եթէ Աստուած չի գործում մեր կեանքում, եթէ չի կարելոյրում հոգեւորը, հաւատքն ու սրբութիւնը» (// Էջմիածին հանդես, 2007, թիվ Ա, էջ 4):

⁸⁸ // Էջմիածին, 2017, թիվ Գ, էջ 8, 12:

չար... Եվ չարության պատճառը պատրաստողն է, ոչ թե երկաթը»⁸⁹: Այսինքն, գիտությունն ու տեխնիկական սոցիալական երևույթներ են և կատարում են սոցիալական պատվեր: Ուստի պետք է պատվիրատուներին փոխել, որպեսզի գիտությունն ու տեխնիկական կատարեն իրենց հումանիստական առաքելությունը: Պետք է բարոյականությունը բարոյական դարձնել, իսկ քաղաքակրթությունը՝ քաղաքակիրթ: Անհրաժեշտ է բարոյական առաջընթացը զուգահեռել գիտատեխնիկականին: Այժմ վերլուծենք ներկայացված տեսակետները և ամփոփենք: Ընդունելի չէ բնապաշտության ծայրահեղ դրսևորումը՝ «Վերադարձ դեպի հետ» կարգախոսը: Գիտությունը, տեխնիկան, գիտական բանականությունը եվրոպական մշակույթի լավագույն նվաճումներն են, և ճիշտ չէ հրաժարվել դրանցից ու նորից վերադառնալ քարանձավ: Սա նույնիսկ կարելի է հակապատմական մոտեցում համարել: Յավոք, ներկայիս գիտությունը մեր երեխաներին սովորեցնում է սպանել, որովհետև շատ գիտնականներ մարդկության ապագան զոհաբերում են սեփական անցողիկ բարեկեցությանը, գրում է Բ. Ռասելը: Բայց կանցնի այդ շրջանը, մարդիկ կսկսեն իշխել իրենց կրքերին, ինչպես իշխում են արտաքին աշխարհի ուժերի վրա և այդ ժամանակ կնվաճենք մեր ճակատագիրը: Նվաճենք աշխարհը բանականությամբ և ուղիղ նայենք աշխարհի երեսին: Լավ աշխատող գիտելիք, բարեսրտություն ու արիություն է պետք և ոչ թե թախծոտ ափսոսանք անցյալի համար: Անհրաժեշտ է անկախ հայացք և ազատ բանականություն, հույս ապագայի նկատմամբ և ոչ թե անընդհատ հետ նայել մահացած անցյալին⁹⁰:

Լիովին համաձայնելով Ռասելի մտքին՝ կատարենք էական լրացում: Բանականության և միայն բանականության միջոցով կարող ենք նվաճել արտաքին աշխարհը (պայքարել բնության տարերային ուժերի դեմ), ճանաչել մարդուն, բայց նաև անձնագրկել ու ոչնչացնել նրան, եթե բանականությունը չլրացվի մարդասիրությամբ (հումանիզմով):

Բանականություն և մարդասիրություն. ահա քաղաքակրթության զարգացման հիմնական ուղենիշները: Այստեղ էլ, առիթից

⁸⁹ **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Եր., 1970, էջ 47:

⁹⁰ Տե՛ս **Րասել Բ.**, Почему я не христианин, էջ 94, 113:

օգտվելով, կրկին անդրադառնանք XVIII դարի Լուսավորականության քննադատների հայացքների գնահատմանը: Հիշենք Լուսավորականության փիլիսոփայության ներկայացուցիչների հիմնական տեսլականը. ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ լավագույնս կբացահայտվեն մարդու էությունն ու բնույթը, որում կգործեն հումանիզմի սկզբունքները, մարդը կդառնա ազատ և երջանիկ: Այս նպատակն իրագործելու հիմնական միջոցները լուսավորիչները համարում էին բանականությունը, գիտությունը, առաջադեմ կրթությունն ու դաստիարակությունը: Այսինքն, Լուսավորականության փիլիսոփայության իդեալը կատարյալ ու ներդաշնակորեն զարգացած ազատ անհատի ձևավորումն էր, որի կայացմանը նպաստելու էին բանականությունն ու գիտությունը: **Բանականություն, գիտություն, հումանիզմ.** ահա այն երեք հիմնասյունները, որոնց վրա կառուցված էր Լուսավորականության փիլիսոփայությունը: Բանականությունն ու գիտությունն ապահովելու էին հասարակության առաջընթացը, ձևավորելու էին այնպիսի միջավայր, որտեղ գործելու էր հումանիզմը: Բայց ի՞նչ եղավ: Լուսավորականության գաղափարախոսության սկզբունքներով առաջնորդվող Եվրոպան վերցրեց բանականությունն ու գիտությունը, բայց մոռացավ ամենակարևորը՝ մարդուն: Լուսավորականության իդեալները խեղաթյուրվեցին, որի հետևանքով Եվրոպայի զարգացումն ընթացավ ոչ այն ուղիով, որը նախանշել էին լուսավորիչները: Հետևաբար, ժամանակակից եվրոպական քաղաքակրթության արատավոր հետևանքների պատասխանատուները ոչ թե XVIII դարի գիտական քաղաքակրթության ջատագով լուսավորիչներն են, այլ նրանց գաղափարները սխալ ուղղությամբ գործադրողները, նրանք, ովքեր անտեսեցին ամենակարևորը՝ **հումանիզմը:**

Ծայրահեղության մեջ է ընկնում Ս. Հանթինգտոնը՝ պնդելով, թե մարդկությունը կործանվելու է քաղաքակրթությունների բախումից, իսկ բախման մեջ վճռորոշ գործոն է դառնալու կրոնը: Ըստ Հանթինգտոնի քննադատների՝ ավելի ազդեցիկ են տնտեսական ու քաղաքական շահերը, մրցակցությունը՝ շուկայում տարածք զբաղեցնելու, համաշխարհային տնտեսության մեջ տեղ գրավելու համար: Այնուհետև, քաղաքակրթությունների միջև հարաբերությունները պետք է հանգեցնել միայն բախմանը, հակառակը, ինչ-

պես արդեն նշեցինք, այնտեղ քիչ չեն նաև փոխազդեցությունները, փոխլրացումները՝ մշակութային, տնտեսական, ինտելեկտուալ, հոգևոր, բարոյական և գիտական բնագավառներում: Ոչ թե քաղաքակրթությունների բախումն է սպառնալիք մարդու և մարդկության համար, այլ քաղաքակրթական սկզբունքի թուլացումը կամ անտեսումը⁹¹: Փորձենք նույն տրամաբանությունը կիրառել նաև ազգային-մշակութային ավանդական արժեքները Ծմակուտով փրկելու տեսակետը վերլուծելիս: Ինչքան սխալ է արևմտյան մոդելը բռնությամբ կամ մեխանիկորեն այլ երկրների վրա տեղափոխելը, հավանաբար, նույնքան սխալ է սեփական անձավի մեջ մտնելը և դուռն արտաքին աշխարհի առջև փակելը (ինքնամեկուսանալը): Ազատական և ավանդական արժեքների համադրությունը պետք է իրականացնել ազատ, անբռնազբոսիկ, համբերատար համագործակցության միջոցով, որտեղ գլխավոր գործող անձը լինելու է ժամանակը: Ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի: Ավանդական արժեքներից կենսունակը կդիմանա ժամանակի փորձությանը, իսկ արխայիկը և ժամանակավրեպը դուրս կմղվի: Եվ հակառակը՝ ազատական այն արժեքները, որոնք կհամապատասխանեն առանձին ազգերի հոգեկերտվածքին, ժամանակի ընթացքում կամրագրվեն, կդառնան աշխատող, մյուսները կդադարեն գործելուց:

Առարկելի է նաև աստվածաբանների առաջարկած տեսակետը, որովհետև դարեր շարունակ կրոնն ու եկեղեցին այդպիսի հնարավորություն ունեցել են, այսինքն՝ վերահսկել են գիտությունն ու տեխնիկան: Կրոնի և եկեղեցու գերիշխանության երկարատև դարերի ընթացքում մարդիկ ավելի երջանիկ ու ապահով չեն եղել: Ավելին, **Ջ. մըք Քեյթի** վկայությամբ՝ մինչև V դարը հունահռոմեական քաղաքների գրադարաններում եղել է 600.000-ից մինչև 700.000 գիրք, որոնցում ամփոփված էին գիտությանը, փիլիսոփայությանը և պատմությանը վերաբերող մինչ այդ ձեռք բերված նվաճումները: Այդ ամենը ոչնչացրեց քրիստոնեությունը⁹²: Եվ եթե

⁹¹ Հանթինգտոնի հայացքների մանրամասն քննությունը տե՛ս **L. Շրիդլան**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը «երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկներ», Եր., 2006, էջ 85-106, ինչպես նաև՝ Сравнительное изучение цивилизации // Хрестоматия, составитель **Б. С. Ерасов. М., 1998**, էջ 519-520:

⁹² Տե՛ս **J. Mc Cabe**. The Social Record of Christianity. London. 1937, էջ 32:

«Եվրոպային արտոնվեր կամ խրախուսվեր հնարավորինս շուտ վերականգնել հույների ու հռոմեացիների մեծ մշակութային գործերը, ինչպես որ ցանկանում էին օստգոթերն ու լոմբարդացիները, մենք այսօր քաղաքակրթության մեջ հազար տարվա առաջընթաց կունենայինք: Եթե Եվրոպան ժառանգեր այն գիտությունը, որ արաբներն ու պարսիկները մշակել էին մինչև XIII դարը, մենք այժմ հինգ հարյուր տարվա առաջընթաց կունենայինք:

Քրիստոնեությունն աշխարհը հետ պահեց և, իհարկե, չփոխհատուցեց՝ այն առաքինի ու բարի դարձնելով: Եթե նա ժառանգեր գիտական ազատ հետազոտության և վիճաբանության այս զարգացումը, ինքը վաղուց արդեն կործանված կլիներ»⁹³: Այսօր էլ աշխարհի շատ երկրներում կրոնը հսկայական ազդեցություն ունի, բայց պետությունները զինվում են, մարդիկ՝ սպանվում: Աշխարհում չկա մի երկիր, որն առաջնորդվի «չսպանելու», «մերձավորին սիրելու», «չարին չհակառակվելու» պատվիրաններով, հրաժարվի բանակ պահելուց և վիճելի հարցերը զենքի միջոցով լուծելուց: Հետևաբար, խնդիրն այստեղ կրոնն ու բարոյականությունը, նույնիսկ գիտությունը չեն: Գիտությունն իր առջև որոշակի նպատակներ է դնում, փորձում բացահայտել ճշմարտությունը, բայց թե այդ ճշմարտությունը ում կձառայի և ինչպես, գիտության խնդիրը չէ, այլ սոցիալական քաղաքականության: Եթե գիտությունը բարիքից փոխարկվում է չարիքի, այսինքն՝ աղավաղում է իր էությունը, հումանիստական առաքելությունը, ապա մեղավորը ոչ թե գիտությունն է, այլ միջմարդկային, ազգամիջյան ու միջպետական հարաբերությունների կառուցվածքը: Հետևաբար, այստեղ բոլորովին այլ խնդիրներ պետք է լուծել և ոչ թե քաղաքակրթության (մարդկության) ապագան կապել կրոնաբարոյական պատվիրանների, Քրիստոսի անձնական օրինակի հետ: Թեև նշվածը բոլորովին չի նշանակում, թե կրոնական կազմակերպությունները, առանձին հոգևորականները, աստվածաբանները չեն կարող պայքարել հանուն մարդկության ապահով ապագայի: Անշուշտ, պետք է պայքարեն, և հումանիստական դեր են կատարում բոլոր այն եկեղեցիները, հոգևորականներն ու աստվածաբանները, որոնք պայքարում են հանուն կայուն խաղաղության և մարդկության ապագայի:

⁹³ Նույն տեղում, էջ 139:

Ավելացնեմ նաև՝ Աստծու նկատմամբ հավատն աստվածաբաններին հույս և լավատեսություն է հաղորդում: Թղթակցի այն հարցին, թե ինչ կարող է անել եկեղեցին այսօր, երբ մարդկությունը հասել է հավաքական ինքնասպանության եզրին, Գարեգին Ա կաթողիկոսը պատասխանում է. «...Դուք հիմնվում եք գիտական տվյալների վրա, բայց Աստված, որ աշխարհի Արարիչն ու Տիրակալն է, միշտ կարող է փրկել իր արարչագործությունը»⁹⁴:

Մ. Բորնի կարծիքով. «...Մենք պետք է մեր կենցաղի մեջ մտցնենք փոխըմբռնում, հանդուրժողականություն և օգնության հասնելու ցանկություն, մենք պետք է հրաժարվենք սպառնալիքից և ուժ գործադրելուց: Եթե այդպես չանենք, ապա քաղաքակիրթ մարդու վերջը հեռու չի լինի»⁹⁵: Բայց որպեսզի բարոյականությունն աշխատի, կատարի իր հումանիստական առաքելությունը, պետք է դառնա բարոյական, իսկ քաղաքակրթությունը՝ քաղաքակիրթ⁹⁶: Պետք է փոխել քաղաքակրթության զարգացման ուղենիշները: Մեր օրերում մարդկության գլխավոր թշնամիները ոչ թե գիտությունն ու տեխնիկան են, այլ մարդիկ: Շատերի կարծիքով՝ քաղաքակրթության, գիտատեխնիկական առաջընթացի ճգնաժամը հոգևոր առաջընթացի բացակայության, հասարակության ինտելեկտուալ և բարոյական առաջընթացների անհամապատասխանության հետևանք է: Ահա թե ինչու է առաջարկվում փոխել մշակութային արժեքների սանդղակը, գիտատեխնիկական հեղափոխությունը ներառել մարդկային չափումների մեջ:

⁹⁴ Ջրույցներ Ջովաննի Գուայտայի հետ: Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոս, 2-րդ հրատ., Ս. Էջմիածին, 2001, էջ 212-213:

⁹⁵ **Մ. Բորն**, Իմ կյանքն ու հայացքները, էջ 71: Գիտնականների առաջարկած տեսակետների քննությունը տե՛ս **Ա. Սարգսյան**, Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2010, էջ 388-396:

⁹⁶ Գիտական առաջադիմության և բարոյականության փոխհարաբերության մասին տե՛ս **Трубинов Н.**, Наука и нравственность (о духовном кризисе европейской культуры) // Заблуждающийся разум? Многообразие внеаучного знания. М. 1990, էջ 278-296, Философия науки // Под. ред. **С. А. Лебедева**. М. 2005, էջ 387-467, Введение в философию // Учеб. пособие для вузов, 3-е изд. М., 2005, էջ 565-572, 594-597:

բ) Բնապահպանական մշակույթը որպես մարդ-բնություն ներդաշնակ փոխհարաբերության ապահովման կարևորագույն գործոն

Այժմ ավելի մանրամասն՝ էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու հնարավոր ուղիների մասին:

Պետք է փոխել հարացույցը (պարադիգմա), անցում կատարել այլ հարացույցի, որովհետև ժամանակակից աշխարհի ճգնաժամի հիմքում ոչ միայն և ոչ այնքան տնտեսական, բնապահպանական, այլ հոգևոր-բարոյական, այսինքն՝ արժեքային խնդիրներ են: Պետք է յուրացնողի, սպառողի հոգեբանությունից անցնել խնայողի, սիրող մարդու հոգեբանությանը, նյութական բարիքների արտադրությանը զուգընթաց զբաղվել հոգևոր արժեքներով: Սխալ է այն մոտեցումը, թե մարդը երջանիկ է այնքան, որքան սպառում է: Պետք է ուշադրություն դարձնել տնտեսական հավասարության, ռեսուրսների արդարացի բաշխման, արդարության հաստատման հարցերին, որովհետև բնության վրա ազդում են ինչպես ամենահարուստները, այնպես էլ՝ ամենաաղքատները: Ճիշտ է, բնապահպանական մշակույթի ձևավորումը ժամանակ է պահանջում, բայց պարզ է նաև, որ երկիր մոլորակը քաղաքակրթական իր ներկա վիճակով երկար դիմանալ չի կարող:

Էկոլոգիական գիտակցության, մշակույթի ձևավորմանը պետք է լծվի ողջ կրթադաստիարակչական համակարգը: Մանկուց պետք է երեխային սովորեցնել, որ բնության մաքրությամբ է պայմանավորված իր առողջ կյանքը: Հասարակության մեջ պետք է խրախուսվեն այն ավանդույթներն ու սովորույթները, արժեքները, որոնք կարող են բարելավել երկրի բնապահպանական իրավիճակը: Մինչև հիմա մարդն աչքի է ընկել հողի, բնության ամայացմամբ, պետք է հակառակն անի: Ստեղծել այնպիսի մշակույթ, որը կմաքրի բնությունը և կպահպանի մարդու տեսակը:

Բնության պահպանությունը, բնության նկատմամբ սերը, հոգատար վերաբերմունքը պետք է կարևորել որպես պատանու, երիտասարդի հայրենասիրական դաստիարակության բաղադրիչ, որովհետև հայրենիքը վերացական հասկացություն չէ, այլ այն միջավայրը, որում նա ծնվել, մեծացել է, որը նրան սնել ու պաշտպանել է: Դաստիարակության պակասի դրսևորում է մեզանում

անտարբեր, սպառողական վերաբերմունքը մեր շրջապատի նկատմամբ: Հայրենասեր չեն այն պատանիները, երիտասարդները, կոլեկտիվները, որոնք բնություն են աղտոտում: Ինչ գնահատական տալ այն կոլեկտիվին, որը բնության մեջ իր հանգիստը, «կերուխումը» կազմակերպելուց և հեռանալուց հետո այնքան աղբ է թողնում, որ երկրորդ կոլեկտիվն այդ նույն վայրում հանգստանալու հնարավորություն այլևս չի ունենում: Հայրենասեր չեն այն երիտասարդ մայրերը, որոնք, իրենց երեխաների հետ երեկոյան դուրս գալով զբոսնելու, արևածաղկի սերմերի մնացորդների բլուրներ են գոյացնում շրջակայքում: Երեխան դա է տեսնում, այդ վերաբերմունքն է բնական համարում: Հայրենասեր չէ այն ծնողը, ով թույլ է տալիս, որ երեխան ծաղիկ և ծառի ճյուղ կտորի կամ ինքն է երեխայի քմահաճույքը բավարարելու համար նույն արարքը կատարում: Հայրենասեր չէ այն աշակերտը, ուսանողը, ով աշակերտական նստարան, գրատախտակ է փչացնում, պատերին գրառում կատարում: Մի՞թե քաղաքակիրթ ազգին հարիր են մեր փողոցներում թափված աղբն ու կեղտը, մարդու ինքնահարգանքը վիրավորող գովազդային վահանակների մակագրությունը. «Աղբի տեղը աղբամանում է», «Մաքուր Հայաստան»: Քաղաքակիրթ, ավելացնեմ, հայրենիք սիրող հասարակության համար իր քաղաքը, շրջապատը մաքուր պահելը ինքնին հասկանալի է ու բնական, ինչպես, ասենք, հարդարված լինելը, կոկիկ հագնվելը, շրջապատում չաղմկելը, մյուսների հանգիստը չխանգարելը և այլն: **Հայրենաճանաչողություն և հայրենապաշտություն**, ահա՛ բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղիներից մեկը, որն իրականացվելու է կրթության և դաստիարակության միջոցով: Էկոլոգիական մշակույթի ձևավորման գործոններից հաջորդը բնության նկատմամբ բարոյական վերաբերմունքի ձևավորումն է, որը կարելի է անվանել «էկոլոգիական բարոյականություն»⁹⁷:

Բարոյականությունը հոգևոր մշակույթի, հոգևոր գործունեության ձև է, որն իրականությունը արտացոլում է բարու և չարի

⁹⁷ Այդ մասին տե՛ս **Ա. Սարգսյան, Ս. Սարգսյան, Ս. Հայրապետյան, Յու. Հովականյան, Մ. Նիկողոսյան, Ս. Օհանյան, Ա. Մալքոջյան**, Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015, էջ 63-70:

փոխհարաբերության տեսանկյունից: Այն նաև վարքի կարգավորման վերլեկենսաբանական ձև է, որի հիմքում պարտքն է: Բարոյականությունը մարդկային վերաբերմունքն է բոլորի և այն ամենի նկատմամբ, ինչով շրջապատված է: Բարոյական արարքի հիմքում ազատ կամքն է, բարոյական գիտակցության մակարդակը և ընտրության հնարավորությունը: Իսկ դատավորը հասարակական կարծիքն է և մարդու ներքին «ես»-ը (պարտք, պատիվ, պատասխանատվություն, խիղճ, ամոթ): Բարոյականության սկզբունքներն ունեն համապարտադիր բնույթ և տարածվում են բոլոր խելահաս մարդկանց վրա: Կառուցվածքային տեսանկյունից բարոյականությունը բաժանվում է.

1. Բարոյական գիտակցության, որը հանդես է գալիս անհատական և հասարակական ձևերով: Անհատական բարոյական գիտակցության մեջ առանձնացվում են.

- բանական (ռացիոնալ),
- հուզական,
- կամային ձևերը:

Դրանց համապատասխան առանձնացվում են անհատական բարոյական գիտակցության ռացիոնալ-բանական, հուզական-ապրումային և գործնական-պրակտիկ մակարդակները:

2. Բարոյական հարաբերություններ, որոնց մեջ մտնում են կայուն, կրկնվող գործողությունները, պատկերացումները, որոնք ամրագրվում են ավանդույթներում, սովորույթներում, նորմերում և ձեռք բերում ազգային-մշակութային առանձնահատկություններ:

3. Բարոյական պրակտիկա, որը նախորդ երկուսի կիրառումն է կյանքում:

Բարոյականությունը իրականացնում է գնահատող, կարգավորող և դաստիարակիչ գործառույթներ:

Բարոյական հիմնական պատկերացումների տեսանկյունից քննարկենք մարդ-բնություն փոխհարաբերությունը, ըստ որի՝ մասնագետներն առանձնացնում են չորս տարբերակ.

1. Անբարոյական կամ չար (անտառաահատումներ, որսագողություն, տարածքների հրկիզում, կենդանիների սպանություն և այլն):
2. Օգտապաշտական, ըստ որի՝ բնությունը համարվում է բարիքների անսպառ շտեմարան, որտեղից կարելի է վերցնել

ամեն ինչ և հնարավորինս շատ, որպեսզի բավարարվի բարեկեցությունը:

3. Տեսական, գիտական, իմաստասիրական, որի միջոցով ճանաչում են բնության օրենքները, այն կայուն հիմքերը, որոնց վրա հենվում է ողջ տիեզերակառույցը:
4. Գեղագիտական, երբ բնությունը դիտում են որպես արվեստի արտացոլման օբյեկտ կամ երբ նրանով հիանում են, հաճույք ստանում⁹⁸:

Մեկ այլ դիտանկյունից քննարկելիս մարդ-բնություն փոխհարաբերության երեք տարատեսակ է առանձնացվում.

1. Մարդակենտրոն, երբ փոխհարաբերության մեջ առաջատարը համարվում է մարդը, իսկ բնությունը դիտարկվում է մարդու բարեկեցության տեսանկյունից, մարդը համարվում է բնության տերն ու տիրակալը: Տեսակետը միմյանց արմատապես հակադիր՝ քրիստոնեական և լուսավորական հայեցակարգերում համընկնում է: Հուդայաքրիստոնեական ավանդույթներում Աստված, ստեղծելով աշխարհն ու մարդուն, վերջինիս դարձրեց ողջ կենդանական աշխարհի տիրակալը: Լուսավորական գաղափարախոսության մեջ մարդը շարունակում է մնալ բնության տերն ու տիրակալը, բայց արդեն գիտության շնորհիվ:

Գոյություն ունեն նաև արմատական տարբերություններ այդ երկու գաղափարախոսությունների միջև: Քրիստոնեության մեջ այն ամենը, ինչը կապվում է արտաքին և մարդու մարմնավոր բնության հետ, համարվում է մեղքի և գայթակղության աղբյուր: Մարմնի և հոգու փոխհարաբերության խնդրում դիտվում է հստակ ընդգծված դուալիզմ: Մարմինը նյութական և անցողիկ է, որում ժամանակավորապես ապրում է անմահ հոգին: Այս ուսմունքը իր ազդեցությունն ունեցավ ողջ միջնադարյան արվեստի վրա: Լուսավորականությունը, հենվելով Վերածնության գաղափարախոսության վրա, առաջադրեց մարդու և բնության ներդաշնակության գաղափարը, հաղթահարեց մարմնի և հոգու միջնադարյան դուալիզմը:

2. Բնությունակենտրոն (նատուրալիստական), ըստ որի՝ մարդը բնության մի մասն է, որով տիեզերակառույցը դառնում է ամբողջ

⁹⁸ Տե՛ս *Сумаров А. В., Пустовойтов В. В.*, Социальная экология. М., 2000, էջ 120:

ջական (այդ գաղափարը հայ իրականության մեջ ներկայացնում է Դավիթ Անհաղթը):

3. Էկոկենտրոն, ըստ որի՝ մարդ-բնություն փոխհարաբերության մեջ կարևորվում է ներդաշնակությունը: Այդ աշխարհայացքի ներկայացուցիչները փորձում են մշակել նոր բարոյականություն՝ բնության գիտակցված, բարոյաարժեքային յուրացում. մարդուն պետք է բնության հետ անբաժան կեցության մեջ տեսնել, բնությունը դարձնել մարդկայնացված: Նման մոտեցմամբ մարդու և բնության փոխհարաբերությունը միջնորդվում է հումանիզմով, որի դեպքում փոխվում է ոչ թե մեր պատկերացումը բնության մասին, այլ մեր վերաբերմունքը բնության նկատմամբ⁹⁹:

Էկոկենտրոն աշխարհայացքում բնությունը դառնում է արժեք, և մեզանից յուրաքանչյուրի դերը գնահատվում է այդ արժեքի գիտակցման տեսանկյունից:

Էկոկենտրոն դաստիարակության և բարոյականության արդյունքում ձևավորվում է էկոլոգիական գիտակցությունը, որը դառնում է գիտելիք բնության մասին և վերաբերմունք նրա նկատմամբ:

Էկոլոգիական գիտակցությունն ունի սոցիալական բնույթ և պայմանավորված է տվյալ հասարակության մեջ ընդունված և գործող նորմերով, ավանդույթներով, արժեքներով, բնության նկատմամբ ունեցած աշխարհայացքային պատկերացումներով, մարդ-աշխարհ փոխհարաբերության հարացույցով և այլն:

Էկոլոգիական գիտակցությունը կարող է ընդունել **մարդակենտրոն, բնությունակենտրոն և էկոկենտրոն** ձևեր: Մարդակենտրոն և էկոկենտրոն մոտեցումների դեպքում դիտվում են մարդ-բնություն փոխհարաբերության և դրանցում յուրաքանչյուրի գնահատման հետաքրքիր առանձնահատկություններ:

⁹⁹ Տե՛ս **Сумаров А. В., Пустовойтов В. В.**, Социальная экология, էջ 124-126: Էկոկենտրոն մտածողության հիմքում «էկոհմակարգ» հասկացությունն է, որն առաջին անգամ օգտագործել է անգլիացի էկոլոգ Ա. Թենսլին 1935 թ., իսկ էությունը լավագույնս արտահայտել է Վ. Վերնադսկին, ըստ որի՝ խորը միասնություն գոյություն ունի որոշակի պայմաններում ապրող բուսական և կենդանական տեսակների և նրանց շրջապատող գործոնների, ինչպես նաև մարդու և բնության միջև (տես **Л. Утеговян**, Էկոլոգիայի հիմունքներ, էջ 149-167): Ուստի, կարծում եմ, էկոկենտրոն է այն մտածողությունը, աշխարհայացքը, որը էկոլոգիական հիմնախնդիրները քննարկում է մարդ-բնություն միասնության տեսանկյունից:

Մարդակենտրոն էկոլոգիական գիտակցություն	Էկոկենտրոն գիտակցություն
1. Բարձրագույն արժեքը մարդն է:	1. Բարձրագույն արժեքը մարդ-բնություն ներդաշնակ զարգացման ապահովումն է:
2. Իշխողը աշխարհի աստիճանակարգային պատկերն է:	2. Հրաժարում նման պատկերից:
3. Բնության հետ փոխհարաբերության նպատակը պրագմատիկ պահանջմունքների բավարարումն է:	3. Ոչ միայն մարդու, այլև ողջ բնական համակեցության օպտիմալ պահանջմունքների բավարարումն է:
4. Ճիշտն այն է, ինչն օգտակար է մարդուն:	4. Ճիշտն այն է, ինչը չի խախտում բնության էկոլոգիական հավասարակշռությունը:
5. Բնությունը մարդու գործունեության օբյեկտն է:	5. Բնությունը մարդու հետ հարաբերակցության հավասարազոր սուբյեկտ է:
6. Բարոյականության նորմերն ու պահանջները բնության հետ ունեցած փոխհարաբերության վրա չեն տարածվում:	6. Դրանք տարածվում են նաև բնության հետ ունեցած փոխհարաբերության վրա ¹⁰⁰ :

Այս ամբողջի արդյունքում պետք է ձևավորվի էկոլոգիական մշակույթը, որը մարդու գործունեության հոգևոր-բարոյական ոլորտն է և բնութագրում է բնության նկատմամբ մարդու վերաբերմունքի նոր տիպը: Այն ներառում է.

- էկոլոգիական գիտակցությունը,
- էկոլոգիական հարաբերությունները,
- էկոլոգիական ինստիտուտները, որոնց խնդիրը էկոլոգիական մշակույթը պահպանելն ու զարգացնելն է, ինչպես հասարակական, այնպես էլ անհատական մակարդակներում: Այս ամենն իրականացնելու լավագույն միջոցը էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունն է, որը պետք է սկսել մանկապարտեզից:

«Վ Կառավարությունը 2018 թ. փետրվարի 22-ի նիստում հավանության արժանացրեց էկոլոգիական կրթության և դաստիարա-

¹⁰⁰ Տե՛ս **Сумаров А. В., Пустовойтов В. В.**, Социальная экология, էջ 161:

կության զարգացման ռազմավարությունը, որտեղ նշվում է էկոլոգիական անընդմեջ կրթության, էկոլոգիական օրենսդրության բարելավման, ընդերքի օգտագործման և կառավարման արդյունավետ համակարգի իրավական հիմքերի մշակման և այլնի մասին:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1. ճանաչողական,
2. արժեքային,
3. նորմատիվ,
4. գործնական:

Բնության նկատմամբ ճանաչողական մոտեցումը նշանակում է ճանաչել բնության օրենքներն ու օրինաչափությունները, իսկ ավելի ստույգ՝ տեղանքի (այն տարածքը, որում ապրում է մարդը և օգտվում բարիքներից) բնակլիմայական պայմանները, հողի, լանդշաֆտի առանձնահատկությունները և հողամշակումն իրականացնել՝ դրանք հաշվի առնելով, ինչպես հազարամյակներ շարունակ վարվել են մեր նախնիները: Նրանք հրաշալի հասկացել են հողի «լեզուն», վարուցանք արել, լավ բերք ստացել:

Արժեքային մոտեցման դեպքում բնությունը և մարդը դիտվում են որպես արժեքներ, իսկ մարդ-բնություն կապը՝ երկու կարևորագույն արժեքների փոխհարաբերություն: Արժեք ասելով՝ տվյալ դեպքում նկատի ունենք այն ամենը, ինչը կենսականորեն կարևոր է մարդու համար: Բնությունը այդ արժեքների մեջ է: Արժեքի հոգեբանական դրսևորման ձևը ապրումն է: Հետևաբար, մարդը պետք է ապրի բնությամբ: Մանկության տարիներին ականատես եմ եղել, թե մեր մեծերն ինչպիսի գորովալից վերաբերմունք են ցուցաբերում յուրաքանչյուր ծառ ու ծաղկի, հատկապես՝ մատղաշ, նոր տնկված ծառերի ու տնկիների, գարնանային բողբոջների նկատմամբ: Նրանց այդ սերը հար և նման էր իրենց երեխաների նկատմամբ ունեցած սիրուն: Այդ սերը զգալու համար այսօրվա պատանիներին խորհուրդ կտայի կարդալ Վախթանգ Անանյանի, Ակսել Բակունցի, Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունները:

XX դարի նշանավոր հումանիստ **Ա. Շվեյցարը** բնության նկատմամբ մարդու նմանօրինակ վերաբերմունքն անվանում էր «երկյուղածություն, ակնածանք, պատկառանք» բնության նկատմամբ:

Եթե թվարկված գործոնները չեն աշխատում, ապա պետք է գործադրել բնության նկատմամբ հարաբերությունը կարգավորող իրավական և բարոյական օրենքներ և նորմեր, որոնց խախտումը հանգեցնում է հասարակական պարսավանքի կամ պատասխանատվության: Հասարակությունը կանգնած է համլետյան երկընտրանքի առջև.

1. Պահպանել բնության հետ փոխհարաբերության ներկա ձևը և գնալ անխուսափելի կործանման:
2. Փոխել աշխարհայացքը, մտածողության ամրակայված ձևերը, ստեղծել էկոլոգիական նոր մշակույթ, փրկել մարդուն և բնությունը:

Ճիշտը երկրորդն է:

Այն դիսկը, որին իրեն ենթարկում է մարդկությունը, կապված է ոչ միայն բնական պաշարների սպառման, միջավայրի նկատմամբ թալանչիական վերաբերմունքի, այլև արժեքների հետ: Այդ պատճառով շատ բան կփոխվի ճիշտ այն ժամանակ, երբ մենք նորովի բացահայտենք և նոր իմաստ հաղորդենք «մարդ» հասկացությանը, մշակենք մարդու բոլորովին նոր հայեցակարգ:

Զարկ տալով ապրանքների արտադրությանն ու սպառմանը, մարդկանց նյութական բարեկեցության բարձրացմանը՝ բաց թողնվեցին շատ ավելի կարևոր ոլորտներ՝ մարդու հոգևոր զարգացումը, սերունդների հոգևոր ժառանգականության ապահովումը, ձևավորվեց «հոգևոր էրոզիա» կոչվող գլոբալ հիմնախնդիրը, որը եթե չլուծվի, որևէ այլ խնդիր չի լուծվի կամ լուծելը իմաստ չի ունենա: Իմ սերնդակիցների աչքերի առջև է տեղի ունենում «հոգևոր էրոզիան», նոր սերնդի զգալի հատվածի մարդկային նկարագրի բնութագրիչներ են դառնում հոգեզրկությունը, ցինիզմը, այլասերվածությունն ընդհանրապես: Միակ ճանապարհը բարոյական որակների բուժումն է, բարոյական առաջադիմությունը: Մարդուց, նրա գիտակցությունից, մտածելակերպից, կամքից ու նկարագրից է կախված մարդկության ապագան:

Պետք է մշակել մտածողության նոր եղանակ՝ «Մտածել գլոբալ, գործել լոկալ». ահա ժամանակակից մարդու կարգախոսը:

Քաղաքակրթության ցանկացած սպառնալիք կարելի է հանգեցնել հասարակության կամ բնության ուժերը չճանաչելուն, չտիրա-

պետելուն կամ դրանք անտեսելուն:

Երկու դեպքում էլ խնդիրը չիմացության մեջ է, հասարակության և բնության օրենքները չիմանալը (երիցս իրավացի էր Սոկրատեսը՝ պնդելով, որ տգիտությունը չարիք է), որոնք հաղթահարելու միջոցը նոր գիտելիք ձեռք բերելն է (գիտելիքը բարիք է, բարձրագույն առաքինություն, պնդում էր Սոկրատեսը): Հենց այդ պատճառով էլ պետք է մարդուն փոխել: Մարդը պետք է ճանաչի իրեն (հիշենք Սոկրատեսի կարգախոսը), աստիճանաբար պետք է գիտակցի, որ ինքը մոլորակի բնակիչ է և իր հարցերը պետք է լուծի ոչ թե որպես առանձին անհատ, այլ մոլորակի քաղաքացի:

1992 թ. Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա) գրեթե բոլոր երկրների ղեկավարները «XXI դարի օրակարգը» վերնագրով ծրագիր ընդունեցին, որի կետերից են.

1. Կրճատել մետաղների և այլ հումքատեսակների արտադրությունը:
2. Զարկ տալ արեգակնային, քամու էներգետիկայի զարգացմանը:
3. Ավելացնել մարդու կողմից մշակվող բուսատեսակների քանակը, աստիճանաբար հրաժարվել հանքանյութերի արտադրությունից:
4. Հրաժարվել մեգապոլիսներից, կառուցել փոքրիկ, կանաչ քաղաքներ:
5. Կայունացնել բնակչության աճը, կրճատել հիվանդությունները, երկարաձգել կյանքի միջին տևողությունը:
6. Համացանցի հնարավորությունների օգտագործման միջոցով նվազեցնել տրանսպորտի աշխատանքը:
7. Զինված ուժերի կրճատում (աշխարհում պետական միջոցների 70%-ը ծախսվում է պատերազմների վրա):
8. Զանքեր գործադրել, որպեսզի հասարակության մշակութային կողմնորոշումն ուղղորդվի հանրային հզոր ինստիտուտների զարգացմանը.
ա. կրթություն,
բ. բիզնես,
գ. կառավարում և զանգվածային լրատվամիջոցներ,
դ. հասարակական շարժումներ,

ե. էկոլոգիական կողմնորոշում ունեցող հին ավանդույթների կիրառում, նորերի մշակում և արմատավորում:

Կարելի է նաև փոքր ուժերով սկսել, նվիրված քաղաքացիների ոչ մեծ խումբը կարող է փոխել աշխարհը:

Էկոլոգիական և տնտեսական մշակույթների առումով անհրաժեշտ է.

1. Ամրապնդել բացասական վերաբերմունք սպառման այնպիսի տեսակների նկատմամբ, որոնք վնասում են առողջությանը (անառողջ սնունդ, ծխել, սննդի չարաշահում, հարբեցողություն և այլն): Պայքարել մեքենայից կախվածության և դրա հետևանք հանդիսացող հիվանդությունների (ճարպակալում, գիրացում, մեկուսացում) դեմ:

2. Ապրանքների անձնական սպառումը հասցնել նվազագույնի: Օգտվել հանրային զբոսայգիներից, գրադարաններից, հնարավորության դեպքում հրաժարվել տրանսպորտից (սրան է բաժին հասնում արտանետված գազերի ծավալի 17%-ը): Դժբախտ պատահարներից ճանապարհներին մահանում է 1,3 մլն մարդ:

3. Դեռևս բավարար պահանջարկ ունեցող ապրանքները վերամշակել այնպես, որ երկար ծառայեն և փոխանցվեն, զարկ տալ էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործմանը և այլն:

Հարցն ավելի համընդհանրական քննարկելու դեպքում պետք է նշել, որ հասարակական հարաբերություններում բարոյական նորմերի կիրառման աստիճանը պայմանավորված է մարդկանց ոգեղեն մակարդակով: Մարդկության ճակատագիրն ուղիղ համեմատական է դառնում մարդու հոգևոր վիճակին: Մարդն այսօր կանգնած է երկընտրանքի առջև. կա՛մ պետք է փոխվի որպես առանձին անհատ և հանրության անդամ, կա՛մ վերանա Երկրի երեսից: Քաղաքակրթական մարտահրավերների լուծումը, զլոբալ հիմնախնդիրների հաղթահարումը կապված են արժեքային կողմնորոշիչների փոփոխության, նորերի որոնման հետ: Անհրաժեշտ են սոցիալ-փիլիսոփայական, բարոյական, հոգևոր, ամբողջության մեջ մշակութային այնպիսի փոփոխություններ, որոնք կձևավորեն նոր աշխարհայացք, որը կդառնա սոցիալական լայն շերտերի սեփականությունը: Այդ աշխարհայացքի մեջ հիմնականը պետք է լինի հոգսը և հոգատարությունը մարդու և նրա ապագայի նկատմամբ:

Այսինքն, բարոյականության և քաղաքակրթության զարգացման ուղենիշները պետք է դառնան հումանիստական: Պետք է իրականացնել եվրոպական քաղաքակրթության հումանիստական վերափոխում: Դրա համար, ըստ **Է. Մարգարյանի**, անհրաժեշտ է, որ համաշխարհային քաղաքակրթության տարերային տեխնոկրատական զարգացումն անցնի գիտակցված, հումանիստական, ուղղորդվող զարգացմանը¹⁰¹: Մարդուց, նրա գիտակցությունից ու կամքից կախված կլինի քաղաքակրթության, մարդու, հետևաբար և՛ հումանիզմի ապագան: Ինչպես **Է. Կանյոն** է նշում, յուրաքանչյուր մարդ պետք է այնպես ազդի իրենից հետո եկողների վրա, որ նրանք ավելի լավ դառնան, և այդ պարտքի գիտակցումը պետք է փոխանցվի սերնդից սերունդ:

Բնապահպանական կամ էկոլոգիական բարոյականությունը սերտորեն կապվում է շուկայական հարաբերությունների, գործարարության հետ, որովհետև բնությանը ամենաշատ վնաս հասցվել է շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման փուլերում, որոնցում վճռորոշ դերը կատարել է բիզնեսը: Բնության անխնա շահագործումը նաև բիզնես գործունեության հետևանք է: Իրականում շատ ձեռնարկատերեր, գործարարներ բնությանը, շրջակա միջավայրին վնաս պատճառելու համար խուսափում են իրավական և բարոյական պատասխանատվությունից, թաքցնում իրական վիճակը, արտադրության վնասաբերությունը ցույց չեն տալիս, կաշառում են պաշտոնյաներին: Նրանք հաշվի չեն առնում այն կարևոր հանգամանքը, որ խաբելով պետությանն ու հասարակությանը՝ խաբում են նաև իրենց զավակներին, սերունդներին, որովհետև բոլորն են նույն մոլորակի վրա ապրում, նույն օդը շնչում, նույն ձևով թունավորվում: Խաբելով բոլորին՝ նրանք չեն կարող խաբել բնությանը, իսկ վերջինս պատժում է բոլորին անխտիր:

Այս հանգամանքը հաշվի առնելով էր **Ֆ. Էնգելսը** XIX դարի երկրորդ կեսին գրում. «...շատ էլ չհպարտանանք բնության նկատմամբ տարած մեր հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի հաղթանակի համար նա մեզանից վրեժխնդիր է լինում»¹⁰²: Այն

¹⁰¹Տե՛ս **Յ. Մարկարյան**, Гуманизм XXI столетия. Идеология самосохранения человечества. Ер., 2008, էջ 20, 392:

¹⁰² **Ֆ. Էնգելս**, Բնության դիալեկտիկա, Եր., 1957, էջ 181:

մարդիկ, ովքեր Միջագետքում, Հունաստանում, Փոքր Ասիայում և այլուր արմատախիլ էին անում անտառները, որպեսզի վարելահող ձեռք բերեն. «Երազել անգամ չէին կարող, որ դրանով իրենք այդ երկրների այժմյան անապատացման սկիզբը դրեցին»¹⁰³:

Նման վիճակ է դիտվում նաև մեր հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում՝ հանքերի շահագործման հետ կապված: Պարբերաբար աղմուկ է բարձրացվում բնապահպանների, զանազան հասարակական կազմակերպությունների կողմից՝ բնության աղտոտման, մարդկանց թունավորման իրական պատկերը թաքցնելու վերաբերյալ:

Էկոլոգիայի, նաև բնության պահպանության հիմքի վրա է բարձրանում բիզնեսի և բարոյականության փոխհարաբերության, բիզնեսի բարոյական պատասխանատվության խնդիրը: Արդարացված չեն այն պնդումները, թե բիզնեսը բարոյական տեսանկյունից չեզոք է, ապաբարոյական կամ վերբարոյական է: Բիզնեսը պետք է սերտորեն կապել բարոյականության, սոցիալական պատասխանատվության հետ: Մինչդեռ, հայրենի բիզնեսը, ցավոք, շատ հաճախ, ընկնելով շահույթի հետևից, դրսևորում է սոցիալապես անպատասխանատու գործունեություն և անբարոյ վարքագիծ: Քանի որ այն ծավալվում է ազգային-հասարակական միջավայրում, ուստի գործարարը պարտավոր է գնահատել իր վարքագիծը ազգային-հասարակական-բարոյական նշանակության տեսանկյունից, բիզնեսը դարձնել բարոյական նաև բնության հետ ունեցած փոխհարաբերության մեջ, հակառակ դեպքում, ինչպես կյանքն է ցույց տալիս, բնությունը պատժում է, բայց ոչ միայն գործարարին, այլև բոլորին:

Այս ամենով է անչափ մեծանում ու կարևորվում կրթության և դաստիարակության դերն անհատի մարդկային որակների, մարդու տեսակի (արի, համարձակ, նախաձեռնող, ազատ, պատասխանատու, անկախ, նպատակասլաց), նրա աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման գործում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ժամանակակից հումանիզմի կողմնակիցները մեծ հույսեր են կապում նոր կրթության ու դաստիարակության հետ, որը ներառելու է.

¹⁰³ Նույն տեղում, էջ 181:

- բնագիտական կողմնորոշվածությունը,
- քննադատական, սկեպտիկյան մտածողությունը,
- գիտելիքների բանական-տրամաբանական հիմնավորվածությունը,
- մարդկության ստեղծած հոգևոր մշակույթի իմացությունը,
- համամոլորակային բարոյականության, էկոլոգիական մտածողության և մշակույթի տիրապետումը,
- այլասիրությամբ առաջնորդվելը (սերը և պատասխանատվությունը մարդու և մարդկության նկատմամբ ընդհանրապես) և այլն:

Մարդկության ապահով ապագայի կերտման գործում իր հուժանիստական առաքելությունն ունի նաև փիլիսոփայությունը: Փիլիսոփայությունը պետք է.

1. բացահայտի գիտական քաղաքակրթության հումանիստական նշանակությունը, նաև այն սոցիալական միջավայրը, պայմանները, որոնք քաղաքակրթությունը դարձնում են հումանիստական կամ ոչ:

2. ցույց տա, որ գիտությունն ու տեխնիկան, լինելով սոցիալական երևույթ, իրականացնում են որոշակի պատվեր, և շատ բան պայմանավորված է պատվիրատուի պահանջով, ճաշակով, աշխարհայացքով, քմահաճույքով, հետևաբար՝ հասարակական միջավայրը պետք է դարձնել հումանիստական, բարոյական և քաղաքակիրթ:

3. ընդունի ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները, պատասխանի մարդու և մարդկության գոյության իմաստի, հիմնարար արժեքների հետ կապված նոր հարցադրումներին, ցույց տա, որ քաղաքակրթության զարգացման ներկա փուլում տեղի է ունենում հասարակության ինտելեկտուալ և բարոյական հիմքերի խարխուլում ու մշակույթի դեգրադացիա: Արժանապատիվ ապրելակերպի իրատեսական, ազատ ու ստեղծագործական մտածողության խնդիրները պետք է ունենան հումանիստական կողմնորոշվածություն և դրվեն նոր կրթության, լուսավորության և մշակույթի հիմքում:

4. իմաստնությունից բացի, փոխանցի արիություն: Իմաստնության միջոցով կբացատրենք աշխարհը, իսկ արիության միջոցով

կպայքարենք այն ցանկալի ապագայի համար, որում կապրենք արժանապատիվ կյանքով:

5. մշակի այնպիսի հումանիզմ, որը կհամապատասխանի քաղաքակրթության հետագա ընթացքին: Քաղաքակրթության և մարդկության ապագան մեծապես պայմանավորված կլինի այդ հումանիզմի բնույթով:

6. վերակառուցվի նոր պահանջներին համապատասխան, ոչ միայն քայլի ժամանակակից քաղաքակրթությանը համընթաց, այլև մեկ քայլ առաջ, իրականացնի իր կանխատեսող գործառույթը, ցույց տա քաղաքակրթության զարգացման հնարավոր ուղիները և դրանց համապատասխան՝ մարդկանց գործունեության ուղենիշները:

7. իր ողջ ուշադրությունը կենտրոնացնի մարդու ու նրա հետ կապված՝ քաղաքակրթության զարգացման ընթացքում առաջացած արժեքային-աշխարհայացքային հիմնախնդիրների վրա կամ բոլորը հանգեցնի մարդու հիմնախնդրին և այն քննարկի նոր հումանիզմի դիրքերից:

Գիտատեխնիկական և սոցիալ-բարոյական առաջընթացները պետք է համընկնեն: Եթե գիտատեխնիկականն առաջ է ընկնում սոցիալ-բարոյականից և չի փոխում հասարակության բնույթը, ապա դառնում է չարիք: Սոցիալական առաջադիմության բարոյա-հումանիստական ուղենիշներն են փրկելու քաղաքակրթությունը և մարդկանց: Մարդու ապագան մեծապես պայմանավորված կլինի նաև նրանով, թե գիտության ու տեխնիկայի ստեղծած նոր աշխարհի իմաստավորման և նրանում արժեքային կողմնորոշման խնդիրներում ինչ դեր կկատարի փիլիսոփայությունը:

Փիլիսոփայությունը չի սպառել իրեն, ավելին՝ նրա հումանիստական առաքելությունը նոր է իր ճշմարիտ գործադրումը ստանալու:

Իսկ ի՞նչ է հումանիզմը: Առանձնացվում են հումանիզմի **նեղ և լայն** ըմբռնումները: **Նեղ իմաստով ըմբռնված հումանիզմը Վերածնության դարաշրջանին բնորոշ մշակույթ է, փիլիսոփայություն և գաղափարախոսություն, որը ձգտում է Անտիկ մշակույթի լավագույն ավանդույթների միջոցով ձևավորել և դաստիարակել ներդաշնակորեն զարգացած մարդ: Վերածնունդը դարձավ նոր տիպի աշխարհայացքի, հարացույցի ձևավորման ժա-**

մանակաշրջան, որն անվանեցին «հումանիզմ»:

Լայն իմաստով ըմբռնված հումանիզմը աշխարհայացք է, որը հռչակում է մարդու բարձրագույն արժեք լինելը, երջանկության նրա բնական իրավունքը, անձնական դրական որակների դրսևորման և զարգացման հնարավորությունը, աշխարհը մարդկայնորեն կառուցելու գործում ազատ և պատասխանատու մասնակցությունը: Հումանիզմը մարդու ազատ, ինքնարժեք, ինքնահարգ և ինքնաբավ լինելը գերակա արժեք ընդունելն է և անհրաժեշտ այն պայմանների ապահովման ձգտումը, որում առավելագույնս դրսևորվելու է մարդու մարդկայնությունը:

Հումանիզմի՝ որպես գաղափարախոսության և փիլիսոփայության կարևորագույն հիմնասյուներն են.

1. մարդու և նրա կյանքի բացարձակ արժեքի ընդունումը,
2. մարդու արժանապատիվ և ազնվագարմ էակ լինելու հանգամանքը գերակա արժեք համարելը,
3. մարդու ազատ, երջանիկ, ներդաշնակ կյանքով ապրելու իրավունքի փաստումը:

Թվարկվածների տեսանկյունից հումանիզմի լայն ըմբռնումը պատմական հստակ սահմանագիծ չունի, կարող է դիտվել բոլոր ժամանակաշրջաններում և հասարակություններում:

Բովանդակային առումով հումանիզմի մեջ կարելի է առանձնացնել երեք շերտ.

- ոգեղեն-արժեքային,
- բարոյա-իրավա-քաղաքական,
- գործնական:

Համաձայն այս տարբերակման՝ հումանիստական կարելի է համարել այն աշխարհայացքային, մշակութային և փիլիսոփայական հայեցակարգը, որը մարդուն համարում է բարձրագույն արժեք, հանդես է գալիս նրա հիմնարար ազատությունների և իրավունքների պաշտպանությամբ, աշխարհում նրա արարող կոչման և դերի ընդունմամբ¹⁰⁴:

¹⁰⁴ «Հումանիզմ» հասկացության իմաստային փոփոխությունների, դասակարգման և գործառույթների մասին տե՛ս **Ա. Սարգսյան**, Հումանիզմի փիլիսոփայություն, Եր., 2012, էջ 7-18:

Հումանիզմի այդ ըմբռնման տեսանկյունից էլ գնահատենք ժամանակակից քաղաքակրթության հումանիստական չափումները:

Ժամանակակից եվրոպական քաղաքակրթությունը, որը ձգտում է դառնալ նաև համաշխարհային, մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքներին, դրանք համարում բացարձակ արժեք, որոնց խախտումը պատրվակ ընդունելով՝ միջամտում է տարբեր երկրների ներքին գործերին: Մինչդեռ, չպետք է մոռանալ, որ մարդու իրավունքներին հավասարազոր, գուցե, ավելի բարձր ու անվերապահ արժեք են ոգեղենությունը, բարոյականությունը, հումանիզմը, որոնք պետք է պահպանվեն, որպեսզի քաղաքակրթությունը ոչ միայն միտք, իրավունք, այլև հոգի ունենա: Քաղաքակրթության ճգնաժամը հանգեցնում է հումանիզմի ճգնաժամի, իսկ քաղաքակրթության ճգնաժամի պատճառը հումանիզմի, հումանիստական իդեալների անտեսումն է կամ արհամարհումը, գուցե՝ երկուսը միասին:

Վերջին հարցադրումը՝ հումանիզմն ապագա ունի՞, թե՞ ոչ: Պատասխաններն իրարամերժ են: Մի մասի կարծիքով՝ հումանիզմն ավարտվել է Օսվենցիոմով: Ժամանակակից քաղաքակրթությունը թաղեց հումանիզմը որպես մարդկության մեծագույն մոլորություն:

Հակառակ տեսակետի համաձայն՝ հումանիզմն ապագա ունի և այն պայմանավորված է ժամանակակից քաղաքակրթությունը մարդկային չափումների մեջ դնելով: Ինքս հանդաված եմ. հումանիզմն ապագա ունի, հակառակ դեպքում՝ մարդն ապագա չի ունենա:

Հարցեր կրկնության համար

1. *Բնության պահպանությունը հայրենասիրություն է, թե՞ ոչ:*
2. *Ի՞նչ է նշանակում էկոլոգիական դաստիարակություն:*
3. *Ի՞նչ է նշանակում էկոլոգիական մշակույթ:*
4. *Ի՞նչ է նշանակում էկոլոգիական գիտակցություն:*
5. *Ի՞նչ է նշանակում էկոլոգիական բարոյականություն:*
6. *Մարդկության փրկության ինչպիսի՞ ծրագրեր են առաջադրվում:*
7. *Ի՞նչ դեր կարող են կատարել բանականությունը, բարոյականությունը և հումանիզմը քաղաքակրթության մարդկային չափումներն ապահովելու գործում:*
8. *Ի՞նչ է հումանիզմը:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Վերադառնանք այնտեղ, որտեղից սկսեցինք: Ժամանակակից աշխարհավեր հիմնախնդիրների ձևավորման և գոյության համար ո՛չ Աստված է մեղավոր, ո՛չ բնությունը, այլ միայն ու միայն մարդը, որովհետև կորցրեց իմաստությունը, առաջնորդվեց կուտակելու, սպառելու, շահի, տիրողի (ոչ տիրոջ), վայելելու հոգեբանությամբ ու այսօր կանգնել է կոտրած տաշտի առջև: Ի՞նչ անել, ինչպե՞ս շարունակել, որպեսզի վերջնականապես չոչնչանա բնությունը և այն ամենը, ինչ ստեղծվել է հազարամյակների ընթացքում, չվերանա մարդը՝ որպես տեսակ:

Մենք պետք է փոխվենք, դառնանք նոր մարդ, ապրենք ոչ թե տիրողի, այլ սրտացավ տիրոջ նման, փոխվենք հոգեպես, դրսևորենք նոր կամք, վերագտնենք կորցրած իմաստությունը, բանականության աջ ձեռքը պետք է բռնի բարոյականությունը, ձախը՝ մարդասիրությունը:

Վերջում շնորհակալությունս եմ հայտնում փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրիկ Սարգսյանին, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտներ Յուրի Հովականյանին և Սոֆյա Օհանյանին՝ արժեքավոր դիտողությունների, Սոֆյա Օհանյանին՝ նաև խմբագրական աշխատանքի համար:

1. **Արամ Գասպար**, Հայ ազատագրական պայքարը և ահաբեկչությունը, Լոս Անճելըս, 1989:
2. **Աթոյան Ա.**, Ազգային անվտանգության հիմնախնդիրները (դասախոսություններ), Եր., 2014:
3. **Աղայան Ա.**, Ազգային անվտանգության հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, Եր., 2002:
4. **Ասադուրյան Է.**, Սպառողական մշակույթների ծաղկումը և անկումը // 21-րդ ԴԱԲ, թիվ 6/46), 2012:
5. **Քորն Մ.**, Իմ կյանքն ու հայացքները, Եր., 1978:
6. **Գաբրիելյան Մ., Դաբադյան Ա., Թաղևոսյան Ա., Մարգարյան Ն.**, Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2002:
7. **Գալբանյան-Մելքոնյան Ս., Մելքոնյան Մ.**, Իրականությունը. ՀԱՀԳԲ. Հեղափոխական Շարժման փաստաթղթերը, 1992:
8. Գլոբալացվող աշխարհ // երկրորդ, լրացված հրատարակություն, Եր., 2009:
9. **Եգորյան Ռ., Քոչարյան Ս.**, Գլոբալ ահաբեկչություն, Եր., 2003:
10. **Էնգելս Ֆ.**, Բնության դիալեկտիկա, Եր., 1957:
11. **Թաղևոսյան Ա.**, Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Եր., 2002:
12. **Հովականյան Յու.**, «Տափարակ աշխարհի» հայեցակարգը և ազգային ինքնության հիմնախնդիրները // Բանբեր Հայաստանի տնտեսագիտական համալսարանի, Եր., 2014, թիվ 4:
13. **Հովականյան Յու.**, Գիտության և տեխնիկայի փիլիսոփայություն և պատմություն, Եր., 2017:
14. **Հովհաննիսյան Լ.**, Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգեր և տեսություններ (թեմատիկ դասախոսություններ), Եր., 2016:
15. **Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ.**, Իրականի և անիրականի միջև, Եր., 2004:
16. **Մարկոսյան Ա.**, Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Եր., 2004:
17. **Մարկոսյան Ա.**, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Եր., 2005:
18. **Մելքումյան Լ.**, Էկոլոգիայի հիմունքներ, Եր., 2008:

19. **Մուրադյան Ա.**, Հայաստանում 2017-2020 թթ. ծնունդների թվաքանակի կանխատեսում // 20-րդ դար, 2017, թիվ 5:
20. **Նազարյան Սյր.**, Երկերի ժողովածու, Եր., 1996:
21. **Նալբանդյան Մ.**, Երկու տող, ԵԼԺ 6 հատորով, հ. 4, Եր., 1983:
22. **Նժդեհ Գ.**, Յիշի՛ր պատերազմը // ք հրատարակություն, Եր., 2013:
23. **Պեղրոսյան Վ.**, Գաղտնի բանակ. նրա գաղափարաբանությունը, Եր., 2015:
24. **Պողոսյան Սյր.**, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներ հավերժության, Եր., 2005:
25. **Սարգսյան Ա., Սարգսյան Ա., Հովականյան Յու., Նիկողոսյան Մ., Օհանյան Ա., Մալքոսյան Ա.**, ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները, Եր., 2014:
26. **Սարգսյան Ա., Սարգսյան Ա., Հայրապետյան Ա., Հովականյան Յու., Նիկողոսյան Մ., Օհանյան Ա., Մալքոսյան Ա.**, Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015:
27. **Սարգսյան Ա.**, Հումանիզմի փիլիսոփայությունը, Եր., 2012:
28. **Սարգսյան Ա.**, Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2016:
29. **Սարգսյան Ա.**, Կրոնի տեսություն և պատմություն, Եր., 2014:
30. **Սարգսյան Ա.**, Ինքնուրույն, թե՛ համադրական քաղաքակրթություն // Բանբեր ՀՊՏՀ, Եր., 2009, թիվ 2:
31. **Սարգսյան Ա.**, Որտե՞ղ որոնենք մեր ինքնությունը, և ո՞րն է հայ ժողովրդի առաքելությունը // Բանբեր ՀՊՏՀ, Եր., 2015, թիվ 1:
32. **Սարգսյան Ա.**, Մշակույթի տեսություն, Եր., 2003:
33. **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999:
34. **Սարգսյան Ա.**, Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Եր., 2001:
35. **Սարգսյան Ա.**, Գիտելիքը որպես արժեք // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2017, թիվ 3:
36. **Վարդանյան Կ.**, Պայթյուններ Թուրքիայում և ... ոչ միայն, Եր., 2017:
37. **Դաֆֆի**, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Եր., 1986:
38. **Волкова Т. И.**, Философские основания глобальных проблем современного общества. Челябинск, 2008.
39. **Камю А.**, Из записных книжек., М., 2008.
40. **Коробкин В. И., Передельский Л. В.**, Экология. Ростов н/д, 2015.
41. **Лекторский В. А.**, Философия, общество знания и перспективы. Вопросы философии, 2010, N 8.
42. **Лешкевич Т.Г.**, Философия науки: традиции и новации, М., 2001.

43. Мир в цифрах. Карманный справочник. М., 2012.
44. **Родионова И. А.**, Глобальные проблемы человечества. М., 1995.
45. **Ситаров В.А., Пустовойтов В.В.**, Социальная экология. М., 2000.
46. **Скибицкий Н. М.**, Глобальные проблемы современности. М., 2010.
47. **Степин В. С.**, Цивилизация и культура. СПб. 2011.
48. Сравнительное изучение цивилизации. Хрестоматия, составитель **Ерасов Б.С.**, М., 1998.
49. **Рассел Б.**, Почему я не христианин. М., 1978.
50. **Шилов И. А.**, Экология. М., 2015.
51. **Шинковский М. Ю.**, Глобальные проблемы современности. Учебное пособие. Владивосток, 2005.
52. **Хантингтон С.**, Столкновение цивилизаций. М., 2016.

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. «Արդիականության գլոբալ հիմնախնդիրները» դասընթացի առարկան, խնդիրները և նշանակությունը:
2. «Արդիականության գլոբալ հիմնախնդիրները» դասընթացի ձևավորման ժամանակաշրջանը և պատճառները:
3. «Հոմեոստատիկ» դերը արդիականության գլոբալ հիմնախնդիրների վերահսկման և լուծման ուղիների որոնման գործում:
4. Գլոբալ հիմնախնդիրների դասակարգման հիմնական սկզբունքները:
5. Գլոբալ հիմնախնդիրների շարժընթացի բազմազանությունը, հակասականությունը և դրանց պատճառները:
6. Գլոբալ հիմնախնդիրների դրսևորման առանձնահատկությունները:
7. Գլոբալացման հիմնական գործոնները և դասակարգման փուլերը:
8. Գլոբալացման ժամանակակից փուլի առանձնահատկությունները և առաջացման նախադրյալները:
9. Գլոբալացման տնտեսական, տեղեկատվական, քաղաքական-գաղափարախոսական և սոցիալ-մշակութային կողմերը:
10. Գլոբալացման դրական և բացասական կողմերը:
11. Հայաստանը գլոբալացվող աշխարհում:
12. Մարդու ազդեցությունը բնության վրա հասարակության պատմության տարբեր փուլերում:
13. Էկոլոգիական հիմնախնդիրները և էկոլոգիան որպես գիտություն:
14. «Կենսոլորտ» («բիոսֆերա»), «նոոսֆերա» հասկացությունները որպես մարդու և բնության փոխհարաբերության ժամանակակից մակարդակի բնութագրիչներ:
15. Էկոլոգիական հիմնախնդիրների շրջանակը (բնության անապատացում, օդի, ջրի և շրջակա միջավայրի աղտոտում և թունավորում):
16. «Ջերմոցային ազդեցություն» կոչվող երևույթի առաջացման պատճառները և հաղթահարման ուղիները:

17. Էկոլոգիական հիմնախնդիրների առաջացման պատճառները և դրսևորման առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում:
18. Էկոլոգիական հիմնախնդիրները և տնտեսական քաղաքականությունը:
19. Կոնսյումերիզմը որպես աշխարհայացք, գաղափարախոսություն և հոգեբանություն:
20. Էկոլոգիական հիմնախնդիրների առանձնահատկությունները ՀՀ-ում:
21. Ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում:
22. Ժամանակակից ժողովրդագրական պայթյունի պատճառները և հետևանքները աֆրիկյան և ասիական երկրներում:
23. Ժողովրդագրական իրավիճակը ժամանակակից Եվրոպայում:
24. Ժողովրդագրական իրավիճակը ՀՀ-ում: Արտագաղթը որպես գլոբալ հիմնախնդիր:
25. Մշակույթի և քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում:
26. Զարգացման առանձնահատկությունները և դրսևորման չափանիշները ժամանակակից աշխարհում:
27. Գիտությունը և տեխնիկան գլոբալ հիմնախնդիրների համակարգում:
28. Քաղաքակրթությունների բախումը որպես գլոբալ հիմնախնդիր:
29. Հայ ժողովրդի քաղաքակրթական ընտրությունը:
30. Պատերազմը, ջերմամիջուկային պատերազմը և սպառազինությունների մրցավազքը որպես գլոբալ հիմնախնդիրներ:
31. Միջազգային ահաբեկչությունը որպես գլոբալ հիմնախնդիր:
32. Հայկական ահաբեկչության առանձնահատկությունները:
33. Անվտանգության և ազգային անվտանգության ապահովումը որպես գլոբալ հիմնախնդիր:
34. Պետությունը որպես ազգային անվտանգության ապահովման երաշխավոր:
35. Ընտանիքը ազգային անվտանգության համատեքստում: Ժամանակակից հայ ընտանիքի հիմնախնդիրները:
36. Եկեղեցին և ՀՀ-ում գործող զանազան կրոնական կազմակերպությունները ազգային անվտանգության դիտանկյունից:

37. Որակյալ կրթությունը և գիտելիքի մատուցումը որպես գլոբալ հիմնախնդիր: Բոլոնյան համակարգը:
38. Կրթությունը և գիտելիքը ՀՀ կրթական ժամանակակից համակարգում: Ժամանակակից շուկայական հարաբերությունները, բիզնեսը և կրթությունը:
39. Քրիստոնեությունը ապակրոնացվող աշխարհում:
40. XX դարի վերջին և XXI դարի սկզբներին Արևելյան Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ տարածքում ստեղծված պետություններում քրիստոնեական վերածննդի նախադրյալները:
41. Իսլամական գործոնը ժամանակակից աշխարհում:
42. Հայ եկեղեցու պայքարը կրոնական նվաճողականության դեմ:
43. Գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման նորոուստյական (նատուրալիստական) տեսակետը:
44. Գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման կրոնական տեսակետը:
45. Բարոյականությունը և հումանիզմը որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ:
46. Էկոլոգիական մշակույթի ներդրումը որպես էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոց:
47. Հայրենաճանաչողությունը և հայրենապաշտությունը որպես էկոլոգիական հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ:
48. Էկոկենտրոն գիտակցության ձևավորումը որպես էկոլոգիական հիմնախնդիրների հաղթահարման միջոց:
49. Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը որպես բնության նկատմամբ նոր վերաբերմունքի արմատավորման միջոցներ:
50. Էկոլոգիական բարոյականությունը որպես բնության շահագործման արգելակիչ ուժ:
51. Ոգեղենությունը, նոր արժեքների ներդրումը որպես արդիակա-նության գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ:
52. Փոլիսոփայության հումանիստական առաքելությունը գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման գործում:

Սարգսյան Արամ Հակոբի

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Խմբագիր՝ **Ա. Վարդանյան**
 Համակարգչային շարվածքը՝
Ա. Սարգսյանի,
Ռ. Ղազարյանի
 Էջադրումը և ձևավորումը՝
Ս. Բոյաջյանի

Չափս՝ 60x84 1/16:
 13,25 տպ. մամուլ, 12,3 պայմ. մամուլ:
 Տպաքանակ՝ 100: